15 Apr
Մ -56

«ԳԱՐԵԳԻՆ Ա»
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ-ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԽՈՐԱՆԱՑ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԳՐԵՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ Վ. Հ. ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2004

75 Арм 2886
С-56 Смагоп. диссер
диссертация
2002, 2004.

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոն
Հետազոտություններ և բնագրեր
Շարքի խմբագիր՝ պ. գ. դ. Մկրտիչ Բոզոյան
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ, ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԿՆՈՒԹԻՆՔ ԽՈՐԱՆԱՑ

(Արվեստի տեսության միջնադարյան
հայկական բնագրեր)

Աշխատասիրությամբ Վ. Հ. Ղազարյանի

Մասնագիտական խմբագիրներ

Հ. Հովհաննիսյան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գ. Տեր-Վարդանյան, պատմական գիտությունների թեկնածու

Մայր Աթոռ Ս. Էջմիածին - 2004

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВЯТОЙ ЭЧМИАДЗИН
Арменоведческий-богословский центр "ГАРЕГИН – I"
Разыскания и тексты
Редактор серии д. и. н. Азат Бозоян
ИНСТИТУТ ИССКУСТВ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

ТОЛКОВАНИЯ ХОРАНОВ

(Средневековые армянские тексты
по теории искусства)

Подготовка текстов, предисловие и комментарии
В. О. Казаряна

Специальные (научные) редакторы:
доктор искусствоведения, профессор Г. Оганнесян,
к. и. н. Г. Тер-Варданян

Первопрестольный Св. Эчмиадзин – 2004

HOLY SEE OF ETCHMIADZIN
Armenological Theological Center "GAREGIN I"
Studies and Texts
The Consultant Editor of the Series
Doctor of Historical Sciences Azat Bozoyan
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA, INSTITUTE OF ART

THE COMMENTARIES OF CANON TABLES

(The Medieval Armenian Texts on the Theory of Art)

By V. H. Ghazaryan

Editors: Doctor of Art History, Prof. H. Hovhannisyan
Candidate of Historical Sciences G. Ter Vardanyan

2835

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСКУССТВ

HOLY ETCHMIADZIN 2004

ՀՏԴ 7.01/.097 : 23/28
ԳՄԴ 85 + 86. 37
Մ - 565

Մ – 565 ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԽՈՐԱՆԱՑ: (Արվեստի տեսության միջնադարյան հայկական բնագրեր): Աշխատասիրությամբ՝ Վ. Հ. Ղազարյանի; մասնագիտական խմբագիրներ՝ Հ. Հովհաննիսյան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Գ. Տեր-Վարդանյան, պատմական գիտությունների թեկնածու: -Ա. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, 480 էջ:

Խորանների կամ համաբարբառի աղյուսակներով են սկսվում ոչ միայն հայկական, այլև բյուզանդական, ասորական, Եվրոպայի վաղ միջնադարյան, վրացական և այլ Ավետարանմատյանները: Բայց դրանց պատկերազարդման հանգամանալից ասուվածաբանական մեկնություններ կան միայն հայ մատենագրության մեջ, որոնք առաջին անգամ հրապարակվում են շուրջ հարյուր ձեռագրերի համեմատությամբ, տարընթերցումներով, ձեռագրերի նկարագրություններով: Հանգամանորեն արծարծվում են այդ երկերի էսթետիկական, գունագիտական, պատկերաբանական, թվային խորհրդաբանության խնդիրները, «Խորանների մեկնությունների» կիրառումը հայկական, բյուզանդական, վրացական խորանապատկերներում: Այդ եզակի մեկնողական երկերը թույլ են տալիս ստեղծել միջնադարյան արվեստի գարդամոտիվների գիտական պատկերագրություն:

ԳՄԴ 85 + 86. 37

ISBN 99930-75-20-5

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004թ.
© Վ. Հ. Ղազարյան, 2004թ.

Հրամանաւ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

By order
of His Holiness
KAREKIN II
Supreme Patriarch and
Catholicos
of All Armenians

Տպագրում է մեկենասութեամբ
Տ. Մամիկոն վրդ. Քիլիճեանի
(ԱՄՆ Արեւելեան թեմ)

ի յիշատակ իր հօր՝
Նշան Քիլիճեանի

ԱՌԱՋԱԲԱՆ

Սկսած ԺԹ դարի վերջին տասնամյակներից անցյալի մշակույթի գիտնականների ուշադրությունը գրավեց նաև Հայաստանի մատենական արվեստը: Առաջին հրապարակումները (Ստասով, Ալիշան, Տեր-Մովսեսյան, Պոտուրյան, Ստրժիգովսկի, Մակլեր և հատկապես Գարեգին Հովսեփյան)[1] նպատակ ունեին ընթերցողին ծանոթացնել առանձին մանրանկարիչների արվեստի և ձեռագրական արվեստի հուշարձանների հետ, հայտնաբերել միջնադարյան գրքարվեստի ձևավորման ժամանակը (Ստրժիգովսկի), տալ հայ մանրանկարչության համապատկերը (Մակլեր) կամ գրքարվեստը դիտել ազգային լայն մշակութա-պատմական հայեցակետից (Գ. Հովսեփյան, Ն. Ակինյան)[2]: Հեղինակների այդ բույլի մեջ ամենահեռանկարայինը Գ. Հովսեփյանի հետազոտություններն էին: Վերջինս, լինելով խոշոր հայագետ, պատմաբան, ձեռագրագետ, հայ գրչության, ճարտարապետության, վիմագրության, առհասարակ հայոց հիշատակների լավագույն գիտակ, թողել է վիթխարի ժառանգություն, որի մի մասը դեռ սպասում է իր հրատարակիչներին, մանրակրկիտ ուսումնասիրողին և վերահրատարակչին (նրա արվեստագիտական երկերի երկհատորյակը հրատարակել է տիկին Մ. Ղազարյանը)[3]: Քանի որ հայ միջնադարյան մանրանկարչությունը և կերպարվեստը կարևոր մասն են միջնադարյան համաքրիստոնեական մշակույթի, ապա նրա շատ եզրեր շոշափվել են ընդհանուր աշխատություններում նվիրված պատկերագրությանը կամ ոչ հայկական կամ հայկական մոտ առանձին հուշարձաններին (Գ. Միլլե, Գ. դը ժերֆանիոն,

---

[1] Стасов В. Армянские рукописи и их орнаментация. – Журнал народного просвещения, 1886, июль. Ալիշան Ղ. Պատկերուսոյց գիրք.- «Բազմավէպ», 1896, ՕԳ, էջ 296-293, 348-352, 388-397, 446-450: Տեր-Մովսեսեան Մ. Կեռան քագուհու Աւետարանը.- «Անահիտ», Ը տարի, 1907, թիւ 6-7-8-9, էջ 200-204: Յովսեփեան Գ. Գրչութեան արուեստը հին հայոց մէջ. Մասն Գ (թարմտես հայ հնագրութեան). Վաղարշապատ 1918, էջ 52, տախտակ 1473: J. Strzigowski. Das Etschmiadzin Evangeliar. Wien 1981. Fr. Macler. L'évangile arménien. Édition photographique du ms. n. 289 de la Bibliotheque d'Etchmiadzin. Paris 1920. Fr. Macler. Miniatures arméniens. Vies du Christ, peintures ornamentales (Xe au XVIIe siècle). Paris 1913.

[2] Ակինեան Ն. Սկեռայի Աւետարանը 1197 թուականին Լոռվի հայ արքեպիսկոպոսատրանի գրատարանի մէջ. Վիեննա 1930: Յովսեփեան Գ. Խաղրակեանք և Պռոշեանք հայոց պատմութեան մէջ (Բ հրատ.). Անթիլիաս-Լիբանան 1969:

[3] Հովսեփյան Գ. Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության. Հ. Ա., Երևան 1983. Հ. Բ. 1987: Նաև նույնի «Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան», Նիւ Եօրք, պր. 1-4, 1935-51:

Կ. Նորդենֆալկ, Ա. Գրաբար և ուրիշներ)[4]:

20-րդ դարի 30–50-ական թթ. վերստին հնարավորություն է ընձեռվում ուսումնասիրելու հայ մանրանկարչությունը առհասարակ: Կ. Վայցմանի, Ս. Տեր-Ներսեսյանի, Ա. Սվիրինի, Լ. Դուռնովոյի, Ռ. Դրամբյանի, Հ. Քյուրդյանի[5] աշխատությունները ոչ միայն շտկում են Յ. Ստրժիգովսկու թույլ տված սխալները հայ մանրանկարչության ծագման հարցում, այլև բերում են նոր, մինչ այդ չտեսնված նյութ: Առաջին անգամ գիտական հասարակայնության սեփականությունն է դառնում հայ մանրանկարչության պատմության շքեղ համապատկերը, առաջին անգամ ուրվագծվում են հայ մատենադարվեստի դպրոցները: 40-50-ական թթ. և հետագա տարիներին հրապարակվում են ԱՄՆ-ի և Իտալիոյի հայ պատկերազարդ ձեռագրերի հավաքածոների ձեռագրացուցակ-ալբոմները (Ս. Տեր-Ներսեսյան), Վենետիկի (Հ. Մ. Ճանաշյան) և Վիեննայի (Բուշհաուզեն ամուսինները) Մխիթարյան միաբանությունների մատենադարանների, Երուսաղեմի հայոց պատրիարքության մատենադարանի (Բ. Նարգիս), Իրանի Նոր Ջուղայի եկեղեցիների (Ս. Տեր-Ներսեսյան, Ա. Մխիթարյան)[6] ձեռագրական հավաքածոները ներկայացնող շքեղ ալբոմները: Ս. Տեր-Ներսեսյանի և Լ. Ա. Դուռնովոյի ալբոմները տալիս են տարբեր շրջանների և տարբեր դպրոցների հայ մանրանկա-

---

[4] Millet G. Recherches sur l'iconographie de l'Évangile au XIV^e^, XV^e^ et XVI^e^ siècles les monuments du Mistra, de la Macedonie et du Mont Athos. Deuxième éd Paris 1960. De Jerphanion G. Une nouvelle province de l'art Byzantin. Les églises rupestres de Cappadoce (tome I-er, 1-re partie, 1936, 2-e partie, 1942). (Planches, prémiere album, 1928; troisième album, 1934). Grabar A. Christian Art Iconograpy. A Study of its Origins. New York 1968. A. Grabar. Études sur la tradition arménienne dans l'art medieval.-REA, Nouvelle série, t. III, 1963, p. 33-37. Nordenfalk C. Die spätantiken Kanontafeln. Kunstgeschichtliche Studien über die eusebianische Evangelier-Konkordanz in der vier ersten Jahrhunderten ihrer Geschichte. Textband und Tafelband. Göteborg 1938.

[5] Weitzmann K. Die armenische Buchmalerei des 10. und Beginnen 11. Jahrhunderts. Bamberg 1933. Der Nersessian S. Études byzantines et arméniennes. Tome I, II. Louvain 1973. Der Nersessian S. Manuscrits arméniennes des XII^e^, XIII^e^ et XIV^e^ siècles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise. Paris 1937.

Տեր-Ներսեսյան Ս. Հայ արվեստը միջնադարում. Երևան 1975: Տեր-Ներսեսյան Ս. Հայ մանրանկարչության նկարագիրը ԺԲ-ԺԴ դարաշրջանին.- «Սիոն», 1938, 7, էջ 218-222: Свирин А. Н. Миниатюра древней Армении. М-Л., "Искусство" 1939. Дрампян Р. Армянская миниатюра и книжное искусство.- "Очерки по истории искусства Армении". М.-Л., 1939.

[6] Der Nersessian S. The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts. Dublin. 1956. Der Nersessian S. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington 1963. Der Nersessian S. Armenian Manuscripts in the Walters Art Gallery. Baltimore 1973. Janashian M. Armenian Art Miniature painting of the Monastic Library of San Lazzaro. I Venice 1966. Buschhausen H. u. H. mit Hilfe von E. Zimmermann. Die illuminierten armenischen Handschriften der Mekhitaristen-Congregation in Wien. Wien 1976. Narkis B. Armenian Art Treasures of Jerusalem. Jerusalem. 1979.

րիչների արվեստի բազմազանության հավատարիմ պատկերը, իսկ Վ. Ն. Լազարևը ավելի ցայտուն է դարձնում հայ միջնադարյան արվեստի յուրահատկությունները բյուզանդական, սլավոնական և վրացական հուշարձանների քննության ֆոնի վրա[7]:

Հայաստանի ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, նաև Պետական էրմիտաժում հետազոտվում են հայ մանրանկարչության առանձին շրջաններ և դպրոցներ, անվանի ծաղկողների ժառանգությունը[8], եւ-ժ դդ. որմնանկարչության և մանրանկարչության մեջ գույնի և տարածության խնդիրները, կիլիկյան մանրանկարչության մեջ ֆաբուլաների վերարտադրության զանազան մակարդակները[9], ժամանակ առ ժամանակ պահանջ է զգացվում մանրանկարչության արվեստի հետ դիտարկել նաև գրքի արվեստը՝ կազմարվեստը, գրչությունը, բնագրադաշտը և պատկերը իբրև գեղարվեստական ամբողջական օրգանիզմ և տալ նշանավոր պատկերազարդ ձեռագրերի մասին գրականության մատենագիտությունը[10]:

Այս կողմից 50-ական թթ. սկսած թատերագետների, բանասերների, ազգագրագետների շրջանում հետաքրքրություն է առաջանում առանձին պատկերային և զարդային մոտիվների ծագումնա-

---

[7] Դուրնովո Լ. Ա. Հայկական մանրանկարչություն. Երևան 1966. Дурново Л. А. Очерки изобразительного искусства средневековой Армении. М. 1979. Лазарев В. Н. История византийской живописи. Т I, II. М. 1947 (գիրքը մշակվել ու վերահրատարակվել է երկու անգամ՝ իտալերեն և ռուսերեն: Վերջին հրատարակությունը 1986-ին):

[8] Ազարյան Լ. Ռ. Կիլիկյան մանրանկարչություն XII-XIII դդ. Երևան 1964. Измайлова Т. А. Армянская миниатюра XI века. М. "Искусство" 1979. Корхмазян Э. М. Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.). Ереван 1978. Հակոբյան Հ. Հ. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Ա. Երևան 1976. Գիրք Բ, 1982. Акопян Гр. Васпураканская миниатюра XIII-XV вв. Ереван 1989. Հակոբյան Հր. Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ. Երևան 1982. Закарян Л. Из истории васпураканской миниатюры. Ереван 1980. Ղազարյան Վ. Սարգիս Պիծակ. Երևան 1980. Չուգասզյան Լ. Գրիգոր Ծաղկող. Երևան 1987. Дрампян И. Р. Художественные особенности искусства Тороса Рослина (миниатюры Малатийского Евангелия).- "Древнерусское искусство". Рукописная книга. Сб. третий. Изд. "Наука", М. 1983, с. 331-341. Չուգասզյան Լ. Դրվագներ Թորոս Ռոսլինի ժառանգությունից.- «Բազմավէպ», թիւ 1-4, 1987, էջ 254-286 (նվիրված է «Խաչից իջեցման» պատկերագրությանը Ռոսլինի մոտ). Дрампян И. Р. Торос Росли. Ереван, 2000 "Тигран Мец" և այլն:

[9] Կոտանջյան Հ. Գ. Цвет в раннесредневековой живописи Армении. Ереван 1978. Կոտանջյան Հ. Գ. Цвет в начальных миниатюрах Этчмиадзинского Евангелия.- "Древнерусское искусство" М. 1983, с. 281-299. Ղազարյան Վ. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ - XIV դ. սկիզբ) Երևան 1984:

[10] Казарян В. О., Манукян С. С. Матенадаран. Том I. Армянская рукописная книга VI-XIV вв. М. Книга. 1991.

բանության նկատմամբ: Փորձեր են արվում հետազոտելու առանձին զարդերի (կենաց ծառ, գույգ թռչուններ, սերմեր, վարսանդներ, ծաղիկներ և այլն) ծագումը դիցաբանության, ժողովրդական ստեղծագործության և նախնադարյան համայնական հասարակության տոհմային կառուցվածքի խորքերում[11]: Խորանապատկերների իմաստաբանական արմատները դիտվում են իբրև բեմարվեստի կամ թատերական ճարտարապետության վերապրուկներ[12], հրատարակվում են տարբեր դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք երբեմն բովանդակում են գրիչների, ծաղկողների և պատվիրատուների (ստացողների) խիստ արժեքավոր դիտողությունները պատկերագրության և պատկերների խորհրդաբանության վերաբերյալ, մանրանկարների զարդային հարթության և զարդային կառուցվածքի գնահատություններ, նաև երբեմն անփոխարինելի թանկարժեք կենսագրական տեղեկություններ[13]:

Անգնահատելի են նաև ներկայումս գոյություն ունեցող կամ կորած հայերեն ձեռագրերի ժողովածուների համառոտ և ընդարձակ ցուցակները, որոնք անփոխարինելի գործիքներ են հետազոտողի համար: Մեր օգտագործած ձեռագրացուցակների մասին նշված է համապատասխան տեղերում և գրականության ցանկում:

Կա ևս մի բնագավառ, որին համեմատաբար քիչ ուշադրություն է հատկացվել: Դա միջնադարյան Հայաստանում արվեստի տեսության և քննադատության պատմությունն է: Ի՞նչ են մտածել մանրանկարչական արվեստի և կերպարվեստի մասին հայ եկեղեցու գործիչները և իրենք նկարիչները հայ միջնադարյան արվեստի ողջ գոյության ընթացքում:

---

[11] Սմբատյան Ա. Ե. Հայկական զարդարվեստ. Երևան 1955:

[12] Гоян Г. Театр Древней Армении по памятникам материальной культуры и древним текстам. Т. I, II. М. 1952. Петросян Э. Хоран армянских миниатюр как вид исполнительской площадки.- "Известия общественных наук АН Арм ССР", 1966, N 3, с. 87-97. Պետրոսյան Է. Ճատերազին տարրերը միջնադարյան մանրանկարներում.- Հայկական արվեստ. 1. Հին և միջին դարեր. Երևան 1974, էջ 158-165: Սմբատյանց Ստ. 989 թ. Էջմիածնի Ավետարանի մանրանկարների ուսումնասիրության շուրջը.- ՀԱՍՈ ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), N 1, 1958, էջ 55-66:

[13] Գարեգին Ա Կաթողիկոս. Ցիշատակարանք ձեռագրաց. Հատոր Ա (Ե դարից մինչև 1250 թ.). Սնթիլիաս 1951: Մաթևոսյան Ա. Ս. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան 1988: Մաթևոսյան Ա. Ս. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար. Երևան 1984: Խաչիկյան Լ. Ս. ԺԴ դարի հիշատակարաններ. Երևան 1950: Խաչիկյան Լ. Ս. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները (հ. 1-3, 1955-67): Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1601-1620). Հատ. Ա. Երևան 1974. (1621-1640). Հատ. Բ, 1978. Հակոբյան Վ. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ. Հ. Գ. (1641-1650). 1984:

Այստեղ էլ մեր առջև բացվում են հետազոտման կարոտ մի քանի ոլորտներ: Դրանցից մեկը հայ միջնադարյան մատենագրության զանազան այն քնագրերի ու հատվածների խնամքով հավաքումն ու հրապարակումն է, որտեղ նկատվում է կերպարվեստի ընկալման և գնահատության, ինչպես նաև նրա մասին դատողության թեկուզ մի նշույլ: Նման մի ժողովածու կազմվել է ԺԹ դարում[14]: Բայց այդ ժամանակ դեռևս չկար քիչ թե շատ ընդհանուր ու հասկանալի պատկեր միջնադարյան արվեստի: Այդ օգտակար գիրքը հիմնականում նվիրված է տարբեր ժամանակներում հայ եկեղեցում պատկերների ընդունմանը կամ մերժմանը: Ավելի լայն հայացք ենք տեսնում հայ արվեստին նվիրված 1978 թ. երկրորդ միջազգային գիտաժողովում ակադեմիկոս Լ. Խաչիկյանի կարդացած զեկուցման մեջ[15]: Նա հիմնականում վկայակոչում է ձեռագրական աղբյուրները: Սակայն նրա վկայակոչումներից դեռևս հստակ չեն նրանք, որոնք օգտագործված են իբրև պատկեր (կերպար), և նրանք, որոնք արձագանքներ են աստվածաբանական և հայրաբանական տարբեր երկերից: Սակայն այդ զեկուցումը առաջընթաց քայլ էր կերպարվեստի վերաբերյալ աղբյուրների բացահայտման մարզում: ԺԹ դարի խոշոր բանաստեղծ, աղբյուրագետ և հայոց հիշատակների մշակութաբան Ղ. Ալիշանը հրատարակել է ԺԷ դարի մի ձեռագիր մանրանկարների ընդօրինակման մասին[16]: Հետագայում մանրանկարչական արվեստի նույնատիպ դասագրքի անդրադարձել են նաև Ս. Տեր-Ներսեսյանը և Ս. Գևորգյանը[17]:

Պատմաբան Կ. Յուզբաշյանը բարձրացնում է հայ պատմագրության մեջ ճարտարապետական թեմայի հարցը[18], իսկ ամերիկյան բանասեր Ռ. Վ. Թոմսոնը խոսում է հայ մատենագրության մեջ արձարձված ճարտարապետական խորհրդաբանության մասին[19]:

---

[14] «Պատկերապաշտութիւնը հայոց եկեղեցւոյ մէջ». Պատմական տեսութիւն. երկասիրութեամբ եպ. Արիստակէսի (Սեդրակեան). Ս. Պետերբուրգ 1904:

[15] Խաչիկյան Լ. Հայ արվեստի պատմության կարևոր սկզբնաղբյուրները.- Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. Զեկուցումների ժողովածու. Հատոր IV. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան 1981, էջ 39-50:

[16] Ալիշան Ղ. Պատկերուտոյց գիրք.- «Բազմավէպ», 1896, ՕԹ, էջ 289-296, 348-352, 388-397, 446-450:

[17] Геворкян А. Б. Искусство копирования армянских миниатюр по памятникам Крыма, Новой Джульфы и Константинополя (XVII в.). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения. Ереван 1972.

[18] Юзбашян К. Архитектурная тема в армянской средневековой историографии. — Второй международный симпозиум по армянскому искусству. Сб. докладов. Т. III. Ереван 1981, с. 25-375

[19] R. W. Thomson. Architectural Symbolism in Classical Armenian Literature.- Extract from

Այդ բոլոր ուսումնասիրությունների և հրապարակումների շարքում հատուկ տեղ է գրավում Չ-Է դարերի հեղինակ Վրթանես քերթողի «Յաղագս պատկերամարտից» երկի Ս. Տեր-Ներսեսյանի հրապարակումը ֆրանսերեն թարգմանությամբ, խոր ուսումնասիրությամբ և հարուստ ծանոթագրություններով հանդերձ[20]: Այդ երկասիրությունը է դարի հայ որմնանկարների մասին Լ. Ա. Դուռնովոյի արած հետազոտությունների և հայտնաբերումների հետ ապացուցեց այդ շրջանի Հայաստանում որմնանկարների մի ամբողջ թեմատիկ շարքի առկայությունը:

Կան, ինչպես ասացինք, նաև հայ միջնադարյան թատրոնին նվիրված մի շարք հետազոտություններ, որտեղ խորանապատկերները ծառայում են որպես թատերական տիպի կառույցների (Գ. Գոյան, Է. Պետրոսյան) կամ առանձին թատերական պերսոնաժների (Գ. Գոյան) բացահայտման կողմնակի աղբյուր, որոնցում, սակայն, չեն ճշտվում, թե ո՞րտեղից են արդյոք վերցված այդ թատերական կառույցները կամ պերսոնաժները-հա՞յ թե անտիկ իրականությունից, իրական կյանքի՞ց, թե հունական և ասորական ծեռագրերի պատկերների համանման մոտիվներից[21]: Սակայն գոյություն ունի արվեստի միջնադարյան տեսության մի ամբողջ ժանր, որը մինչև այժմ չի դարձել սեեռուն ուսումնասիրության առարկա: Դա այսպես կոչված «Խորանների մեկնություններն» են, գրված է-ժէ դարերում և նվիրված ծեռագիր Ավետարանների հանձայնության տախտակների կամ համաբարբառների ձևավորմանը, և հայ մանրանկարչության մեջ կոչվում են խորաններ: Հանրահայտ են հայոց մատյանների խորանների և անվանաթերթերի գեղարվեստական բարձր արժանիքները: Այստեղ մենք գործ ունենք գրքարվեստի մի վիթխարի բնագավառի խորանների գեղարվեստական ձևավորման հետ: «Հայկական մանրանկարներում ամենից շատ ապշեցնում է նրանց վառ գունագեղությունը և գծի նրբագույն զգացողությունը (հատկապես ԺԳ դարի կիլիկյան ծեռագրերում), - գրում է Վ. Լազարևը,- հայ վարպետները գարդարվեստի չգերազանցված վիրտուոզներ են:

---

the Journal of Theological Studies. New Series. Vol. XXX, part 1, Oxford 1979, p. 102-114.

[20] Տեր-Ներսեսյան Ս. Հայ արվեստը միջնադարում: Երևան 1975, էջ 7-30 (նաև Der Nersessian S. Un apologie des images du septième siècle-Byzantion, XVII (1944-1945), pp. 58-87. Ibid, Image Worship in Armenia and its Opponents.- Der Nersessian S. Etudes byzantines et arméniennes, pp. 379-403, 405-415).

[21] Гоян. Театр древней Армении..., в двух томах. Պետրոսյան. Թատերային տարրերը միջնադարյան մանրանկարներում.- Հայկական արվեստ 1. Հին և միջին դարեր, էջ 158-165.

Ի՞նչ ասես չի գտնի ուշադիր դիտողը լավագույն հայկական ձեռագրերի այսպես կոչված «կանոնների» (*խորանների Վ.Հ.*) շքեղ գլխագարդերում և հոյակապ գարդերում: Այստեղ կան և արտաոոց թռչուններ, և ահարկու գազաններ, և ոճավորված բույսեր, և վերացական գծային մոտիվների ամենաանհավանական զուգորդումներ, և ընդհանուր հորինվածքում օրգանապես լուծված ճարտարապետական ձևեր: Ասես հայ մանրանկարիչը առատության եղջյուրից թխեցնում է այդ ամբողջ հարստագույն զարդաշխարհը իր ծաղկած ձեռագրերի մագաղաթի վրա... Միայն կելտական և գոթական ձեռագրերում կգտնենք ձևերի այդ վիթխարի հարստության նմանությունը»[27]:

Իսկ ձևերի այդ «վիթխարի հարստությունը» ունեցե՞լ է արդյոք որևէ տեսական կամ քննադատական հիմք իր ժամանակին, ունեցե՞լ է արդյոք բովանդակային կամ գեղագիտական պատվանդան: Ը-ժդ դարերի «խորանների մեկնությունները» ցույց են տալիս, որ ձևերի այդ վիթխարի հարստությունը տեսականորեն հիմնավորել են հայ եկեղեցու այնպիսի խոշոր գործիչներ, ինչպիսիք են Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Սյունեցին (մահ. 735 թ.), կաթողիկոս ս. Ներսես Շնորհալին (1100-1173), Տաթևի վանահայր և համալսարանի ռեկտոր ս. Գրիգոր Տաթևացին (1346-1409) և ուրիշներ:

Նրանց երկերի ուսումնասիրումն ու գիտական հրապարակումը լույս կը սփռեն ոչ միայն հայկական, այլև ասորական, հունական և վրացական շատ ձեռագրերի բովանդակած խորանապատկերների «ձևերի վիթխարի հարստության» և նրանց «վառ գունագեղության» վրա: Ավելին, ինչպես հաղորդում են այդ երկերի հեղինակները և ինչպես ակներև կդառնա հետագա ուսումնասիրության ընթացքում, նրանք լրիվ հիմնվել են եկեղեցու սուրբ հայրերի ավանդությունների վրա: Առայժմ մեզ չի հաջողվել գտնել հույն կամ ասորի հեղինակների համանման երկեր: Դա ավելի հրատապ է դարձնում «խորանների մեկնությունների» գիտական հրապարակումը և նրանց ձեռագրագիտական, արվեստագիտական համակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև նրանց կիրառելիության տարբեր չափերի բացահայտումը հայ մատենական արվեստի գոյության տարբեր շրջաններում:

Հասկանալի է, նման գործը կապված էր մեծ դժվարությունների հաղթահարման հետ: Եթե աշխատությանս պաշտոնական խմբագիր արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանը

[27] Лазарев В. Н. Византийское и древнерусское искусство. Статьи и материалы. М. 1978, с. 60.

ինձ կարող էր օգնել միջնադարագիտության տեսական ընդհանուր գեղագիտական, խորհրդաբանական, արվեստագիտական և այլ հարցերում, ապա ինձ հարկավոր էր ունենալ ևս մեկ խմբագիր, որի համար ձեռագրագիտական խնդիրները օդի և ջրի պես կենսական լինեին: Այդպիսին հանդիսացավ Մատենադարանի ձեռագրերի գլխավոր ավանդապահ, ձեռագրերի փայլուն գիտակ և աղբյուրագետ Գեորգ Տեր-Վարդանյանը, որի հետաքրքրություններին, գիտելիքներին և մասնագիտական գրաղմունքների խոհանոցին բաջ ծանոթ էի գործի բերումով: Եվ իրոք, հայերենի պատմական տարբեր շերտերի նրա իմացությունը ոչ միայն տպագիր, այլև անմիջապես ձեռագիր աղբյուրների միջոցով, բազմաթիվ ճշտումներ կատարելու նրա մեծ հնարավորությունները, բացառիկ խանդն ու նվիրումը մեր գործի առաջշարժման նկատմամբ, անօրինակ բծախնդրությունը ոչ միայն բառածների, այլև ուղղագրական և կետադրական ճշտումների նկատմամբ, նաև ամբողջ աշխատության վերակառուցման առումով (ձեռագրերի նկարագրությունների, բնագրերի, ծանոթագրությունների նպատակահարմար տեղադրումները, վերջապես հայ ձեռագրագիտության վիթխարի փորձի նրա լայն իմացությունը) մեր աշխատությունը ազատեցին հնարավոր մեծ թվով սխալներից և անորոշություններից:

ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռագիր Ավետարաններից առաջ գետեղված են եկեղեցական պատմագիր Եվսեբիոս Կեսարացու (ծնվ. մոտ 265 թ.) թուղթը ոմն Կարպիանոսի և նրա կազմած չորս Ավետարանների համաբարբառը (համաձայնության տախտակները), որոնք հայ մատենագրության մեջ կոչվում են խորաններ ակնհայտորեն Եվսեբիոսի կազմած թղթի և համաբարբառի խորանակերպ (կամարակերպ) ձևավորման համար:

Եվսեբիական համաբարբառից առաջ գործածվում էին Տատիանոսի (ծնվ. 120 թ.) համաբարբառը (diatessaron)-Ավետարան առ ի չորից[1], փաստորեն չորս Ավետարաններից կազմված մի բնագիր, որտեղ վերացված էին նրանց միջև նկատված որոշ հակասություններ, և 9 դարում ապրած Ամոնիոսի համաբարբառը, որի մասին, ըստ Հ. Անասյանի, միակ աղբյուրը Եվսեբիոսի հիշյալ թուղթն է[2]: Վերջինս և համաբարբառը ե դարում թարգմանվել են հայերեն և համատարած գործածվել ձեռագիր Ավետարաններում, իբրև նրանց անկապտելի մաս:

Խորանների մեկնությունների հրապարակվող բնագրերը, ըստ էության, վերաբերում են հենց համաբարբառի (նաև Եվսեբիոսի թղթի[3], թեև այդ մասին ուղղակի մատնանշում չկա) խորանների գեղարվեստական ձևավորմանը: Մեկնությունների հեղինակները պնդում են, որ համաբարբառի կանոնների ձևավորումը կամարներով, սյուներով, ծաղիկներով, թռչուններով, գույներով ոչ թե կամայական է, այլ խորապես մտածված ու իմաստավորված: Իսկ ինչպե՞ս: Յուրաքանչյուր մեկնություն դա անում է յուրովի, ընդգրկելով նաև նախորդ մեկնությունների փորձը, փաստորեն դառնալով խորանների պատկերման արվեստի տեսություն:

Խորանները ձևավորվում էին ճարտարապետական և զարդային

---

[1] Տես Պ. Էսադալեան. Տատիանի համաբարբառը և հայերէն աւետարաններու առաջին թարգմանութիւնը. Վիեննա, 1937:

[2] Հ. Ս. Անասյան. Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը. Էջմիածին, 1972, էջ 6-7:

[3] «Մատենագրութիւնք Եւթաղի, Քննութիւն և բնագիր. Յաւելուած Եւսեբեայ թուղթ առ Կարպիանոս: Հրատ. Լ. Արիստակէս Վարդանեան ի Միսիթ. ուխտէն», Վիեննա, 1980, էջ 244-249:

տարրերով: Նրանց խորհրդանշական և գեղագիտական եզրերն են բացահայտված Ստեփանոս Սյունեցուն (Ը դարի սկիզբ), ս. Ներսես Շնորհալուն (ԺԲ դար), Վանական Վարդապետին (ԺԳ դար), Գրիգոր Խլաթեցուն (ԺԵ դար) վերագրված, ս. Գրիգոր Տաթևացու (ԺԴ-ԺԵ դդ.), Պողոս Բաբունապետի (ԺՋ դար), Հովհաննես Չիլբ Ջուղայեցու (ԺԵ դար) և ԺԱ-ԺԵ դարերի անանուն հեղինակների բնագրերում: Սույն մեկնությունները վավերական են, քանի որ դրանք բովանդակող հինգ բնագրերի հնագույն ձեռագրերն ընդօրինակված են ԺԱ-ԺԳ դարերում:

Ավետարանն սկսող խորանապատկերները դիտվում են իբրև «նախադրութիւն փառազարդ և աստուածապայծառ մտաւոր գանձուցն» (իմա՝ Ավետարանների խոսքի): Հետևաբար խորանապատկերները, ըստ մեկնությունների, իրենց գույներով, զարդամոտիվներով, խորհուրդներով (սիմվոլներով), հոգու վրա զգայական ներգործումով կազմում են Ավետարանագրքի բաղկացուցիչ մասը, ծառայում իբրև նախադուռ, իբրև նախագիտելիք, իբրև հոգեբնախոսական ներշնչում, ավետարանական «սրբազնագրությունների» (Դիոնիսիոս Արիոպագացի)[4] խորքերը մտնելու համար:

Քանի որ խորանները ծուտք են Ավետարանների «հոգևոր իմացական գանձերի» (բնագիր Ե), ուրեմն նրանք ևս օժտված են այդ «գանձերի» խորհրդավորությամբ, և նրանց բովանդակած ոչ մի մոտիվ անիմաստ չէ: Ըստ այդ մեկնության, Ավետարանների գրիչներն ու ծաղկողները պետք է հետևեին այդ սիմվոլներին «մտավոր գանձերը» «տեսանելի գույնով» արտահայտելու համար հուրախութիւն և ի հանգիստ զգայարանների: Եվ այստեղից հեռու չէ բացարձակ գեղագիտական ընկալումը: Եվ երրորդ, և չորրորդ մեկնություններում (հնագույն ձեռագրերը ԺԳ դար) Աստծո արարած աշխարհը երկու մասի է բաժանվում «Ի կարևորն և ի վայելմունս» կամ «կէսք ի սոցանէ կարևոր են և կէսք վայելչութիւնը միայն են»: Ամբողջ աշխարհը դիտվում է մարդու հետ առնչակցության տեսակետից:

Խորանների մեկնությունների նպատակը, սակայն, հնարավոր չափով խորանների պատկերամոտիվների իմաստաբանությունն է: Այն սկսվում է հենց խորան[5] բառի մեկնությունից (Բնագիր Գ). «Եւ

---

[4] Այսուհետև օգտագործվում է հայոց մատենագրության մեջ քաղաքագրություն ստացած Արիոպագացի ձևը:

[5] Խորան բառը բազմանշանակ է - վրան, տաղավար: Խորանք երկնից – խորանածն կամար նորա: Խորան - նկեղեցի, տաճար: Խորան – սեղան կամ բեմն ի մէջ տաճարի, ուր մատչի սուրբ պատարագն: Խորան - դիւան, գմբեթաւոր ատենա

խորանք ասին, քանզի խորհրդական են ամենեքեան և խորհուրդն ոչ ամենցունց է յայտնի, այլ սակաւուց. և բաւանդակն Աստուծոյ միայն»: «Քանզի խորհրդականք ենք» - նշանակում է որովհետև սիմվոլիկ ենք: Այստեղ «խորհուրդ» բառը իր բազմաթիվ իմաստներից բացի գործածված է երկու առումով. ա) այն, ինչ հույները և լատինները հասկացել են «միստերիում» բառի տակ (գաղտնիք, աստվածային կամ սրբազան ինչ). բ) նշանակություն, օրինակ (ինչ հույները և լատինները հասկացել են «սիմբոլոն» կամ «սիմբոլում» բառով) (տես ՆՀԲ, Բ, էջ 976):

Ս. Գրիգոր Տաթևացին *խորան* բառը այսպես է մեկնում. «Եւ խորան կոչի, զի *խոր* ունի խորհուրդ ամբարեալ յինքեան» («Վասն ժ խորանացն և զանազան գունոցն» ենթագլխում): Նա «խորան» բառը բխեցնում է *խոր խորհուրդ* բառերից: Այստեղից պարզ է դառնում, թե որքան մեծ տեղ էին տալիս հայ միջնադարի մեծագույն հեղինակները մոտիվների *սիմվոլիկ* կամ *խոնարհական* նշանակությանը: Իմաստաբանական հատվածների հետ հանդես է գալիս նաև մեկնիչների պատվիրանող շեշտը: Այսպես, Ստեփանոս Սյունեցու մեկնությունը, եթե ճիշտ ենք ընկալում հունաբան ոճով խրթին գրվածքի իմաստը, «վսեմական բայիւ» պատգամում է տասը խորանների կամարածև (խորանայարկ) գուներանգները: Երրորդ (Շնորհալու) մեկնությունը, թեև առաջինին գիջում է իր «վսեմական» խոսքով (սկզբնամասում), սակայն գգուշացնում է, որ ինչպես Աստված խորանի և տաճարի «սքանչելի գարդերով» դաստիարակում էր Իսրայելի ազգը, այդպես էլ Ավետարանների ցանկիչներն ու հիմնադիրները (այսինքն ցանկերն ու Ավետարանների կազմողները) նկարել էին պեսպես հորինվածքներով, հեշտալի գույներով ու գույնզգույն ծաղիկներով, «երկնաւորաց և երկնաւորաց կանխաճայնութեամբ» այն, ինչ «հոգևոր վայելչութիւնք են և անապական գեղեցկութիւնք», որոնց մասին խոսվում է վերոհիշյալ բնաբանության (տրակտատի) մեջ: Իսկ ի՞նչ են դրանք այդ *հոգևոր վայելչութ-*

խորհրդոց. դահլիճ արքունի. խորան – քարկ, տուն, սենեակ. խորան – նմանութեամբ աստուծոյ. խորան – որպես խորշ տոմարաւոր աղիւսակաց. և կամինք հանճանայնութեան յորից առնտարանաց» (տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի. երկասիրութիւն նոյից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Միսիթարայ արբահօր Ղ. Գաբրիէլի Ասետիքեան. Ղ. Հայատորոյ Սիւրմելեան. Ղ. Մկրտչի Ազգերեան»». ի Վենետիկ, 1836, հատոր առաջին, էջ 972, այսուհետև ՆՀԲ): Հր. Աճառյանը իր «Արմատական բառարանում» շատ քիչ բան է ավելացնում այս իմաստներին: Ուշագրավ է, որ Ղ. Ալիշանը «Հին հատառքում» խորան բառը բխեցրել է «խոր» բառից, ինչպես Գրիգոր Տաթևացին է վարվում (Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Բ [illegible], 1973, էջ 406):

2 - Մնկն. խորանաց

ԱՐՎԵՍՏԻ ԹԱՏՐՈՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСКУССТ

յուններ և *անապական գեղեցկություններ*, որոնց այդքան մեծ նշանակություն է տալիս Շնորհալին: Դրանք պարզ է, որ չեն վերաբերում խորաններում պատկերված կամարներին, սյուներին, ծաղիկներին, դրանք վերաբերում են նրանց կրած խոր խորհուրդներին (սիմբոլներին), որոնք էլ կազմում են «իմանալի գեղեցկութիւն վայելչութեան»: «Այսորիկ սրբազան ուսումնասիրաց հարց և եղբարց մերոց սակաւ ինչ պատճառ հանճարոյ և հիմն սկսման բանականիս աւետեաց, - գրված է երրորդ մեկնության մեջ, - զի գիտասցուք, եթէ ոչ վայրապար և առանց խորհրդոյ են նկարեալ զծաղկածն բանդուածս գոյնագոյն երանգոց *խորհրդական* խորանացս տասանց հարք առաջինք, այլ հոգեշարժ իմաստիւք տեսեալ զատացեալս յաւրինեցին զայս և հեղին կրկին աչաց բանական արանց առաջի *երնելի հայեցուածովս* ընդ տեսանելի նիւթս առաջնորդեալք յիմանալի գեղեցկութիւն վայելչութեան, որպէս և ասեն Պաւղոս, եթէ աներևոյթքն Աստուծոյ երևելի արարածովքս իմացեալ տեսանին...»:

Այսպիսով, ոչ թե վայրիվերո կերպով, այլ ելնելով «հոգեշարժ իմաստներից», հորինվել է այս բնաբանությունը սրբազան հայրերի ու եղբայրների համար, ամեն մի պատկերամոտիվ օժտելով խորհրդավոր իմաստով:

***

Խորանների մեկնությունների բնագրի ըը բացառիկ արժեք ունեն կերպարվեստի տեսության պատմության տեսակետից: Դրանք կարելի է համարել խորանների պատկերային ձևավորման արվեստի միջնադարյան տեսության փայլուն օրինակներ: Եվ էականն այն է, որ այդ փաստաթղթերն ունեն շեշտված տեսական բնույթ, հարուստացված հոետորական, փիլիսոփայական, աստվածաբանական այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են *գեղապանծութիւն, վսեմական, շաղաշարեալ, գոյնք, յոյս, կարևորն, վայելչականք* կամ *վայելչութիւնք, ծնացեալոց* կամ *ծնացեալ, պայծառագունութիւնք, հեշտալրութիւնք, երևելի գունովս, հանգիստ, յաւրինուածք, գեղեցկութիւնք, տպաւորութիւն, թիւ, խորհուրդ, հանճար, առաջինութիւն, աւրինակ, նախատիպ, տեսութիւն, աստուածաբանութիւն, նշանակեմ, յոյս, ստուեր, զարդ, գեղեցկակազմ, մտաւոր, զգայութիւն, զգայարան:* Կան նաև հատուկ տերմիններ *կամոն, խորան, ցանկ, ցրուացանկ, աստառ, շուք, բաց, տուն, ճանապարհ ցանկ, վերնակետ* և այլն: Ընդ որում, այդ հասկացություններն օգտագործվում են վարպետորեն, իրրև ինքնին հայտնի հունաբան դպրոցի բարգմանութ-

յուններից ու ինքնուրույն գործերից և Դիոնիսիոս Արիսպագացու Ստեփանոս Սյունեցու թարգմանություններից ու մեկնություններից: Մինչդեռ դրանցից շատերը, ինչպես *կարգ, վայելչութիւն, գեղեցկութիւն, բարի, գոյն, պայծառագունութիւն, ձև, գարդ, հեշտալրութիւն* և այլն, մանրակրկիտ քննության առարկա են Բոեցիոսի, Օգոստինոսի (կարգ, լոյս, գեղեցկութիւն և այլն), Բոնավենտուրայի (վայելչութիւն), Դիոնիսիոսի (լոյս, պայծառագունութիւն, գոյն, աստուածաբանութիւն) և ուրիշների մոտ[6]: Յաճախ մեկնություններում այդ հասկացությունները ենթատեքստով տարբերվում են վերոհիշյալ հեղինակների մեկնաբանություններից, բայց դա առաձին լուրջ ուսումնասիրություն է պահանջում: Վիտելլոյի «Պերսպեկտիվան»[7] պարզապես նոր աստիճան է միջնադարյան արվեստի տեսության և տեսողունակության մեջ: Թեոփիլոս Երեցը (ԺԱ-ԺԲ դդ.) ու Վիլլար դե Յոննեկուրը (ԺԳ դար) կերպարվեստի ու կիրառական արվեստի մասին իրենց դատողություններում ավելի խոսում են տեխնիկայի ու վարպետության մասին (մեր մեկնություններում այդ հարցերը քննության առարկա չեն)[8]:

Նկարչության տեսության ու պրակտիկայի մասին միջնադարում ամենից շատ գրում էին Չինաստանում (Սե Հե, Վան Վեյ, Գո Սի, Սու Շի, Գո Ժո Սյույ և այլք): Այս հեղինակների գրվածքները հետևում են բոլորովին այլ ուսմունքների, որոնք արմատապես տարբեր են խորանների մեկնությունների սիմվոլիկ-այլաբանական հայեցողությունից: Նրանցում արծարծվում են ինտուիցիայի, ձեռքի ու աչքի վարժության, ամեն մի առարկայի առաձնահատկության ու նրա բաբուն աստվածային աճի ու բղխի վրա այդ պրոցեսի արձանագրման, տուշի ու վրձնի նկարչության տեսակների ու կատարյալ նկարում դրանց գուգորդման հարցերը, հատկապես պատկերի «բնության ստեղծագործական ուժի» և «սրտի խորքերից» բխելու հարցերը, որոնց հասել են իմաստուն պալատականները կամ վսեմ անապատական իմաստունները[9]:

Բայց մեր մեկնությունները նկարիչները չեն կազմել, այլ եկեղե-

---

[6] Տես "История эстетики. Памятники мировой эстетической мысли". Том первый (Античность, Средние века, Возрождение). М., Изд. АН СССР, 1962, сс. 261, 276, 277, 334, 335.

[7] Նույն տեղում, էջ 303-305.

[8] "Мастера искусства об искусстве". Том первый. М., Изд. "Искусство", с. 231-244, 248.

[9] "Мастера искусства об искусстве". Том первый, с. 59-102; К. Самоскэ. Го Си. Ленинград, изд. "Искусство", 1978. Го Жо-Сюй. Записки о живописи: что видел и слышал. М., изд. "Наука", 1978.

ցական հայրերը, ուստի նրանցում նկարչի հոգու շարժման մասին խոսք չկա: Ինչպես նկատում է Պ. Ֆլորենսկին, «... Եկեղեցին ընդունում էր և ընդունում է իբրև իսկական սրբանկարիչ սուրբ հայրերին»[10], այսինքն նրանց, ովքեր որոշում էին նկարելու կանոնները ու սխեմաները, իսկ նկարիչը հանդես էր գալիս իբրև դրա տեխնիկական կողմի իրագործող:

Ճինական քննախոսությունների կենդանի ու ցայտուն նախադասությունների խորքում գործում են կոնֆուցիոսականության, դաոսիզմի ու բուդդայականության կանոնները: *Դաո, լի, ին և յան* և այլ հասկացություններ շատ ծկուն են: Մեր մենկնություններում միակ կենդանի հայեցողությունը նկատվում է աշխարհի նկատմամբ մարդու վերաբերմունքում, գույների, բույսերի, հավքերի, կամարների, սյուների պատկերների վայելքում, ընդ որում այդ վայելքը ուղեկցվում է դրանց խորհրդաբանությամբ (սիմվոլիկայի բացատրությամբ): Մենկնությունների հեղինակները, իհարկե, դեռևս հեռու են աշխարհը երկրաչափական և օպտիկական օրենքներով բացատրելու ձգտումից, ինչ առկա է եվրոպական ուշ միջնադարում Վիտելլոյի, Վիլար դե Հոննեկուրի ու Չենինո Չենինիի մոտ: Բայց նրանք հավանաբար առաջինն են, որ գործադրեցին Դիոնիսիոս Արիսպագացու ուսմունքը մեր սահմանափակ զգայական հնարավորություններով խորհուրդների միջոցով աստվածայինի հետ հաղորդակցվելու մասին, ինչպես սյուրռեալիզմի գեղարվեստական տեսություններում գործադրվում էր Ֆրոյդիզմի ուսմունքը ենթագիտակցականի մասին:

Մենք կարող ենք բերել մի քանի քաղվածքներ Արիսպագացու գրվածքների Ը դարի սկզբի հայերեն թարգմանություններից, որոնք, ինչպես կտեսնենք հետագա քննության ընթացքում, ելակետային էին մեր մենկնիչների համար. «... Քանի որ մեր միտքը անկարող է հասնել այն աննյութ [գոյերին], որոնք [ներկայացնում են] երկնային քահանայապետությունների նմանություններն ու ըմբռնումները, ապա նյութական [գոյերի] առաջնորդությամբ ենք մոտենալու նրանց և երևացող գեղեցկություններն ենք համարելու աներևույթ վայելչության կերպեր, նաև զգայական բույրերը՝ իմացական հոգու բաշխման և նյութական լույսը՝ աննյութ լուսավորության պատկեր...»[11]: Ահա այս մտքի վրա է խարսխված մենկնություններում

[10] Павел Флоренский. Иконостас. — "Декоративное искусство СССР", N 6, 1988, с. 26.

[11] «... եւ զի ոչ մարթ է մերոցս մտաց առ աննիւթս այն ձգտել երկնայինիցն քահանայապետութեանց նմանութիւնս և տեսութիւնս, եթէ ոչ նիւթականաւք ինչ առաջ-

պատկերների ու գույների ողջ խորհրդապաշտական գաղափարաբանության պաթոսը: Եվ իրոք, եթե ողջ երկրային քահանայական կարգը և ծեսերը ծառայում են երկնային քահանայապետություններ[12] մեզ տեսանելի դարձնելու համար, ապա ինչո՞ւ խորանների մոտիվները չպետք է ծառայեին Հին և Նոր Կտակարանների ողջ պատմությունը մեզ տեսանելի դարձնելու համար խորհուրդների (սիմվոլների) միջոցով: Գ և Դ մեկնություններում զգայական ուղիներով աստվածայինը ինչ-որ չափով ճանաչելու հեդոնիստական (վայելչական) մեկնությունը ևս գալիս է Արիսպագացու «Երկնային քահանայապետություններից»[13]: Նույնիսկ ամպի նկարը մեկնություններում դիտվում է իբրև Քրիստոսի հայտնությունը հին ժամանակներում գաղտնի մնալու սիմվոլ: Իսկ «Երկնային քահանայապետութեանց» մեջ ամպի պատկերը հանդես է գալիս իբրև «սրբազան իմացությունները» թաքուն լույսով ծածկված լինելու ձև[14]: Մենք մեկնությունների նույնանման և մի փոքր այլ տիպի շատ աղբյուրներ կարող ենք բերել նաև Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» և «Յաղագս աստուածային անուանց» գրվածքներից – ոսկու և աստվածային լույսի, Հիսուսի և նրա, որպես Մելքիսեդեկի կարգի քահանայապետի, գեղեցիկի, ազնիվի և բարու տեսության վերաբերյալ:

նորդութեամբ հպեցուք առ նուսա և զերևելի գեղեցկութիւնսն աներևութի վայելչութեան կերպարանս հաճարեսցուք. և զգայական անուշահոտութիւնս տպաւորութիւնս իմացականին հոգւոյ բաշխման և աննիւթ լուսաւորութեանն պատկեր գնիւթական լոյս...» («The Armenian Version of the Works Attributed to Dionisios the Areopagite». Ed. by Robert W. Thomson. Lovanii in Aedibus E. Pakers. 1987. Scriptores armeniaci. Tomus 17. p. 2. H. H. I, 3).

[12] «... Սիա մեր համեմատական կարգով աստվածանալու այդ պատճառով մարդասերն [Աստված] մեզ ցույց տվեց երկնային քահանայապետությունների սրբությունը և նրանց համեմատ ստեղծեց մեր քահանայապետությունը ըստ մեր կարողության նմանությամբ նրանց աստվածատեսակ քահանայապետությանը, սրբազան գրերով և նրանցում ասվածները զգալի պատկերների ձևով շարադրելով գրեց երկնային քահանայապետությունների մասին, որպեսզի զգայական [միջոցներով] մեզ մատուցվեն իմանալիների մասին և սրբազան պարզված օրինակներով երկնային քահանայապետությունների կատարելության սպրդությունը» («... Այդ պատ աղագաւ մեր համեմատաբար աստուածանալոյս մարդասէրն կատարողապետութիւն զերկնայինսն քահանայապետութիւնս մեզ երևեցուցեալ և պաշտաւնակիցս նոցա կատարեալ գմերս քահանայապետութիւն ըստ կարողութեան մերոյ նմանութեամբ աստուածատեսակ նոցա քահանայապետութեանն, զգալեաւք պատկերաւք զերկնայինս գրեաց իմացութիւնս սրբազնագրութեամբք և առացելոցն շարադրութեամբ, որպեսզի զմեզ վերաբերեսցէ զգայականաւք յինամանալիսն և սրբազան ստեղծականացն աւրինակաց ի պարզ կրթս յերկնայնոցն քահանայապետութեանց ծայրագունութիւնսն») (նույն տեղում, էջ 2-3. H. H. I, 4):

[13] Նույն տեղում, էջ 47 (H. H. XV, 2):

[14] Նույն տեղում, էջ 56 (H. H. XV, 6):

Խորանների մեկնությունների բնագրերը բացառիկ արժեք ունեն միջնադարյան քրիստոնեական արվեստի տեսության ու պրակտիկայի մի շարք կարևոր հարցերի բացահայտման համար: Դրանք բավականաչափ հստակ գանազանվող միստիկական (թվերի տեսություն), աստվածաբանական (սիմվոլիկ ու այլաբանական նկարչական կերպավորումների գործնական պատվիրաններ), բնագանցական (մարդուն տրվող աստվածային վայելքի ճանաչման ուղիները), գեղագիտական (յուրատեսակ հեդոնիզմի հիմնավորում) հարցեր են: Սույն բնագրերը կարող են հարուստ նյութ տալ նաև միջնադարյան կերպարվեստի տեսության ուսումնասիրությունների համար:

ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Առ այսօր հրապարակվել է խորանների մեկնություններից երկուսը – մեր բնագրերի շարքում առաջինը և երրորդը, որոնք գրչագրերում ընդօրինակված են ավելի հաճախ[1]: Հետաքրքիր է, որ Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության հրատարակության «Յորդորակ ներբողականում» Ներսես Շնորհալին հատկապես խորանների մեկնության համար հոչակվում է իբրև «նոր Մովսես նորոյս Իսրայէլի», որ է «խնամող և զարդարող որպես նորին (այսինքն Մովսեսի կողմից – Վ. Դ.) և սորին (այսինքն Ներսես Շնորհալու կողմից Վ. Դ.) նորոյ եկեղեցական վայելչութեանց, մանաւանդ ըստ առաջակայ գործոյն որ իբր *յառաջաբանութիւն* կամ *դուռն* յարմարեալ է մեկնութեան աւետարանին՝ որ ըստ Մատթէոսի, *զմեկնութիւն տասն խորանաց՝ նմանութեամբ տասնփեղկեան խորանին*, զոր Մովսես կանգնեաց և ծածկեաց անդ և ներքս զօրինակն խորհրդոյ ճշմարտութեան»: Եվ, ի տարբերություն Մովսեսի, ըստ ներբողյանի հեղինակի, Շնորհալին ոչ թե փակում է տասը փեղկը, այլ բացում է նրանց վարագույրները: Սա ինչպիսի բարձր գնահատություն է տրված խորանների մեկնությանը հրատարակչի կողմից, առանց դույզն իսկ կասկածելու, որ այն Շնորհալու գրչին է պատկանում (առաջիկայում մենք կտեսնենք, թե ինչպես են մեծանում կասկած-

---

[1] Ստեփաննոս Սյունեցուն վերագրվող մեկնության հրատարակումը երջանկահիշատակ Գ. Սրվանձտյանցի կողմից պակասավոր է և ոչ շրջանի ձեռագրից (տես Գ. Վ. Սրուանձտեանց. Ճորոս աղբար. Հայաստանի ճամբորդ. Մասն առաջին, Կ. Պոլիս, 1878, էջ 192-194), որը պատկանում է դրիմյան խմբագրության և եղել է Սեբաստիայի եկեղեցիներից մեկում: Այս խմբագրությունը հատկանշվում է նրանով, որ մեկնությունը վերագրում է Ստեփաննոս Սյունեցուն (եթե հետևենք ձեռագրերի մեր ցանկին, այդ վերնագրումը «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» ակսվում է Բարձր Հայքի Խաղտյաց գավառից և ապա այնտեղից անցնում Դրիմ): Նույն մեկնության հաջորդ հրատարակումը պատկանում է պրոֆ. Ս Տեր Ներսեսյանին և քաղված է Ֆրերի պատկերասրահի N 50.3 ԺԲ դարի վերջի կիլիկյան Ավետարանից (տես S. Der Nersessian. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington, 1963, p. 103-104): Տեքստն ամբողջական է, առանց վերնագրի: Ի դեպ ԺԲ-ԺԴ դարերի Մեծ Հայքի գրիչների մեծ մասը բնագիրն ընդօրինակում է առանց նշելու հեղինակի անունը:

9 մեկնությունը հրատարակված է Կ. Պոլսում 1825 թ. իբրև նախաբանություն Սատթեոսի Ավետարանի մեկնության («Մեկնութիւն սուրբ աւետարանի որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ սինջ ի հաճարն 17. հինգերորդ գլխոյն և անտի արարեալ յերանելոյն Յոհաննու երգնկացւոյ որ և կոչի Ծործորեցի», տպագրեալ ըստ ընտիր օրինակաց, Կ. Պոլիս, 1825):

ները Շնորհալու հեղինակության նկատմամբ: Միայն մի բան գիտենք, որ խորանների ամենաընդարձակ մեկնությունների հեղինակներ Ներսես Շնորհալին և Գրիգոր Տաթևացին դրանք դրել են իբրև Մատթեոսի Ավետարանի իրենց իսկ մեկնությունների նախադրության մաս, իսկ Ստեփանոս Սյունեցին, թեև խորանների մեկնությունը չի դրել իբրև նախադրություն (նրա մեկնությունը խորանների հետ հանդես է գալիս իբրև Ավետարանների նախադրություն), սակայն ինքն էլ է ստեղծել չորս Ավետարանների մեկնություն, ընդ որում գլխավոր տեղը հատկացրել է Մատթեոսի Ավետարանին[2]:

Հաշվի առնելով ինչպես Հայաստանում, այնպես էլ Սիլիցիայում և արտասահմանում ու Ռուսաստանում միջնադարագետների, արվեստաբանների ու գեղարվեստասերների ցանկությունները, մենք հրատարակեցինք 13 մեկնությունները աշխարհաբար թարգմանությամբ, հանելով ամբողջ գիտական և բնագրագիտական հետազոտությունը (Խորանների մեկնություններ, 1995, Սարգիս Խաչենց, Երևան):

Արդեն իբրև խորանապատկերները պարզաբանող գործեր դրանք առաջին անգամ համառոտ դիտարկում է Ս. Տեր-Ներսեսյանը: Խոսելով Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի Ն 1635 (1198 թ.) ձեռագրի խորանների մասին, նա վերապատմում է նաև մեր մեկնությունների շարքում երրորդը, իբրև Ներսես Շնորհալու աշխատություն[3]: Այդ մեկնությունը ս. Ներսես Շնորհալուն վերագրելու հիմքում նրա, իբրև նախադրության, առկայությունն է Ներսես Շնորհալու և Հովհաննես Երզնկացու (Օձոձորեցու) կազմած Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ: Ս. Տեր-Ներսեսյանը խոսում է նաև առաջին մեկնության մասին՝ ինչպես Գ. Սրվանձտյանցի հրապարակման, այնպես էլ իր ինացած մի ձեռագրի (Բրիտանական թանգարան, or. 2707, էջ 1-4բ) հիման վրա, այն ենթադրելով իբրև Շնորհալու մեկնության համառոտում[4]: Այսուհանդերձ, շեշտը դրվում է երրորդ Շնորհալու մեկնության վրա: Գիտնականը հատկապես կանգ է առնում իններորդ և տասներորդ կանոնների մեկնության վրա և, համեմատելով մեկնության որոշ մոտիվներ մի քա-

---

[2] Տես Ա. վրդ. Գ. Գրիգորեան. Ստեփանոս Սիւնեցի. 1958, Պեյրութ-Լիբանան, էջ 49: Նաև Ստեփանոս Սիւնեցի. Մեկնութիւն չորից աւետարանչացն (աշխ. Գարեգին կաթողիկոս Հովսեփեանի). Համառ. Արեւելցի. Մեկնութիւն Առակաց (աշխ. Մխիթար քհն. Սարիբեկեանի). «Արեգ» հրատ., Երևան, 1994:

[3] S. Der Nersessian. Manuscripts arméniennes illustrés des XII[e], XIII[e] et XIV[e] siècles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise. Paris, 1937, p. 58-61.

[4] Նույն տեղում, էջ 58:

նի ձեռագրերի մանրանկար խորանների հետ, գտնում է, որ նկարիչները մեկնություններին ծանոթ են եղել, երբեմն նույն գաղափարի համար կիրառելով տարբեր սիմվոլներ[5]: Ս. Տեր Ներսեսյանին թվում է, որ Շնորհալուն ծանոթ է եղել իր ժամանակի մանրանկարչական պրակտիկան, և նա ցանկացել է դրանք վերածել համապատասխան սիմվոլների: «Բյուզանդական գրականությանը և լատին, ինչպես և իր սեփական երկրի մատենագրությանը խորագիտակ մարդը կարող է գտնել հին գրվածքներում ցրված կենդանիների և բույսերի բազմաթիվ սիմվոլիկ բացատրություններ, - գրում է նա: – Սակայն նա (Շնորհալին – Վ. Ղ.) անտարակույս ինքնուրույնաբար համածայնեցնում է անջատ հատվածները կամ գտնում բացատրություններ, վերցնելով որպես նմուշ իր ժամանակի հայկական ձեռագրերի հորինվածքները»[6]:

Փաստորեն բերելով մեկնությունը, գիտնականը ճշտում է իր քննած ձեռագրերի ժամանակը, մի քիչ վերև տարակուսելով, որ «հարկավոր է ունենալ չափազանց սուր երևակայություն ենթադրելու համար, որ ընծառյուծի որսորդը, ուղտապանը, որ առաջնորդում է ուղտին, կամ մյուս խմբերը, որոնք այնքան կենդանի նկարված են Փարիզի (ազգային գրադարանի – Վ. Ղ.) հուն. N 64 ձեռագրի կաճոնների վերևում, ունեն այլաբանական իմաստ կամ, ավելին, բաց անել Սլքե թագուհու Ավետարանի կոկորդիլոսների որսի ծածկիմաստը: Այդ մոտիվները զուտ դեկորատիվ բնույթ ունեն»[7]:

Անշուշտ մեկնությունները հիմնված են նկարիչների որոշակի փորձի վրա: Եվ կենդանի պատկերները (զարդային թե ֆիգուրատիվ) մեքենաբար հարմարեցնել այդ մեկնությունների պրոկրուստեսյան մահիճին այնքան էլ ճիշտ չէ: Սակայն այդ մեկնությունները միջնադարյան քրիստոնեական մշակույթի արտահայտությունն են և այդ իմաստով համարժեք և Մեծ Հայքում, և Կիլիկիայում և այլուր ստեղծված մեծարվեստ խորանապատկերներին, միանգամայն արժանի հրապարակման և մանրազնին ուսումնասիրության իրենց արտահայտած բոլոր եզրերով, իբրև արվեստի տեսության գրական հուշարձաններ:

Ս. Տեր-Ներսեսյանը նորից խորհրդածում է, բայց այս անգամ Սյունեցուն վերագրված մեկնության շուրջ, մեկնության հնագույն ձեռագիր օրինակներից մեկը հրապարակելիս: Այստեղ նա հենց

[5] Նույն տեղում, էջ 60:
[6] Նույն տեղում, էջ 61:
[7] Նույն տեղում, էջ 61:

այս մի մեկնության համար բնագրի լեզվի և ոճի բանասիրական ուսումնասիրություն է պահանջում, այն համարելով Ը դարի գործ: «Շատ հետաքրքիր կլինի արվեստի պատմաբանների համար,- գրում է նա,- եթե մի բանասեր համեմատի այս բնագրի (առաջին մեկնության – Վ. Պ.) լեզուն և ոճը ճշտելու համար նրա վերագրումը»[8]: Այնուհետև գիտնականը ավելի է ճշտում ու խորացնում իր միտքը: «Թեև հեղինակը (ենթադրենք, Ստեփանոս Սյունեցին – Վ. Պ.) չի փորձում նկարագրել կանոնի աղյուսակների (խորանների – Վ. Պ.) զարդարուն կամարները, բայց նրա մեկնաբանությունը պետք է հիմնվեր այդ հորինվածքների վրա, և, հակառակ ակնարկների անորոշությանը, այն թերևս պետք է բխեր ութերորդ դարում գործածված պատկերազարդման այն տիպերից, որոնք ակներևորեն նախորդել են պահպանված ամենավաղ օրինակներին»[9]: Փաստորեն այստեղ ևս Ս. Տեր-Ներսեսյանը այն կարծիքին է, որ խորանների պատկերները պետք է նյութ տված լինեն մեկնությանը: Եվ, իրոք, ինչպես նկատում է նա, մեկնության մեջ նշված թռչունների ու բույսերի ցանկը կա Ժ դարի ձեռագրերի խորաններում, նույնիսկ վերարտադրված է մեկնության մեջ նկարագրված ճյուղերի թիվը («Իսկ ճուճենիքն երեք ստեղունք ի միում փնջի ելեալ...»):

Հաջորդ հեղինակը, որն անդրադառնում է Շնորհալուն վերագրված Գ մեկնությանը, Գարեգին Խաչատրյանն է: Նա գրում է «Մանրանկարչական գաղափարապատկերներ» խորագրով մի փոքրիկ ծանոթություն, ապա «Մեկնութիւն տաղը խորաններու մասին, գրեց Յովհաննես Երզնկացի, ԺԳ դար» վերնագրով արևմտահայերեն թարգմանությամբ ներկայացնում Գ բնագիրը: Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության շարունակող նա համարում է Օրբոռեցի և Պլուզ կոչված Յովհաննես Երզնկացուն[10], նույնացնելով Օրբոռեցուն և Պլուզին, որին էլ վերագրում է մեկնությունը («խորաններու մեկնութիւնը կը թուի, թէ Երզնկացիինն եղած ըլլայ, նկատի առնելով նոյն իսկ լեզուն»[11]): Միջնադարում միայն ԺԳ դարի Մատենադարանի N 5254 ձեռագրի գրիչն է մեկնությունը վերագրում Վարդանին (ըստ Փ. Անթաբյանի Վարդան Հաղբատեցուն), նույն ժամանակի մեր ունեցած այլ ընդօրինակությունները չեն տալիս մեկնության հեղինակի անունը, թեև այն մեծ մասամբ հան-

[8] Der Nersessian. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington, 1963, p. 17.
[9] Նույն տեղում:
[10] «Շողակաթ», Ա տարի, թիւ 10-11, 1952 հոկտ.-նոյեմբ., էջ 290:
[11] Նույն տեղում:

դես է գալիս Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության որևէ հատվածի հետ: Առայժմ սույն մեկնությունը բովանդակող ԺԲ դարի ձեռագիր չենք հայտնաբերել:

Վերջապես, խորանների մեկնություններին խոշոր նշանակություն է տալիս Հ. Քյուրդյանը: «Մեկնութիւն խորանաց աւետարանին ասացեալ տեառն Ներսեսի Շնորհալւոյ» իր հոդվածում նա զարմանք է հայտնում, որ որևէ բանասեր այդ մեկնությունը չի դասել Շնորհալու երկերի շարքին, իսկ մեր մանրանկարչությամբ զբաղվողները լրիվ անտեսել են «մանրանկարչութեան համար խիստ կարեւոր այս բացատրական աշխատութիւնը», առանց որի խորանները բացի գեղեցկությունից այլ նշանակություն չեն կարող ունենալ «հակառակ իրենց բացայայտ խորհրդաւորութեան»[12] (սիմվոլիկայի):

Նա քաղում է «Յուշիկք»-ի Բ հատորում բերված Յովհաննես Երզնկացու հիշատակարանը[13], որը հետևյալն է. «Թէպէտ ոմանք նախ քան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարագրութեան նորին, սակայն ոչ էր կարգաւոր որպէս սրբոյն (Ներսես Շնորհալիի գրածը – Վ. Պ.), այլ հատակոտոր արարեալ գրանս առաջին մեկնչաց, նա և զբնաբանութիւն աւետարանին արտաքս մերժեալ, ուստի ոչ գայր դիւրին յիմացումն ընթերցողացն: Յաղագս որոյ ես նուաստս ի յետինս յորդիս Սիոնի ապիկար ոգիս Յովհաննէս Երզնկացի, սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի՝ ի վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սք. Աստուածածնին, այլ և ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսելութեան, յորոց յորդորմանէ և ի փափագելի խնդրոյ եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան... Եւ արդ եղև գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՈՅԺՋ (1316), որոյ զօրութեամբ բուռն հարցուք գբանէս»[14]:

Ուրեմն 1316 թ., այսինքն Մատթեոսի մեկնությունը լրացնելու թվականը, ոչ մի կերպ չի համընկնում խորանների Գ մեկնության առաջին ձեռագրերի ժամանակի հետ, հետևաբար այն չէր կարող գրած լինել Յովհաննես Ծործորեցին: Մեզ տարօրինակ է թվում, որ վաստակաշատ Հ. Քյուրդյանը չի հիշում Ս. Տեր-Ներսեսյանի անու-

---

[12] «Բագմավէպ» հայագիտական բանասիրական գրական հանդես. ՃԼԱ տարի – 1973. 3-4, Վենետիկ, սբ. Ղազար, էջ 423:

[13] Հ. Պ. Ս. Ալիշան. Յուշիկք հայրենեաց հպոց. հատոր Բ. Վենետիկ, 1921, էջ 425: Նույնը տես և «Մեկնութիւն սուրբ աւետարանի որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ ...», էջ 107:

[14] «Բագմավէպ», ՃԼԱ տարի – 1973, 3-4, էջ 419-420:

նը, որ իրոք փորձում է քննել մեկնությունները: Սակայն նա կասհում է, որ այդ մեկնությունները արվեստի տեսության կարևոր հուշարձաններ են: Նա գիտի նաև, որ կա մի տարբերակ, որն ունի հետևյալ խորագիրը. «Տիեզերալուր եւ աշխարհալուր վարդապետի եւ հոգեւոր երգողի տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառս ժ խորանաց սբ. աւետարանիս եւ վասն երանկ ըռանկ գունոցն ծաղկանց եւ հաւուցն եւ ծառոցն ի փառս Քրիստոսի աստուծոյ»[15]: Քյուրդյանը համոզված է, որ սույն օրինակը նույն մեկնությունն է, ինչ հրապարակված էր իբրև Մատթեոսի Ավետարանի մեկնության նախադրություն: Մինչդեռ մենք պարզել ենք, որ Վասպուրականի և նրա շրջակա ձեռագրերում Ա մեկնությունը ժե դարից վերագրված է Ներսես Շնորհալուն (մինչդեռ Խաղտյաց գավառում և Ղրիմում, ԺԴ դարից սկսած այն վերագրված է Ստեփանոս Սյունեցուն): Հետևաբար Բրիտանական թանգարանի ձեռագիրը առաջին մեկնության վասպուրականյան խմբագրության մի օրինակ է:

Հ. Քյուրդյանը արել է նաև մի շատ օգտակար աշխատանք մեկ-մեկ նշելով Սաշտոցի անվ. Մատենադարանի այն ձեռագրերի համարների մեծ մասը, որոնք բովանդակում են Գ մեկնությունը, որ օգտակար եղավ քննական-համեմատական բնագրեր կազմելիս: Վերջապես, Քյուրդյանն առաջինն էր, որ գիտեր ս. Գրիգոր Տաթևացու կազմած խորանների մեկնության մասին, «որ քաղած կերևայ Շնորհալիի «Մեկնութիւն տակս տասն խորանացն» աշխատութիւնեն»[16]:

Հ. Քյուրդյանն ունի նաև «Հայկական մանրանկարչություն» անտիպ աշխատություն, որտեղ, իր ասելով, Ավետարանների խորանները համեմատել է մեկնության հետ (հավանաբար երրորդ ընդարձակ): Նա ենթադրում է, որ խորանապատկերներն ընդունվել են եվսեբյան համաբարբառի աղյուսակների հետ: Ավելի լավ է լսենք իրեն. «Արդ, որովհետև եւսեբեան խմբագրութեան աղիւսակները կամ կանոնները դրուած էին աւետարաններու սկիզբը, Եւսեբիոսի առ Կարպիանոս գրած թուղթին հետ...», թերևս «կանոններուն խորաններով զարդարուիլն ալ եկած ըլլայ կեսարեան բնագրին հետ մեզի: Աւետարաններու համաբարբառի իմաստալից և անհրաժեշտ աղիւսակներ առնուեցան ծաղկուն խորաններուն մէջ, որոնք շա-

[15] Խորագիրը վերցված է Լոնդոնի Բրիտանական թանգարանի հավաքածոյի or. 2707 Ավետարանից, որն ընդօրինակված է 1542 թ. Խլաթի Սուլաէ գյուղում Կարապետ գրչի կողմից: Այս ձեռագրի մեկնությունը Ս. Տեր Ներսեսյանը համարում է 3-րդ մեկնության համառոտված տարբերակ (տես Der Nersessian. Manuscripts..., p. 58):

[16] «Բազմավէպ», ՃԼԱ տարի – 1973, էջ 428:

բաղրուեցան աւետարանական խորհուրդներով բոլսերու, կենդանիներու, թռչուններու, գոյներու: Ադիկա անշուշտ չէր կարելի կատարել Աւետարանին նման ամենանուիրական սբ. Գրքի մը մէջ ըստ բախտի և պատահական ծաղկումներով: Անտարակոյս, հարկ տեսնուեցաւ Եւսեբեան կանոններուն խորաններուն համար ալ ծաղկման կանոններ որոշել և հետզհետէ հարկ եղաւ ընթերցողին համար ալ այդ խորհրդաւոր տասը խորաններուն համար մեկնութիւններ պատրաստել: Գուցէ սկիզբները, ե. դարէն մինչև է դար, ծաղկողներուն համար կային Եւսեբեան խորաններուն համար հրահանգներ գրուած, սակայն հետզհետէ կարիք տեսնուեցաւ ընթերցողին համար ալ մեկնութիւններ պատրաստել, որոնցմէ հայոց համար առաջին պատրաստողը եղած կրնայ ըլլալ Ստեփանոս Սիւնեցի»[17]:

Միանգամայն բնական և տրամաբանական եզրակացություն, որ բխում է հենց Գ մեկնության շարադրանքից[18]: Ավելին, ինչպես երևում է քաղվածքից, ոչ միայն տրվել են հրահանգներ, այլև իրենք «հարքն առաջինք» «հոգեշարժ» իմաստներով են նկարել խորանների զարդերը, որոնց մասին կխոսենք հետագա էջերում:

...

Եվրոպական գիտնականներին ևս խորապես հետաքրքրել են խորանների, այսինքն ճնավորված համաճայնության տախտակների (կանոնների) համակարգն ու իմաստավորումը: Ա. Տեր-Ներսեսյանից բացի նրանցից ոչ ոք, իհարկե, չի փորձել իր համար բացահայտել այդ «խորանների մեկնությունների» և խորանների ճնավորման հարաբերությունը, ոչ ոք չի փորձել ըմբռնել (այդ թվում նաև Ա. Տեր-Ներսեսյանը), թե ինչո՞ւ են անվերջ պատկերվում 2-3-4 կամարաշարքեր, 2-4 սյուներ, գլխազարդերի վերին անկյուններից բարձրացող ակրոտերիոններ (եղջյուրները, ինչպես ասում են մեկնությունները), խաչի ճները, որ մերթ քաքնված են ներքին երկրաչափական զարդերում և մեկ էլ հաղթականորեն հայտնվում են կամարների վրա կամ կամարների մեջ, կաննելյուրներով (ակոսավոր) սյուների կայուն գույները (մուգ կապույտ, վարդագույն, կարմիր), խորան-

[17] Նույն տեղում, էջ 426-427.

[18] «Այսորիկ սրբազան ուսումնասիրաց հայոց և եղբարց մերոց սակաւ ինչ պատճառ հանճարոյ և հիմն սկսանաւ բանակիս աւետեաց, զի գիտասցուք և իմասցուք, եթէ ոչ վայրապար և առանց խորհրդոյ են նկարեալ զծաղկանն քանդուածս գոյնագոյն երանգոց խորհրդական խորանացս տատանց հարքն առաջինք, այլ ոգեշարժ իմաստիւք տեսեալ զաստացեալս յարիմեցին զայս և հեղին կրկին աչացս բանականացս...»:

ների կամարների շուրջը կրկնվող սիրամարգերը, ծկնաքաղ հավքերը (ծկնկուլներ, հավալուսներ, ֆլամինգոներ և այլն), կաքավները, աքաղաղները, բաղերը, արմավածառերը, ծիթենիները, նռենիները նռան պտուղներով: Հրապարակվել է Կալիֆոռնիայում գտնվող Թորոս Տարոնացու մի ճոխ ձեռագրի մասին ամերիկյան գիտնական Թոմաս Մեթյուսի գիրքը, որտեղ զետեղված է Շնորհալու խորանների մեկնության անգլերեն թարգմանությունը: Վստահ ենք, որ մեկնություններին դիմելու Մեթյուսի փորձը մասամբ պայմանավորված էր մեր հնօրյա գրույցներով ոչ միայն խորանների մեկնությունների, այլև հենց Ավետարանների հայկական միջնադարյան մեկնությունների շուրջ, որոնց մի մասի գոյությունը պարտական ենք ս. Ներսես Շնորհալուն:[19]

Այսուհանդերձ, գիտնականների հետազոտությունները, որոնք ունեն խորանների ճարտարապետական տարրերի ծագման և դրանց իմաստավորման բնույթ, տալիս են իրենց արդյունքները, որոնք մասնավոր ճշտումներ են բերում մեր մեկնություններում արծարծված դատողություններում:

Ըստ Կ. Նորդենֆալկի, համաձայնության կանոնների կամարաշարքերը (Arkaden) ունեն սոսկ հանդիսավոր բնույթ[20]: Սակայն Յ. Ստրժիգովսկին կարծում է, որ կանոնների կամարները (Kanonbogen) արտահայտում են այնպիսի սրբազան խորհրդանշական իմաստ, ինչպես «Սուրբ Գիրքը»: Սակայն Ստրժիգովսկին կամարների սրբազան իմաստում տարօրինակ կերպով տեսնում է իրանական ծագում, մինչդեռ հայերը քրիստոնեության հաստատման, Սուրբ Գրքի և հայրաբանական գրականության թարգմանության շուրջ երեք հարյուր տարիների ընթացքում մաքառում էին սասանյանների դեմ հավատքի մաքրության համար, ուստի Մ. Աբեղյանը ոսկեդարյան շրջանի հայ գրականությունը համարել է մաքառման:

[19] Մ. Տեր Ներսեսյանից հետո Շնորհալու (մասամբ Սյունեցու) մեկնությունը լուրջ քննության է առել Թ. Մեթյուսը: Նա ևս կասկածի չի ենթարկում երկուսի հեղինակությունը: Պրոֆ. Մեթյուսը հավատում է մեկնության նոր-պլատոնական ոգին, նկատում Պիոնիսիոսի երկերի ազդեցությունը Շնորհալու մեկնության վրա: Նա նկատում է մի մանրամասն, որ ևս շատ կարևոր է, այն է 10-րդ խորանի հետ կապված ընդհանրական (կաթողիկե) եկեղեցու գաղափարը, որ արծարծում էր Շնորհալին Սահակ Կոմնենոս կայսեր և Պոլսի պատրիարքի հետ նամակագրության մեջ: Նա օգտվում է Ց. Ոսկեբերանի թարգմանությունից, որն օգտագործել է Շնորհալու 1825 թ. հրատարակությունը և Մ. Տեր Ներսեսյանի հրատարակումը, որ ավելի ամբողջական է, քան Գ. Սրվանձտյանցինը (տես Th. F. Mathews and A. K. Sanjian. Armenian Iconography. The Tradition of the Glajor Gospel. Washington, 1991, p. 169-176, p. 206-211).

[20] Nordenfalk C. Die spätantiken Kanontafeln. Göteborg 1938, Textband, S.125.

Սակայն նա իրավացի է, որ խորանները կրում են սիմվոլիկ բնույթ: Միևչդեռ միակողմանի է թվում Կ. Նորդենֆալկի այն պնդումը, թե կարևոր փաստարկ չէ ս. Ներսես Շնորհալու երկը խորանների խորհրդաբանության մասին[21]: Սակայն Ա. Տեր-Ներսեսյանի մենագրությունը[22], որտեղից Նորդենֆալկին հայտնի է ս. Ներսես Շնորհալու երկի մասին, հիշատակում է նաև Ստեփանոս Սյունեցուն վերագրվող բնագրի գոյության մասին, մի հեղինակ, որն ապրել է է դարի վերջում և Ը դարի սկզբում և ժամանակակիցն էր մեզ հասած առաջին հունական, լատինական և ասորական պատկերազարդ համաձայնության տախտակների (խորանների)[23] - դրանք են հետևյալ Ավետարանները Լոնդոն, Բրիտանական թանգարան, Add. 5111. Տրիր, Dombibliotheque, cod. 61/134. Լոնդոն, Բրիտանական թանգարան, Harl. 1775. Փարիզ, Ազգային գրադարան, syr. 33. Ֆլորենցիա, Bibl. Laur., Plut I, 56 և այլն: Արդարացի է Ն. Քոթանջյանի այն պնդումը, որ խորանները պորտալ (մուտք) են ծառայում, այսինքն հուզական նախապատրաստում Սուրբ Գրքի տարբեր իմաստների մեջ մուտք գործելու համար[24]: Նա կարծես կարդացած լինի Վանական Վարդապետի մեկնությունը, որը որոշակի ասում է, որ խորանները պայծառ գույներով «նախադրություն» (նախադուռ) են հանդիսանում Ավետարաններում գանձված փառազարդ և աստվածապայծառ մտավոր գանձերի (Դ մեկնություն):

Արդի արվեստաբանության մեջ խորանների ծագման և իմաստավորման հարցի պատմությունը փայլուն կերպով ներկայացված է Բուշհաուզեն ամուսինների մոտ՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի Ժ դարի Ավետարանի (N 697) կապակցությամբ[25] և Կ. Վեսսելի «Կանոնների տախտակներ» ընդարձակ հոդվածում[26]:

Կոստանդին Մեծ կայսրը 331-ին նոր եկեղեցիների համար պատվիրում է Սուրբ Գրքի 50 օրինակ, այդ թվում նաև այնպիսի շքեղ Ավետարաններ, որպիսին էր Կարպիանոսի համար եվսեբիոս Կեսարացու պատրաստած օրինակը: Վերջինս հավանաբար եղել է երկու

---

[21] Նույն տեղում, ծանոթ. 1:

[22] Տես Der Nersessian, Manuscrits arméniennes illustrés..., p. 38.

[23] Nordenfalk. Op. cit Tafelband. Taf. 1-4, 40-57, 74-102, 114-128, 129-148.

[24] Котлайкин Н. Г. Цвет в начальных миниатюрах Эчмиадзинского Евангелия.- "Древнерусское искусство". Рукописная книга. Сб. третий. М. 1983, с. 297.

[25] Տես H. u H. Buschhausen. Die illuminierten armenischen Handschriften der Mechitaristen- Congregation in Wien. Wien 1976, S. 17-19.

[26] Wessel K. Kanontafeln - "Reallexikon zur byzantinischen Kunst". Herausgegeben von Klaus Wessel und Marcelle Restle. B. III Stuttgart 1978, S. 928-963.

մասից կազմված Ավետարանի ընդհանուր նախատիպ: Առաջին մասը բերևս կայուն էր, երկրորդ մասը տարբերակներով:

Առաջին մասը կազմված էր Կարպիանոսին ուղղված թուղթն ընդգրկող 2-3 կամարներից, տասը համաձայնության տախտակներից և բոլորաձև տաճարի պատկերից (Rundtempel – Tholos): Երկրորդ մասն ընդգրկում էր Նոր Կտակարանի տեսարաններ և մի քերթ ավետարանիչների պատկերներով[27]: Կոստանդին Մեծի ժամանակների Ավետարանի նախատիպը ամենից շատ պահպանվել է հայկական, ասորական, վրացական և եթովպական ձեռագրերում, առաջին հերթին, 989 թ. էջմիածնի Ավետարանում (Մատենադարան N 2374): Կեսարացու ձեռագրերը պաշտոնական էին համարվում Կոստանդնուպոլսում: Ե դարում դրանցից մեկը Սահակի և Մեսրոպի աշակերտները բերել են Հայաստան, իբրև «հաստատուն» օրինակ[28]:

Մեր խնդրից դուրս է դիտարկել Բուշհաուզեն ամուսինների մանրամասն նշած գրականությունը վերոհիշյալ ձեռագրերի մասին: Սակայն ուշագրավ է Ռ. Բանդմանի դիտողությունը Ավետարանի առաջին մասի (Եվսեբիոսի թղթից մինչև տեմպիետտոյի կամ տաճարի պատկերը) իմաստային միասնության վերաբերյալ: Ընդ որում նույն թուղթը ներկայացնող քերթի տարբեր երեսներին պատկերված կամարները ցույց են տալիս միևնույն շքամուտքի առաջնամասն ու ետևի մասը, նմանվելով իրական ճարտարապետության: Թղթի շքամուտքը ասես շարունակվում է համաձայնության կանոնների սյունաշարածև (portico) կամարաշարքերով[29], որոնք փակվում են տեմպիետտոյի բոլորաձև տաճարով: Վերջինս զուգորդվում է քրիստոնեական բեմի, կիբորիումի կամ դրախտի աղբյուրի կամ էլ Տիրոջ գերեզմանի հետ (տեմպիետտոյին որոշ չափով նման են Մոնզի և Բոբիոյի յուղաշշերի հարթաքանդակները և այլն): Այստեղ, ասես, դիտարկվում է իդեալական ճարտարապետության մի համակառույց շքամուտքեր, սյունաշար, սրբարան (կոթող), ինչպես անտիկ ճարտարապետության մեջ: Իսկ այդ կառուցվածքը կապված է Երուսաղեմի սրբազան շիրմի հետ[30]: Նույնպիսի իդեալական կա-

[27] Buchthausen. Die illuminierten arm. Handschriften, S. 17-18.

[28] Անասյան Հ. Ս. Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը. Էջմիածին 1972, էջ 8: Կորյուն. Վարք Մաշտոցի. Երևան Համալսարանի հրատ. 1981, էջ 124-125: «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց». Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս 1918, էջ 341.

[29] Buchthausen. Die illuminierten arm. Handschriften, S. 18.

[30] Նույն տեղում, էջ 18:

ուցվածք նկատելի է նաև «Խորանների մեկնություններում»: Թե-րևս գիտակցորեն այդպիսի հունա-հռոմեական իդեալական ճարտարապետական կառուցվածք նկատի ուներ Եվսեբիոսը, որը, հավանաբար, ինչպես հավաստում են Ներսես Շնորհալու և ուրիշների մեկնությունները, կազմել է գլուխների համաձայնություն ճարտարապետական ուրվանկարների օգնությամբ[31]: Ինչ վերաբերում է Ավետարանների պատկերազարդման երկրորդ մասին, ապա, ինչպես ցույց են տալիս հենց Մլքեի և Էջմիածնի Ավետարանները, նրանք զանազանվում են (միայն ավետարանիչները, իբրև հեղինակներ, մեզ հասած առաջին իսկ ձեռագրերից սկսած պատկերվել են կամ նստած կամ կանգնած)[32]:

Կ. Նորդենֆալկը, ինչպես ցույց է տրվել վերևում, չի էլ փորձում բացահայտել խորանների խորհրդաշնական կողմը[33]: Նրա կարծիքով, չունեն խորհրդաշնական բովանդակություն նաև կենդանական մոտիվները, մրգերի զամբյուղները, կենաց աղբյուրը ասորական ձեռագրերում[34]:

Ի վերջո, անկախ խորանների ծագումից, ճարտարապետական և աղյուսակային տիպից[35], հետազոտողների ջանքերը հանգեցնում են նրան, որ խորանների գեղարվեստական ձևավորման առաջին մասը օժտված է խորհրդաբանությամբ. ըստ Բանդմանի, ինչպես ասվել է վերը, թղթի էջերը կամարներով ծառայում են իբրև շքամուտք (Portal), կանոնների էջերը՝ խաչապատակ կամարներով և կամարաշարքերով սյունաշար (Interkolumnien), տեմպիետտոն տաճար (Rundtempel կամ Tholos) արևելաքրիստոնեական տիպի (Կ. Վեսսելը ենթադրում է նաև, որ տեմպիետտոյի հետ միասին խորանների շարքը մոտիկ է քրիստոնեական բազիլիկային)[36]: Շնորհալին

---

[31] Նույն տեղում.

[32] Դագարյան Վ. Սյուժետային մանրանկարը Կիլիկիայում (XIII դ. վերջ - XIV դ. սկիզբ). ՀԱՍԻ 9Ա հրատ., Երևան 1984, էջ 82-91, 169-172: Friend A. M. The Portraits of the Evangelists in Greek and Latin Manuscripts. – Art Studies 5 (1927), p. 113-147.

[33] Wessel. Kanontafeln.- "Reallexikon" B. III, S. 950.

[34] Nordenfalk. Die spatantiken Kanontafeln. Textband. S. 244-246.

[35] Նորդենֆալկի կարծիքով, Եվսեբիոսը, նկատի ունենալով սյունաշարերի օրինակը խորաններում, ներշնչված էր Leptis Magna-ի տիպի կլասսիական կամարաշարքերից (Wessel, նույն տեղում, էջ 949-950): Նորդենֆալկը ենթադրում է, որ կանոնների աղյուսակների ճարտարապետական ձևավորման համար օգտագործվել են հռոմեական օրագույցները, ինչպես Ֆիլոկալոսինը (354 թ.) (Nordenfalk. Op. cit. Textband. Abb. 7), որն ունի ճարտարապետական ձևավորում. բյուզանդական մի քանի ձեռագրերի խորաններում պատկերված են ամիսների աճնավորումները (Wessel. Op. cit., S. 950).

[36] Wessel. Op. cit., s. 963.

իր մեկնության մեջ հավանաբար նկատի է ունեցել մուտքը, գավիթը և եկեղեցու շենքը, որոնք հայ ճարտարապետական համակառույցներում մի ամբողջ համակարգ էին կազմում, անտիկ վերոբերյալ համակարգի նման (տես է-Ը խորանների մեկնությունը)։ Գրիգոր Տաթևացին խորանների զանազան խորհուրդների հետ նշում է նաև աշխարհը, որը հանդիսանում է երկնքի գավիթ և նախադուռ, ինչպես գահասրահի նախադուռը։ Մեր մեկնիչները սյուները համարում են «խառխառստիւնք», «խառխառոտք» կամ «խազխազոտեալք»։ Խորաններին նվիրված ուսումնասիրություններում ուշադրություն է դարձվում ձեռագրերում պատկերված և Մոնցի և Բոբիոյի յուղաշշերի վրա քանդակված տեմպիետտոների (տաճարիկների) սյուներին, որոնք ունեն պարույրածև (սպիրալածև) ակոսներ (կաննելյուրներ)։ Այսպիսի սյուներ են նաև Թ-Ժ դարերի խորանների սյուների վրա, և «խառխառստիւնք», «խազխազոտեալք» բառերը վերաբերում են հենց այդ ակոսներին (կաննելյուրներին)[37]։ Վերջապես դրախտի խորհրդաբանությամբ են օժտված ծաղկաթմբերը, բույսերն ու թռչունները (դեռևս կայսերական Հռոմի շրջանում տեմպիետտոների պատկերները զարդարված էին կենդանաշխարհով և բուսաշխարհով)[38]։

Եվրոպական գիտնականները տարբեր արվեստների, ժողովուրդների, դարաշրջանների տասնյակ նյութերի համադրումով եկել են այն ընդհանուր եզրակացության, որ եվսեբիոսի թուղթը, կաոնոնների համաբարբառը (խորանները) և տեմպիետտոն սկզբից ի վեր ունեցել են կայուն տեսք և կազմման որոշակի համակարգ, որ ամենից լավ պահպանվել է 989 թ. Էջմիածնի Ավետարանում։ Այնուհետև խորանների ծաղկամոտիվները և թռչնամոտիվները համադրելով կայսերական Հռոմի (Բանդմանն, Վեսսել) կամ իրանական պատկերների (Ստրժիգովսկի) հետ, հանգում են այն եզրակացության, որ խորանները խորհրդանշում են դրախտը։ Վերջապես, նրանք նկատելով, որ թղթի և համաբարբառի խորանները ստեղծում են յուրահատուկ սյունաշար դեպի տաճարը (տեմպիետտո), այդ դիտում են իբրև կատարված բազիլիկայի կամ կայսերական կամարակապ սյունաշարքերի նմանողությամբ կամ էլ օրացույցնե-

[37] Ըստ Հր. Աճառյանի, «խառխառոտ» արմատական բառարան, պարույրածև սյուն (Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Բ հատոր. Երևան, 1973, էջ 335)։ Իսկ «խառ», ըստ մի դարի հեղինակ եղիա Մեղրեցու, առաջացնում է «խառնել» բայը (անկոել, խազել) («Բառգիրք Հայոց». Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի. Երևան, 1975, էջ 140)։

[38] Վեսսել, նույն տեղում, էջ 963։

րի (Բանդմանն, Նորդենֆալկ)։ «Խորանների մեկնությունների» խորհրդաբանության և գեղագիտության փոխազդեցությունները խորանների (այսինքն Կարպիանոսին ուղղված Եվսեբիոսի թղթի և համաձայնության կանոնների) ձևավորման պրակտիկայի հետ վերաբերում է արևելաքրիստոնեական արվեստի պատկերագրության ոլորտին։ Միջնադարյան պատկերաբանության իմաստը ճշակերպված է ԺԸ դարի հեղինակ Ղուկաս Վանանդեցու «Պատկերասէր-պատկերատեաց» գրվածքում։ «Գիտելի է աստ,- գրում է նա,-զի պատկերը *ոչ պարտի* ըստ բոլորին յուր նախատիպին նմանիլ այլ ըստ մասին, առաւել կամ նուազ, բայց ոչ երբէք բոլորովին։ Քանզի ուր գոյ բոլորովին նմանութիւն, ոչ ասի պատկեր կամ նմանութիւն, այլ նախատիպ և նոյնութիւն։ Ուրեմն ամենայն պատկեր այնպես պարտի նմանիլ իւր նախատիպին զի և իցէ աննմանն»[39]։

Ըստ Դիոնիսիոս Արիսպագացու, որի երկերը մեկնություններով թարգմանել են Ստեփանոս Սյունեցին և Դավիթ Կենաոը, Սուրբ Գրքում պատկերագրությունների եղանակը երկուսն է։ «Ի՞նչ ինն այն է, որ սրբազնատիպ պատկերները ներկայացվում են վայելուչ *նմանությունների* միջոցով, իսկ [երկրորդը], որ *աննման* կերպավորումների միջոցով ստեղծվում են լրիվ ոչ նման և անպատշաճ [պատկերներ]»[40]։ Առաջին նմանությունների եղանակը դեռևս դասական արիստոտելյան գեղագիտության սահմաններում է (միմեսիսի տեսություն)[41]։ Մեր մեկնությունների հեղինակները իրենց պատկերները կառուցում են ավելի «աննմանության» հիման վրա, որ հակադիր է անտիկ իդեալներին[42]։ Հոգևոր (կամ մտավոր, իմացական) վսեմ էությունների համար նրանք (ինչպես և խորանները ծաղկողները) պատկերները փոխառում են, օժտում են «աննման» բայց ոչ միշտ «անպատիւ և անպատշաճ» առարկաներով, մոտիվներով, հետևելով Սուրբ Գրքին, ինչպես օրինակ, կենդանիների, բույսերի և այլն։ Նրանք իրոև ելակետ են ընդունում Դիոնիսիոսի այն հավաստումը, թե «աննման» պատկերները կազմում են «վերամբարձա-

---

[39] Ղուկաս Վանանդեցի. Պատկերասէր-պատկերատեաց. Ամստերդամ, 1716, էջ 27։

[40] «Եւ է ինչ որ վայելուչ է ի ծեռն նմանիցն սրբազնատիպ պատկերաց գալ յաւաջ. և է ինչ որ ի ծեռն աննմանիցն կերպաւորութեանց ի յաձեռնեիմբ աննման և անպատշաճն ստեղծեալ» (“Corpus scriptorum christianorum orientalum. Vol. 489. Scriptores armeniaci. Tomus 18. The Armenian Version of the Works Attributed to Dionisius the Areopagite. Translated by Robert W. Thomson. Lovanii in Aedibus. E Peeters. 1987, p. 5. H. H., II, 3)։

[41] Бычков В. В. Византийская эстетика (теоретические проблемы). Москва, 1977, с. 131.

[42] Նույն տեղում, էջ 133։

կան» (անագոգիա) կամ վսեմ պատկերագրություն: «Վերածբարձության» կամ «վերածության» այդ գաղափարը պատկերից դեպի «ճշմարտություն» և նախատիպ եղել է բյուզանդական գեղագիտության գլխավոր գաղափարը[43]: Իհարկե, Յովհան Դամասկացու (Ը դար) նման մտածողները, Դիոնիսիոսից փոխառելով «նմանության» գաղափարը (Ղուկաս Վանանդեցին հետևում է նրան), առաջին հերթին, նկատի ունեին տերունական և Տիրամոր կյանքի տեսարանները: Բայց նրանք ավելի առաջ չէին գնում, մարդաբանությունը չէին հասցնում արվեստի տեսության մակարդակի: Իսկ «խորանների մեկնությունների» մեր հեղինակները առաջին հերթին նկատի ունեին Դիոնիսիոսի ուսմունքի «աննման» կողմը, այսինքն «մեր միտքը չի կարող այլ կերպ ծգտել երկնային քահանայապետությունների այն աննյութ նմանություններին և տեսիլքներին, ապա նրանց կմոտենանք նյութական [օրինակների] առաջնորդությամբ, և երևացող գեղեցկությունները կհամարենք աներևույթ վայելչության կերպարներ, իսկ զգայական անուշահոտությունները՝ Հոգու իմացական բաշխման ձևեր, նյութական լույսը՝ աննյութ լուսավորության պատկեր...»[44], այսինքն ինչպես Ներսես Շնորհալին է ասում արդեն խորանների պատկերների առիթով, խորանները զարդարվում են «հաճելի և ծաղկերանգ նկարներով և պաճուճազարդ գույներով՝ խորանների կերպագրությամբ, որտեղ նաև կան մի շարք տունկերի հորինվածքներ և թռչունների ձևավորումներ, նաև սեղանների, սյուների ու ծաղիկների հորինվածքներ, որոնք իրենց մեջ ունեն խորին խորհուրդներ և անհայտ իմաստներ և ծածուկ գիտելիքներ, որոնք չպետք է զանց առնել վայրիվերո կերպով»:

«Խորան» բառը սերում է ճարտարապետությունից: Ըստ «Մեկնությունների» գրեթե յուրաքանչյուր խորան ունի իր ճարտարապետական նախատիպը Սուրբ Գրքում – Աստվածային հաստատություն, երկնային դասեր, երկրային դրախտ, Նոյի տապան, Աբրահամի տուն, Մովսեսի խորան, Սողոմոնի տաճար, սուրբ եկեղեցի, որը խորհրդանշականորեն ընդգրկում է նախորդ բոլոր խորանների իմաստները:

Եթե, ինչպես պնդում են գիտնականները, կրկնելով Նորդենֆալկին, էջմիածնի Ավետարանը հիմնականում եվսեբիական նախատիպի ճիշտ կրկնությունն է (Եվսեբիոսի թղթի երկու էջը, կանոնների

[43] Նույն տեղում, էջ 192:
[44] The Armenian Version of the Works Attributed to Dionisius the Areopagite..., p. 2. C. H. I. 3.

յոթ էջերը և տեմպիետտոն), ապա հազիվ թե գտնվի մի այլ ձեռագիր, որ ունենա տասը համաձայնության կանոն տասը խորաններում: Թեև, ինչպես ցույց է տալիս մեր արած վիճակագրությունը, Ավետարանների գրիչներն ու ծաղկողները ձգտում են պահպանել տասը իբրև սրբազան թիվ, մի դեպքում թղթի, համաձայնության տախտակների ու տեմպիետտոյի (կամ խաչի պատկերի) խորհրդանշական էջերը հասցնելով տասի, մի այլ դեպքում թղթի և կանոնների էջերը հասցնելով տասի[45]: Ըստ Ստեփանոս Սյունեցու «Խորանների մեկնության», խորանները պետք է ունենան չորս գույն, իբրև անտիկ բնափիլիսոփայության չորս տարրերի խորհուրդ սևը, կարմիրը, կապույտը (կամ կապուտակը) և ծիրանին: Դրանք համապատասխանում են Հին Կտակարանի Ղևտացոց գրքում նշված Մովսեսի խորանի գույներին: Այդ գույները (ինչպես և կանաչը, որ հանդես է գալիս մյուս Մեկնություններում) էջմիածնի Ավետարանի խորանապատկերների հիմնական գույներն են:

Եվսեբիոսի թղթի և կանոնների խորանապատկերների հանդիպակաց էջերն ունեն կառուցվածքային ընդհանրություններ: Վաղ շրջանի ձեռագրերում (Թ. Ժ դարեր) նրանք գրեթե կրկնվում էին, ինչպես հայելում, իսկ ավելի ուշ ձեռագրերում արծագանքում էին միմյանց կառուցվածքային և հատկապես զարդային մոտիվներով:

Հարմարության համար Կ. Նորդենֆալկը խորաններում զանազանում է ներնաշխազարդեր և արտանախշազարդեր: Ներնաշխազարդերը ծածկում են կամարածև կամ ուղղանկյունածև գլխազարդի ներքին դաշտը, ինչպես նաև սյուները, արխիտրավը (քովթար), խոյակները, խարիսխները և հեծանածև պատվանդանը: Արտանաշխազարդերը Եվսեբիոսի թուղթը և կանոնները ճարտարապետական շրջանակող կամարածև կամ ուղղանկյուն գլխազարդից և սյուներից դուրս գտնվող հավքերի, բույսերի, կենդանիների պատկերներն են: Ուշագրավ է, որ արտանաշխազարդերը ավելի հաճախ են հանդես գալիս իբրև խորհրդանիշներ «Խորանների մեկնություններում», քան ներնաշխազարդերը: Վաղ շրջանի ձեռագրերում խորանների զարդամոտիվներն ունեն թե խորհրդանշական և թե գեղագիտական բեռնվածություն: Ժամանակի ընթացքում բուլանում է և ճապաղվում գեղագիտական կողմը[46]:

---

[45] Казарян В., Манукян С. Матенадаран. Том. I. Армянская рукописная книга VI-XIV Веков. Москва 1991 (см. Аннотированный каталог).

[46] Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ. Երևան, 1980, էջ 26-38:

...

Նշանակում է, էջմիածնի Ավետարանի (Մատենադարան N 2374) երկու խորանը ներառում է Եվսեբիոսի թուղթը, որտեղ բացատրվում է կանոնների կազմման համակարգը: Եվ եթե թղթի խորանների և կանոնների աղյուսակների խորանների թիվը տարբեր է տարբեր ձեռագրերում, ապա զանազան խորհրդանշական պատկերներ (կենդանիներ, հավքեր, բուսական մոտիվներ) կարող են հանդես գալ տարբեր խորաններում: Էջմիածնի Ավետարանի Թղթի առաջին խորանի վրա (էջ 1ա) կամարի շուրջը սիրամարգեր են պատկերված (նկ. 1) (ըստ մի քանի Մեկնությունների, այդ թվում Սյունեցու և ԺԱ-ԺԲ դարերի անանուն, նրանք պատկերվում են Եվսեբիոսի թղթի առաջին խորանում): Ըստ Սյունեցու, սիրամարգերը նշանակում են Մովսեսի և մարգարեների Օրենքը: Սյունեցին խոսում է նաև վերին կամարի մասին, որ լայնորեն տարածված է մնացած կամարների վրա: Էջմիածնի Ավետարանում պատկերված են համակենտրոն կամարներ (համակենտրոն կամարներով Թուղթը ներկայացնող խորանները տեսնում ենք նաև Երուսաղեմի սրբոց Հակոբյանց Մատենադարանի N 2444 և Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի N 697 Ավետարաններում)[47]:

Էջմիածնի Ավետարանի թղթի երկրորդ խորանում, ինչպես նկատում է Կ. Վայցմանը, ներքին կամարներից մեկում պատկերված են սկավառակներ, ասես թե ներկայացնելով սպեկտրի բեկումներ (spektrallen Brechungen)[48], որ համապատասխանում է արդեն Շնորհալու «Խորանների մեկնության» մեջ առաջին խորանների բնութագրմանը (Աստվածությունը բնակվում է անմատչելի լույսի մեջ, իսկ լույսի խորհուրդը միջնադարյան պատկերներում արտահայտվում է մաքուր գույներով):

Երրորդ խորանը, ըստ Սյունեցու, ունի երեք կամար, արտահայտելով Սբ. Երրորդության գաղափարը: Էջմիածնի Ավետարանում կամարաշարքը կազմող երեք կամարներով պատկերված է Բ կանոնը ներկայացնող չորրորդ խորանը (նկ. 2): Մեկնության մեջ հիշվում է «սեղանն բոցախառն հրով և ի վերայ նորա ամպն, վասն զի ծածկեալ էր իբրև պատրուակաւ խորհուրդն Քրիստոսի»: Այստեղ խորհրդանիշը ներկայացված է վանդակի մեջ փակված թռչնակով: Մեկնությունների նախատեսած աքաղաղների պատկերը բացակա-

[47] Nordenfalk. Die spätantiken Kanontafeln... Taf. 15, 16, 25 a, 31, 32 a.

[48] Weitzmann K. Die armenische Buchmalerei des 10. und Beginnenden 11. Jahrhunderts. Bamberg, 1933, S. 10

յում է էջմիածնի Ավետարանում:

Աղավնակերպ հավքերով խաչի պատկերն այստեղ տեսնում ենք թղթի երրորդ էջի խորանում (ըստ Սյունեցու, չորրորդ խորանում): Կամարներից վեր առաջին խորանում պատկերված է հրե ծաղիկ: Այն հավանաբար համապատասխանում է «իմացական» հրին (ըստ Սյունեցու): Գրեթե բոլոր խորաններում կամարի և արխիտրավի (քիվի կամ քովթարի) հանդիպման տեղում պատկերված են բազմազան հնգաթլթակ արմավատերևներ (ըստ Սյունեցու, «եղջերք կամարացն անդրէն ի վերայ խոյակացն հինգ հինգ մասամբք, մերձ ընդ մերձ գհինգ դատողական և գհինգ տախտակացն Աւրինացն նշանակէ»): Եվ նրանք ներկված են կարմիր և կապույտ գույներով, ինչպես նախատեսում է Մեկնությունը: Երկու արմավատերևները, մեկնաբանվելով Մեկնություններում, իբրև սեղանի եղջյուրներ (սեղանը հաճախ հասկացվում է խորանի կամարածև կամ ուղղանկյունածև գլխազարդը), խորհրդանշում են Մովսեսին և Ահարոնին: Խորհրդանշական է նաև հավքերի կտուցների և ոտքերի կարմիր գույնը (նկ. 1-3):

Հինգերորդ խորանի առթիվ Սյունեցին խոսում է նաև շուշանի ծաղկման մասին («ստուերն պակասի, և կարմիրն պայծառանայ, և շուշանն ծաղկի, քանզի խաչն մերծեցաւ...»): Ծաղկող շուշանի պատկերը բացվող կոկոնի տեսքով նկարված է թղթի էջերում, շրջապատված ծաղկուն շյուղերով, նաև Բ և Գ (էջ 3 ա), Ջ, է, Ը և Ճ (էջ 4 բ) և Ժ կանոնների խորաններում: Դրանք հանդիպակած էջերում պատկերված խորաններ են, որոնք վաղ շրջանում (Ճ, Ժ դարեր) ասես հայելու մեջ անդրադարձնում են միմյանց: Սյունեցին խոսում է նաև երեք թվի մասին, իբրև մարգարեների, թագավորների և քահանաների խորհուրդի: Շուշանները պատկերված են երեք ծաղկաթերթերով, նռան պտուղները ևս երեք տերևալի ճյուղերով են նկարված: Երբեմն երկու պտուղ պատկերվում է մեկ ճյուղի վրա: Իսկ նռան պտուղն ըստ Սյունեցու, նշանակում է, որ Հին Կտակարանը և Մովսեսի Օրենքը խորհրդանշում են Նոր Կտակարանը:

Գույները և երանգները ևս զանազան խորհուրդներ են կրում: Կարմիրը խորհրդանշում է Քրիստոսի արյունը, մարդեղությունը և խաչելությունը: Նրանով է ներկված բոլոր խորանների համակենտրոն կամարների աղեղներից մեկը, սովորաբար արտաքինը: Իսկ առաջին խորանի խորհրդանիշները, ըստ Մեկնության, տեսնում ենք էջմիածնի Ավետարանի 3բ (կանոն Դ-Ե) և 4ա (կանոն Ե-Զ) էջերում (այսինքն ծիրանի այուները ցույց են տալիս Աստծո աթոռի հաստա-

տությունը վեր տարրերից):

Խորանից խորան (անկախ այն բանից, թե նրանք կազմված են մեկ թե երկու կամ երեք կամարաշարքերից կազմված կամարներից) համակենտրոն կամարների աղեղների գույների կազմը կայուն է մնում, թեև կատարվում է գույների տեղափոխություն: Դա սև, կարմիր, ոսկի, կապույտ և երբեմն վարդագույնին մոտ մանուշակագույն աղեղների համադրությունն է: Թվում է, թե գույների տեղափոխումը չի փոխում նրանց խորհրդաբանությունը: Ստորին (երբեմն և ոչ ստորին) կամարը ցույց է տալիս «իսկական գոյությունը», ներքին կամարը պատարագների գոհերի արյունը, միջին կապույտը (երկնագույնը) մարմնավոր կյանքում հոգևորի հաստատումը, ոսկին՝ քահանայական խորհուրդը, իսկ գիներգույն կարմիրը՝ Մելքիսեդեկի քահանայությունը ի դեմս Քրիստոսի:

Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի N 697 Ավետարանը ըստ այն դիտարկած գիտնականների (Մերկ. Տեր Ներսեսյան, Վայցման, Նորդենֆալկ, Բուշհաուզեն ամուսինները) մոտ է էջմիածնի Ավետարանին[49]: Սակայն այստեղ, ինչպես Մլքեի Ավետարանում (862-ից առաջ), Եվսեբիոսի թուղթը ներկայացված է երեք էջում (էջմիածնի Ավետարանում՝ երկու): Հանդիպակաց խորանների էջերը, ինչպես էջմիածնի Ավետարանի տիպի ձեռագրերում, գեղարվեստական և համաչափ ամբողջություն են ներկայացնում: Հանդիպակաց էջերի նման դաշնությունը գալիս է Ե դարից: Այուների սանդուղքաձև խարիսխները հիշեցնում են ուշ անտիկ ժամանակաշրջանը, խոյակների ձևը[50] նույնիսկ նմանակում է Յուստինիանոսի շրջանի ցանցկեն խոյակները և այլն[51]: Հավանաբար ձեռագիրն ունեցել է նաև այլ նախատիպեր էջմիածնի Ավետարանից բացի: Առաջին տարբերությունը ծաղկողի հակումն է ավելի հարթապատկեր դեկորատիվության: Այստեղից էլ այուների, կամարների, թռչունների ավելի սխեմատիկ, ոճավորված պատկերումը (մինչև հավքի տեսակի անճանաչելիություն): Թղթի և կանոնների խորանները ունեն համակենտրոն կամարներ, և ոչ թե լայն կամարում ներառված կամարիկներ, ինչպես Մլքեի, կամ կանոնների խորանների կամարաշարքեր, ինչպես էջմիածնի Ավետարաններում:

Եվսեբիոսի թղթի երկրորդ խորանում, արխիտրավից վեր, կամարի կողքին նկարված է ծիրանի փոքրիկ ծոմու կողքին: Ծառի վրա

[49] Buchhausen H. u. H. Die illuminierten armenischen Handschriften... S. 19, Taf. I-II.
[50] Նույն տեղում, Taf. 2-3.
[51] Նույն տեղում, էջ 19.

հավազգի երկու թռչուն է պատկերված, թռչունը ծագի հետ, որոնք կտցում են ծիթապտուղ: Ըստ «Խորանների մեկնությունների» ծիթենին հինգերորդ կաճոնի խորանում է սեղանի (կամ կամարի) երկու կողմից: Այն նշանակում է նահապետների երկար կյանքը և արդարների հավերժ պայծառատեսությունը:

Այստեղ սյուների մեծ մասն ունի զիգզագածև ակոսներ (կաննելյուրներ), ըստ Մեկնությունների «սիւնք խառխառոտք» կամ «խարխարտիւնք» (նկ. 4, 5, 7): Թղթի երկրորդ խորանում դրանք կապույտ են: Կապույտ գույնի չորս սյուներ տեսնում ենք Ջ և է կաճոնների խորաններում, ինչպես նախատեսված է է կաճոնի համար ըստ Գրիգոր Խլաթեցու (ԺԵ դար) և այլ Մեկնությունների: Դ կաճոնի խորանում չորս սյուները շողում են վարդագույն կարմրությամբ: Ըստ Բ և ԺԱ Մեկնությունների վարդագույն են Ե կաճոնի խորանի սյուները (Շնորհալու մոտ նրանք գինեգույն են): Այստեղ կամարամեջում (տիմպան) կարմիր ֆոնին պատկերված է կապույտ շրջան դեղին խաչով, շուրջը սառը կանաչ գույնի աղավնակերպ հավքեր: Ըստ Շնորհալու, մուգ գույնի խաչը գտնվում է Դ կաճոնի խորանում, կամարներից վեր՝ շուրջը աղավնակերպ հավքեր (Մովսեսի խորանի ճարտարապետների, նաև Մովսեսի, Ահարոնի, 70 ծերերի խորհուրդ): Ըստ այլ Մեկնությունների, խաչ է պատկերված նաև ուրիշ խորաններում:

Հաճախ իբրև սեղան հասկացվել է խորանի վերին մասը (կամարը և կամարաշարքը տիմպաններում)[52]: Բուշհաուզեն ամուսինները տեմպիետտոն համարում են կիբորիում-սեղան (Altarziborium)[53]: Միջնադարյան ծաղկողը *սեղան* ասելով կարող էր հասկանալ նաև ամբողջ խորանը: Իսկ խորաններն ունեն կամարածև (մեկ կամարով կամ կամարների շարքով) կամ ուղղանկյուն գլխազարդ: Իրոք սեղանը կամ քառանկյունի է պատկերվել կամ բոլորածև, ինչպես ցույց են տալիս նաև խորանների գլխազարդերը[54]: Նման հայեցակետ ունենալիս պարզ կդառնա Վիեննայի Ավետարանի Թղթի երեք

---

[52] Վասպուրականցի ծաղկող Սիմեոն Արծիշեցին Դ և Ե կաճոնների խորանի (Մատենադարան N 4851, 1288 թ.) և Գ և Դ կաճոնների խորանի (Մատենադարան N 4867, 1297 թ.) գլխազարդերում երկաթագիր մակագրել է «սեղան սուրբ» կամ «զսեղան ակն յանդիման» (տես Հ. Հ. Հակոբյան. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Բ, Երևան, 1982, մանրանկար 14, 15):

[53] Buschhausen H. u. H. Die illuminierten armenischen Handschriften... S. 18.

[54] L. Հ. Լուսիաը «Խորհրդավոր ընթրիքի սեղանը կաճոնական և աշխարհիկ պատկերագրության մեջ» հոդվածում ("Art Studies", Cambridge 1927) հատուկ բաժիններ է հատկացրել «Խորհրդավոր ընթրիքում» բոլորածև սեղանի և ուղղանկյուն սեղանի պատկերմանը:

խորանների տիմպանների (դաջազարդ) գործվածքաձև կամ գորգաձև նախշազարդումը (նկ. 8): Դա սփռոցն է, որ ծածկում է Տիրոջ սեղանը (խորանը): Դրանով էլ բացատրվում է սեղանաձև պատկերը ե կանոնի խորանի կամարի վերևում: Ըստ Մեկնությունների, հինգերորդ խորանի համար նախատեսված է պատկերել սեղան և խաչ: Խաչը և սեղանը գրեթե հոմանիշներ են արդեն հայ աստվածաբանական գրականության արշալույսին: Ե դարում Ագաթանգեղոսի համար սեղանի անկյունները նշանակում են խաչ[55]: Խաչն էլ իր հերթին սեղան է նշանակում[56]:

Կամարի վերևում երկու թռչուններ (փասիանների նման, թերևս նրանք այստեղ փոխարինում են սիրամարգերին) ճաշակում են աստվածային սեղանից: Նրանց ետևից երկու կաքավներ են, Քրիստոսի նախամայրերի խորհուրդը, ըստ Մեկնությունների (նկ. 6):

Մլքե թագուհու Ավետարանը (մինչև 862 թ., Վենետիկի Մխիթարյանների Մատենադարան, № 1144/86) ժամանակով ավելի մոտ է Ստեփանոս Սյունեցու «Խորանների մեկնությանը»: Այստեղ դեռ կենդանի է անտիկ ոգին իր նախնականությամբ, ինչպես է դարի Արուճի եկեղեցու զարդարուն ֆրիզի մնացորդում[57]: Այստեղ, ինչպես շեշտվում է «Խորանների մեկնությունների» մեծ մասում, կա գույների երկու խումբ. սառը (կապույտ, կանաչ, սև) և տաք (կարմիրներ կինովարից մինչև բաց մանուշակագույն, նարնջագույն, օքրա և ոսկի)[58]: Խորանապատկեր թերթերի մեծ մասը կորել է: Սակայն մեզ հասել են Թղթի երեք էջեր և կանոնների խորանապատկեր երեք էջեր (Ա, Բ, Գ կանոնները): Սև ուրվագիծը սահմանազատում է համակենտրոն կամարները: Բայց այստեղ, ի տարբերություն էջմիածնի Ավետարանի, տարբեր խորանների կամարներում գունաշարը նույնատեսակ չէ: Դրանից բացի այստեղ կամարը կանաչի երանգներով է: Սակայն կանաչ գույնը սևի և կարմիրի, նաև կապույտի հետ առաջին կանոնի կամարում նշված է ԺԱ-ԺԲ դարերի անանուն «Խորանների մեկնության» մեջ, ընդ որում դրանք խորհրդանշում են մարդ-

---

[55] Ագաթանգեղոս. Հայոց պատմություն. Երևան, 1986, էջ 268-271:

[56] «Եւ զի՞նչ իցեն անկիւնք սեղանոյն եթէ ոչ գիտայն նշանակէ, որ և անկիւնս իսկ ցուցանէ խաչին չորս» (նույն տեղում, էջ 268-270):

[57] Տես Котанджян Н. Г. Цвет в раннесредневековой живописи Армении. Ереван 1978.

[58] Ն. Քոթանջյանը Արուճի որմնանկարների գունային դաշնության յուրահատկությունը համարում է այդ երկու գունախմբերի հավասարակշռված համադրումը. մի կողմից կապույտներ, շատ հարուստ երանգներով կանաչներ, մյուս կողմից օքրա-շագանակագույն երանգներ (թերևս նաև ոսկի, որ թափվել է) (նույն տեղում, էջ 42-43, նկ. 22):

կային մարմնի բաղադրիչ մասերը և Հորը, Որդուն, Սուրբ Հոգուն և Սուրբ Երրորդությանը: Իսկ այստեղ կամարն արված է սևով և կարմիրով, կանաչով և կապույտով (նաև ոսկով), որ համապատասխանում է հիշյալ Մեկնության մեջ նշված գույներին:

Սիրամարգերը պատկերված են թղթի առաջին խորանում, ծիածանակերպ կամարի վերևում: Թղթի առաջին և երկրորդ խորանների կամարների տակ տիմպանում, պատկերված են Նեղոսյան մոտիվներ, որոնց ուշ անտիկ ծագումը կասկածից դուրս է[59]: Այնտեղ պատկերված են չորս ձկնորսներ նավակում, նաև ձկներ, կոկորդիլոսներ, վայրի բադեր, հավալուսներ և սրբազան լոտոս (նկ. 9):

Երրորդ կանոնի խորանի համար Բ Մեկնության (ԺԱ-ԺԲ դարեր) մեջ ասվում է, որ «հաւքն ի վերայ կամարին ձկնաքաղք, յոր ի ջուրս ձայնիւ որսորդութեամբ, որ ի ջուրս հոգևորն առնեն որս և զՄկրտութեան կրել գխորհուրդս»: Մլքե թագուհու Ավետարանում ձկնաքաղ հավքերը (բադեր, հավալուսներ), ինչպես նաև ձկները, կոկորդիլոսները, պատկերված են ջրում Եվսեբիոսի թղթի խորաններում: Այն, որ տիմպանում պատկերված ջուրը կապված է Մկրտության հետ, ինչպես նաև ձկներն ու ձկնաքաղ հավքերը, հավաստված է սույն Բ Մեկնության մեջ: Կա նաև հայր Բ. Սարգիսյանի այն դիտողությունը, որ նավակում գտնվող չորս մարդիկ նշանակում են չորս ավետարանիչներին, իսկ նավակը եկեղեցու խորհուրդն է[60]: Շնորհալու Մեկնության մեջ բադերը (մրտմունք) խորհրդանշում են ավետարանիչներին, « որոնք իջան ծովը, դուրս հանեցին այնտեղից մարդկանց և բարձրացրին երկնքին մոտիկ...»: Նավակի երկու մարդկանց (Թղթի երրորդ խորանը) կարելի է նույնացնել երկու համաբարբառ ավետարանիչների հետ (Մատթեոսի և Ղուկասի, որոնք ցույց տվեցին Քրիստոսի տոհմաբանությունը): Սակայն ԺԱ-ԺԲ դարերի և հետագա անանուն մեկնություններից մեկում հինգերորդ կանոնի խորանի առթիվ ասվում է, որ նրա կամարները նշանակում են վերոհիշյալ համաբարբառ ավետարանիչներին[61]:

---

[59] Janashian M. Armenian Miniature Painting of the Monastic Library at San Lazzaro. I Venice, 1966, p. 19, III. II, III.

[60] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վենետիկ». հ. բ. Յօրինեց Հ. Ք. Վ. Սարգիսեան. Վենետիկ, Ս. Ղազար, 1924, էջ 376:

[61] Ը դարի մի լատինական ձեռագրի (Փարիզ, Ազգային գրադարան, լատ. 8850) Ը-Ժ կանոնների խորանների կամարների տիմպաններում պատկերված են երեք համաբարբառ ավետարանիչների խորհրդանիշները նավակում և առանց նավակի: Առաջին դեպքում (Գ կանոն) համաձայնեցված են երեք Ավետարանների եվսեբիական գլուխները, երկրորդ դեպքում (Ժ-Ը կանոններ) նույն Ավետարանների այն եվսեբիական գլուխները, որոնք գուգահեռներ չունեն մյուս Ավե-

Քանի որ ըստ Սյունեցու Մեկնության Հին և Նոր Կտակարանների խորհուրդները կարող են պատկերվել տարբեր խորաններում, ապա Մլքե թագուհու Ավետարանում ծկնաքաղ հավքեր են պատկերվում նաև մնացած երեք խորաններում (Ա, Բ, Գ կանոնների), վերին կամարների շուրջը, շրջապատված վարդերի և շուշանների դրասանգներով նոան պտուղների հետ: Նրբագեղ վայրի բադերը զարդարում են Ա և Բ կանոնների խորանների կամարները, իսկ Ֆլամինգոյի երկու ճկուն պատկերները՝ Գ կանոնի կամարի քիվը (նկ. 10):

Ի տարբերություն Էջմիածնի Ավետարանի, Մլքե թագուհու Ավետարանում երկու կամ երեք կամարները ոչ թե կազմում են կամարաշարք, այլ ներառված են ընդհանուր (ըստ Սյունեցու, «լայնատարած տարածված») վերին կամարի մեջ: Կարող են քննարկման հետաքրքիր թեմա լինել նաև մարմարակերպ սյուների պատկերները, որոնք կամ նախշազարդ են կամ կաննելյուրներով (ակոտավոր): Մարմարի նմանակումը պարույրաձև կամ զիգզագաձև կաննելյուրներով հիմնականում հնգամաս է, որ ցույց է տրված Շնորհալու Մեկնության մեջ է և Ը կանոնների խորանների կապակցությամբ:

Ճղթի կանոնների սյուները մուգ կապույտ կամ սև են, որոնց ներսում զանազան հավքերի պատկերներ են, որոնք հիշեցնում են երկնագույն, կարմիր փետրավորների սև կամ ճերմակադեղին գլուխներով: Կապույտ գույնի սյուները անորոշ ընծյուղներով, ըստ Բ Մեկնության, նախատեսված են Բ խորանի համար: Ա և Բ կանոնների խորանների արտաքին սյուները զիգզագաձև հինգմասանի կաննելյուրներով են՝ շագանակագույն-յասամանագույն, իսկ ներքին սյուները բաց սառը կանաչ և վարդագույն: Գ կանոնի խորանի արտաքին սյուները մուգ կապույտ են, նրբին սպիտակ երակներով: Ներքին սյունը վարդագույն է: Այդ սյուների համար այդ գույները նշված են Մեկնություններում, իսկ Բ Մեկնությունը հինգ մասերով զարդարված կապույտ սյուները նախատեսում է Բ կանոնի խորանի համար (ինչպես այստեղ):

***

Մինչև տարբեր ժամանակների ու դպրոցների մի քանի հայկական ձեռագրերի դիտարկումը «Խորանների մեկնությունների» հետ նրանց գաղափարական և խորհրդաճշակաև կապի տեսակետից, ավելորդ չէր լինի դիմել նաև վրացական, ասորական, հունական և

տարաններում: Լատինական ձեռագրում պատկերված են նաև ծկնաքաղ հավքեր և կաքավներ, որոնց մասին խոսվում է Մեկնություններում:

լատինական մի քանի ձեռագրերի խորանապատկերներին մեր սուղ հնարավորությունների սահմաններում: Անշուշտ վերոհիշյալ ձեռագրերը ստեղծողները անվերապահորեն ընդունել են Քաղկեդոնից առաջ երեք տիեզերական ժողովների որոշումները: Ըստ Ներսես Շնորհալու, «առաջին հայրերը անհեթեթ և առանց խորհրդի չեն նկարել տասը խորհրդական խորանների գոյնզգույն երանգների ծաղկածև պատկերները, հոգեշարժ իմաստներով տեսնելով ասվածները»[62]: Ընդ որում Շնորհալին հաճախ շեշտում է Հին և Նոր Կտակարանների խորհրդաճշակաև կապը:

Ասորական առաջին ձեռագրերից մեկի Ջ դարի Ռաբուլայի Ավետարանում (Ֆլորենցիա, Լաուրենցիանա գրադարան, Plut. 56) այդ կապն ընդգծված է ուղղակի մարգարեների և Հին Կտակարանի անձանց պատկերներով կամարների կողքերին և միաժամանակ Նոր Կտակարանի տեսարաններով: Երկու Կտակարանների դաշնությունը ասորական հայրերը չեն անտեսել[63]: Առաջին իսկ խորանում կամարի կողքին պատկերված են Մովսեսն ու Աիարոնը, իսկ սյան կողքին «Ավետում Զաքարիային» (երես 2)[64]:

Թ դարի հունական մի ձեռագիր (Վենետիկ, Մարչիանա գրադարան, հուն. I, 8) ներկայացված է թղթի երկու էջերով և կանոնների երկու էջերով[65]: Ինչպես էջմիածնի և Մլքե թագուհու Ավետարաններում, այստեղ ևս թղթի առաջին էջում դեմ-դիմաց պատկերված է երկու սիրամարգ, մարգարեների և Հին Օրենքի իմացության խորհուրդներ, ըստ Սյունեցու, Բ (ԺՍ-ԺԲ դարերի) և Վանական Վարդապետին մեր վերագրած Մեկնությունների: Թղթի երկրորդ խորանում համակենտրոն կամարների կողքին պատկերված են կաքավներ (նրանք, ըստ մի քանի Մեկնությունների, պատկերվում են Գ կանոնի խորանում, և ըստ Սյունեցու ու Վանական Վարդապետի և այլ մեկնություններում, Ե կանոնի խորանում, խորհրդանշելով պոռնիկ և օտար կանանց՝ Մարիամին, Ռախաբին, Թամարին): Կաքավներից մեկը մոտենում է կամարին, երկրորդը հեռանում է նրանից: Եթե, ըստ Շնորհալու, այդ թռչունները խորհրդանշում են Քրիստոսի նախամայրերին, ապա, ըստ աստվածաբանների, Հուդայի մարգարե-

---

[62] Այսինքն տասը խորանների գույնզգույն ձևերը առաջին հայրերը (նկատի ունի հավանաբար եվսեբիոս Կեսարացուն և ուրիշներին) չեն թողել առանց խորհրդաճշակաև իմաստի:

[63] Leroy J. Les manuscrits syriaques a peintures, conserves dans les Bibliotheques d'Europe et d'Orient. Paris, 1964 (texte et album), p. 164.

[64] Նույն տեղում, աղյուսակ 22, I:

[65] Nordenfalk. Die spätantike Kanontafeln... Taf. 8-10.

ները գուշակում էին եկեղեցու խորհուրդը, իսկ եկեղեցու հաստատումից հետո հրեաները նրանից երես թեքեցին:

Կան նաև թռչուններ, որոնք (եթե չհաշվենք աղավնակերպ հավքերին և բաղերին) չեն հիշատակվում Մեկնություններում: Նրանք գտնվում են Բ, նաև Ե և Չ կանոնների խորաններում: Մի քանի Մեկնություններում խոսվում է խաչի և սեղանի (տիմպանի) մասին, որոնք այստեղ պատկերված են:

Մի քանի լատինական ձեռագրերում նույնպես ակներև է «խորանների մեկնությունների» խորհրդաբանությունը: Օրինակ, Թ դարի մի ձեռագրում (Լոնդոն, Բրիտանական թանգարան, Հառլ. 2795)[66] Ա կանոնի երկու խորաններում պատկերված են միմյանց նայող բաղեր և երկու աքաղաղ, իբրև ավետարանիչների և մարգարեների խորհուրդներ: Բ կանոնի կամարաշարք կարզծող չորս կամարները նկարված են մի ընդհանուր կամարի ներքո: Չորս կամարների մասին խոսվում է ԺԳ դարի մի Անանուն Մեկնության մեջ Դ խորանի առթիվ, որն, ըստ մի քանի մեկնիչների, խորհրդանշում է երկնային դրախտը և դրախտի չորս տարրերը, որոնց թիվը համապատասխանում է չորս կամարներին: Այստեղ պատկերված են երկու բաղ և երկու փայտփորիկ (վերջինիս մասին չի խոսվում Մեկնություններում, թեև այն կա նաև հայկական մանրանկարներում): Բ կանոնի խորանում պատկերված է ֆլամինգո (ծկնաբաղ հավք առաքյալների խորհուրդը), Թ-Ժ կանոնների խորանում աքաղաղներ: Ըստ մեկնությունների, սիրամարգերը պետք է ներկայացվեն Բ կանոնի խորանում, թեև Բ անանուն Մեկնությունը Բ կանոնի խորանի համար նախատեսում է ծկնաբաղ (այստեղ ֆլամինգո, որ ևս ծկնաբաղ հավք է): Գ կանոնի համար սիրամարգ չի նախատեսվում: Է կանոնի խորանի համար Մեկնություններից մեկում նախատեսվում են մրտիմներ (հունական ձեռագրերում վայրի բաղերը պատկերված են Ժ կանոնի խորանում): Աքաղաղները, ըստ մի քանի Մեկնությունների, գտնվում են Թ կանոնի խորանում, իսկ Ժ կանոնի խորանում մատնանշված են որպես թռչուններ, որոնք նայում են ծկնաբաղ հավքերին: Հունական այս ձեռագրի խորաններում պատկերված մնացած թռչունների մասին, բացի աղավնակերպ թռչուններից, բաղերից, աքաղաղներից և ծկնաբաղերից, չի հիշատակվում Մեկնություններում: Տիմպանի (նույնն է սեղանի) մեջ խաչի մասին խոսվում է Մեկնություններում, բայց խորաններում այն պատկերված է ոչ ըստ այն կարգի, որ կա Մեկնությունների մեջ:

[66] Նույն տեղում, Taf. 64-71:

Նոր Կտակարանի ևս մի ձեռագիր Օքսֆորդից (Bodl. Auct. T. inf. I, 10 Կոստանդնուպոլիս, ԺԲ դարի սկիզբ), որի մեջ կան խորանաձև համաձայնության կանոններ, ևս բովանդակում է մոտիվներ, որոնց խորհուրդները բացահայտված են մեր Մեկնություններում: Այս ձեռագրերում, Ա կանոնի գլխազարդի վերևում, փոքր մարմարե ավազանից վեր պատկերված թասի կողքերին երկու կաքավներ են[67]: Բ կանոնի խորանի գլխազարդի վերևում երկու փասիաններ են, Գ-Դ կանոնների խորանի սագի նման թռչուններ[68], Դ-Ե կանոնների խորանի վերևում աղբյուրից խմող աքաղաղներ, Զ կանոնի խորանի փոքրիկ բաղեր (նրանցից մեկը գլուխը թաղել է ջրի մեջ), է կանոնի խորանի սիրամարգեր, Ը կանոնի ձկնաքաղ հավքեր[69], Թ կանոնի խորանի վերևում թութակներ (ըստ Մեկնությունների աղավնակերպ հավքեր), Ժ կանոնի խորանում նորից կաքավներ:

Փասիաններից բացի վերը նշված բոլոր թռչունները կան Ստեփանոս Սյունեցու և Ներսես Շնորհալու «Խորանների մեկնություններում»: Թող նրանք այն հերթականությամբ չպատկերվեն, ինչպես հորդորում է Շնորհալին, բայց չէ՞ որ Ստեփանոս Սյունեցին և մյուսները թույլ են տալիս, որ Հին և Նոր Կտակարանները խորհրդանշող զանազան հավքերը պատկերվեն տարբեր խորաններում: Ավելին, ջրավազանի ձևը փոխվում է խորանից խորան և սկզբում ուղղանկյուն ձևից վերածվում եկեղեցու ձևի (մարգարեներին ու ավետարանիչներին խորհրդանշող աքաղաղների և բաղերի պատկերների հետ), ապա դառնում է խաչաձև (սիրամարգերի և ձկնաքաղ հավքերի հետ, որոնք համապատասխանաբար մերթ նշանակում են մարգարեներին, մերթ մարգարեներին և ավետարանիչներին, որոնք որսում են մարդկանց հոգիները), և վերջին երկու խորանների գլխազարդի վերևում ջրավազանն ստանում է վերստին եկեղեցու տեսք (թռչունները կամ, ինչպես ասվում է Մեկնություններում, աղավնակերպ հավքերը խորհրդանշում են Մովսեսին, Ահարոնին և Մովսեսի խորանի ճարտարապետներին, իսկ կաքավները Քրիստոսի նախամայրերին):

Պատահական չեն նաև նոան պտուղների պատկերները է և Ը կանոնների խորաններում, որոնց մասին խոսվում է նաև Մեկնութ-

---

[67] Hutter I. Corpus der byzantinischen Miniaturen-Handschriften. Band. 1. Oxford Bodleian Library. Anton Hiersemann. Stuttgart. 1977, S. 61-62, Abb. 227-235.

[68] Նկարագրության մեջ նշված է հնդկահավ, որ ճիշտ չէ (նույն տեղում, էջ 61):

[69] Ձեռագրի նկարագրության մեջ գրված է սիրամարգեր, որ բացահայտ սխալ է: Ճիշտ է նշված ձկնկուլների գույնը – ձախ կողմինը շուշանագույն, աջինը գորշ ու կապույտ (նույն տեղում, էջ 61):

յուններում:

Սկսած Ջ դարի ասորական Ռաբուլայի Ավետարանից մինչև ԺԲ դարի հունական ձեռագրերը խորանները զարդարում են զանազան թռչուններ: Չնայած պատմողականության ասորիների հակմանը (Հին և Նոր Կտակարանների անձինք և սյուժեները Ռաբուլայի Ավետարանի խորաններում), մենք տեսնում ենք զանազան փետրավորների խորանների շուրջ: Եվ այդ փետրավորները, հատկապես նրանց մի քանի տեսակները հետևողականորեն կրկնվում են տարբեր դարերի և ժողովուրդների ստեղծած ձեռագրերի խորաններում, որ կարելի է բացատրել նրանց խորհրդանշական իմաստներով, ինչ բացահայտված է մեր «Խորանների մեկնություններում»:

***

Կ. Նորդենֆալկի կողմից խորանների կամարածև շրջանակների բաժանումը երեք տիպի միաթռիչք կամար, որ հանգչում է երկու սյուների վրա, երկու կամ երեք կամարների շարք, վրան լայնատարած ընդհանուր կամարով, երկու կամ երեք կամարների շարք, իմաստավորված է խորանների մեկնիչների մոտ[70]: Ըստ Ռ. Շմեռլինգի, «երեք վրացական Քառավետարանների Ադիշի (897 թ.), Ջրուչի և Ծղարոստավյան ձեռագրերի կանոնների բնագրերի շրջանակման մեջ գործածված է երրորդ տիպը (երկթռիչք կամարների տարբերակը)[71]:

Հիշենք, որ էջմիածնի Ավետարանի բնագրային մասը (Եվսեբիոսի թուղթը) շրջանակված է միաթռիչք կամարով: Ադիշի և Ջրուչի Ավետարաններում խորանների մեծ մասը երկու թռիչքներով կամարներ ունի, որոնք ընդգրկված են միաթռիչք կամարի մեջ, որ հատուկ է Ջ դարի Ռաբուլայի Ավետարանի և Մլքե թագուհու Թ դարի հայկական Ավետարանի խորաններին: Ծղարոստավյան Ավետարանում կիրառված է երեք կամարների շարք[72]:

---

[70] Ըստ Սյունեցու, Շնորհալու, Գրիգոր Խլաթեցու և այլ Մեկնությունների, Բ կանոնի խորանի երեք կամարները ցույց են տալիս, որ Սուրբ Երրորդության մասին հրեշտակների երկրորդ դասը գիտեր սերովբեներից, հինգերորդ կանոնի խորանն ունի երկու կամար ըստ Բ և ԺԱ Անանուն Մեկնությունների, նշանակելով երկու համաբարբառ (սինոպտիկ) ավետարանիչներին (Մատթեոսին և Ղուկասին). Մնացած խորաններն ունեն մեկական կամ երկուական կամարներ: Խորանների երրորդ տիպի մասին (կամարների վրա լայնատարած տարածված ընդհանուր կամար) խոսվում է Սյունեցու Մեկնության մեջ:

[71] Шмерлинг Р. Художественное оформление грузинской рукописной книги IX-XI вв. Тбилиси, 1967, с. 115.

[72] Նույն տեղում, էջ 115-116:

Վերոհիշյալ վրացական ծեռագրերում կամարների կրունկների մոտ տեղաբաշխված են ականքաատերևներ, նման արմավատերևների, ինչպես նշված է Մեկնություններում, բայց հինգ բլթակներով: Ծղարուստավյան Ավետարանում այդ անկյունային ականքները փոխարինված են բարձր ծառերով աշտականածև բաշխված ճյուղերով[73]: Ե. Ամիրանաշվիլին Ադիշի Ավետարանում նշմարում է աղավնիների և նոան պտուղներ կրող ճյուղերի պատկերներ[74]: Ը կանոնի խորանում երկու կամարների միացման տեղում պատկերված է երկու նոան պտուղ մեջտեղում եռաթերթ ծաղիկով[75], Բ կանոնի խորաններում պատկերված են բաղեր, իսկ կամարամեջում՝ եռատերև և նուռ կամ շուշան ծաղիկ[76]: Էջմիածնի Ավետարանի Ա կանոնի խորանում երեք նոան պտուղները դուրս են գալիս ճյուղերի փնջից, իսկ շուշանի վարդագույն ծաղիկները (ըստ Շմեռլինգի՝ վարդեր) եռաթերթ են: Եռաթերթ են նաև շուշանի վարդագույն ծաղիկները, պատկերված Ադիշի Ավետարանի խորաններում[77]: Ըստ Շմեռլինգի, «Ադիշի Ավետարանի մանրանկարները աչքի են ընկնում լուսավոր, վառ և ուրախ գունավորումով, այն հիշեցնում է էջմիածնի Ավետարանի կոլորիտը՝ մի ծեռագիր, որ մասնագետները դիտում են իբրև ուշ անտիկ բնօրինակի արձագանք...»[78]: Ադիշի և էջմիածնի Ավետարանների խորաններում Ռ. Շմեռլինգը գույների պայծառությունը բացատրում է կապով ուշ անտիկ ավանդույթի հետ[79]:

Բերթայի Ավետարանը ընդօրինակված է արքայից արքա Սմբատի և նրա որդիներ Դավթի ու Բագրատի ժամանակ: Ըստ Ռ. Բլեյքի, այն ստեղծված է ժ դարում, ըստ Ե. Ամիրանաշվիլու, ծեռագիրն ընդօրինակված է ավագ Սմբատ Ա-ի (մահ. 889 թ.) ժամանակ, այսինքն՝ Թ դարում[80]: Նա կարծում է, որ «կատարման ոճով և տեխնիկայով Ադիշի Քառավետարանին մոտ են Բերթայի վանքում ընդօրինակված վրացական Քառավետարանի ավետարանիչների և կանոնների պատկերները»[81]: Բերթայի Ավետարանը, ինչպես և Ադիշինը, բացվում է ավետարանիչների պատկերներով:

Ա կանոնի խորանը կազմված է աղյուսակը ներառող սյուներից:

---

[73] Նույն տեղում, էջ 117:
[74] Амиранашвили Ш. Грузинская миниатюра. Москва, 1966, с. 13.
[75] Նույն տեղում, էջ 3:
[76] Նույն տեղում, պատ. 3:
[77] Шмерлинг. Художественное оформление..., с. 28.
[78] Նույն տեղում:
[79] Նույն տեղում, էջ 32-33:
[80] Амиранашвили. Грузинская миниатюра..., с. 15.
[81] Նույն տեղում, էջ 15:

Աղյուսակը կարմիր գծերով է գծված և ունի գլխահամարների կարմիր տառեր (ըստ Գրիգոր Տաթևացու, կարմիրը նշանակում է տասը գլխավոր կանոնները): Այնուհետև տիմպանի մեջ ուլտրամարինե ֆոնի վրա պատկերված է ոսկյա խաչ կարմիր ծիածանածև շրջանակում, երկու կողմից թռչուններ: Կամարը կապույտ գույնի է (ինչպես նշված է Սյունեցու, Վանական Վարդապետի և ԺԳ Մեկնության մեջ), որ ցույց է տալիս հոգևորի հաստատումը մարմնավոր կյանքում: Սուգ ֆոնի վրա ճաճանչող խաչը կարելի է նմանեցնել սեղանի (և խաչի, և սեղանի մասին խոսվում է տարբեր Մեկնություններում): Վերին կամարից էլ վեր պատկերված են մրգերով զամբյուղներ, թռչուններ, նաև թրաշուշաններ (շուշաններ): Սյուները կապույտ են: Այդ գույնի սյուները նախատեսված են Բ կանոնի խորանի համար: Երկրորդ խորանը(նույնպես Ա կանոնի) հիմնականում կրկնում է առաջինը: Տարբերությունը մանրամասների մեջ է: Օրինակ, սյուները կարմրամանուշակագույն են, որ, ի դեպ, համապատասխանում է Ա կանոնի սյուների գույներին, ըստ Մեկնությունների [82]: Գ և Դ կանոնների խորանում կամարի վերևում պատկերված են նռան պտուղները ճյուղերի վրա: Գլխավոր մոտիվը կիսարմավիկներից ոճավորված տերևն է՝ վերևում թռչուններ: Սյուները կապույտ են: Ե-Զ կանոնների խորանի ծիրանի կամարը շրջանակված է ոսկով և կարմիրով: Կամարների կրունկների մոտ ականթատերևներ են, կամարի վերևում բոլորածև մի կառույց է, որի երկու կողմերում սիրամարգեր են: Դա փոքրիկ մի շենք է, որ հանգչում է կարմրամանուշակագույն սյուների վրա: Ըստ Սյունեցու և Վանական Վարդապետի, Դ և Ե կանոնների խորանները խորհրդանշում են Եկեղեցին: Բայց սիրամարգերը նախատեսված են առաջին կանոնների խորանների համար:

Է-Ժ կանոնների խորանի հորինվածքը[83] նման է նախորդ խորանի պատկերին: Վերջին երկու խորաններում պատկերված կառույցների մասին Ս. Տեր-Ներսեսյանը ասում է, որ այստեղ մենք ունենք գմբեթավոր բազիլիկի պատկեր իր նավով և աբսիդով, որ հանգչում է կամարաշար սյուների վրա[84]: Ըստ Մեկնությունների տրամաբանության, մենք այստեղ ունենք կամ Եկեղեցու (Ստեփանոս Սյունեցու Մեկնություն) կամ էլ Երուսաղեմի տաճարի ու ընդհանրական Եկեղեցու պատկերները (Ներսես Շնորհալու Մեկնություն):

[82] Ձեռագիրը մանրամասն նկարագրել է Ս. Տեր Ներսեսյանը- The Gospel of Bertay, an Old Georgian Manuscript of the Tenth Century – Der Nersessian S. Études Byzantines et arméniennes. Tome I. Louvain, 1973, p. 212. Tome II. Ill. 144.

[83] Նույն տեղում, էջ 213, պատկեր 147.

[84] Նույն տեղում, էջ 219.

•••

Չնայած ԺԱ դարում Մեծ Հայքում պետականության աստիճանական կորստին, մեզ հասել են ոճով և ճոխությամբ բազմազան ձեռագրեր: Նրանցից մեկը 1033-ի փոքր չափսի ձեռագիրն է (Մատենադարան N 283), որ «կարող է ծագած լինել բուն Հայաստանից»[85]: Տ. Ա. Իզմայլովան ավելի կոնկրետ նկատի ուներ Լոռին կամ Այրարատը: Նրա կարծիքով, այդ ձեռագրի խորանները կարելի է համեմատել էջմիածնի Ավետարանի տիպի ձեռագրերի խորանների հետ[86]: Կանոնների խորանները երկկամար են, ինչպես 887 թ. Լազարյան Ավետարանում (Մատենադարան N 6200), էջմիածնի Ավետարանում և 1018 թ. Ավետարանում (Մատենադարան N 6200): «Չկան միայն այդ տիպի ձեռագրերում հանդիպող եռակամար խորանները»[87], որոնք ունեն խորհրդանշական իմաստ (երեք համաբարբառ Ավետարանների խորհուրդ):

Դեռ Նորդենֆալկն էր նշել, որ կայուն է ոչ միայն հայկական, այլև հունական որոշակի խումբ կազմող ձեռագրերի համար գույգ սիրամարգերի մոտիվը՝ Եվսեբիոսի թղթի խորանի կիսաշրջանաձև կամարի կողքերին[88]: Ըստ մի շարք Մեկնությունների, սիրամարգը խորհրդանշում է Հին Օրենքը, իսկ մի խումբ ավելի ուշ Մեկնությունների համաձայն, հրեշտակների անարատ բնությունը: Թղթի խորանի տիմպանի գործվածքային տեսքը, ինչպես էջմիածնի Ավետարանում և Վիեննայի Սխիթարյանների ժ դարի ձեռագրում, ցույց է տալիս, որ այն նշանակում է սեղան: Տ. Իզմայլովան, գուգահեռներ տեսնելով 1033 թ. Ավետարանի և էջմիածնի Ավետարանի մոտիվներում[89], նկատում է նաև, որ «զանազան ամբողջական տոներ (երևի նկատի ունի գույները- Վ. Դ.) բռնկվում են խորանների մերթ այս, մերթ մյուս մասերում»: Միմյանց արձագանքելով հանդիպակաց էջերում, նրանք ստեղծում են գույների առկայծի զգացողություն[90]:

Իզմայլովան այստեղ վկայակոչում է Շնորհալու Մեկնությունը, ըստ որի է և Ը կանոնների խորաններում կոլորիտը լուսավորվում է,

---

[85] Измайлова Т. А. Армянская миниатюра XI века. Москва, 1979, с. 33.

[86] Նույն տեղում: Измайлова Т. А. Традиции Эчмиадзинского Евангелия в миниатюрах рукописи 1033 г. — "Византийский временник", том 32, 1971, с. 204-215.

[87] Измайлова Т. А. Традиции ... — "В. в.", с. 206.

[88] Nordenfalk. Die spätantike Kanontafeln... S. 99.

[89] Измайлова Т. А. Традиции ... — "В. в.", с. 207-208.

[90] Նույն տեղում, էջ 208:

կապված Քրիստոսի Հարության հետ[91]:

1038 թ. Ավետարանի խորանները (Մատենադարան N 6201) հրապարակել և նկարագրել է նույնպես Իզմայլովան[92]: Եվսեբիոսի թուղթը ուղղանկյուն շրջանակի մեջ է: Կանոնների յոթ խորանները կորցրել են իրենց ճարտարապետական տեսքը, ասորականի պես դարձել պայտաձև, բուսազարդերի համակցումներն իրենց զուգահեռներն ունեն հույն և լատին ձեռագրերում[93]: Խորհրդաբանության բացահայտման տեսակետից այստեղ կան դժվարություններ: Բայց քիվի հեծանի վրայի թռչուններից մի քանիսը կարելի է որոշել: Դրանք սիրամարգեր են Ա և Բ կանոնների հանդիպակաց խորաններում[94]: 1038 թ. Ավետարանի հանդիպակաց էջերի խորաններում ծաղկողը ամենամեծ չափերի թռչուններին պատկերել է արխիտրավի հեծանի արտաքին մասում: Մնացած թռչունները հանդիպակաց էջերում տրված են հայելային անդրադարձմամբ, նրանք ծայնակցում են միմյանց, ինչպես նախատեսված է «Խորանների մեկնություններում»: Ա և Բ կանոնների խորաններում պատկերված է երկու սիրամարգ, ըստ Մեկնությունների: Վերևում ևս թռչուն է նկարված, բայց այն հատված է նորոգման ժամանակ: Առաջին երկու կանոնների խորաններում պատկերված են երեք համակենտրոն կամարներ (ըստ Շնորհալու, Գրիգոր Խլաթեցու, Ստեփանոս Տիրացու Մեկնությունների, որպես հրեշտակաց դասերի կողմից Սուրբ Երրորդության մասին իմացության խորհրդանշում): Բ, Գ և Դ կանոնների հանդիպակաց խորաններում քիվի վրա ներկայացված են հավազգի միմյանց նայող թռչուններ, իսկ կամարներից ցած ձկնաքաղ հավքեր են և երկարապոչ թռչուններ (փասիաննե՞ր): Ըստ Մեկնությունների, վերոհիշյալ կանոնների խորաններում (հատկապես Գ և Դ) պետք է պատկերվեն կաքավներ կամ երկու հավքեր կարմակտուց և կարմրատուտուց: Եթե առաջին և երկրորդ խորանների տիմպաններում համակենտրոն քառակուսիների և բազմանկյունների խճանկար հիշեցնող պատկերներ են, ինչպես հախճապակու վրա[95], որոնց կողմերը կազմում են խճանկար խաչերի ցանց, ապա երրորդ և չորրորդ խորանների տիմպաններում մեծ խաչեր են պատկերված, որոնց մասին խոսվում է Մեկնություններում: Մնացած խորան-

[91] Նույն տեղում:
[92] Ismailova T. A. La Tetraévangile illustré arménien des 1038 (Matenadaran N 6201) – "Revue des etudes des arméniennes. Nouvelle série", Tome VII, Paris, pl. LVII-LXXXI.
[93] Նույն տեղում, պատ. LVII-LVIII:
[94] Նույն տեղում, պատ. LX-LXI.
[95] Նույն տեղում, էջ 210.

ներում խաչն անհետանում է: Ժ կանոնի խորանում քիվի վրա հայտնվում է աքաղաղի պատկեր: Բուսական խորհրդանիշներից 1038 թ. Ավետարանում տեսնում ենք արմավատերևներ, որոնք տեղ-տեղ վերածվում են ականթների:

1044-1064 թթ. Անին Բյուզանդիայի իշխանության տակ էր: Բայց չէր խախտված կարծես Անիի և նրա շրջակա վանքերի կյանքը: Այդ են վկայում բարձրարվեստ երեք շքեղ ձեռագրեր-1053 թ. Ավետարանը (Մատենադարան N 3793), Բեգյունց Ավետարանը (Մատենադարան N 10999, հատակտոր, մանրանկարները հայտնի են Գ. Հովսեփյանի նեգատիվներով) և անթվակիր Մուղնու Ավետարանը (Մատենադարան N 7736)[96]:

Այդ ձեռագրերի գրիչն ու ամենայն հավանականությամբ ծաղկողը Հովհաննես Սանդղկավանեցին է[97]: Վերոհիշյալ ձեռագրերը (հատկապես Մուղնու Ավետարանը) դեռս կրում են Բագրատունյաց փառքի ծոխության և վեհության հետքերը: Հատկապես զարմացնում է նրանցում հավքերի և գազանների աշխարհը: «Թերևս,- գրում է հայ մանրանկարչության նրբագույն գիտակ Լ. Ա. Դուռնովոն,- նկարիչը խորանի շուրջբոլորը պատկերացրել է իբրև դրախտային այգի, որտեղ հաշտ ու խաղաղ գոյակցում են նապաստակները, առյուծները և այլն – համենայն դեպս նման միտքը նրան առիթ է տվել իր ստեղծագործությունը դրսևորելու իրական և երևակայական գազանների ու հավքերի պատկերումով: Սկսած փղից և վերջացրած մեղուզայով, Մուղնու էջերում ներկայացվում են ընտանի, վայրի և գիշատիչ կենդանիների ու թռչունների երեսունչորս տեսակ, չհաշված մի քանի սիրեններ, սֆինքսներ և գրիֆոններ»[98]: Երկրային և երկնային դրախտի պատկերը շեշտված է նաև «Խորանների մեկնություններում»: Տարբեր կենդանիների խաղաղ գոյակցումը ևս հիմնավորված և իմաստավորված է ս. Գրիգոր Տաթևացու Մեկնության մեջ: Նա հետևելով «Բարոյախաւսին» ընդգծում է, որ գանազան կենդանիները նշանակում են մարդկանց գանազան բարքերը: Եվ այդ կենդանիները արժանացել են պատկերվելու Ավետարանում, ինչպես ամեն ազգ արժանի է Ավետարաններին, երբ հնազանդվում

[96] Измайлова. Арм. миниатюра XI века. С. 108.

[97] Մաթևոսյան Ս. Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի - «Բանբեր Մատենադարանի». 10. Երևան, 1971, էջ 379-399: Измайлова Т. А. К вопросу о датировании Мугнийского Евангелия- "Историко-филологический журнал ГА Арм. ССР", 1970, N 1, с. 233-234.

[98] Дурново Л. А. Очерки об изобразительном искусстве Средневековой Армении. Москва, 1979, с. 179.

է Քրիստոսին: Ըստ նրա, կապիկները խորհրդանշում են հնդիկներին,առյուծները՝ բարբարոսներին, օղագնաց թռչունները՝ հպարտներին, օձերը՝ խորագետներին, կաքավները՝ ենթգավորներին և այլն, որոնց «բոլորին փրկություն եղավ Ավետարանով, ինչպես Եսային է ասում, եզը և առյուծը միասին կարածեն»:

Մողնու Ավետարանը ինչ-որ բան ժառանգել է էջմիածնի և Սլքե թագուհու Ավետարաններից. Նեղոս գետի մոտիվը, վարագույրները սյուների շուրջ: Ըստ Իզմայլովայի՝ հիշյալ երեք շքեղ ձեռագրերը ոչ միայն նույն Սանդղկավանքի արտադրանք են, որ գտնվում է Արշարունիքի գավառում, Անիից ոչ հեռու, Կաղզվանի մոտ, այլև միևնույն գրչի, որը թերևս նաև ձեռագրերի ծաղկողն է[99]: Այստեղ խորանների գլխազարդերը ուղղանկյուն են, որի մեջ ներգծված են համակենտրոն կամարներ (նկ. 11, 12, 13, 14): Տեղ-տեղ խորանի ուղղանկյուն գլխազարդերը վերածվում են գորգադաշտի: ԺԱ դարում ուղղանկյուն էին նաև բյուզանդական ձեռագրերի խորանների գլխազարդերը: Ի տարբերություն ԺԱ դարի Արևմտյան Հայաստանի և Փոքր Հայքի ձեռագրերի, սրանց խորանները շատ ավելի վայելչակազմ են: Բայց այստեղ խորանների և՛ կամարները, և՛ սյուները դարձել են հարթապատկերային, ի տարբերություն Ժ դարի Ավետարանների, որտեղ նրանք քանդակածավալային միտում ունեին, իսկ հավքերի և երևակայական գազանների (գրիֆոնների, թևավոր շների, կոկորդիլոսների, փղերի, վարազների, թռչնագլուխ թևավոր ցուլերի, հովազների և այլ կենդանիների) պատկերները դրսից ու ներսից ծածկել են գլխազարդերը: Եթե 1038 թ. ձեռագրի սիսեմատիկ խորաններում Տ. Իզմայլովան տեսնում էր հունական մոտիվներ, ապա այստեղ և՛ արևելյան, և՛ հելլենիստական մոտիվների հարստությունը, նաև ձեռագրերի շքեղությունը, հանդիսավոր տեսքը և ոճի յուրահատկությունը ասես կանխում են կիլիկյան լավագույն ձեռագրերը:

Մեզ 1053 թ. և Մողնու Ավետարանները հետաքրքրում են ոչ թե գեղարվեստական արժանիքների, հնագիտական և այլ առումներով, այլ միայն «Խորանների մեկնությունների» խորհուրդների կապակցությամբ[100]: Ի տարբերություն Ժ դարի ձեռագրերի, այստեղ խորանները գրավում են ոչ թե թերթի երկու էջերը, այլ մեկ: Հանդի-

[99] Տ. Իզմայլովա. Հովհաննես Սանդղկավանեցի. Երևան, 1986:

[100] Տ. Իզմայլովան բավականաչափ հստակորեն ցույց է տալիս այդ բազմահարուստ մոտիվների կապը մերձավոր-արևելյան դարավոր գեղարվեստական միջավայրի հետ, սկսած նեղոսյան մոտիվներից, վերջացրած փղերի, անտիլոպների, գրիֆոնների, խաղողի վազերի, արմավների պատկերումով (նույն տեղում: Նաև Измайлова. Арм. миниатюра XI века. С. 124-166, илл. 81-88):

պակաց էջերի խորանները հայելու պես չեն նմանվում միմյանց, այլ միմյանց արձագանքում են: Թղթի առաջին խորանը զուգահեռ չունի հանդիպակաց էջում: Նրա մեջ ուղղանկյուն գլխազարդի վերևում պատկերված է երկու սիրամարգ, որոնք հեռանում են խաչից: Նրանք Հին Օրենքի քահանայական և իմացական խորհուրդներն են նշանակում (Սյունեցու, ԺԱ-ԺԲ դարերի, Վանական Վարդապետի և այլ Մեկնություններ): Արխիտրավի հեծանի վրա, գլխազարդերի կողքերից, խոյանում են ոճավորված արմավածառեր, իբրև իմացությունների բազմապատկման նշան (1599 թ. Պողոս Ռաբունապետի և ԺԷ դարի Անանուն Մեկնություններ): Արմավի ծառը փչակավորվում է, որի մեջ թևավոր սֆինքս է նստած, իբրև իմացության խորհրդանիշ (Պողոս Ռաբունապետի և ԺԷ դարի Անանուն Մեկնություններում արմավենին խորհրդանշում է իմաստությունը): Գլխազարդի ներսում ֆոն է ծառայում ոսկին: Այն երիզում է նաև խորանի գինեգույն-վարդագույն երկու սյուները, իսկ այդ գույները կապված են Մելքիսեդեկի, իբրև Քրիստոսի խորհուրդի հետ:

Թղթի երկրորդ և երրորդ խորանները, լինելով հանդիպակած էջերում, միմյանց նման են միայն ճարտարապետական-սխեմատիկ կառուցվածքով (կմախքով): Եթե նախորդ խորանի գլխազարդը ներգծված կամարներով կամ կիսաշրջաններով բաժանվում է ինը մասի (երկնային ուժերի ինը քահանայապետությունները), ապա թղթի երկրորդ և երրորդ խորանները բաժանվում են վեց մասի (անմահների միջին և վերին դասերը, ըստ Ենովհալու, Խլաթեցու, Ստեփանոս Չիլք Զուղայեցու և այլ Մեկնությունների): Հանդիպակաց էջերի սյուների բները խուլ կապույտ են (գույները խունացած են): Մուգ գույնը հրեշտակների ավելի ստորին դասերի տրտմությունն է ցույց տալիս, որ նրանք անմիջապես չեն վայելում Սուրբ Երրորդության լույսը, այլ ավելի վեր գտնվող հրեշտակների միջոցով: Եթե առաջին խորանում արմավենու բնին նստած թռչունները միմյանցից երես են թեքել, մարմնավորելով Հին Կտակարանի տառարի և Նոր Կտակարանի եկեղեցու հարաբերությունները, ապա երկրորդ խորանում չորս գույգ ոսկեփետուր թռչուններն ասես խոսում են միմյանց հետ (Մովսեսի խորանը հեթանոսների նոր եկեղեցու խորհուրդն է): Թղթի երրորդ խորանի գլխազարդի՝ կամարով հատված վերին անկյուններում պատկերված է երկու շենք՝ երկթեք տանիքով: Կասկածից վեր է, որ նրանք, ինչպես և զանազան թռչունները խորհրդանշում են Հին և Նոր Կտակարանները, ավելի շուտ՝ Մովսեսի խորանը և Քրիստոսի եկեղեցին: Այդ տեսակետից Մողնու Ավե-

տարանին մոտ գուգահեռ կարելի է համարել Ա կաճոնի խորանը 1030 թ. վրացական Մեստիայի Ավետարանում: Այստեղ[101], թվում է, նույնատիպ երկթեք տանիքով շինությունների պատկերումով արտահայտված է Հին և Նոր Կտակարանների միասնության գաղափարը, ինչ տեսնում ենք Մողնու Ավետարանի Եվսեբիոսի բղթի խորանում: Երկու Կտակարանների կապի մասին խոսում են նաև փաթաթված պարանոցներով երկու սիրամարգերը և կարծես թե միմյանց ձայնակցող երկու թռչունները:

Մողնու Ավետարանում սյուների բները փաթաթված կամ շրջապատված են տարբեր ճևերի ու գույների վարագույրներով: Մի քանի Մեկնություններում վարագույրը կամ ծոպերը «չուանձին» (Տաթևացի), վերաբերում են առաջին խորանին: Թղթի երկրորդ խորանում և Ա կանոնի խորանում պատկերված են երկուական թռչուն «յերկու կողմանէ գգլուխն ի ներքոյ սեղանոյն անցուցեալ և բարձեալ, նշանակէ զՈւնկիանոս և զԿուռնելիոս կամ գիրեայս և գիեթանոս, որք խոնարհեցուցին զպարանոցս իւրեանց ի ներքոյ լծին Աւետարանին» (Գրիգոր Տաթևացի): Այստեղ սեղանի փոխարեն պատկերված է սափոր, որի վրա դրված են Ավետարանի գրքերը, ծածկված շորով (հին սովորույթ, որ շարունակվում է նաև հիմա): Ա կանոնի խորանում նորից երկու սիրամարգ է պատկերված և բազմաթիվ արմավաճյուղեր, իբրև իմացության (գիտության) բազմապատկման խորհուրդ: Այստեղ սիրամարգերը դիմացից են պատկերված, բոլորածև բացված պոչերով, որտեղ ոսկին նշանակում է հրեշտակների անմահ բնությունը: Նեղոսի տեսարանը, որի համար Ս. Տեր-Ներսեսյանը բացատրություն չի գտնում, հավանաբար կապված է եգիպտոսից իսրայելացիների դուրս գալու հետ, որտեղ, ըստ Հովհան Ոսկեբերանի (Դ դար) մի ճառի, մարդիկ որպես աստված պաշտում էին շներին, կոկորդիլոսներին և կապիկներին[102]: Նավակում նշմարվող երկու անձինք երևի կապված են Մովսեսի և Ահարոնի հետ, իսկ կոկորդիլոսները, թևավոր շները և սֆինքսները եգիպտոսի:

Երկրորդ կանոնի խորանից մինչև վերջինը (տես նկ. 11-14) սյուների և վարագույրների կողքին հայտնվում են բոցածև վեր ելնող արմավենիներ («իսկ արմաւենիքն ի ստորուստ ի վեր բուսեալ վասն զի յերկրէ աստի ճշմարտութիւն բուսաւ՝ մերձենալով առ վե-

[101] Шмерлинг. Худож. оформление грузинской рукописной книги X-XI вв. Илл. 40.

[102] «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յԱետարանագիրն Մատթէոս». Գիրք կրկին. ի Վենետիկ, 1826, էջ 58:

րին կարգան կանաչացեալ արդարութեամբն, որպէս և գրեալն է», Ստեփաննոս Սյունեցի, նաև Սաղմոս ՃԻ, 12):

Մենք ոսկե խաչի պատկեր տեսնում ենք Բ կամոնի (փոքր, նախշազարդ) (նկ. 11), Ե կամոնի (այստեղ խաչը ելնում է վեր նախշազարդերից) (նկ. 12), Ը, Ի և ժ կամոնների (այստեղ խաչն ազատ կանգնած է շորի մեջ փաթաթված գրքի վրա դրված սափորին, իբրև սեղանին) խորանների գլխազարդերի վերևում: Ե կամոնի խորանում խաչի մասին հիշատակվում է Գ Մեկնության մեջ: Գրիգոր Տաթևացու, Պողոս Րաբունապետի, Ստեփաննոս Ձիք Ցուղայեցու Մեկնություններում խաչը կապված է ծառի հետ, որ տեսել է Աբրահամը: Խաչը ժ խորանում (Բ Մեկնություն) խորհրդանշում է ծաղկող խաչը, կաթողիկե եկեղեցին, Վերին Սիոնը և այլն:

Ըստ Գրիգոր Տաթևացու, խորաններում պատկերված զանազան կենդանիները (այստեղ եզներ և վայրի խոզեր, առյուծներ, լուսաններ, անտիլոպներ, այծեր, հուշկապարիկներ և այլն) նշանակում են այն ժողովուրդներին, որոնք կամ որոնց մի մասն ընդունեց Ավետարանը: Ուստի ինչպես ռոմանական տաճարներում մարդկանց և կենդանիների զանազան երևակայական համակցություններ ներկայացնող պատկերաքանդակները չեն խաթարում տաճարի առաջ բերած վեհության զգացումը, այդպես էլ այստեղ ամենաբազմազան իրական և երևակայական կենդանիները ամենևին չեն նսեմացնում այն վսեմ զգացումը, որ մեր մեջ առաջ են բերում խորանները գլխազարդերի և սյուների նրբագեղ համամասնությունների, սպեկտրի (այդ թվում նաև ոսկու) հնչուն և ներդաշնակ գույների շնորհիվ, որոնք այս ձեռագրում, ինչպես որմնանկարների վրա, փոքր-ինչ խլացված են:

Մուղնու Ավետարանում հեշտ չէ տարբերել թռչունների տեսակները, քանի որ նրանք ոճավորված են պատկերաքանդակների նման: Իսկ 1053 թ. Ավետարանի երկու խորաններում (Ը, Ի, ժ կամոնների խորանները, ինչպես Մուղնու Ավետարանում) պատկերված թռչունները դեռևս լրիվ պատկերաքանդակի նման չեն: Հստակ երևում են ձկնաբաղ հավքերը «Խորանների մեկնություններում» մատնանշված դիրքերով: Երկու թռչունները քորում են ոտքերը, քանի որ Հուդան և Հիսուսի յոթանասուն աշակերտներից մի քանիսը խորհեցին երկրավորի մասին (Գրիգոր Տաթևացի), երկուսը ասես հեռանում են (ետ են դարձել Տիրոջ խոսքերից), իսկ երկուսն էլ ժ կամոնի խորանում, բադերի թաթիկներով, ծուկ են բարձրացնում դեպի վեր (ավետարանիչների խորհուրդները):

...

Բավական խորն է ուսումնասիրված կիլիկյան հայկական մանրանկարչությունը: Նրա շուրջը կա բավականաչափ մեծ գրականություն:

Նյութը շատ բարդ է և բազմապիսի: Ուստի մենք կանգ կառնենք մի քանի ձեռագրերի վրա: Մեր խոկումների հիմքը հրապարակված նյութն է: Հստակ ստեղծված է, որ Կիլիկիայի հայկական պետության աշխարհագրական և քաղաքական դիրքի շնորհիվ այստեղ հանդիպել է երեք համաշխարհային մշակույթ քրիստոնեական (Բյուզանդիա, քրիստոնեական Արևելք և Արևմուտք), մահմեդական (արաբներ, սելջուկներ) և հեռավոր-արևելյան (մոնղոլներ, առևտուրը Չինաստանի հետ):

Կիլիկյան գրքարվեստում մեծ տեղ են գրավում լուսանցազարդերը, որոնց մի մասը խորանների փոքր հատվածներ են (տաճարիկներ, աշտանակներ, կենաց ծառ, արմավիկներ, թռչնապատկերներ և այլն): Դրանք ժառանգվել են Մեծ Հայքից, Փոքր Հայքից, Կապադովկիայից, Հյուսիսային Սորիքի (օր. Եդեսիա) ԺԲ դարի ձեռագրերից, Բարձր Հայքից[103], որոնց մի օրինակը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում պահվող ԺԱ դարի Կարսի Ավետարանն է[104]: Թորոս Ռոսլինից մեզ հասած վերջին ձեռագրերում 1268 թ. Մալաթիայի Ավետարանում (Հռոմկլա, Մատենադարան N 10675)[105], ինչպես և կիլիկյան Ավետարանների մեծ մասում, Եվսեբիոսի թղթի խորանները երկու էջ են գրավում, կանոնների խորանները ութ:

Թղթի կիլիկյան խորաններում ԺԲ դարից նկատվում են Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիների պատկերներ: Ս. Տեր-Ներսեսյանը դեռևս1936-ին լույս տեսած մենագրության մեջ առաջին փորձն էր անում պարզելու Ներսես Շնորհալու «խորանների մեկնության» կապը ԺԲ դարի մի կիլիկյան ձեռագրի հետ (Վենետիկ, Միսիթարյանների մատենադարան N1635)[106], ինչպես նաև մի քանի այլ ձեռագրերի: Մենք սույն գրվածքում արդեն մատնանշել ենք այդ կապի գո-

[103] Այսինքն այն գավառներից, որոնք ԺԱ դարում նվիրվում էին հայ թագավորներին և իշխաններին բյուզանդական կայսրերի կողմից Մեծ Հայքի երկրների փոխարեն (Անի, Վասպուրական, Կարս, Գաճեցակ և այլն):

[104] Der Nersessian S. L'art arménien. Paris, 1977, p. 103-114.

[105] Korchmazin E., Drampian I., Hakopian G. Armenian Miniatures of the 13th and 14th Centuries from the Matenadaran Collection. Aurora Art Publishers-Leningrad 1984, pl. 90-91.

[106] Der Nersessian S. Manuscrits arméniennes illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise. Text et album. Paris 1936, p. 58-60.

յությունը[107]:

Վենետիկի N 1635 ձեռագրի Թ կաճոնի խորանի (նկ. 24) գլխազարդի վերևում պատկերված է Էմաուսելը, որի հայտնության մասին գուշակում էին մարգարեները (նրանց խորհրդանշում են Ե-Ջ կաճոնների խորանում պատկերված աքաղաղները)[108]: Փյունիկների պատկերները (անմահության խորհուրդ) երբեմն փոխարինում են սիրամարգի պատկերներին: Խորաններում ծառերի շուրջ նկարված փոքրիկ թռչուններին Ա. Տեր-Ներսեսյանը կարծում է մրտիմների (մրտմունք) պատկերներ, բայց մրտիմները վայրի բադերն են, որոնք հանդիպում են կիլիկյան Ավետարանների մեծ մասում:

Ժ կաճոնի գլխազարդի վերևում պատկերված է էթիմասիան (Թափուր գահը)[109], որտեղ աթոռը նշանակում է Հայր Աստծուն, աղավնին Սուրբ Հոգին, գիրքը Քրիստոսին[110]: Եվ այս պատկերում, և Բալթիմորի Ավետարանի Ժ կաճոնի խորանի գլխազարդի վերևում նկարված զարդատուփում Ա. Տեր-Ներսեսյանը տեսնում է եկեղեցու պատկերը, ինչպես խոսվում է Շնորհալու մեկնության մեջ[111]:

Գրիգոր Տաթևացու և Ստեփանոս Ձիք Ջուղայեցու Մեկնություններում խոսվում է թռչունի մասին «համակ ոսկի», «որ ի Ժ խորանիս», և «նշանակէ գիրեշտակս անապական բնութեամբ, որք եղան սպասաւոր և աւետաբերք Մարդեղութեան և Տնօրէնութեան Բանին»: Ըստ երևույթին, այդ թռչուններին նկատի ուներ Ա. Տեր-Ներսեսյանը:

ԺԲ, ԺԳ և ԺԴ դարերի ձեռագրերի խորաններում կրկնվող սիրամարգերի, փյունիկների, կաքավների, աքաղաղների, զանազան ճկնաքաղ հավքերի, վայրի բադերի (մրտիմների), փոքրիկ թռչունների, տարբեր սեղանների, սափորների, նռնենիների և արմավենիների պատկերները, սյունազարդ և գլխազարդերով խորանները, որոնցում մերթ իշխում են մուգ, մերթ բաց գույներ (կապույտ-երկնագույն, կանաչ, վարդագույն և այլն), այդ բոլոր մոտիվները, ինչպես կտեսնենք, ցույց են տալիս, որ, իրոք, Մեկնությունների հեղինակների կարծիքով, «մարմնոյ աչօքս նախ տեսեալ և ապա ի հո-

[107] Ա. Տեր Ներսեսյանը մասնավորապես կասկածում է, թե կարելի՞ է բացահայտել արդյոք «կոկորդիլոսների որսի իմաստը» Մլքե թագուհու Ավետարանում (նույն տեղում, էջ 61): Նրան հայտնի չէին խորանների բոլոր Մեկնությունները, որոնք հնարավորություն են տալիս երբեմն բացահայտել անհավատալի մոտիվներ, այդ թվում Նեղոսի տեսարանի իմաստը:

[108] Նույն տեղում, նկ. XXII, XXI:

[109] Նույն տեղում, նկ. XX:

[110] Նույն տեղում, էջ 60:

[111] Նույն տեղում:

գոյն ակն ազդեալ» (Գրիգոր Տաթևացի), այսինքն եթե Ավետարանը հոգևոր դրախտ է, ապա տասը կանոնների խորանները այդ դրախտի խորհրդանշական պատկերն է:

Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, Թորոս Ռոսլինի ձեռագրերի և 1262 թ. Ավետարանի (Ուոլթերս պատկերասրահ, Բալթիմոր N 530) խորանների սխեմաները հիմնականում հետևում են Կիլիկիայում ԺԲ դարում սահմանված սխեմաներին[112]: Նույն հեղինակի վկայությամբ, 1260 և 1262 թթ. Ավետարաններում (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարան) մարգարեների պատկերները հայտնվում են կամարամեջերում (լյունետներում)[113]: Կիլիկիայում, սկսած ԺԲ դարից, որպես կանոն, Թղթի խորանների գլխազարդերում պատկերվում են Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարները: Փաթեթների վրայի մակագրությունները արտահայտում են փրկչական մարգարեություններ: Ռաբուլայի ասորական Ավետարանում կանգնած մարգարեները չունեն գալարափաթեթներ մակագրություններով: Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, ի տարբերություն Թորոս Ռոսլինի նկարած գալարափաթեթ բռնած մարգարեների կիսանդրիների, չեն գուշակում Մեսիայի Հայտնությունը: Սակայն, ըստ Լերուայի, Ռաբուլայի Ավետարանի խորաններում տերունական կարգով միմյանց հետևող ավետարանական տեսարանները ցույց են տալիս, որ Հին Կտակարանը Նորի նախերգանքն է[114]: Վրացական Գելաթի Ավետարանի (Թբիլիսի NQ 908) խորաններում ներկայացված են մանրանկարներ հունարեն մակագրություններով Իսահակի զոհաբերումը, Լեռանը նայող Սոփոնիան, Կենդանի ածուխ ստացող Եսային, մարգարեների ֆիգուրներ և այլն: Դրանք նույն գաղափարն են շեշտում, ինչ մեր մենկնիչները, այսինքն Հին Կտակարանի խորհրդանշական բնույթը Նոր Կտակարանի համար[115]:

Ձեռագրի հիշատակարանում Թորոս Ռոսլինը մեզ համար բոլորովին անսպասելի խոսում է գույներին ազնիվ քարերի կերպ տալու մասին՝ անկախ այն բանից, թե քարերը մուգ գույն ունեն, թե բաց[116]: Այստեղ խոսքը վերաբերում է գույնի որակին և գեղեցկությանը:

1262 թ. Ավետարանի Թղթի խորանները օրինակ են ծառայել Մաղաքիայի Ավետարանի համար: Առաջին խորանում սիրամարգեր են

---

[112] Der Nersessian, S. Armenian Manuscripts in the Walters Art Gallery. Baltimore, 1973, p. 27.
[113] Նույն տեղում:
[114] Նույն տեղում էջ 28. Leroy J. Les manuscripts syriaques..., p. 164-167.
[115] Der Nersessian. S. Arm. Manuscripts in the Walters Art Gallery, p. 28.
[116] Նույն տեղում, էջ 87:

փարված պարանոցներով, որոնց միջև բարձրանում է խաչը: Թղթի երկրորդ խորանում սիրամարգերը գլուխները ետ են դարձրել նրբագեղ թասի ձևով պատկերված կյանքի աղբյուրից, զարդարված եռամասնյա շուշան ծաղիկներով: Ձե գլխազարդերի ու սյուների կողքերի ծառերը, թե բազմատեսակ թռչունները անցնում են Մալաքիայի Ավետարանի խորանների մեջ: Ա և Բ կանոնների հանդիպակաց խորաններում, ինչպես Մալաքիայի Ավետարանում, արխիտրավից վեր, գլխազարդի կողքին աշտանակներ են, որոնց վրա թռչնակներ են: Սակայն գլխազարդում մարգարեի կիսանդրու փոխարեն խեցոսկի է, որ գունդ է հիշեցնում, և հյուսածո ոսկե ֆոնի վրա: Ա կանոնի խորանի գլխազարդի վրա երկու ծկնաքաղ հավքեր են (այստեղ ծկնկուլներ կամ կռունկներ): Նրանցից մեկը գլուխը սուզել է ջրի մեջ, մյուսը ծուկը պահում է կտցով: Բ կանոնի խորանի գլխազարդի վերևում նորից ծկնկուլներ են, բայց նրանց միջև արդեն պատկերված է սեղան, որի վրա գունդ է դրված (հավանաբար խաչով), ծածկված ցանցկեն գործվածքով:

Բ-Գ և Դ-Ե կանոնների հանդիպակաց խորանների գլխազարդերի վերևում պատկերված են կաքավներ, այսինքն, ըստ Մեկնությունների, այլազգի կանայք, որոնք դարձան Քրիստոսի նախամայրեր (նկ. 26, 27): Գլխազարդերի կողքին, դեպի արտաքին լուսանցքը, պատկերված են թռչնագլուխ մարդիկ, ձեռքերին շուշաններ, որոնց վերևում խորանից ետ դարձած ագռավներ են: Վերջիններս խորհրդանշում են Հակոբի եղբոր Եսավի ազգը, որը ետ դարձավ Աստծուց: Իսկ ներքին լուսանցքներում, բուսազարդից վերև պատկերված են միմյանց նայող բաներ: Հավանաբար նրանք Մատթեոսին և Ղուկասին են խորհրդանշում, ովքեր պատմեցին Քրիստոսի ազգատոհմի մասին: Կարելի է մեր դատողությունները շարունակել նաև մնացած խորանների առթիվ (աքաղաղները Ե-Զ և է-Ը կանոնների խորաններում, խաչի հայտնությունը Ե-Զ կանոնների խորաններում, ճախրող թռչունները՝ ծկնկուլներ կամ կռունկներ, ծկներ և այլն):

Մալաքիայի Ավետարանում Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիները գրավում են Թղթի հանդիպակաց խորանների գլխազարդերի լուսնետները, ընդ որում դրանք կազմված են համակենտրոն կամարներից: Այստեղ ոճավորված բույսեր են արմավենիների տեսքով, նրանք ասես շարունակում են ուղղանկյուն գլխազարդի մեջ ներգծված աղեղների շառավիղը դեպի գլխազարդի վերին անկյունները: Ֆոնը ոսկի է: Գլխազարդի վրայի սեղանի շուրջը պատկերված են սիրամարգեր: Սիրամարգի կողքին արևելյան նոճիներ են,

որոնց վրա նստած են երգող հավքեր: Իսկ բիլ կապույտ սյուների կողքին ծառեր են, որոնց վրա գիշատիչ թռչուններ են կապույտ փետուրներով և կարմիր կտուցներով ու ոտիկներով: Նրանցից մեկը պատկերված է ծագերի վրա սպառնացող դիրքով, քանի որ ծառի կողքին ջայլամ հիշեցնող կարմիր թռչուն է չափազանց երկար պարանոցով և նայում է ծագերին: Ռոսլինի մոտ խորհրդանիշները փոխակերպվում են մինչև անճանաչելիության աստիճանի: Եթե արմավատերևներից կազմված ակրոտերիոնները (եղջյուրները) գլխազարդի վերևում սեղանի վրա եղջյուրի դեր են խաղում (ինչպես արմավենիները Ժ դարի խորաններում սյուների և կամարների հանդիպման տեղում), ապա նրանք խորհրդանշում են Մովսեսին և Ահարոնին, ինչպես նախատեսված է վաղ Մեկնություններով: Այդ եղջյուրները, արդեն իբրև ուղղանկյուն գլխազարդի անկյունագծերի շարունակություն, առկա են բոլոր խորաններում: Այստեղից կիրառելի է ԺԱ-ԺԲ դարերի Մեկնության այն խոսքը, թե «եղջիւրքն առ վերին սեղանն զՄովսէսէ և զԱհարովնէ բերեն խորհուրդ...»:

Երբ Ստեփանոս Սյունեցին ասում է, որ ութերորդ, իններորդ և տասերորդ խորանները հավասարապես զարդարված են Հին և Նոր Կտակարանների խորհրդանիշներով, ապա այդ խոսքերը կիրառելի են մնացած խորանների նկատմամբ:

Գլխազարդերի ներսի կամարների մեջ պատկերված են մարգարեների կիսանդրիները (նկ. 26, 27, 28, 29, 30): Բ. Նարկիսը այդ պատկերների գոյությունը բացատրում է Ռոսլինի կողմից ավանդության խոր իմացությամբ (չէ՞ որ մարգարեների նկարները մենք առաջին անգամ տեսնում ենք ասորական Ջ դարի Ռաբուլայի Ավետարանում)[117]: Մենք կարծում ենք, որ այստեղ Ռոսլինը Մեկնություններով նախատեսված հինկտակարանային խորհրդանիշների հետ ուղղակի ներկայացրել է նաև այն գլխավոր մարգարեների դիմանկարները, որոնք ավետում են Քրիստոսի Հայտնությունը և Մարդեղությունը: Բ կանոնի խորանի գլխազարդի վերևում պատկերված է սեղանի կարմիր սփռոցով (սեղան, բոցավառ ցուցեալ, ըստ Շնորհալու), վրան սափոր կիսով չափ կտրված ծեռագրի նորոգման պատճառով: Հավանաբար վրան խաչ է եղել պատկերված, ինչպես Սուղնու Ավետարանում:

Ե և Ջ կանոնների խորանում Եսայի մարգարեի կիսանդրին է (նկ. 28): Այստեղ երկու կռվող աքաղաղներ են՝ սափորի երկու կողմում, ներքևում հոպոպներ, գլուխները դարձրած դեպի գլխազարդը (նա-

[117] Narkiss B. Armenian Art Treasures of Jerusalem. Massada Press, Jerusalem, 1979, p. 51.

յում են սեղանին և աքաղաղներին), իսկ նրանց տակ կանաչ է ծաղկող շուշաններով: Շուշանը խորհրդանշում է նահապետներին, առաքյալներին և այլն: Իսկ հոպոպները հիշեցնում են մարիներին, որոնց մեջ աքաղաղները «հրաժանատու» տեսք ունեն (Այուներցու և այլ Մեկնություններ): Ներքևում, արտաքին այուների կողքին ծառերի պատկերներ են՝ նման կարմիր պտուղներով: Ծաղկող շուշանները և նոճենիները ե կանոնի համար են նախատեսված ըստ Այուներցու, Վանական Վարդապետի, ԺԳ-ԺԵ դարերի և ԺԳ դարի անանուն Մեկնությունների: Նրանց վերևում շքեղ ծկնկուլներ են կամ կոունկներ, իբրև ծկնաքաղ հավքեր:

է-Ը կանոնների խորանը (կամարում Սովսեսի պատկերն է) գրեթե կրկնում է նախորդ խորանը (հպարտ աքաղաղներ, որոնցից մեկն ավետում է առավոտը, հոպոպներ, շուշաններ, նոճենիներ): Նոճենիների վերևում երևակայական փետրավորներ են փասիանների կամ դրախտահավերի տեսքով (նկ. 29):

Ժ կանոնի խորանում պատկերված է Հովհաննես Սկրտիչը, ըստ Շնորհալու Մեկնության, «կատարումն մարգարէիցն և սկիզբն առաքելոցն»: Ոսկիինի խորաններում ակնբախ է ծաղկողի ձգտումը մուգ գույներից անցնելու լուսավոր գույների, քանի որ վերջին խորաններում այուները դառնում են կարմրավարդագույն սպիտակի խառնուրդով, իսկ վերջին խորանում կարմիր է նաև քիվը, իսկ գլխագարդերը լուսավոր երանգներով են: Այստեղ, ինչպես և Բ կանոնի խորանում, պատկերված են աշտանակներ[118] (նկ. 31):

Խորհրդանիշներով հարուստ են նաև ԺԳ դարի առաջին կեսի ծաղկող Սարգիս Պիծակի պատկերազարդած Ավետարանների խորանները: Նա շարունակում է Ոսկիինի և կիլիկյան վարպետների ավանդները վառ գույների ընտրության հարցում. սպեկտրի հիմնական գույները (կապույտ և մանուշակագույն՝ սպիտակների խառնուրդով, կանաչ և կարմիր՝ դեղին փայլերով) ոսկի ֆոնի վրա թողնում են բանկարժեք քարերի տպավորություն: Վառ գույները մյուս զգայությունների շարքում «մեծապես աւգուտ գործեն կատարելոցն, յորժամ այս երևելի գունովս և համով և հոտով և լրովն ամբառնամք ի հոգևորն և յիմանալի վայելչութիւն յաւետիսն Աստուծոյ...»: 1336 թ. Արքունական Ավետարանում (Մատենադարան N 5786) Շնորհալու Մեկնության մեջ նշված հավքերի վեց տեսակից

[118] Ըստ մեզ ամբողջությամբ չհասած «Խորանների մեկնության» հատվածի (Մատենադարան N 7862, 1380 թ.), «... իսկ աշտանակք քարոզութեան առաքելոցն, որք ոչ թագաւորեան կէին, այլ իբրև ի վերայ աշտանակի լուսաւորելով գիտնուրսն...».

կան սիրածարգեր, աքաղաղներ, մրտիմներ: Աղավնիները ու կաքավները ասես խաչասերված լինեն, ծկնաքաղ հավքերը (բադեր, կոունկներ, օձ բռնող արագիլներ, ծկնկուլներ) պատկերված են Ավետարանի տեքստի լուսանցքներում[119]: Ժ կանոնի հանդիպակաց էջերի խորաններում ծառերի վրա պատկերված են ագռավներ, իսկ Զ-ե և Ը-Թ կանոնների խորաններում մոմով աշտանակ բռնած կապկի և շան խառնուրդներ: Գ կանոնի խորանում մոմ բռնած կապիկները, ըստ Պողոս Ռաբունապետի Սեկնության (1599 թ.), խորհրդանշում են հանուն Հիսուսի նահատակներին, ագռավը, ըստ Տաթևացու և նույն Պողոսի, նշանակում է եսավի տունը և սուտ մարգարե Բաղամին: Բայց եթե հաշվի առնենք, որ Հովբը ևս Եսավի ցեղից էր, ապա ագռավի հայտնությունը վերջին խորաններում կապվում է լույսի խորհուրդի հետ[120] (նկ. 33, 34, 35):

Մենք դեռևս պետք է ցույց տանք նաև «Խորանների մեկնությունների» ազդեցության արտահայտությունները կիլիկյան խորանների պատկերագարդման մեջ:

Ռոսլինի մոտ Դ-ե կանոնների խորանում կաքավները խորհրդանշում են Հին Կտակարանի պոռնիկ կանանց: Ըստ երևույթին, այծագլուխ մարդիկ[121] նշանակում են գոհաբերումը ըստ Հին Կտակարանի: Նրանք ձեռքերին պահում են ծաղկող ճյուղեր, որոնց վրա նստած են ավետարանիչներին խորհրդանշող բադիկներ (մրտմունք), որոնք պատմում են նոր գոհաբերման Քրիստոսի խաչելության մասին: Երբեմն չորս բադեր են պատկերվում կամարի մեջ[122]: Բացի մարգարեներին և առաքյալներին խորհրդանշող աքաղաղներից, կոունկներից, ծկնկուլներից, հավալուսներից, պատկերվում են նաև մարգարեների կիսանդրիները լյունետների մեջ: Ռոսլինի և նրա հետևորդների տերունական նկարներում ևս տեսնում ենք մարգարեների պատկերները: Նրանք, ինչպես խորաններում, ցույց են տալիս Հին և Նոր Կտակարանների խորհրդանշական կապը[123]: Երբեմն նաև տարօրինակ փոխակերպություններ են կատար-

[119] Դազարյան Վ. Սարգիս Պիծակ. Երևան, 1980, էջ 35:

[120] Նույն տեղում: Jobes G. Dictionary of Mythology, Folklore and Symbols. Scarecrow Press, Inc. New York, 1962, Part 2, p. 1325.

[121] Հին հրեաները այծին համարում էին գոհաբերման կենդանի հանուն Աստծո: Կա «բավության նոխազ» արտահայտությունը (Jobes. Dictionary... Part 1, p. 665-666): Հայ մատենագրության մեջ կա նաև «Այծից պատարագ» արտահայտությունը (տես Հ. Հովհաննիսյան. Ծատրոնը միջնադարյան Հայաստանում. Երևան, 1978, էջ 144-181: Նույնի՝ Հայ հին դրածան և նրա պայմանաձևերը. Երևան, 1990, էջ 176 և հետո):

[122] Narkiss. Armenian Treasures of Jerusalem. III. 61.

[123] Ազարյան Լ. Ռ. Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ. Երևան, 1964, նկ. 61

վում խորհրդանիշների հետ: Օրինակ, 1277 թ. Ավետարանում (Նյու-Յորքի Մորգանի հավաքածու, N 740, ծաղկող Կոստանդին) (նկ. 36), Մատենադարանի N 9412 Ավետարանում խորաններում, գլխագարդի կողքին, քիվի վրա, պատկերված են մերկ գիսավոր պարուհիներ (կաքավներ)[124], որոնք, ինչպես «կաքավ» բառն է ցույց տալիս, փոխարինում են կաքավ թռչուններին, որոնք խորհրդանշում են Հին Կտակարանի պոռնիկ և օտարազգի կանանց: Մարգարեների, Դավիթ և Սողոմոն արքաների, առաքյալների և ավետարանիչների կերպարներն ենք տեսնում, հագած պալիում և տունիկա (պատմուճան և պարեգոտ), ոսկե ֆոնի վրա սյուների խոյակների տեսքով: Կան նաև աշտանակ բռնած կապիկների, իբրև նահատակների, ագռավների պատկերներ, որսի[125], ձկնորսության տեսարաններ, բազմատեսակ սեղանների, կենաց աղբյուրների պատկերներ:

Դեռևս Գ. Հովսեփյանն էր նկատում Հռոմկլայեցի ծաղկող Հովհաննեսի և Ջորջ Ռոսլինի պատկերած խորանների նմանությունը[126]: Բ. Նարկիսը դա ցույց է տալիս երկու խորանի օրինակով[127]: Գ. Հովսեփյանը թվարկում է նաև համանման մոտիվները Հովհաննեսի պատկերազարդած մի ձեռագրի և Ռոսլինի մի քանի ձեռագրերի խորաններում. ծուկ բռնող թռչուն (ձկնաքաղ), աշտանակներ, կաքավներ կենաց աղբյուրի շուրջը, կռվող աքաղաղներ և այլն: Նա ընդունում է, որ այդ մոտիվները գուրկ չեն ներքին իմաստից, որը կայանում է փրկության պատմության մեջ ըստ մարգարեների կանխասացությունների մինչև Փրկչի Հայտնությունը[128]: Նա գիտե, որ կան «խորանների մեկնություններ» և վկայակոչում է Ս. Տեր-Ներ-

---

[124] Der Nersessian S. Armenia and Byzantine Empire. A Brief Study of Armenian Art and Civilization. Cambridge, Mass., Harward University Press, 1945, p. 125, Table XXV, 2.

[125] Իհարկե հավքերի կողմից ճկների որսը այլաբանորեն կապված է առաքյալների կամ ավետարանիչների կողմից մարդկանց հոգիները որսալու հետ, ըստ Մեկնությունների: Բայց մարդկանց, հեծյալների, գազանների և կենդանիների մասնակցությամբ որսի տեսարանները կարելի է երկու կերպ բացատրել, ա) իբրև նույնանման բովանդակության ուշ անտիկ տեսարանների մնացուկ, բ) որպես իրանական դիպտոի աղոտ արձագանք (այդ ժամանակ պետք է համաձայնել Ստրժիգովսկու այն դիտողությանը, որ խորանների պատկերները և Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վանքի որսի պատկերների խաղողի ֆրիզը Ափեստայի դրահտի արձագանքներն են) (տես Noedenfalk. Die spätantiken Kanontafeln, S. 125).

[126] Հովսեփեան Գ. Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ Հայ արուեստի պատմութեան. Պրակ Բ. Նիւ-Եօրք, 1948, էջ 23:

[127] Narkiss. Armenian Treasuers of Jerusalem, p. 125

[128] Հովսեփյան Գ. Նյութեր և ուսումնասիրություններ Հայ Արվեստի պատմության. Հատոր Ա. Երևան, 1963, էջ 325, 346:

սեսյանի մենագրությունը[129]: Ի. Ռ. Դրամբյանը, ի տարբերություն Գ. Հովսեփյանի և Ս. Տեր-Ներսեսյանի, ցույց չի տալիս զարդամոտիվների ժառանգորդությունը Ռոսլինի խորաններում: Բայց նա Ռոսլինի արվեստի ուշագրավ վերլուծություն է անում, որին բնորոշ է խորանի դասական կառուցվածքը և չափի բացառիկ զգացումը[130]:

***

Վասպուրականի մանրանկարչության մասին ևս կա հարուստ գրականություն: Վասպուրականում պահպանվել են խոր հնության հիշատակներ, առասպելներ և լեգենդներ, կապված նրա հետ: Շուները, Սիտանին, Ասորեստանը, Հայաստանը, Ուրարտուն, Մեդիան, սկյութները, կիմմերները, Աբեմելյան Իրանը. ահա ոչ լրիվ ցանկը հին այն մեծ թագավորությունների և պետությունների, գեղերի, որոնց մասին հիշատակներ են պահպանվել հին Հայաստանի վեպերում և լեգենդներում Նինոս, Շամիրամ, Սանասար-Սալմանասար-Սեններիմ, Աժդահակ, Կյուրոս, Արամ և այլն: «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի մի քանի լավագույն պատումներ վասպուրականցի գեղջուկների բերանով են մեզ հասել:

Վասպուրականի հետ է կապված նաև Հայաստանում քրիստոնեական հավատքի առաջին տարածողներ Թադեոս և Բարդուղիմեոս, Թովմա առաքյալների, Սանդուխտ կույսի (Ա դար), Նարեկա դպրոցի (Ժ-Թ դարեր), Գրիգոր Նարեկացու և այլ նվիրական անուններ: Սելջուկյան և մոնղոլական լծի ժամանակ և հետագայում (ԺԴ-ԺՁ դարեր) բնակչությունը խմբվում էր մահմեդական իշխանությունների շրջապատված Աղթամարի կաթողիկոսի շուրջ: Վասպուրականից մեզ է հասել շուրջ 1500 ձեռագիր: Վասպուրականի մանրանկարչության ուսումնասիրողները շեշտում են նրա պահպանողական բնույթը, որ արտահայտվում է պատկերաշարի կայունությամբ և հավատարմությամբ քրիստոնեական արվեստի հին արևելյան ձևերին, մակագրությունների հարստությամբ սյուժետային նկարներում, որ կարող է լինել առանձին ուսումնասիրության նյութ:

Ինչ վերաբերում է խորաններին Վասպուրականի ձեռագրերում, ապա նրանք աչքի են ընկնում կառուցվածքային խիստ պարզութ-

[129] Նույն տեղում, էջ 341-348:

[130] Дрампян И. Р. Художественные особенности искусства Тороса Рослина (миниатюра Малатийского Евангелия) — "Древнерусское искусство". Сб. III. Москва, 1983, с. 331-340. Ռոսլինի ծաղկած Ավետարանների խորանների կառուցվածքի, բուսանդական մոտիվների և «խորանների մենկությունների» կապի մասին տես И. Р. Дрампян. Торос Росли. Ереван 2000, с. 85-88.

յանք և ներնախշազարդերի ոչ մեծ քանակով: Մեզ հայտնի է նաև, որ Ստեփաննոս Սյունեցու Մեկնության երկրորդ խմբագրությունը և Մեկնություններից մեկը, կազմված Ներսես Շնորհալու նմանությամբ, պատկանում է վասպուրականցի ծաղկող և հայսմավուրքի խմբագիր Գրիգոր Խլաթեցի Ծերենցին:

Վասպուրականի մանրանկարչության գիտակ Հր. Հակոբյանը տվել է խորանների համառոտ նկարագրություններ[131] և հրապարակել է դրանց առանձին նմուշներ, որոնք հնարավորություն չեն տալիս մեկ հայացքով ընդգրկել նրանց պատկերային համակարգը և տարբեր ժամանակների ձեռագրերում առանձին խորանների օրինակներով դիտարկել նրանց հարաբերությունը «խորանների մեկնությունների» հետ:

Վասպուրականցի ծաղկողներն, ըստ երևույթին, իրրև սեղան հասկացել են ամբողջ խորանը կամ, ավելի ճիշտ, նրա վերին մասը: Այդ մասին արդեն խոսել ենք: Այստեղ թույլ կտանք մեզ կրկնել խորանների վերին մասերում (գլխազարդի ներսում) մի քանի նկագրություններ, որոնք հաստատում են մեր ասածը: 1288 թ. ձեռագրում (Մատենադարան N 4851) Զ-է կանոնների խորանում[132], վերին կամարի և նրանում ներառված զույգ կամարների միջև քառակուսու մեջ ծաղկող Սիմեոն Արծիշեցին գրել է. «Հաւատով կանգնեցաւ»: Դա միաժամանակ վերաբերում է ինչպես ողջ խորանին, այնպես էլ սեղանին: Նկարիչը նույնպիսի մի քառակուսու մեջ գրել է. «Ջսեղան ակն յանդիման», մի այլ քառակուսու մեջ «Սեղան սուրբ»[133] (նկ. 37, 38, 39):

1288 թ. ձեռագրի Զ-է կանոնների խորանում դեռևս պահպանվել է վերին մեծ կամարի հին ձևը, որ ընդգրկում է զույգ կամարները, ինչպես Սլքե բագուհու Ավետարանում: «Հաւատով կանգնեցաւ» մակագրությունը, ըստ մի քանի, այդ թվում Գրիգոր Խլաթեցու, Մեկնությունների, վերաբերում է Աբրահամի խորանին, հետևաբար նաև նրա կանգնեցրած սեղանին: Վերին կամարի վրա, խաղողի տերևներով երկու ճյուղերի միջև թռչող աքաղաղ է (հավանաբար դրանք սեղանի եղջյուրներն են, նշանակելով Մովսեսին և Ահարոնին, որ ըստ Մեկնությունների, կապված է է կանոնի խորանի հետ, այստեղ Զ-է կանոնների): Արտաքին սյան կողքին բարձրանում է մի ծառ,

---

[131] Акопян Гр. Васпураканская миниатюра XIII-XV вв. Ереван, 1989, с. 35, 53, 61.

[132] Նույն տեղում, պատ. 18:

[133] Հակոբյան Հր. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Ա. Երևան, 1976, մանրանկար 14, 15:

որն աղոտ կերպով հիշեցնում է արմավենի (նկ. 39):

Դ կանոնի խորանում, ըստ Իլաթեցու Մեկնության, սեղան է կամարների միջև: Այստեղ նորից սեղանի եղջյուրները հանդես են գալիս իբրև հավանաբար ծիթենու երկու ճյուղեր: Վերոհիշյալը վերաբերում է նաև նույն ծաղկողի 1305 թ. Ավետարանի (Մատենադարան N 2744) Գ-Դ կանոնների խորանին: ԺԴ դարի երկրորդ կեսի վասպուրականյան ձեռագրերի խորաններում կարելի է նաև գտնել Կիլիկիայում մշակված մոտիվներ[134]. ոչ այն է գառ, ոչ այն է նապաստակ հոշոտող արծիվ, եռաթերթ շուշան, բազմագույն տերևներ, հյուսածո, ոճավորված թռչուններ և այլն[135]:

Այսպիսով, տարբեր դպրոցների խորանների պատկերներում, երբեմն փոխակերպվելով մինչև անճանաչելիության աստիճան, փոխվում են հաճախ բույսերի և ծաղիկների տեսակները, խաչի պատկերները կորչում են գլխազարդերում քառակուսիների, շեղանկյունների, շրջանների, գորգաձև սանդուղքազարդերի մեջ, մերթ գլխազարդի վրա կամ խորանների կողքերին պատկերվում են սեղան, մերթ ամենաբազմազան ծևեր ունեցող սափորներ, մերթ խաչ, մերթ խաչը սափորի կամ սեղանի հետ, երբեմն խորաններում – քիվերի, պատվանդանների վրա հայտնվում են մարդկային կերպարանքներ նկարչին ժամանակակից աշխարհիկ կամ հոգևորականի հանդերձներով, ինքնանկարներ և դիմանկարներ, գլխազարդերում կամ խոյակների և սյուների խարիսխների տեղերում պատկերվում են մարգարեներ, արքաներ, առաքյալներ: Բայց նրանք բոլորը խորհրդանշական են: Գրիգոր Տաթևացին թույլ է տալիս խորաններում ամեն տեսակ կենդանիների և հավքերի պատկերներ: Բայց «խորանների մեկնությունների» միջոցով կարելի է վերծանել նրանց գրեթե բոլոր գործողությունները (ձկների կամ վայրի կենդանիների որս, խաչից կամ անոթից հեռացող կամ նրանց մոտեցող թռչուններ, փաթաթված պարանոցներով կամ ոտքը կամ մեջքը քորող հավքեր, ծուկ բռնած կամ լարային նվագարաններով մարդիկ, նեղոսյան տեսարաններ, ճակատներով դիմահայաց չենքեր, գմբեթավոր կամ երկթեք տանիքով և այլն): Մեկնությունների հեղինակները նկարչին չեն ստիպում ստրկորեն հետևել իրենց դեղատոմսերին, սակայն

[134] Ջաքարիա Աղթամարցու 1357 թ. ձեռագիրը (Մատենադարան N 5332) և այլ ձեռագրեր: Դա բացատրվում է նրանով, որ Սարգիս Պիծակի պատկերազարդած Արքունական Ավետարանը գտնվում էր Աղթամարի եկեղեցում (Պազարյան Վ. Սարգիս Պիծակ. էջ 5: Դանիբյան. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Ա. էջ 77, 79):

[135] Դանիբյան. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Բ, մանրանկար 4-11:

պնդում են, որ խորաններում պատահական ոչինչ չի նկարվում: Ուստի և մենք սահմանափակվում ենք դիտարկելով տարբեր, բայց ոչ բոլոր հայկական մանրանկարչական դպրոցների պատկերած խորանների մոտիվները: Բացառված չէ, որ ձեռագրերի խորաններում շատ մոտիվներ (սֆինքսներ, գրիֆոններ, ուղտապանը ուղտի հետ, թռչնագլուխ կամ այծագլուխ մարդիկ, մեկ, երկու կամ երեք դեմքերով դիմակներ, փյունիկներ, փայտփորիկներ, հոպոպներ և այլն), ինչպես կարծում է Ս. Տեր-Ներսեսյանը, քերևս ուղղակի չեն կապված «Մեկնությունների» հետ:

Վասպուրականի ձեռագրերում Մեկնություններով նախատեսված տեղերում հայտնվում են և խոսող աքաղաղներ, և կարմրակտուց բադեր խաչի շուրջը, և ծկնաքաղ հավքեր կտուցներին ձկներ, իբրև մարդկանց հոգիների խորհրդանիշ, նույնիսկ Ժ կանոնի խորանում մի տեղ պատկերված է Հովհաննես Մկրտչի ֆիգուրը[136] (Ռոսլինի Մալաքիայի Ավետարանում նրա կիսանդրին էր) (նկ. 40):

ԺԳ դարի մի Ավետարանում (ծաղկող Հովհաննես, Մատենադարան N 4320), «Ընծայումն տաճարին» պատկերում տաճարը հիշեցնում է Թ-Ժ դարերի տեծպիետտոներ վերևում պատկերված խաչով, որի տանիքների շուրջը տասներկու վարդագույն կաթավներ են նկարված [137], որտեղ վարդագույնը նշանակում է ընդհանրական կամ կաթողիկե եկեղեցին, ըստ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տաթևացու Մեկնությունների: Տաճարի կողքին կա մի փոքրիկ մակագրություն. «Կաթաւն ԺԲ (տասներկու) առաքելոցն աւրինակէ», որը լրացնում է Մեկնությունների խորհրդաբանությունը:

•••

Իհարկե, դյուրին չէ հմտորեն և զգուշությամբ բացահայտել տարբեր դպրոցների և դարաշրջանների հայերեն ձեռագրերի խորանների ամենաբազմազան մոտիվների, գույների և կառուցվածքների բովանդակած ողջ իմաստն ու խորհրդաբանությունը: Սակայն մենք համոզված ենք, որ մանրանկարիչները ծանոթ են եղել խորանների մեկ կամ մի քանի Մեկնությունների: Նրանք խորապես գիտակցել են, որ խորաններն արտացոլում են Հին և Նոր Կտակարանների խորհրդաճշական միասնությունը և խորհուրդներով լի ուղին դեպի դրախտ կամ պարզապես իմացական (հոգևոր) դրախտի գոյությու-

[136] Հակոբյան. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Բ, մանրանկար 4-11:
[137] Korchmazian, Drampian, Hakopian. Armenian Miniatures of the 13th and 14th Centuries... p1. 72.

նը: Խորաններում փոխվում են հավքերի և կենդանիների տեսակները, հայտնվում են նկարչին ժամանակակից աշխարհիկ կամ հոգևոր անձինք, ինքնանկարներ (1211 թ. Հաղբատի Ավետարան, Թորոս Տարոնացու «Աստվածաշունչ») և այլն, որոնք անշուշտ ունեն խորհրդանշական իմաստ[138]: Այդ դեպքում խորհրդաբանությունն պետք է փնտրել «Բարոյախաւսում» («Ֆիզիոլոգ») կամ «Բեստիարիումում»[139], կամ էլ հայ, ասորի, հույն, վրացի կամ եվրոպացի միջնադարյան նկարիչների մշակութային հիշողության մեջ, հին արևելյան կամ հելլենիստական գեղարվեստական նմուշներում, երբ նկարչի հզոր կամքով ծնունդ է առնում տարասեռ մոտիվների և կերպարների մի համաձուլվածք գեղագիտական և հոգևոր միասնական արտահայտությամբ, կապված Սուրբ Գրքի և աստվածաբանների լարված մտավոր աշխատանքի հետ:

***

Հայ մանրանկարչության ողջ պատմության ընթացքում և տարբեր դպրոցներում մեզ հանդիպում են Ավետարանագրքեր, որոնցում պատկերված խորանները բարդ են և զուտ «խորանների մեկնություններով» դժվար են վերծանվում սիմվոլիկ-խորհրդաբանական տեսանկյունից: Նման դեպքերում կամ այդ խորհրդաբանությունը բարդացված է, կամ քողարկված, կամ պարզապես չկա: Խորանների պատկերագրության մեջ այդ որոշ «ազատությունը» հասկանալու համար դիմենք տարբեր ծեռագրերի:

Ժ-ԺԱ դդ. թվագրվող Տրապիզոնի Ավետարանի (Վենետիկ, ծեռ. 1400) Ժ կանոնի խորանի ուղղանկյուն գլխազարդի վրա կենտրոնում տեսնում ենք կանտարոս (սկիհ երկունկանի, իբրև աստվածային սեղան), նրա շուրջը երկու ծկնաքաղ հավքեր դեմ-դիմաց քջքում են (աստվածային գիտությունն են ճաշակում), իսկ երկու խոզ հակառակ ուղղությամբ հեռանում են երկունկանի սրբազան անոթից (նկ. 17): Մեկնություններում խոսք չկա խոզերի մասին: Իսկ խոզը նշանակում է, ըստ եկեղեցու հայրերի, հեթանոսներին և անհավատներին, որոնք չեն կարողանում կրել «Ավետարանի լուծը», և փոխարինել է այն առաքյալներին խորհրդանշող հավքերին, որոնք չեն դիմանում Ավետարանի լծին:

---

[138] Der. Nersessian. Manuscrits arméniens illustrés..., p. 61.

[139] "Тексты и разыскания по армяно-грузинской филологии". Книга VI. Физиолог. Армяно-грузинский извод. Грузинский и армянский тексты исследовал, издал и перевел Н. Марр. Санктпетербург, 1904. Муратова К. Средневековый бестиарий. М. 1984.

Մշո Ճառընտիրի սկզբում կա հոյակապ մի եռակամար անվանաթերթ (նկ. 23), որի մանվածո զարդարվեստի նրբությունը չի գերազանցվել և համեմատելի է միայն ճարտարապետական դեկորի ու խաչքարերի լավագույն օրինակների հետ: Այն ամբողջապես կազմված է տարբեր տիպի պարանահյուսքերով, որոնք ծև են տալիս սյուներին ու կամարներին, զարդարում գլխազարդի շրջանակն ու լուսանցազարդի խաչի սյունը և գլխազարդի ներսը: Սրանց համար կարելի է գտնել բազմապիսի այլաբանություններ կապված ճգնավորների մագեղեն հագուստների, նրանց գործածած հյուսածո կողովների հետ և այլն կամ էլ հին սրբազան ծիսական պարերի հետագծերի, որոնց շուրջ խոսվել է գրականության մեջ (ինչպես հայ, այնպես էլ իռլանդական, անգլո-սաքսոնական, ղպտական արվեստների առթիվ):

Այդ հյուսքերի ու մանվածոների մասին իբրև «փոկեր» հիշվում է նաև «Խորանների մեկնություններում», այդ թվում Ստեփանոս Ձիգ Ջուղայեցու.

Իսկ եւ փոկերն խորանին
Վերուստ ի վայր մէջըն խառնին.
Նշան վերին և ըստորին
Եկեղեցւոյ, որ միասցին:

Ավելին, այդ անվանաթերթի մոտիվները (գրիֆոններ, մարդկանց և կենդանական կիսադեմեր շրջված կենտրոնի հյուսկեն վարդյակից, սյուների կամարներում վայրի կենդանիները գայլ կամ հեպարդ, հոշոտում են անտիլոպների, գլխազարդի վերևում երկար եղջյուրներով անտիլոպներ), որոնք հավանաբար ծագում են Անիի ճարտարապետական և մանրանկարչական դեկորից (օր. Մողնու Ավետարանի) և նոր կյանք ստանում ԺԳ դարի վերջի կիլիկյան, հատկապես Մատենադարանի 9422 Ավետարանի խորաններում:

Մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում ԺԲ դարի վերջի Սկևռայի դպրոցի կամ նրան հարող մի քանի Ավետարանների Թ-ժ կանոնների խորանը՝ գլխազարդի վերևում Քրիստոս էմմանուելի պատկերով 1193 թ. Ավետարանում (Վենետիկ, ձեռ. 1635, նկ. 24) և Սկևռայի Ավետարանում (նախկինում Լվովի հայկական արքեպիսկոպոսարանի, այժմ Լեհաստանի Գնիեզնո քաղաքի սեփականություն): Այդ խորանն, ըստ Շնորհալու, վերնագույն խորանի (Նոր Երուսաղեմի կամ Սիոնի) գաղափարն է այլաբանում. «Եւ եկեղեցիք ամենայն յարափոխեալ միանան եւ միաւորին ի նա եւ աճեսցեն

գեղեցկութեամբ հարսնացան. Քրիստոսի ընդունելով զնա յառագաստ փառաց ի կատար աւարտմանն»: Իրոք Քրիստոս էմմաուսելը խաչագարդ լուսապսակով կիսանդրիով պատկերված է եկեղեցու խորանում, սյուների ու կամարի միջև, որ արտահայտում է Քրիստոսին «փառքի առագաստն» ընդունելու գաղափարը:

Ավելի պարզորոշ են մյուս ատրիբուտները ճկնաբաղի վերևում պսակավոր ճկնաբաղ թռչունները (իբրև միավորվող եկեղեցիներ հաճախ դրանք հիմնած առաքյալների, գլխազարդի շուրջ աշտանակների կողքերին թռչուններ, իբրև նահատակներ և ճգնավորներ, որ այրվում են Քրիստոսի հանդեպ սիրո հրով, սյուների կողքերին ոսկե ծառերի սաղարթներում խաղող ճաշակող թռչուններ): Այդ պատկերը մի քանի մեկնությունների (Գ, Ե, Ժ, ԺԲ) սիմվոլների գումար է: Ավելին, որպես սյունակյացներ, խոյակներում պատկերված են թևավոր մարդ և առյուծ (իբրև ավետարանիչներ):

Էլ ավելի հետաքրքիր է կարիատիդների կամ ատլանտների կերպարը խոյակների տեղում, որոնք կարող են նմանեցվել այն հեթանոսներին (ինչպես Պուկիանոսը, Կոռնելիոսը և շատ-շատերը ըստ Շնորհալու և այլ մեկնությունների), որոնք կրեցին Ավետարանի բեռը (նկ. 25, ԺԹ դ. կիլիկյան ձեռագիր): Պետք է կարծել, որ հենց կարիատիդները կամ ատլանտները իրենց անտիկ տունիկաներով նախատիպ են դառնում ավելի ուշ կիլիկյան ձեռագրերի խորանների, որտեղ սյուների խոյակներն ու խարիսխները լցվում են գույգ-գույգ կամ առանձին մարդկային փոքր կերպարանքներով իբրև մարգարեներ և առաքյալներ՝ համապատասխան ատրիբուտներով, իսկ գլխազարդի շուրջ տարբեր կեցվածքներով նրանց խորհրդանշող թռչուններ են:

Սմբատ Գունդստաբլի Ավետարանում (Մատ. ձեռ. 7644) Ե-Ջ կանոնների խորաններում երկինքներ նշանակող համակենտրոն կամարների ներքին կամարի մեջ կծկված ընձառյուծ է նկարված ճարտար կերպով, իսկ սյուների խոյակների տեղը ցուլի գլուխներ (նկ. 43): Դա մի կողմից իլյուստրացիան է Եսայի մարգարեի խոսքի, թե եզն ու առյուծը միասին են արածելու (Տաթևացու մեկնություն): Մի այլ խորանում տեսնում ենք նույն կամարում կծկված կարմիր առյուծ և ցուլի կապույտ գլուխներ խոյակների տեղը (Ե կանոնի խորան): Կծկվելը ցույց է տալիս գազանների հեզությունը, այսինքն ժողովուրդների հպատակվելը Ավետարանին (Տաթևացու մեկնություն):

Այն ձեռագիրը, որի պատկերները կատարման ճարտարությամբ

կարող են մրցել Հեթում Բ-ի ճաշոցի պատկերների հետ, Մատենադարանի 9422 Ավետարանն է: Նույնիսկ այն տպավորությունն է ստեղծվում, որ «ճաշոցի» մանրանկարիչներից մասնակցել են ծեռագրի պատկերազարդմանը: Բայց այստեղ ևս մեզ հետաքրքրում է առավելապես պատկերների տակ քողարկված խորհրդաբանությունը: Սկսած այն բանից, թե մեր վարպետները թռչուններ նկարելու ինչ ձևեր են ընդօրինակել չին վարպետներից (նկատի է առնված չինական մետաքսը)[140], որից ավելի ուշ սովորում էին պարսիկ վարպետները, նրանց նպատակն էր ավելի ճոխացնել խորանները, որպես Ավետարանների նախադուռ: Հետևապես նկարվում էին ոչ միայն մեկնություններում նշված թռչունները (սիրամարգ, աղավնի, կաքավ, աքաղաղ, ծկնաքաղ, վայրի քաղ կամ մրտիմ), այլև դրանք կերպարանափոխվում էին պսակներով, թագերով, օժտվում ավելի ոճավորված ու ֆանտաստիկ երանգներով, ներմուծվում էին զանազան մեզ ծանոթ ու անծանոթ թռչուններ հոպոպներ, փասիաններ, դրախտահավեր, երկարապոչ կաչաղակներ, արագիլներ, ծիծառներ և այլն: Նկարիչը թերևս այդ ամենը պատվիրատուի գիտությամբ դիտում էր որպես Աստծո, հրեշտակների դասերի, նահապետների, մարգարեների, թագավորների, առաքյալների, ավետարանիչների, արդարների, սրբերի, Ավետարանն ընդունած ժողովուրդների խորհուրդներ, որոնք, ըստ Տաթևացու, պաշտել են զանազան կենդանիների մինչև Ավետարանն ընդունելը: Քանի որ ծեռագրում չեն պահպանվել ժամանակակից հիշատակարաններ, և այն վերակազմված է, որոշ խնդիրներ մնում են անլուծելի: Մեզ առաջին անգամ այստեղ է հանդիպում Եվսեբիոսի խորանի գլխազարդի վերևում լատինական տիպի հատվող շեղանկյունների փառապսակի մեջ Քրիստոսի կիսանդրին ճերմակափառ շորերով, որին հպարտ բայլվածքով ընդառաջ են գալիս պոչերը հովհարածև բացած սիրամարգերը: Գլխազարդի քիվի վրա պատկերված է աղոթող մոմի աշտանակով, հավանաբար ստացողը, իսկ նույն ուղղությամբ վերևում Աստվածամայրը: Բոլոր նշաններով դա Պեխուսի (Բարեխոսի) թեման է: Ձախ կողմում Աստվածամոր ուղղությամբ աշտանակից վեր երևում է Հովհաննես Սկրտչի սիլուետը: Խոյակների տեղ սերովբեներ են, խարիսխների տեղում երկու մարգարեներ (հավանաբար Մովսեսը և Ահարոնը):

Տարբեր խորաններում արխիտրավի ելուստներին պատկերված են մերկ կանայք, գլխազարդի վերևում և ներսում (վարդյակի չորս

[140] S. Der Nersessian, L'art Arménien, Paris 1977, p. 156.

կողմում անկյուններում) գազանները հոշոտում են եղջերավորներին, կամ 9բ էջում հեծյալներն են ծիու վրա ետ դարձած նետահարում առյուծի կամ եղջերուի, կան նաև մերկ տղամարդկանց պատկերներ[141]: Հետագայի գործ է դրանց պատկերագրական, ծիսական, աստվածաբանական և կերպարային մեկնաբանումը: Չեն բացառվում բյուզանդական և ռոմանա-գոթական արձագանքները, որոնց աղբյուրները գալիս են անտիկ շրջանից, ինչպես նաև է. Պետրոսյանի ցույց տված թատերական ներկայացումների արտացոլումը դրանցում (բեղմնավորության գաղափարը կարմիր գգեստներում ու երկար ծամերում, թատերական-ծիսական քայլերի ու կեցվածքների վերարտադրումը, ինչ-որ հեթանոսական տոտեմների ու ծիսակատարությունների հետ կապը և այլն): Բայց եթե առաջնորդվելով «Խորանների մեկնություններով» և օժանդակ աստվածաբանական գրականությամբ մենք կարողանանք կենդանիների որսի, գազանների կողմից տարբեր տեսակների եղջերավորների հոշոտման և թատերական մոտիվները կապել բույսերի, թռչունների, մարգարեների, ավետարանիչների բացատրությունների հետ, ապա կստանանք նման խորանների մասին ամբողջական պատկեր նաև քովանդակության առումով:

Վերոհիշյալ ձեռագրին թե ժամանակով, թե խորանների կառուցվածքով և թե մոտիվներով մոտ է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի 278 կիլիկյան ձեռագիրը: Ձեռագրի խորանները հիանալի նկարագրել են ավստրիական գիտնականներ Բուշհաուզեն ամուսինները[142]: Մատենադարանի 9422 Ավետարանի խորանների համեմատ այստեղ նկարչի երևակայությունը ավելի համեստ է, բայց ակնառու է գծի վիրտուոզությունը: Ձեռագիրն ուշագրավ է նրանով, որ եզակի պահպանված օրինակներից է նկարված սիօպիայով (կարմիր ծիրանուն մոտ գույնով), որ ցույց է տալիս մանրանկարչի աշխատանքի սկզբնական փուլը: Առաջին իմաստային յուրահատկությունը մեկնություններում հավաստվող Հին և Նոր Կտակարանների միասնությունն է, որ նաև այստեղ է արտահայտված և 9422 Ավետարանում: Բացի թռչուններից դա արտահայտված

[141] Այդ ամենի թատերական-ծիսական կողմերը նկարագրված են է. Պետրոսյանի և Աս. Մնացականյանի մոտ (տես է. Պետրոսյան, Քառերաշին տարրերը միջնադարյան մանրանկարներում, «Հայկական արվեստ», 1. Հին և միջին դարեր, Երևան 1974, էջ 164-466. Ա. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, Երևան 1955, էջ 629-640).

[142] H. und H. Buschhausen mit Hilfe von Eva Zimmerman. Die illuminierten armenischen Handschriften der Mechitaristen-Congregation in Wien. Wien 1976, S. 46-48.

է Եվսեբիոսի քղթի առաջին խորանի և Գ կանոնի խորանի սյուների շրջանների մեջ առնված խոյակների և խարիսխների պատկերներով: Խոյակներում դա տեսնում ենք ավետարանիչների խորհուրդների (մարդ և առյուծ) պատկերներում (շրջաններում առնված), իսկ խարիսխներում մարգարեների կիսանդրիների ձեռքերին գալարաթերթեր: Դժբախտաբար ձեռագրի թերթերի վերին և արտաքին լուսանցքները հատված են, որի պատճառով հատվել են նաև պատկերները: Այսինքն եթե խոյակներում ավետարանիչների խորհուրդները ներկայացված են դիմակի ձևով ԺԲ դարում, այստեղ դիմակը փոխվել է պլաստիկ պատկերով («գլուխ սեանց գխորհուրդ չորեքկերպեան կենդանեաց»,- խոյակները բնութագրում է Պողոս Ռաբունապետը, բնագիր Ը): Իսկ խարիսխներում ներառնված կիսանդրիները ավելի հատուկ են Հեթում Բ-ի 1295 թ. Աստվածաշնչին (Մատ. 180) և 1286 թ. «Ճաշոցին» (Մատ. 979): Վիեննայի և Մատենադարանի 9422 Ավետարանների խորաններին հատուկ մյուս մոտիվը գազանաձարտի տեսարաններն են: Միայն Վիեննայի ձեռագրում (նկ. 50, 51) դրանք գլխազարդի ներսում են կամ ներքին ճակտոն կազմող եռանկյան, կամ նրանում ներառնված վերին կամարի ներսում: Մնացած դեպքերում նկարիչը չի հասցրել պատկերել մարգարեներին ու առաքյալներին սյուների խարիսխներում ու խոյակներում: Ժ կանոնի խորանում (նկ. 52) ստորին կամարի մեջ առնված են ուղտի և կծկված առյուծի գծանկարներ: Նման մոտիվները որոշ չափով կապված են եկեղեցական հարթաքանդակների հետ:

Որպեսզի «Խորանների մեկնությունների» ու խորանապատկերների հարաբերակցության մեր ակնարկը դառնա ավելի ամբողջական, դիմենք Անիի և Գլաձորի դպրոցների ԺԳ-ԺՈ դարերի մի քանի օրինակների:

Եզակի նմուշ է 1211 թ. Հաղբատի Ավետարանը (Մատ. ձեռ. 6298): Ձեռագրի խորաններում այս կամ այն չափով ըստ մեկնությունների կարելի է բացատրել ծառերի, ծաղիկների, թռչունների, նրանց կեցվածքների խորհրդաբանությունը: Բայց գործը բարդանում է, երբ խորանների քիվերի ու հիմքի գերանների ելուստների վրա պատկերվում են աշխարհիկ և հոգևորականի հագուստներով մարդիկ: Խորանները ճշգրտորեն նկարագրված են Գ. Հովսեփյանի «Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց» հոդվածում, իսկ որոշ գեղարվեստական-սիմվոլիկ կողմեր փորձել է վեր հանել Վ. Մաթևոսյանը[143]: Ձեռագրի 8բ-9ա էջերի (նկ. 41) և 15ա էջի Ա, Բ և Ժ կանոն-

[143] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության,

ների խորաններում են այդ մարդիկ պատկերված: Ցբ էջի խորանի երկու անձինք իշխանական ճոխ հագուստներով են, ըստ Գ. Հովսեփյանի, «գլխարկի, ինչպես և հագուստի ընդհանուր ձևակերպությունը նման է Ջաբարե և Իվանե սպասալարների պատկերաքանդակին Հառիճո վանքի արևելյան պատին», ընդ որում ներքևում պատվանդանի գերանին պատկերված անձը «աջ ձեռքով բռնած ուսին է դրել մի կեռագլուխ փայտ, կեսից մի ծուկ կախված», վերևը գրված. «Շերանիկ քանի գաս ծուկն բեր»:

Հանդիպակաց էջում պատկերված է երկու հոգևորական առաջին երկուսի նման կանգնած քիվի և պատվանդանի դեպի արտաքին լուսանցք ելուստների վրա: Նրանցից մեկն է «հայր Եղբայրիկ առաջնորդ ուխտիս...»[144], իսկ մյուսը «կազմիչ սորին և հայր...»: Վերջապես 15բ էջի ժ կանոնի խորանի վերին քիվի դրսի լուսանցքի նույնանման ելուստի վրա պատկերված է լարային գործիքով մեկը (փանդիռով կամ սազով) ծալապատիկ նստած մուքաքային և ծոպավոր կարպետի վրա նոճենու տակ, որին թառած է երկարապոչ սիրամարգ: Երաժշտի անունը հայտնի չէ, և ունի աշխարհիկ հագուստ: Բայց խորանի տակ կա միտողանոց հիշատակարան. «Տէր Աստուած ողորմեա Մարգարէին, գրչի և նկարչի. և Սահակա ստացողի և ծնաւղաց իրեանց ամէն»:

«Մարգարեի արվեստի առավելությունն է և գնահատելի կողմը, որ նա չի հետևում մեքենական կերպով միայն տվորական ընդունված ձևերին, այլ ստեղծագործում է ուրույն, անհատական և կենցաղական արտահայտություններով, և դրանով բարձրացնում յուր նկարների գեղարվեստականի հետ և պատմական-ազգագրական արժեքը»[145],- գրում է Գ. Հովսեփյանը: Իսկ այս կերպարները ի՞նչ կերպ են առնչվում խորանների գաղափարախոսության հետ, մանավանդ սա առաջին ձեռագրերից է (եթե ոչ առաջինը), որտեղ համարձակորեն սրբազան խորաններում ընդգրված են ժամանակի աշխարհիկ և հոգևորական զգեստներով անձինք, որոնք չպետք է տեղ գտնեին այդտեղ: Մեր կարծիքով, նրանց տեղը սրբազան խորաններում կապված է մեկնություններում արծարծված արդարների փրկագործության գաղափարի հետ: Եթե ժ կանոնի խորանում նոճենու տակ նվագող աշխարհիկ գլխարկով անձին նույնացնենք

հտ. Ա, Երևան 1983, էջ 260-266: Վ. Սաթևոսյան, Մարգարե, Երևան 1990:

[144] Այս Եղբայրիկը ոչ թե Հաղբատի, այլ Արջո Սոճի ուխտի առաջնորդն է, որին նվիրված է ձեռագիրը և որը կառուցվել է ստացող Սահակի և նրա ծնողների ու եղբայրների ինչքով (Գ. Հովսեփյան, նույն տեղում, էջ 273-274):

[145] Նույն տեղում, էջ 286

խորանի տակի հիշատակարանում գրված անձանց հետ, ապա դա կամ ծաղկող Մարգարեի, կամ էլ ստացող Սահակի նկարն է տաղտկալի կամ տաղերգելիս: Առաջինը նկարչի անունն է, երկրորդը՝ Սահակինը: Բայց քանի որ առանձին նկար-ընծայական ունենք Սահակ ստացողի և նրա եղբայր Առաքելի պատկերով, ապա այստեղ ավելի հավանական է, որ տագով նկարված լինի Մարգարեն: Մնացածը համապատասխանում է մեկնություններով նախատեսված սիմվոլներին՝ թե խորանի վերևի ծկնաքաղերը, թե սիրամարգերը, իբրև ներշնչող հրեշտակներ, թե նռնենիները և շուշան ծաղիկները գլխազարդի վերևում՝ երգչի կողքին և արտաքին լուսանցքի կողմի սյան կողքին:

Նույնը կարող է վերաբերել նաև խորաններում պատկերված աշխարհիկ և հոգևորական մյուս մարդկանց: Ճերանիկի ձեռքի ծուկը այլաբանորեն մարդու հոգին է որսված Ավետարանների համար, բառի առաջին վանկը «շեր», նշանակում է «երգ», թերևս Ճերանիկի վերևում Սահակն է կամ նրա ծնողներից մեկը, որոնց ունեցվածքով նա եկեղեցի է կառուցել Անիի մոտ, որ պակաս չէ Բագնայրից: Այսինքն, ինչպես խաչքարերում (որոնք ևս սրբազան աստվածաբանությամբ են օժտված, ինչպես խորանները), մանավանդ երբ Դեիսուսի կամ խաչի հետ պատկերվում է պատվիրատուն, նույնը Մարգարեն կարող էր կատարել խորաններում, որպեսզի այնտեղ պատկերված մարդիկ իրենց գործով դասվեին արդարների շարքին:

Մարգարե նկարչի միամիտ մանկական անմիջականությունը և թերևս գյուտերը արգասավոր եղան թե Գլաձորի, թե կիլիկյան մանրանկարչության մեջ, որոշ թարմ տարրերի ներմուծման տեսակետից: Մատենադարանի 9422 ձեռագրի 5բ էջի Բ-Գ կանոնների խորանի գլխազարդի վերևում օդում թևածող կտուցներով ճուկ բռնած հավքերի հետ (հոգիների որսը առաքյալների կողմից) պատկերված են մի թևավոր ծնրադիր հրեշտակ մի ձեռքին գունդ (գորության նշան), իսկ նրա դիմաց արմավով ու ականթով պսակված սեղանի մյուս կողմում՝ մի ծնրադիր սուրբ լուսապսակով: Եթե այդ սուրբը Մովսեսը չլինի (Մովսեսն ու Սիաորոնը պատկերված են ճախակողմյան խոյակի տեղում), թեև դա մեկնությամբ Մովսեսի խորանն է, իսկ ըստ մյուս մեկնությունների՝ անմարմինների, ապա կարող է լինել ձեռագրի հետ կապված անձ (ասենք՝ ստացողը), որը ներշնչվում է հրեշտակից, ինչպես Հաղբատի Ավետարանի Ժ խորանի նվագածուն հրեշտակ խորհրդանշող սիրամարգից:

Թորոս Տարոնացու պատկերազարդած «Եսայի Նչեցու Աստ-

վածաշնչում» (Սատ. ձեռ. 206) և Ավետարանից առաջ խորաններ են: Հանդիպակաց էջերում (439բ-440ա) Գ կանոնի և Գ, Դ, Ե կանոնների խորաններն են: Դրանցից առաջինում պատկերված է ձեռագիրն ստացող Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին, ինչպես ցույց է տալիս մակագրությունը: Նա պատկերված է նստած ավետարանչի կեցվածքով, ծախ ձեռքին Ավետարան, աջը մեկնած օրհնության ժեստով (պարզած երեք մատը իբրև Ս. Երրորդության նշան), իսկ երկնքի սեգմենտից դեպի նրա լուսապսակը ձգված է Աստծո աջը նույնանման ժեստով, այսինքն Եսային ներշնչված է Ս. Երրորդությունից: Ծաղկողը իրեն պատկերել է պատանու կամ նորաբուսիկ մորուքով երիտասարդի տեսքով թերթի վրա նկարելիս, որը վերևից կտցով բռնել է սիրամարգը, որ կարող է դիտվել իբրև հրեշտակի խորհրդանիշ և իբրև գրակալ (նկ. 53): Այս բացահայտ ինքնամեծարումները կատարված են Եսայի Նչեցու գիտությամբ, որը քաջ գիտեր իբրև խմբագիր «Խորանների մեկնությունների» աղբյուր Դիոնիսիոս Արիսպագացու երկերը: Բայց որ կենդանի մարդը ներշնչվում է անմիջապես Աստծուց, դա հատուկ չէ հայ արվեստին և հավանաբար եվրոպական նորամուծություն է: Այստեղ ևս, ինչպես Հաղբատի և 9422 Ավետարանների խորաններում առաջին դեպքում երաժշտի, երկրորդում աղոթողի պատկերների մեջ գտնում ենք նաև ծկնաքաղ հավքեր ծուկը կտուցներում: Հավանաբար Եսային այդ առումով ընծաեցված է, իբրև ուսուցչապետ, մարդկանց հոգիներ (ձկներ) որսացող առաքյալների խորհուրդ ծկնաքաղ հավքերին:

***

1990 թ. արդեն խմբագրված ու պատրաստ էր տպագրության մեր սույն աշխատությունը, որ իբրև դոկտորական ատենախոսություն պաշտպանվեց Մոսկվայի Արվեստագիտության ինստիտուտում 1992 թ., 1991 թ. լույս տեսավ Մեթյուսի և Սանջյանի «Հայկական Ավետարանի պատկերագրությունը. Գլաձորի Ավետարանի ավանդույթը» երկար սպասված մենագրությունը[146]: Յոթերորդ գլխում («Կանոնների տախտակների պատկերագրությունը») Թ. Մեթյուսը հավաստում է. «Ի վերջո տեսնում ենք, որ միայն հայկական ավանդույթում է զարգացել գրական մի ժանր, որ վերաբերում է կանոննե-

[146] Th. F. Mathews and A. Sanjian. Armenian Gospel Iconography. The Tradition of the Glazor Gospel. Washington 1991. Dumbarton Oaks Trustees for Harvard University. Washington, D. C.

րի տախտակների (խորանների – Վ.Դ.) սիմվոլիկ բովանդակության մեկնաբանմանը: Այս մատենագրությունը հազվագյուտ բանալի է տալիս հասկանալու համար կանոնների տախտակների պատկերագրությունը»[147]:

Թ. Մեթյուսը, ելնելով այն բանից, որ «այնպիսի մոտիվների սիմվոլիկ ներմուծումը, ինչպիսիք են սեղանները և սկիհները, կարելի է կարծել, որ մյուս տարրերը ևս իմաստավորված են», եզրակացնում է, որ «կանոնների տախտակները արվեստի լուրջ գործեր են, որ լուրջ քանք են պահանջում հասկանալու համար»[148]:

Եվ այդ քանքերը իրոք ներդրվել են Կ. Նորդենֆալկից բացի Պ. Ունտերվուդի, Կ. Վեսսելի, Գ. Բանդմանի, Թ. Մեթյուսի, Բուշհաուզեն ամուսինների և ուրիշների կողմից[149]: Մեզ համար կարևոր է Նորդենֆալկի դիտողությունը առաքելական խորանների մասին 12 առաքյալների մեդալիոններով 9 դարի լոնդոնյան մի ձեռագրում (B. L. add. 5111): Փաստորեն անտիկ օրացույցների 12 ամիսների աճնաավորումների մեդալիոններին այստեղ փոխարինում են 12 առաքյալները: Այդ հին ավանդույթը փոխակերպված է ԺԹ դարի կիլիկյան Ավետարաններում սկսած Ռոսլինից մինչև Մատենադարանի 9422 Ավետարանը:

Իսկ երբ խոսքը վերաբերում է Ստեփանոս Սյունեցու և ս. Ներսես Շնորհալու մեկնություններում բացակայող սիմվոլներին (կապիկներ, առյուծներ և այլն), ապա Մեթյուսը լրացուցիչ իմաստներ է որոնում «Բարոյախաւսում» և արևմտյան ավանդույթի ազդեցությամբ, նույնիկ կարծելով, թե կապիկը հանդես է գալիս հայկական ավանդույթում առաջին անգամ Թորոս Տարոնացու մոտ: Երբ նա խոսում է կապիկների առկայության մասին բյուզանդական մի քանի ձեռագրերի խորաններում (աշտանակի հետ կամ շղթայված կապիկ)[150], ապա նրանց իմաստը «Բարոյախաւսի» մեջ տարբեր է խորանների մեկնություններում տրված իմաստից:

Մեթյուսին ծանոթ են եղել միայն հրապարակված Սյունեցու և Շնորհալու մեկնությունները, իսկ մենք հրապարակում ենք տասներեքը՝ մեր հնարավորության չափով կատարելով աղբյուրների, խորհուրդների և այլ խնդիրների ուսումնասիրություն: Իսկ այստեղ փորձել ենք լրջորեն վերաբերվել «Խորանների մեկնությունների» և

[147] Նույն տեղում, էջ 166:
[148] Նույն տեղում, էջ 169:
[149] Նույն տեղում. նաև ծան. 20:
[150] Նույն տեղում, էջ 176, ծան. 49:

հայկական ու ոչ միայն հայկական տարբեր ձեռագրերում խորանների բովանդակած մոտիվների խորհուրդներին:

Սույն մեկնությունների ներկա հրապարակումով բացվում է, մեր կարծիքով, մատենական (և ոչ միայն մատենական) արվեստում զարդարվեստի պատկերագրության (իկոնոգրաֆիայի) և պատկերաբանության (իկոնոլոգիայի) ուսումնասիրության մի նոր փուլ այն իմաստով, ինչ հասկացել ենք այդ դպրոցների լավագույն ներկայացուցիչները:

ՁԵՌԱԳՐԵՐ

ԲՆԱԳԻՐ Ա
ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

1. a – Մատ. N 7737: Աւետարան: ԺԱ դ.: Համարվում է կիլիկյան մանրանկարչության երախայրիքներից (Լ. Ազարյան, էջ 45-52, պատ. 2-4): Պահպանված են Եվսեբիոսի թղթի երկու խորանները Եվսեբիոսի և Կարպիանոսի կիսանդրիներով (հնագույն նմուշներից) և երկու խորաններ (Ա կանոնի և է, Ը կանոնների): Մնացած խորանները չեն պահպանվել: Կան նաև ավետարանիչների նկարներն ու տիտղոսաթերթերը: Բնագիրը բոլորագիծ երկաթագիր է (սա է ԺԱ դարով թվագրման հիմքը): Եվսեբիոսի թուղթը անկանոն, բոլորգրին մոտեցող մանր երկաթագիր է, իսկ մեկնությունը՝ ուղղագիծ երկաթագիր, կարմիր անպաճույճ շրջանակի մեջ: Վերջինս ավարտվում է Եվսեբիոսի թղթի խորանի թերթի Բ էջում, որին անմիջապես հաջորդում է մեկնությունը (էջ 6) (երկուսն էլ առնված են ընդհանուր գծային շրջանակում), այնուհետև շարունակվելով հանդիպակաց 7-րդ էջում: Մեկնությունը կիսատ է. սկսվում է առանց խորագրի՝ «Սառաել հրաշից արժանի...» տողով և ավարտվում «... բոցախառն հրով» բառերով (տես 246 էջի սկիզբը):

Ուղղագրությունը հնավաճդ է. օր. կանովն-էն (ացի) *փին.* կանոն, մետաղփսըն *փին.* մետալփսն, բայց ունի նաև ավելի նոր ձևեր *զսեւաղեղան* փխ. զսեաւաղեղս(ն), ամբով: Գույներ նշանակող բառերի հոդակապը ոչ թե «ե», այլ «է». օր. *գիմէգույն, ոսկէգույն*:

2. A – Մատ. N 2743: «Թարգմանչաց Աւետարան»: 1232 թ., Գրիչ («գծիչ») Տիրացու: Ծաղկող Գրիգոր Ծաղկող կամ նկարիչ, որդի Գաւփին: Ստացող պարոն Յովաննէս քահանայ և ծաղկողը: Հայ մանրանկարչական արվեստի գլուխգործոցներից: Ձեռագրի բուն գրչությունը բոլորագիծ երկաթագիր է, Եվսեբիոսի թուղթը բոլորգրին միտող ուղղագիծ երկաթագիր: Թղթի բնագիրն ավարտվում է Կարպիանոսի դիմանկարն ընդգրկող խորանի հակառակ երեսի ազատ էջի վրա նույն գրչությամբ: Անխորագիր Մեկնությունն ամբողջական է և արևելյան բոլորգրով, ընդօրինակված խորանների թերթերի հակառակ ազատ էջերի վրա (3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա): Ի տարբե-

րություն a-ի, այստեղ գրվում է *դեղովք* և ոչ թե *դեղաւք*, սակայն, *կանոն* և ոչ թե *կանովն*: Դժվար է որոշել Մեկնության թղթի ու Ավետարանների գրչության համաժամանակությունը, սակայն ինչպես a, այնպես էլ A ձեռագրերում մեկնությունը խորանների հակառակ երեսներին է և անմիջապես հաջորդում է եվսեբիոսի թղթին:

3. B – N 5556: Աւետարան: 1310 թ.: Երզնկա: Գրիչ Կարապետ քահանայ: Բոլորգիր: Ձեռագիրն սկսվում է եվսեբիոսի թղթի երկրորդ խորանով, որի թերթի մյուս երեսին Թղթի ավարտն է: Հանդիպակաց էջում սկսվում է մեկնությունը գրավելով թղթի ու կանոնների խորանների թերթերի անպատկեր էջերը (2a, 3բ, 4a, 5բ, 6a, 7բ): Թղթի և մեկնության գրչությունը նույնն է, Ավետարաններինը ավելի բանձր գրերով: Թուղթը, խորանները, տիտղոսաթերթերը նկարված են մանուշակագույն մելանի երանգներով և նուրբ վարպետությամբ: Կուպիտ են հավանաբար ավելի ուշ արված ավետարանիչների նկարները որոնց գանգերը հիշեցնում են մոմիկյան հերոսների գանգերը: Գրված է «ի թուաբերութեան հայկազեան տումարիս, որ է թիւս եկեալ ի ՉՕԹ (1310): Կատարեցաւ ի թիւ յունվարի ամսոյն ի յաւրն որ է Ը (8): Ի հայրապետութեան տեառն Կոստանդնայ և ի թագաւորութեան Աւշնի, ի մայրաքաղաքս յԵզնկաս, առ աթոռակալութիւնս տեառն Սարգսի», ընդ հովանեաւ կաթողիկէիս աստուածաբնակ տաճարիս» (281) (տես «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 73):

4. C – N 10169: Աւետարան: 1328 թ.: Գրիչ Սկրտիչ քահանայ: Մաղաղաթ: Փոքրադիր ձեռագիր է, ուշադրաշար մանր բոլորգրով: Եվսեբիոսի թղթի խորանն ընկած է, բայց 2a ազատ էջում Թղթի ավարտն է Ավետարանների ու մեկնության գրչությունից տարբեր գրչությամբ: Մեկնությունը սկսվում է Բ կանոնի խորանի թերթի ազատ էջից և ավարտվում Չ կանոնի խորանի թերթի ազատ էջում, որից հետո խորանաթերթերի ազատ էջերի վրա գրված է Ավետարանների համաբարբառը և այլն: Մեկնությունը գրավում է 3բ, 4a, 5բ, 6a, 7բ և 8a էջերը: Սկսվում է «...Իսկ ոսկեգոյն կամարն զքահանայական ունի խորհուրդ ի միջի կացեալ...» բառերով: Հիշատակարանում նշված չէ գրչավայրը, այլ միայն «... ձեռամբ սուտանուն քահանայի Սկրտչի, ի քաղս Դուդուշի, ընդ հովանեաւ սուրբ Գորգու և սուրբ Սարգսի, ի հայրապետութեան տեառն Յակովբա և ի թագաւորութեան Լևովնի...»:

5. D – N7630: Աւետարան: 1332 թ.: Գրիչներ Վարդան, Մելքիսեդէկ: Գրված է «... Ի ձորս խաղտեաց, ի բանակետդս (բանակի իջած

տեղը.- Վ. Դ.) Լորի, տաճարի սուրբ Աստվածածնի, սուրբ Սիովնի»: Բոլորգիր: Մեկնությունն սկսվում է Եվսեբիոսի թղթի ազատ էջի վրա, ավարտվում Ա կանոնի և Բ կանոնի խորանների ազատ էջերում (էջ 8ա, 9բ և 10բ): Ավետարանի բնագիրը թանձր բոլորգրով է, իսկ Թղթինը և մեկնությանը մանր: Ավետարանիչների նկարները հիշեցնում են Գրիգոր Սուրխաթյանցի ոճը (Մատ. N7644, Սուրխաթ, Ղրիմ, 1332 թ.): Բայց խորաններն ու լուսանցազարդները նկարված են մանուշակագույն մելանի երանգներով: Մեկնությունը լրիվ է ու անվերնագիր:

6. E – N 2829: Աւետարան: 1333 թ.: Գրիչ Յովաննէս: Ստացող Սիմէոն: Կազմող Թադէոս Բաղիշեցի: Յիշատակարանք գրչի 8բ, 139բ, կազմողի 301ա: Բացի մանրանկարների ոճից, վայրը մատնանշում է նաև կազմողի հիշատակարանը. «Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան, Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ Թադէոս քահանայիս *Բաղիշեցւոյ*, որ կազմեցի զսուրբ Աւետարանս ի դուռն սուրբ Կիրակոսի ի թվին ՉԿԸ (1519) յիշատակ պարոն Գորգին» (301ա): Յուրահատուկ բեք երկարավուն բոլորգիր է: Ունի գծանկար խորաններ 1-2 գույնով, նույնքան երանգներով, պարզ սյուներով գլխազարդերում նրբագեղ թռչնապատկերներով ու կենդանապատկերներով (եղնիկ, թևավոր հովազ, առյուծ և այլն), որոնք գլխազարդի ներսում կրկին շրջանակված են ասես վերցված բրոնզածույլ դռներից կամ դրվագներից (կապ Արևմուտքի հետ): Շատ նուրբ են տիտղոսաթերթերը, բայց կոպիտ և ոճավորված են ավետարանիչները (ասես զարդ լինեն): Հիշատակարանում 1333 թ. նշվում է իբրև նեղության տարի («Յեւթն հարիւր թուականին, յութսուն երկրորդ սկսեալ ամին (1333), ի Հայկան ազգի սեռին, ի Թորգոմա մեծի զարմին, ի նեղութեանց ժամանակին, զոր այլազգիքն նեղէին, զբրիստոնեայք նախատէին, զեկեղեցիսն քակէին եւ ըզհիմունս շարժէին...», ԺԴ դ. յիշատակարաններ», էջ 255): Ստացողն իրեն համարում է ծեր այրի, որին կողոպտում են և կիսամահ լքում:

Ձեռագիրն սկսվում է մեկնությամբ (անվերնագիր), որին հաջորդում են Եվսեբիոսի թուղթը և կանոնների խորանները, ապա ավետարանիչները, իրենց անվերնագիր անվանաթերթերից առաջ: Ձեռագիրն ունի բնորոշ վասպուրականյան կառուցվածք:

Բնագիրն ունի ուղղագրական և քերականական շեղումներ ու անհետևողականություն դեղովքն, դեղաւքն, Հնովն և նորովս...

7. F – N 7862: Աւետարան: 1380 թ.: Խաղճ մենաստան (Խաղ-

տեաց գաւառ)։ Ձեռագիրը գտնվել է Թելավի հայոց սբ. Գեորգ եկեղեցում։ Յիշատակարանը գրչի 107ա, 340բ (գրիչ Յովաննէս)։ Ձեռագիրն սկսվում է Եվսեբիոսի թղթի երկու խորանով, այնուհետև 2բ-3ա էջերում խորանազարդերի մեջ, մեր օգտագործած ձեռագրերում առաջին անգամ, «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» վերտառությամբ տրված է մեկնության սկիզբը։ 3բ-4ա էջերում Ա և Բ կանոնների խորաններն են։ 4բ-5ա էջերում, խորանների մեջ, մեկնության շարունակությունն է։ Հաջորդ էջերում (5բ-6ա) Գ և Դ-ե, ապա մյուս կանոնների խորաններն են։ Խորաններին հաջորդում են Մատթեոսի Ավետարանի գլխացանկը, համաբարբառը, ապա Մատթեոսի նկարը և անվանաթերթը։ Մյուս ավետարանիչները նկարված են իրենց Ավետարաններից առաջ։ Գծազարդ են խորանները, անվանաթերթերը, լուսանցազարդերը մանուշակագույնի և մուգ սրճագույն ու օխրայի երանգներով, ավետարանիչները գույնով են։

Մեկնության ավարտից հետո, նույն գրչությամբ նույն խորանազարդում գրված է. «Այլո՛ւստ. իսկ աշտանակքն քարոզութեան առաքելոցն, որք ոչ ընդ թագստեան կէին, այլ իբրև ի վերա աշտանակի լուսաւորելով գհանուրս։

Եւ որքն խաղողոյ ճշմարիտ որքն Քրիստոս ըստ Տեառն բանի։ Եւ նմա փառք յաւիտեանս ամէն» (էջ 5ա)։

Ունի արիւնայներկեալ, երորդ, եղջերք, հնովն և նորովս ձևերը։

8. G – N 7645։ Աւետարան։ ԺԴ դ.։ Գրիչ Առաքել։ Ծաղկող Յովհաննէս։ Ստացող Մատթէոս քահանայ։ Գրչի հիշատակարանը Մատթեոսի նկարի տակ է։ Ինչպես aAC և այլ ձեռագրերում Եվսեբիոսի թղթի խորաններից հետո վերջինիս քնագիրը (1բ-2բ) ավարտվում է խորանի թերթի ազատ երեսին։ Նրա հանդիպակաց 3ա էջից (ապա 4բ, 5ա, 6բ - մի տող) մեկնությունն է «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խորագրով։ Սնացած խորանների թերթերի ազատ երեսներին Ավետարանների նախաբանություններն են։ Ըստ երևույթին ձեռագիրը ստեղծվել է Դրիմում։ Մեկնությունը 3ա-6բ։ Ավետարանիչների և տերունական բազմաթիվ նկարները գույնով են, խորանները, անվանաթերթերը, լուսանցազարդերը տրված են մեծ նրբությամբ մանուշակագույն և կապույտ (լեղակագույն) մելաններով։ Ճենն գերիշխում է գծայնությունը, գույները խուլ են գուաշային, բացվում են սպիտակի խառնուրդներով։ Գրչությունը գեղանկարչական ազատ ոճով բոլորգիր է։ 1ա էջի հիշատակարանում (ՌՔՆԺ = 1761-62). «Ծախաքցի տէր Յոհաննէս»-ը Ավետարանը նվիրել է «զետեղեալ ի Պախջսարայ, ի դուռն Պալըխլաւայ սուրբ Յոհաննու

վանքին...»:

Ունի վաղմական *փխ.* վսեմական, կանովն, դեղաւք, չորք *փխ.* չորեք, սև *(այլ տեղ* սևադեղս), *բայց նաև* սեաւ, աքալալք, եղջեւրք և այլ ձևեր:

9. Հ – Ն 3714: Աւետարան: 1419 թ.: Ցիպնայ վանք: Գրիչ Գրիգոր վարդապետ, ստացող Յոհաննէս քահանայ: Գրված է արևելյան ազատ բոլորգրով կիլիկյան ազդեցությամբ: 1ա-2ա էջերում մեկնություն է, առաջին անգամ ունենալով այս խորագիրը. «Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի և հոգենւագ երգաւղի, տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ ժ խորանաց սրբոյ Աւետարանիս և վասն երանկ ըռանկ գունոցն, ծաղկանց և հաւուցն և ծառոցն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: 2ա էջում սկսվում է հաջորդ մեկնությունը «Յայլմէ ստացեալ բան վասն խորանաց Աւետարանիս» (2ա-4բ) խորագրով: 5ա էջից միմյանց հաջորդում են տերունական մանրանկարներ, ապա խորաններ, Մատթեոսի Ավետարանի գլխացանկը և համաբարբառը: Վերջինիս տակ պատկերված է վարդապետ ձեռքին ճիպոտ, ծախում տախտակ, վրան գրված. «Երանեալ է այր որ [ոչ գնայ ի խորհուրդս ամբարշտի]» (Սաղմոս Ա, 1), դիմացը ձեռքերը կրծքին խաչած աշակերտը, ավելի աջ՝ հատակին ծալապատիկ նստած հավանաբար մեկ ուրիշ աշակերտ, ձեռքին դալար ճիպոտներ՝ խարազանելու համար (14ա): 15ա էջում Յովաննէս քահանայի (երեց) պատկերն է հավանաբար իր հոր Դանել քահանայի հետ (տես «ԺԵ դարի հիշատակարանները», մասն առաջին, էջ 224-225, նկ. 9-10. նաև Հակոբյան. Վասպուրականի մանրանկարչությունը, Հ. Բ, էջ 79, տախտ. X):

Գրիչ Գրիգոր «պիտականաւն» վարդապետը 1425 թ. նահատակված նշանավոր ժամանակագիր, գանձասաց, «Հայսմավուրքի» և «Գանձարանի» խմբագիր Գրիգոր Խլաթեցի Ծերենցն է:

Արվեստաբան Հ. Հակոբյանը, այս երկու մեկնությունն ընկալելով իբրև մեկ, գրել է. «Դրա պատկանելիությունը այնպիսի ճշմարտապատում և խորագիտակ մի հեղինակի, ինչպիսին Գրիգոր Խլաթեցին է, իրավունք է տալիս խորանների մեկնության սույն բնագիրը դասել այս կարգի լավագույն գործերի՝ Սյունեցու, Շնորհալու, Վարդանի մեկնությունների շարքը» (Հակոբյան, նույն տեղում, Գիրք Բ, էջ 141, ծանոթ. 95): Առաջին մեկնությունը Սյունեցուն վերագրվածի նոր խմբագրություն է, իսկ երկրորդը Խլաթեցուն վերագրելը մենք չենք վիճարկում. ա) «Յայսմէ ասացեալ...» սկսվածքով մեկնությունն առաջին անգամ տեսնում ենք Գրիգոր Խլաթեցու սույն ձե-

ոագրում. բ) Սյունեցու երկի սույն խմբագրությունը «Յայլմէ ասացեալ...» մեկնության հետ նույն հաջորդականությամբ, Ավետարանների բնագրերից առաջ, ընդօրինակված է մի շարք Ավետարաններում (տես այստեղ Բնագիր Ե): Իսկ «Վարդանի» մեկնությունը Երսես Շնորհալուն վերագրվողն է (մեր Գ բնագիրը), որի մասին կխոսվի իր տեղում:

262ա-263բ էջերում յուրահատուկ նախադրությամբ (կա նաև այլ ձեռագրերում)[1] գրչի հիշատակարանն է (այդ նախադրությունը ուշագրավ է 4 թվի խորհուրդի մեկնումով). «Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան, ընդ Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ: Որոյ շնորհաւքն աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Սուրբ Աւետարանս, զոր է շաղկապեալ սրբոց աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց, ի մի ոստայնանկելով հանճար, զոր արեւմտակեալ անուշոցաց ծաղկանց իւղ եփեցական կազմութեամբ, որ ըստ Հոգոյն յատկութեան իմանի: Ջանագան որակութեամբ գաղափարելով ըստ յոքունց արփիացելոցն դասակցութեանց առ ի յարմարումն եկեղեցւոյ, յաւդիւ խաղաղութեան գլխոյն պատշաճեալ, զի յայսմանէ կատարելութեան: Չորս Աւետարանք ի բազում պատճառ: Նախ զի չորեքկերպեան կենդանիք՝ մարդ, առեւծ, եզն, արծիւ: Չորս նիւթք աշխարհիս հող, ջուր, աւդ և հուր, թշնամիք անհաշտելիք: Չորս գիր անուան ամենասուրբ երրորդութեան, Հայր, Որդի, Հոգի, չորս գետք ելեալ ի դրախտէն Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատես, չորս անկիւն և չորս եղջերք սեղանոյն, չորս թեւք սրբոյ խաչին, չորս առաքինութիւնք Հոգոյ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոհութիւն և [ար]դարութիւն: Չորս ծագ տիեզերաց՝ արեւելք, արեւմուտք, հիւսիս և հարաւ: Չորս բանք Աւետարանիս՝ պատգամ և պատուիրան, սպառնալիս և աւետիս: Չորս բանիւ խօսի Աւետարանս՝ հրամանաւ և խրատով, աւրինակաւ և վկայութեամբ: Եւ այլ բազում պատճառք են, յորս գաղափարին չորեքեան աւետարանս, որոյ ցանկացող եղեալ բարեմիտ և ողջախոհ քահանան Յոհաննէս...», այնուհետև սկսվում է բուն հիշատակարանը («ԺԵ դարի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 224-225):

10. I – N 7772: Աւետարան: 1443 թ.: Խլաթ: Գրիչ՝ Աստուածատուր քահանայ: Ստացող՝ Յովհաննէս տանուտէր, Հալեայ խաթուն:

Այս ձեռագիրը թե՛ գրչությամբ, թե՛ մանրանկարչությամբ պատճենն է նախորդ H (N 3714) ձեռագրի, ընդ որում, այստեղ լրիվ են թե՛ «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց աւետարանիս», մեկնությունը, թե՛ Վասպուրականին հատուկ պատկերների շարքը (N

[1] Տես «Թվերի խորհրդաբանություն» գլուխը:

3714-ում ընկած են մի քանի պատկերազարդ թերթեր), թեև այստեղ նրանք ավելի գծային են ու ավելի թույլ: Մի խոսքով, պատճենը բնագրին համապատասխանում է բոլոր տարրերով կա նույնիսկ ուսուցման տեսարանը ճիպոտներով և նույն մակագրությամբ: «Փառք ամենասուրբ Երրորդութեան...» սկսվածքով հիշատակարանը ևս չորս-թվի խորհուրդների նույն մեկնությունն է, իսկ ձեռագիրն էլ ավարտվում է նույն «Խաւսք և պատուեր սուրբ Գրոցս առ այնոսիկ, որ ժառանգեն զսա...» գրութեամբ և «Պատասխանեմ ժառանգաւորն» հատվածով: Ուղղագրական շեղումներ նկարակրելով, Մելքեսեդեկին և այլն:

11. K – N 198: Աւետարան: 1628 թ.: Բաղէշ: Գրիչ, ծաղկող Սահակ քահանայ, ծաղկման օժանդակող Մուրադ սարկաւագ: Ստացող Խոջա Գրիգոր Երևանցի: Պատկերազարդված է վաստպուրականյան համակարգով սկսվում է տերունական նկարներից: Պատկերները ճոխ են, հարուստ ոսկիով և գուներանգներով: Մինչև խորանները ունի 24 մանրանկար 2-25 թերթերում: Յուրաքանչյուր նկարի տակ մանրամասն մակագրված է նկարի բովանդակությունը: Պատկերաշարն սկսվում է Հեսեի ծառով և ավարտվում Քրիստոսի ու Մարիամի պատկերներով (24բ -25ա): Ընդ որում, Մարիամի ձեռքին կա տախտակ հիշատակարանով. «Աղաչեմ զԲանդ Աստուած, ծննեալդ յաղախնոյս, ողորմեա Սահակ գրչի և ծնօղաց նորին և Մուրադ դպրին և Գրիգորին և ազանցն ամենն»: Իսկ նկարի տակ կա բարեխոսության կոչ գրչի և ստացող Գրիգորի հոգիների փրկության համար: 26ա-35ա էջերում խորանները են նկարված հանդիպակաց էջերում, ամեն թերթին մի հատ (10 խորան): 36ա-37բ էջերում Ա մեկնությունն է Հ (Գրիգոր Խլաթեցու) ձեռագրից ծանոթ խորագրով «Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի և հոգենուագ երգողի տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի Կլայեցոյ արարեալ զպատճառս ժ խորանաց սրբոյ Աւետարանիս և վասն երանգ ծանգ գունոյն ծաղկանց և հատուցն և ծառոց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մարդասիրին, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն»:

Հաջորդ մեկնությունը (37բ-41ա) ունի հետևյալ խորագիրը. «Յայլմէ վարդապետի ասացեալ վասն խորանաց սրբոյ Աւետարանիս»: Մեկնություններին հաջորդում են Մատթեոսի Ավետարանի «Գլուխքը» (գլխագրություն), համաբարբառը և նախադրությունը, այնուհետև Ավետարանչի նկարը և ճոխ մարդագիր տիտղոսաթերթը (44բ-45ա): Վերջապես Գրիգոր Խլաթեցու ձեռագիրն է հիշեցնում նաև գլխավոր հիշատակարանի 4 թվի խորհրդներին վերաբերող,

այլ շարադրանք ունեցող նախադրությունը: Ամբողջ բնագիրը (մեկնությունները, ցանկերը, նախադրությունները, հիշատակարանի նախադրությունը և հիշատակարանները) վերցված են աննկյուններում լեղակագույն համեստ տերևազարդերով ոսկե ուղղանկյուն շրջանակների մեջ՝ ուրվագծված կարմիր, սև և լեղակագույն: Գրիչ և ծաղկող («գրեցի և ծաղկեցի ըստ կարի իմում») Սահակ քահանայի ուսուցիչն է «գտէր Յովաննես քաջ քարտուղար Հիզանցի» (359ա) («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ժէ դար» հատ. Բ, էջ 287): Ձեռագիրն ունի բազմաթիվ գունեղ լուսանցազարդեր և լուսանցանկարներ:

12. L – N 4658: Աւետարան: 1629 թ.: Կաֆա: Գրիչ Զաքարիա, ստացող պարոն Փիլիպպոս: Ճուղթ: Բոլորգիր:

5ա-բ. Մեկնություն «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի»: 6բ-11ա. Ճղթի և համաբարբառի խորաններ (նկարված մանուշակագույն և լեղակագույն մելաններով): 12ա-13ա. Նախադրութիւն և գլուխք Մատթէոսի Աւետարանի: 14բ. Մատթեոս Ավետարանիչ: 15ա. գրաֆիկ ձևավորված սկզբնաթերթ: Մյուս Ավետարաններն ևս ունեն իրենց նախադրությունները և ցանկերը, ավետարանիչների նկարները և տիտղոսաթերթերը նույն ձևով են, ինչ Մատթեոսի Ավետարանում: Հիշատակարանները 272բ-275բ էջերում են:

Ուղղագրական շեղումներ. նգարագրութիւնքն, կանովինի, չորք *մին.* չորեք, մայրեստանեաց, մերծանալով, գարդարելաւք:

13. M - N 45: Ժողովածու: 1642 թ.: Լիմ: Գրիչ, ստացող Սարգիս Եղեսիացի: Բազմաբնույթ նյութերի ժողովածու է: Մեկնությունը 326ա-բ. խորագիրը «Տիեզերալոյս և աշխարհալոյս վարդապետի և հոգենուագ երգողի տեառն Ներսէսի...»: Հիշատակարան գրչի 295ա. «Փառք ամենասուրբ երրորդութեան, եռանձնեա աստուածութեան և եռաբուն բնութեան, միասնական տէրութեան և ինքնիշխան թագաւորութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ... Ամենայն գոյիցս, որք միանգամ ի գերագոյն գոյէն և ի սկզբնապետագոյն բարի պատճառէն... ի նմանէ շարժին և նովաւ դադարին... Որ և նորին ամենաբարի կամաւքն ձեռնարկեալ դեղնամիտ և յողդողդ ապիկարս Եղեսացի Սարգիս և ամենակարող զօրութեամբ նորին յանկ և զրաւ ածեալ աւարտեցի զսա ի յերկիրս Ամկոյ, ի ծովապատ Լիմս, ի հրեշտակակրօն և քրովբէաճեմ մենաստանս, ընդ հովանեաւ սուրբ Գէորգ զօրավարին ի ՈՂԱ (1642) ամին, և ի կաթողիկոսութեան տեառն տէր Փիլիպպոսին...» («Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ» (1641-1660 թթ.), հատ. Գ, էջ 59):

14. N – N 5634: Աւետարան: 1647 թ.: Գրիչ Յովաննէս: Ծաղկող Յովաննէս Ղրուեցի: Ստացող Սիմէոն Ապարանցի (նշանաւոր Սիմեոն Ապարանցու եղբորորդին): Մազաղաթ: Ունի արծաթե կրկնակազմ խորաքանդակ, հաւանաբար ԺԸ դարի, առանց մակագրության:

Ձեռագիրն սկսվում է Բաղեշում գրված Ք ձեռագրի ոճի ընդարձակ պատկերաշարով, եզեկիելի տեսիլքը (3բ), Հեսեի ծառը կամ Գուշակումն մարգարէից (4ա), Ավետում (5բ), Ծնունդ (6ա) և այլն, ընդամենը 29 նկար: Մեկնությունների խորագրերը նման են Ք-ի ուննեցածներին, մի տարբերությամբ. «Յայլ վարդապետէ ասացեալ» վերնագրի վրա ավելացած «սրբոյն աւետարանիս»: Առաջին մեկնությունը գրավում է 30բ-31բ, երկրորդը 33ա-36ա էջերը:

15. O – N 2111: Ժողովածու: 1654-1675 թթ.: Երուսաղեմ, Ամասիա, Բերկա, Արգնի, Կտուց, Էջմիածին, Շոռոթ: Գրիչ Յովհաննէս Շոռոթեցի, Տէր Առաքել: Ստացող գրիչը:

Մեկնություններին նախորդում է Առաքել Բաղիշեցու «Գովաստանութիւնք և մաղթանք առ սուրբ աստուածածին» («Աստուածածին, կոյս պատուական, Յօր աստուծոյ խորհրդարան...»), որ վերագրված է Առաքել Սյունեցուն (232բ-235ա)[2]. նրան հաջորդում է «Վասն խորանաց Աւետարանին և համաբարբառացն» («Դրախտ իմանալի սուրբ եկեղեցի...») (235ա-237ա), ապա մեկնությունը «Տեառն Ներսեսի Կլայեցւոյ Շնորհալի կաթողիկոսի և աշխարհալոյս վարդապետի, արարեալ պատճառ ժ խորանաց սուրբ Աւետարանին վասն գունոցն երանգոց և զանազան հաւուցն և սեղանոցն և խաչիցն» (էջ 237ա-բ), այնուհետև «Քարոզ վասն ջրհեղեղին ի բան աստուածախօս մարգարէին Մովսէսի...» (238ա-242բ) (Ոսկեբերա՞ն, թե...):

16. P – N 3602: Աւետարան: 1655 թ.: Կարին: Գրիչ Տէր Յակոբ Չէլէպի, Տէր Յակոբ Աւագ երեց: Ծաղկող Մահտեսի Տէր Յակոբ: Ստացող Մելքոն, Յակոբ:

331ա էջում. «Շնորհիւ շնորհատու Սուրբ Հոգւոյն և ողորմութեամբ նորին յանգ ելեալ կատարեցաւ Աւետարանս ի քաղաքս, որ կոչի Թէոդոսպօլիս՝ որ և Կարնոյ քաղաք և Արգրում... ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի, որ ի մէջ բերդին, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի... ի թուականութեան հայկազեան սեռիս ՌՆԴ. ձեռամբ Յակոբ ախմար

[2] «Առաքել Բաղիշեցի. XV դ.». Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Ա. Ղազինյանի, Երևան, 1971, էջ 46: Հեղինակի խնդիրը պարզել է Հ. Անասյանը – Հայկ. մատ., Ա, էջ 1127-1128:

գրչի...» (331ա-բ):

Խորանների մեկնությունները տեղադրված են Եվսեբիոսի թղթի ու համաբարբառի խորաններից անմիջապես հետո (սխալմամբ խորանների և մեկնությունների արանքում վերակազմման ժամանակ դրվել է Մատթեոսի Ավետարանի գլխացանկի վերջին մասը): Մի մեկնությունը վերնագրված է, ինչպես Գրիգոր Խլաթեցու մոտ. «Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի հոգենըւագ երգօղի տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ ժ խորանաց սուրբ Աւետարանիս եւ վասն երանկ ըռանկ գունոցն, ծաղկանց և հաւուցն» (12ա-14բ), որին հաջորդում է. «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց Աւետարանիս» (14բ-21բ): Այնուհետև Ավետարաններն են նախադրությամբ, գլուխների ցանկերով, ավետարանիչների նկարներով և անվանաթերթերով, ավարտվելով «Սուրբ Յովհաննու հանգիստ»-ով:

17. Q – N 2981: Ժողովածու: (Ա) 1736 թ., (Բ) 1739 թ., Ա՞կն (Բ): Գրիչ Եղիեայ Կաֆայեցի (Ա), Պողոս Դպիր (Բ): Ստացող Աղամ վարդապետ: Թուղթ: Նոտրգիր:

«Ստեփաննոսի Սիւնեայ եպիսկոպոսի» վերնագրով Մեկնությունը (324ա-325բ) հաջորդում է «Ըստ սրբոյն Ներսէսի Լամբրոնացւոյ յաղագս տնօրէնութեան Քրիստոսի» գրվածքին (320ա-323բ): Մեկնության գրիչն Եղիեայ Կաֆայեցին է, քանի որ նրա հիշատակարանը հաջորդում է հենց մեկնությանը և գրված է նույն ձեռագրով («գրեցաւ այս ձեռամբս Կաֆայեցի յետնեալ ապիկար տեր Եղիեայ նորընծային ի վայելումն սուրբ Երուսաղեմայ նուիրակ տեառն Աղամ աստուածաբանութեան վարդապետին ի թուականիս հայոց ՌճՃէ-ին (1738) մարտի ԻՁ օրն ուրբաթ...»)

Մեկնության մասում բերթերի առաջին երեսներում ձեռագրի վերակազմման հետևանքով կտրվել է մեկ-երկու տառ, երբեմն նաև մի բառ:

18. R – Ֆրիրի պատկերասրահ, 50.3, Ավետարան, ԺԲ դար: Մեկնությունն ընդօրինակված է խորանների բերթերի չնկարված էջերում (3ա, 4բ, 5ա, 6բ): Մեկնության բնագիրը և ձեռագրի նկարագրությունը տես *S. Der Nersessian*. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington 1963, p. 7..., 103-104):

Ձեռագիրը հեղինակը համարում է կիլիկյան: Ուղղագրական չեղումներ. վասմակաև, կանովնացն, մետաղփսն, դեղաւք, զսեւադեղսն, ամբաւք, Հոգոյն:

19. S - Գ. Վ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար Հայաստանի ճամ-

բորդ. Մասն առաջին. Կ.Պոլիս. 1879. էջ 192-194: «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» խորագիրը պարզ չէ. թե Սեբաստիայի ո՞ր եկեղեցու ինչ ձեռագրից է վերցված: Պակասում են հատվածներ թե միջից. թե վերջից:

20. T – N 9432: Աւետարան: 1432 թ.: Գրիչ. ծաղկող Աստուածատուր Խլաթեցի: Ունի Գ մեկնության մի հատված (տես բնագիր Գ. ձեռագիր F): 17ա-18բ. մեկնություն «Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի և հոգեբըւագ երգօղի տեառն Ներսէսի Շնորհալի կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ ժ խորանաց Աւետարանիս սրբոյ: Եւ վասն երանգ երանգ գունոցն ծաղկանց և հաւուցն ի փառս Քրիստոսի Աստուծոյ»: Ա բնագիրը կիսատ է: Նմանատիպ մի այլ մեկնություն է (էջ 17բ-20ա) «Տեառն Ներսէսի Կլայեցւոյ Շնորհալի կաթողիկոսի և աշխարհալոյս վարդապետի արարեալ պատճառ ժ խորանաց սուրբ Աւետարանին վասն գունոցն երանգոց և զանազան հաւուցն և սեղանոյն և խաչիցն» (18բ-20ա) (ԺԳ Մեկնություն):

ԲՆԱԳԻՐ Բ
ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ (ԺԲ ԴԱՐ)

Ն 2952. Աւետարան (ԺԱ-ԺԲ դդ.): ԺԲ դար ըստ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի: Ընտիր բոլորագիծ երկաթագիր (վերջի երկու թերթերը ուղղագիծ երկաթագիր):

Պատկերազարդ էջերն սկսվում են Բ կանոնի խորանից (1ա), ապա գալիս են Ե, Ջ, է (2բ), Դ, ե (3ա), ժ (4բ), Ը, Թ (5ա), Բ, Գ (5բ), ժ (7ա), Ա (3բ) կանոնների խորանները: Եվսեբիոսի Թղթի մի մասը (9ա) և շարունակությունը հաջորդ 9բ էջում: Պակասում է Թղթի սկիզբը:

Կանոնների թվահամարների և Եվսեբիոսի Թղթի և Բ Մեկնության գրչությունը նույնն է - ոսկեգույն ուղղագիծ երկաթագիր մոտ բոլորգրին: Մեկնության բնագիրը, գրված լինելով խորանների թերթերի բաց երեսներին, համապատասխանում է խորանների հաջորդականությանը (8ա, 1բ, 6ա, 2ա, 3բ, 5բ, 4ա, 7բ):

ԲՆԱԳԻՐ Գ
ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՑՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

1. a – N 6106: Ժողովածու, 1255 թ.: Խորանաշատ վանք: Գրիչ Գրիգորիս: Ստացող Թադէ, Հայրապետ կրօնաւորք: Գիրը արևելյան բոլորգիր: Ուշագրավ են ի, ծ, պ, չ տառերի գրությունները, որոնք տարբեր են կիլիկյան բոլորգրի տառաձևերից: Այս փոքրադիր ձեռագիրը (12x8) կրում է «Հարցմունք և պատասխանիք Վանական վարդապետի» խորագիրը, ինչպես և նշված է 219բ էջի հիշատակարանում, «Գրեցաւ Հարց և պատասխ[անիք] սուրբ վարդապետին Վանական Խորանաշատի, ի թվին ՉԴ (1255), հրամանաւ բերեմիտ (գուցե բարեմիտ.- Վ. Դ.) և ընտրեալ երկու եղբարց Թադէի և Հայրապետի, ձեռամբ մեղապարտ[ի]ս Գրիգորիսի, ի վանս Խորանաշատի, առ դրան Աստուածամաւր...» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, էջ 281):

«Հարց և պատասխանիք»-ին հաջորդում է մեկնությունը «Յուսով խնամոցն աստուծոյ մեկնութիւն խորանացն աւետարանին. աւգնեա Հոգի Սուրբ» խորագրով (էջ 220ա-233ա):

233ա էջում «Երանելոյն Աբանասի արհեպիսկոպոսի ասացեալ հարցմունք և պատասխանիք վայելուչ» գրվածքն է բազմաթիվ վկայություններով (օրինակ, Եփեսացւոց, Բարսեղ, Փիլոն, Դիոնեսիոս, Հիպոլիտոս և այլն):

Ուղղագրական յուրահատկություններ. սկզբում գրվում է *բարոյն*, իսկ մի այլ տեղ բարւոյն, գիշատակս *զիշխ.* գյիշատակս, գարդաւք, գԻսրայէղ, գունագունն, գգործքն *զիշխ.* գգործան, բաւընդակեալ, մարտմունք, անվաղճան, հանճարոտ, գոանա, ծիրեանս, գըտըտպատեսակք, մի տեղ եաւթներորդ, մի այլ տեղ յեթներորդ և այլն:

2. A – N 5197: Ժողովածու: 1274-1280 թթ.: Գետիկ (Մահկանաբերդ): Գրիչներ Գրիգոր, Շմավոն: Ստացողներ Թամքի Խաթուն, Սարգիս վարդապետ: Ձեռագրի բովանդակած, մի շարք երկերից հիշատակարանում նշվում է Տօնապատճառը: Սարգիս վարդապետը մատյանն ընդօրինակել է տվել ի ժամանակի «նետողաց, ծիակբաց կաթնակերաց» (Աբաղախանի ժամանակ), ընդ որում «գկարգ ասացուածոցն յիմ (Սարգիսի – Վ. Դ.) սնեալ միայնարանին, ի Գետիկ, ի թուին հայոց ՉԻԳ (1274) և զՊատճառ տօնից ի Թաւթակին, ձեռամբ կուսակրօն Գրիգոր քահանայի, թուին ՉԻԹ (1280)...» (էջ

211բ) («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԹ դար, էջ 496):

«Սեկնութիւն խորանաց աւետարանին» գրվածքին (էջ 288բ-298բ) նախորդում է «Սկիզբն եսայեայ մարգարէի» (էջ 277ա), հաջորդում է «Պատճառ թելադրութեան Դ աւետարանացն, թէ որպէս գրեացն և յորքան ժամանակ և թէ որպիսի աւրինակաւք յառաջինսն խորհուրդ սոցա երկներ և գայր...» (էջ 298բ): Սկիզբը «Յարեւելեայս ասի տնկեալ գդրախտն ուստի և աղբիւր ելանէր գետահետեալ յորդիւք, յորմէ և Դ չորս առաջս բաժանին...», էջ 302ա - «Մարկոս եգիպտացւոցն քարոզեաց զիւր Աւետարանն, քանզի անդ ընկալաւ ի սրբոյն Պետրոսէ զծեռնադրութիւն եպիսկոպոսութեան և ի նմին եղև կատարումն կենաց նորայ, ուր և գետն էր երկրորդ, գոչէ Գեհոն ունի իշխանութիւն ի վերայ վաստակոց...»: էջ 303բ - «Ղուկաս աւետարանս երրորդն է ըստ կարգի աւետարանչացն և հաւաստի գետոյն որ ի չորիցն բաժանի, որոյ անունն կոչի Տիգրիս, որ գնա դէմ հանդիման Ասորեստանեայց...»: էջ 306ա - «Յաղագս Աւետարանին Յովհաննու»: Այստեղ խոսվում է եփրատ գետի խորհուրդի մասին: էջ 315 բ - «Բնութիւնք արարածոց իմանալեաց և զգալեաց...»:

Կան և բազմաթիվ նյութեր, որոնցից 321ա էջում հատված Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունից. սկիզբը «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյ Դաւթի...»:

Գրության յուրահատկություններ. ազգաց <u>մխ.</u> յազգաց. Իսրայէղն, ընչողի, դեղովք, գունագուն, բաւանդակն, մրտմունս, նկարել <u>մխ.</u> նկարեալ, եղջերք, սկայական, Սինեայ <u>մխ.</u> Սինայ:

3. B – N 5254: Ժողովածու: 1280 թ.: Դեղձուտի վանք (Մահկանաբերդ): Գրիչներ Աւետիս, Գէորգ քահանա: Ստացող Գէորգ քահանա: Արևելյան բոլորգիր:

էջ 1ա-6բ «Սրբոյն Ներսիսի Լամբրաւնեցւոյ Տարսոնի եպիսկոպոսի յԱռակաց մեկնութենէ...», էջ 6բ-17բ «Մեկնութիւն Եսայեայ մարգարէի», էջ 17բ-20բ «Նախերգան երկոտասան մարգարէիցն», էջ 20բ-31ա «Ի Մատթէի մեկնութենէն Ներսիսի հայոց վերադիտողի ի խնդրոյն նորին եղբարւն Գրիգորիսի առաջին վերադիտողի», էջ 31բ-44բ «Պատճառ Աւետարանին Յովհաննու», էջ 45ա-46բ «Ղուկասու Աւետարանս երրորդ է ըստ կարգի աւետարանչաց և հաւաստէ գետոյն, որ ի չորիցն բաց անի, որոյ անուն կոչի Տիգրիս, որ գնայ ի դէմ յանդիման Ասորեստանի, քանզի անդ առ սկիզբն քարոզութեան աւետարանին, ի ձեռս Պաւղոսի առաքելոյ...», էջ 46բ-54բ «Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի ասացեալ

յաղագս խորանաց Աւետարանին», որից հետո գալիս է հիշատակարան և խորագիր այլ թանաքով և այլ ձեռագրով. «Վասն Յակոբա հարւրն Յովսէփու, որ կոչեցաւ այր Մարիամու...» (էջ 54բ...) և այլն:

Սա խորանների սույն մեկնության միակ օրինակն է, որտեղ առանց երկմտության այն վերագրված է Վարդանին (հավանաբար Հաղբատեցուն, որ Շնորհալու աշակերտն էր և մեկնիչ, ինչպես ենթադրում է Փ. Սնթաբյանը):

54բ էջի հիշատակարանում հիշատակվում են Գեորգ գրիչը և ստացողի «հոգևոր» եղբայրներ Վահրամը և Ստեփաննոսը, որոնք տվել էին օրինակ գրչին ընդօրինակելու համար («քանզի մինչ ցայսր վայր զաւրինակն սոքայ շնորհեցին...»), այսինքն ներառյալ խորանների սույն մեկնությունը: Ձերևս ձեռագիրը Այրարատ գավառից ընդօրինակման է բերվել Մահկանաբերդի Դեղձուտ վանքը: 54բ էջից իրոք փոխվում է գրչությունը: Հիշատակարանը բերում ենք լրիվ իր շահեկանության պատճառով. «Որք աւգտիք ի սմանէ, գհոգևոր եղբարքս իմ զՎահրամ և զՍտեփաննոս յաղաւթս յիշեցէք, քանզի մինչ ցայսր վայր զաւրինակն սոքայ շնորհեցին, և ոչ միայն այս, այլև պանդխտութեանս իմոյ մխիթարիչք էին հոգևոր և մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխտանեաք, որ և Քրիստոս հատուսցէ զվարձս: Եւ յայսմ աւուր գնալով սոցա յերկիրն իւրեանց, յԱյրարատեան գաւառն, տրտմութիւն հասուցին ինձ զիս միայն թողլով: ... Եւ զիս, Գեորգ որդի Պաքուտաթոռին, հզա[ւ]րայ յերկրէն Խաչինոյ, ի մեծահռչակ քաւարանէն Գանձասարայ, որ մակացու էի յերկիրս Մահկանաբերդոյ, ի վանս Դեղձուտի, առ ոտս Առաքել վարդապետի, յաղաւթս յիշեսջիք: Ի թիվս ՉԻԹ (1280) աւգոստոսի Ժ (10) գրեցաւ» («ԺԳ դարի հիշատակարաններ», էջ 509):

Այս ձեռագրում Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը դրված է «Խորանների մեկնության» հարևանությամբ, կարծես նրանից անկախ մի գործ: Ավետարանի մեկնության ձեռագրում բերված հատվածը (հավանաբար մեկնության հնագույն օրինակներից) գրված է մինչև Մատթեոսի Ավետարանի գլուխ Ա, 18 հատվածի մեկնությունը և միայն ուղղագրական ու բերականական տարբերություններ ունի տպագիր օրինակից (տես «Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ...», Կ. Պոլիս, 1825, էջ 26-27):

Գրության յուրահատկություններ. *ո*-ով ավարտվող բառերից հետո չկա *յ* կիսաձայնը: Հաճախ անցյալ կատարյալի *եաց* մասնիկի փոխարեն *եց* (պտղաբերեց, աւետեց), մի այլ տեղ խաչելն *չխնչ* խա-

չեալն: Այլ յուրահատկություններ ընբէ. բաւանդակեալ. բաւանդակն. զանվաղջան. զոյգք զոյգք ⁂ զոյգ զոյգ. Մելքիսեդի. Մովսիսիքն և այլն:

4. C – N 1324: Ժողովածու: 1281 թ.: Հաղպատ: Գրիչ Յոհան. Բարսեղ. Աբրահամ: «Խորանների մեկնությանը» նախորդում է «Յաոակաց Սողոմոնի»: էջ 289 բ «Մեկն. Աւետարանին խորանացն»: 294ա էջում Մեկնության ավարտն ունի հետևյալ տեսքը. «... Յոգին ծերաւք և մերաւք երախտաւորաւք. կենդանաւք և մեռելաւք մասին արդարոցն արժանաւորեալք. վասն որո ասացաւ մեկնութիւն ժ խորանացն, զոր կարգեալ են առաջին հարքն...», որի շարունակությունը արդեն մեկնության հետ կապ չունի («... ժամ է արդ մտանել ի բնաբանութիւն Աւետարանին մթութեան, որոյ անուն բարբմանի երգ կենաց. և. յիրաւի, վասնզի ընկալեալ զՅոգին Սուրբ ի վերնատանն ընդ առաւ(յ)բեալսն, կենդանացաւ Յոգով և զնոյն կենդանութեան աղբիւրն բխեաց ի հիւանդ և ի մեռեալ բնութիւնս մեր և զոր քարոզեաց զնոյն և գրով աւանդեաց...»: էջ 294բ Սաղմոսաց մեկնութիւն («Ի սաղմոսն որ ասէ ասաց Տէր ցՏէր իմ նիստ ընդ աջմէ...»):

Բարսեղը, որը գրիչներից մեկն է և ստացողը, իր տարբեր հիշատակարաններում խնդրում է ներող լինել անհաջող գրչության համար. «Աստանաւր յիշեսցի ի բարի ամենագով եղբայրս Բարսեղ, որ ետ գրել հալալ արդեամբք իւրով: Ընդ նմին յիշեսջիք և զմեղապարտ գրիչս և մի մեղադիր լինիք, զի ծեր և տկար և պակասել ի լուսոյ...» (էջ 96բ): Ըստ երևույթին օրինակն էլ մի բան չի եղել. «Ողորմեսցի Քրիստոս Աստուած սպասաւորի բանիս Բարսղի և մեղաւոր և յետին գրչիս Յոհանիսի. ամեն. զի և յոյժ ննջիմ յաւրինակէս և այն զի պակասեալ ի լուսոյ և տկար մարմնով և անցեալ զաւուրքք» (էջ 202բ): «... Եւ է, որ գրեցաւ իմով ձեռամբ խոշոր և անյարմար, և է որ ի ձեռս այլոց ի հալալ արդեանց իմոց ի գերահոչակ ուխտս Հաղբատայ, յորում եղէ արժանի կոչիլ սպասաւոր բանի, յաղագս որոյ ծաղկաբաղ արարի սագս իմո պիտոյից, նայև զաւակ հոգևոր գկնի ելից մեր ի կենաց անտի,...» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ժԹ դ., էջ 522-523):

5. D – N 2610: Ներսես Շնորհալի, Մեկնութիւնք Մատթէոսի: 1363 թ.: Խիզան: Գրիչ Յովհաննէս կրօնաւոր, Պետրոս Կրօնաւոր: Ստացող Յովհաննէս Րաբունապետ, կազմող Ստեփաննոս:

Ըստ հիշատակարանի, «զՊետրոս... յառաջոյ և յետոյ գրեաց և աւգնական եղև մեզ (Յովհաննէսին.- Վ. Պ.) վասն անկարգութեանն...» (էջ 259ա-259բ): Ձեռագիրն ընդօրինակվել է «ընդ հովա-

նեաւ սուրբ առաքելոյս Գաւմաղիէլի, որ կայ առընթեր Խիզան քաղաքիս...»: Գրիչը հիշատակարանը ավարտում է հետևյալ կենդանի տողերով. «Դարձեալ կրկին յերես անկեալ աղաչեմ խոշորութեանն և սխալանացն անմեղադիր լինել, զի յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից և ի ճանճից և յայլոց, որ սոցին նմանէ: Ես. ՊԺԲ (1363)-երորդի»: Մյուս կողմից էլ ծեռագիրը գրվել է «ի նուրբ և ի նեղ ժամանակի, յորում գերին և աւար լինեն ամենայն ազգք քրիստոնէից..., և ի տառապանս և ի տարակուսանս կայեաք ամենեքեան» (էջ 259բ) («ԺԴ դարի հայերեն ծեռագրերի հիշատակարանները», էջ 459):

258բ էջում, բնագրի ավարտից հետո կա հետաքրքիր մի գրություն-հիշատակարան, ընդօրինակված մայր-օրինակից. «զԱրիստագես վարդապետ և զգովեալ աշակերտ նորա զեփրէմ յիշեսջիք ի Քրիստոս, զի նա աշխատեալ ժողովեաց զբանսն մեկնչաց ի մի յետ տեառն Ներսէսի: Յաւրինական այսչափ է յիշատակարան Արիստակէսի» (258բ)[1]:

1ա էջում բոլորովին տարբեր բոլորգրով կան հետևյալ օրառումները. «Ցվերգիլիոսի, որ ասէ. յերից միութենէն ի մի տեսաւորք և յերից աներևութիցն ոչ պակասի: Եւ Սիբիլայ կին էր և գրեաց իւր ի շարս սլատճէնի, վասն խաչին ասելով երիցս երանեալս ի այտ (ա՛յր.-Վ. Դ.), քանզի աւծեալն տարած է գբազուկս իւր ի վերնա՝ քո և նախ գուշակեաց գխորհուրդ Սուրբ Երրորդութեան և միսն գչարչարանս Քրիստոսի»:

1բ-2բ էջերում տրված են Դ-Ժ (4-10) կանոնների աղյուսակները:

3ա-10ա էջերում խորանների մեկնություններ է երկու սյունակով, վերնագիրը «Մեկնութիւն Սաթէոսի աւետ», սկսելով «Մատեանք աստուածայինք և հոգեբուխ վարդապետութիւն իմաստից» բառերով:

10ա-12բ էջերում «Յեկեղեցական պատմութենէ» վերտառությամբ գրվածքն է սկսելով «Առաքեալքն էին Բժ և այլ աշակերտք երկոտասանից ՅԲ և այլք բազումք, բայց սակայն յամենայն առաքելոց անուն Տեառն մերոյ պատմութիւն գրեալ Մատթէոս և Յոհաննէս միայն թողին մեզ...»:

12բ էջում նոր վերնագիր է. «Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին, որ ըստ Սաթէոսի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ կարգեալ և յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներ-

[1] Նման ծեռագրերի մասին (օր Մատ. Ն 1253, 1590թ., Մալաթիա) տեղեկություններ բերված են Հ. Անանյանի մոտ (Անանյան, Հայկական մատենագիտություն, ե-ԺԸ դդ., Հ. Բ, էջ 773-775): Մեր ծեռագիրը ընդօրինակելու աշակերտ Արիստակէս մեկնիչի հիշատակարանում ասվում է.

7 - ՊԱՀՊ. Ածրանաց

սեսի հայոց կաթուղիկոսի ի խնդրոյ նորին եղբաւր Գրիգորիսի վերադիտողի հայոց»: Այն սկսվում է. «Սիրոյ գաւրութիւն գերազանց է, քան զբնութիւն...» բառերով և ավարտվում «և որ իցեն առաջին դուռն» բառերով[4]: 17բ էջում միանգամից սկսվում է «Գիրք լինելոյ որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու» ՀՀՄՄ տպագրվածի «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դավթի որդւոյ Աբրահամու»: Այնուհետև շարունակվում է Մեկնությունը մինչև ե գլուխը (ինչպես նշված է տպագրված Մատթեոսի մեկնության մեջ):

Մատթ. ե, 18-ից հետո հրատարակված մեկնության մեջ սկսվում է Հովհաննես Երզնկացու (Օրոմորեցի) մեկնությունը[5], որի որոշ նախադասություններ կարող են համընկնել Արիստակեսի մեկնության հետ (այն էլ սկզբում). «Իսկ յոմտ ըստ յունականին է ծայն և առ մերս գիր թարգմանի և որ փորր գրախեցի պարտ է կատարել, զոր ինքն իսկ ածեալն հաւաստեաւ արար և կատարեալ» (էջ 8ա, տող 2-3): Այնուհետև երզնկացու և Արիստակեսի բնագրերը չեղվում են:

Գրության յուրահատկություններ. բարոյն, փառան, սեփհականս, բոցնդինեաւ, նկարիւք, սգայութեանց, ցանգեացես, երանկ, սգալի, աշտիճանս, ծաղկի, ծաղկէ, գնոցայն եայլն:

6. Է – N 2523: ժողովածու: ԺԴ-ԺԵ դդ. (1425 թ. առաջ): Գրիչ Գրիգորիս: Կազմող Սարգիս քահանայ:

Ձեռագիրը բավական խունացած է ու դժվարընթեռնելի: 157ա էջում ավարտվում է Վանական վարդապետի «Հարցմունքը» և սկսվում «Տեառն Յոհաննու Ոսկեբերանոյ Կոստանդինու եպիսկոպոսի պատճառ Հռոմայեցոց թղթոյն Պողոսի առաքելոյն»: էջ 164ա «Պատճառ Հռոմայեցոց թղթոյն Պողոսի առաքելոյն», էջ 172ա «Յոհաննու Ոսկեբերանի Պատճառ թղթին գաղատացւոց», էջ 176բ «Պատճառ թղթոյն Պ[ողոսի] առ հեբրայեցիսն», էջ 184ա «Ճեսադրվնիկ. Ա թուղթ», էջ 190ա-197բ «Մեկնութիւն խորանաց Աւետարանին», 197բ էջում սկսվում է «Պատճառ և թելադրութիւն չորից Աւետարանացն...», ապա թերթերը կտրված են և 198ա էջից ձեռագիրը փոխվում է և սկսվում «Ղուկասի Աւետարանի մեկնութիւնը», իսկ 222ա էջում գրչի հիշատակարանն է. «Ճողութիւն մեղաց խնդրեա ի Քրիստոսէ սակաւ գծաւղիս Գրիգորիսի մեղապարտի...», 222բ է-

[4] Տե՛ս Մնացեան, Հայկական մատենագիտություն, Հ. Բ., էջ 773-775:

[5] Հրատարակված բնագրում. «Իսկ յոմտ ըստ յունականին է ծայն, և առ մեր գիր թարգմանի. քանզի որ փորր գրախեցի է, անհնարն է, թէ անկատար մնացէ մինչ յանցանելն երկնի և երկրի...» («Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի...», էջ 108):

ջում կազմելու տարեթիվը. «Ի Հիզան քաղաք ի թուական ՊՀԴ»[6], 223ա էջում մի այլ ձեռագրով եղիշեի «Ի յարութիւնն Ղազարու»:

Գրության յուրահատկություններ. վայելչութեան, սեփհականաս, սերմանեալն, ըմբէ, բաւանդակն, աշտիճանս, Կուռնելիոս, ամենեբումբք, մահուն, Սինեա և այլն:

7. F – N 9432: Աւետարան: 1437 թ.: Խղաթ (խլաթ): Գրիչ, ծաղկող, կազմող Աստուածատուր: Ստացող Եւստ ճգնավոր: Ձեռագիրն ընդօրինակված է «ընդ խորանեաւ ժԱ խորանացս և սուրբ Գէորգ զաւրավարի, ի Խղաթ մայրաքաղաքի, ի հայրապետութեան տեառն Կոստանդնեա ընդհանուր կաթողիկոսի...»[7]: Նույն այս Աստուածատուր խլաթեցին ունի 1443 թ. ծաղկած ու ընդօրինակած մի Ավետարան (N 7772), որտեղ բերված են Ա և Ե բնագրերը Գրիգոր խլաթեցու (Ծերենցի) խմբագրությամբ: Գ բնագիրն ընդգրկում է 1ա-3ա էջերը, վերնագիր չունի, սկսվում է «Արդ առաջին խորանն...» բառերից մինչև «Եւ այսպ տասներորդ խորանն...», որին հետևում են տերունական նկարաշարը և խորանապատկերները: Տե՛ս նաև Ա մեկնության ձեռագրերի ցանկը:

Գրության յուրահատկություններ. սգալի, հոյիւն ՀՀՆ. խոյիւն, նահապետրն, հնկակս և այլն:

8. G – N 4419: Ժողովածու: 1449 թ.: Գրիչ, ստացող Ալեքսանոս աբեղա: Հիշատակարանը հոչակում է. «... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանի քաղուածոյս Մատթէոս գլխին յերկիրս եղեգեղացդ, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս և սուրբ Նշանացս, ձեռամբ... փցուն և անյարմար գրչի Ալեքսանոս սուտանուն աբեղայի... ի թուականութեան հայոց ՊՂԸ (1449)», երբ «ազգ անաւրինաց գրկեն զազգս հայոց և քահանայից ի լընչից իւրոց և դատեն անօրէն... Այլ և է (7) տետրն գրած էր առաջ, ի զատ ի առաջին մին տետրէն, որ խորանաց մեկնութիւն է...»[8] (էջ 288բ-289ա): Խորանների մեկնությունից անմիջապես հետո գրչի հիշատակարանն է, որ չկա ակադ. Խաչիկյանի «Հիշատակարաններում», իբրև ավելորդ. «Ջտառապեալ և գնեղապարտ գրիչս զԱլեքսիանոս աբեղա անուամբ և ոչ գործով, աղաչեմ յիշել ի տէր և զծնաւղսն իմ գհայրն

[6] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները». Մասն առաջին, էջ 340. Նույն էջի ծանոթության մեջ նշվում է, որ ձեռագիրն ընդօրինակված է ԺՂ դ. կեսերին, պատճանվել է գրչի անունը «Գրիգորիս մեղապարտ»:

[7] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները», մասն առաջին, էջ 472. Ձեռագրի մանրամասնագրական նկարագրի մասին տես Յակոբյան, Վասպուրականի մանրանկարչություն, գիրք Բ, էջ 163, էջ 81-82.

[8] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները», Մասն առաջին, էջ 638.

Սկրտիչ Սուղտասի և զնայրն Խոնդիկ...» (էջ 7ա)։ Ձեռագիրը քայքայված տեսք ունի, հատկապես խուճացած են կարմիր գրերը։

Ձեռագիրը հատկապես քայքայված է խորանների մեկնության (էջ 2ա-7ա) հատվածում, ասես մկնակեր և խոնավակեր. մինչև 5-րդ թերթի վերին մասերը պլոկված ու ծակծկված են, վերնագիրն հազիվ է ընթերցվում՝ «Մեկնութիւն խորանոց»։

Սովորաբար գրվում է բարոյն, հոգոյն, եկեղեցոյ և այլն։ Այլ յուրահատկություններ սեփհական, խորանքս, չորս, կեա *ջ/ձ*, կայ, գագալի և այլն։ Կան որոշ ուղղումներ նոտրգիրով 5ա էջում, լրացնելով բնագրի որոշ բացթողումները։

9. Հ – N8268։ Ժողովածու։ ԺԳ. ԺԵ դդ.։ Գրիչ Չարուխ սարկաւագ (Ա), ստացող Ամիր Ջաբէ (Ա)։ Բոլորգիր։ Հիշատակարաններից. «Սոցին բարեխաւսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեայ ստացողի սորայ Ամիրզաբէ և ծնողաց իւրոց պարոն Հեթումին... և անիմաստ գրչիս Չարուխիս և մղտեսի միայնակեցին, որ մեզ շատ իմաստութիւն խրատ երետ...» (էջ 43ա)։ 72բ էջի հիշատակարանը հաջորդում է «Վարք սրբոյն Սրապիոնի» գրվածքին, և այն է ավելանում, որ թողություն տրվի նաև «զմղտեսի միայնակեցն, որ աշխատեցաւ և աւրինակ եբեր...»։ Ուրեմն, մինչև 97 թերթը կարելի է համարել ԺԳ դ. գրչություն՝ արևելյան բոլորգրով։ Այնուհետև հանդիպում են տարբեր գրեր ու գրվածքներ։ 144ա-149բ էջերում մեր բնագիրն է կանոնավոր հավասարաչափ բոլորգրով (Կիլիկյանի հետևողությամբ), որ սկսվում է մեր քննական բնագրի «... թիւն և ի բանս աղաւթիցն...» տողից մինչև վերջ և ունի *աւ* ու *օ* տառածևերը։ 149 բ էջում «և ի տագնապ անհաւատից» բառերից մինչև «և ծածկայտեսից լիցուք խորանօքս այսու լուս...» բառերը այլ գրչությամբ է, բոլորգրի նմանողությամբ։

10. Ի – N 1280։ Ժողովածու։ ԺԵ դ.։ Գրիչ Սարգիս աբեղայ։ Ստացող Համամշինու վարդապետ։ 70ա էջի հիշատակարան «Տէր Աստուած ողորմեայ գծողի սորայ անպիտան ծառայի Սարգիս ա-բեղ[այ]ի...»։ էջ 221բ. «...զստացաւղ տառիս զքաջ րաբունապետն զՀամամշինու, որ եւտ գրել զսայ...»։

էջ 1ա-6ա. «Մեկնութիւն խորանաց աւետարանի[ն]»։ էջ 6ա-7ա. «Եկեղեցական պատմութենէ»։ էջ 7ա-11ա. «Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէի բանից իմաստուն վարդապետաց նկեղ. կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց. Ւագնեա Քրիստոս Աստուած և ուղեա»։ Սկսվում

է «Սիրոյ գօրութիւն» խոսքերով, ավարտվում «...ո՞ր իցեն առաջին դրունք», ինչպես տպագիր տեքստում (վերնագիրը տարբեր է, բնագիրը նույնական), էջ 11ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու»: Սինչև Ե գլխի 17-րդ ոտանավորի մեկնությունը (ձեռագրում էջ 78բ) Շնորհալունն է, ինչպես և տպագրվածում, այնուհետև մեկնության բնագիրը կտրուկ փոխվում է (Արիստակես գրիչ), ինչպես N 2610 (D) ձեռագրում (1363 թ., Խիզան), ընդ որում այս ձեռագիրը ևս վասպուրականյան նկարագիր ունի: Այնուհետև գալիս են հատվածներ Ոսկեբերանից, որոնցից առաջինն է «Տեառն Յովհաննու Ոսկեբերանի Կապեռնաում բանին Տեառն մեկնութիւն» (էջ 98բ...), որոնք քաղել է Արիստակեսը:

Գրչություն. *աա* ձևի փոխարեն մեծ մասամբ գործածվում է *ա* առանձին շեղումներ չկան գրաբարյան ձևերից. սեփհականես, բաղոյց, նախամարք և այլն:

11. K – N 6649: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէոսի: Ժե դ.: Գրիչ Եղիայ: Ձեռագիրը որոշ չափով վնասված է խոնավությունից: Բայց ուշիմ գրչի ընդօրինակություն է, որը հատուկ ուշադրություն է դարձնում կարմիր գլխատառերով շեշտելուն տողամեջերում (օրինակ խորանների թվահամարների), ապա ածեն մի խորանի նկարագրություն սկսում է կարմիր տառերով և նոր տողից:

Էջ 273ա. «Ով սրբազանդ րաբունի, որք հանդիպիք այսմ մարգարտի, ձեզ աղաչեմ աղերսալի և պաղատիմ արտասուալի, գեղիայ մեղօք ի լի յիշել յաղօթս ձեր բարի»:

Էջ 1ա-4բ. «Մեկնութիւն խորանաց Աւետարանի»: Էջ 5ա-6բ. «Ցանկն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս, գի դիւրաւ գտցես. գոր և կամեցիս»: Էջ 7ա-9ա. «Ցանգն է առաջին հատորի մեկնութեան»: Էջ 10ա. «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդենաբուխ, չորից Աւետարանացն հոգեբուղխ»: Սկսում է. «Արդ չորս գետն նմանի չորից աւետարանչացն...»:

10բ էջում կա մի համառոտ մեկնություն «Վասն ականցն», որից բերում եմ քաղվածքներ, քանի որ ունի խորհրդապաշտական բովանդակություն. «Իսկ սուտակն, որ է կայծ և կարկեհան, նշանակէ զԲարթողիմէոս, որ քերթեալ իբր վկայ վառեցաւ արեամբ: Եւ դահանակ, որ է կանաչ գմրուխտ, որ է դեղ աչաց, նշանակէ զԹեօմայ, որ լուսաւորեց զաչս հոգոց նոցա, այլ գմարմնոյ կուրաց բազմաց: Դարձեալ նշանակէ զբահանայական և զթագաւորական իշխանու-

թիւն, գի ակն ունի Դ յատկութիւն ա. զգոյնն. բ. պայծառութիւն. գ. պարզութիւն. գ. ներգործութիւն և ազդումն: Նոյնպէս նոցա վիճակն. մի է քահանայապետական և մի է թագաւորական ի վերայ Ի (20) դիցն և պայծառացեալ հաւատոյ լուսովն և պարզ. գի ոչ ունին խմոր հերձուածողական և բարի գործովք առաւել քան զամենայն աշխարհս»:

էջ 15բ-20ա. «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, գոր եղբայր կոչէ»: էջ 20ա-22բ. «Նորին սկիզբն և [բառ մնկնութեան] Աւետարանին Մատթեոսի [...] ճառ հարցմանբ. աւգնեայ Սուրբ Հոգի...»: 269ա էջում կա «վկայութիւնք պատմողականք] ժողովոյն Քաղկեդոնի... Միխայէլի»:

12. L – N 1259: Մեկնութիւն խորանաց: Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն Մատթէի: 1563 թ.: Իլով: Գրիչ Պօղոս նոտար: Ստացող Թումա քահանայ:

Հատվածներ հիշատակարաններից. «... Ջտարտամս և զտրուպս ի մէջ բազմամբոխ եղբարց զՊօղոս կորեալ ի մէջ մեղաց, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր...» (նույն բնագրի բոլորգրով) (253ա): «Ջանարժանս ամենայնի, գի յիշելոյ չեմ արժանի, արժանացոյ մտօք բարի, գի Տէր և քեզ ողորմեսցի, Պօղոս գրչի ձեռեալոգի: Ո՞ գիր որ մնաս: Ո՞ ձեռս որ յող դառնաս: Ո՞ եղբայր որ ընթեռնուս: Ո՞ որ զմեզ յիշէ» (գրված է ավելի մանր բոլորգրով ցանկավերջում տողատակ) (էջ 256բ): «... Արդ յանգ եղեալ աւարտեցաւ ամենալից բուրաստանս և անգին մարգարիտս, որ է քաղուածոյ մեկնիչ Մատթէոսյան ավետարանչին, արարեալ ի հոգեկիր արանց, իբրև զփունճ մի մանուշակ..., վասն որոյ ցանկացող եղեալ բարեմիտ և հեզահոգի քահանայն տէր Թումայ կոչեցեալ այսմ բուրաստանիս, ի վայելումն անձին իւրո և իւրայոցն ամեն: Եւ ես Պօղոս նոտարս գծագրեցի թերավարժ ձեռամբ և ապիկար անձամբս և հանի յաւարտ ի խնդրոյ հեզահոգի տէր Թումա քահանայի Իլովցւոյ, ի թուականութեանս յաբեթական տումարի Ի յոբելենի և բաժան թիւ աւելի, ի յամսեանն մարտի, Իլով քաղաքի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, թագաւորութեան Գոռելգիկմոնդ աւկոստոսին և հայրապետութեան տէր Ստեփանոս Սոբնեցւոյ և յեպիսկոպոսութեան այսմ նահանգի տէր Գրիգորի Վանեցւոյ... Արդ աղաչեմ զձեզ, ով եղբայրք, անմեղադիր լերուք գրոյս և սղալանացս, զերայ խարիպութեան տեղ էր և սիրտս տրտում էր և թուխտս խաշապի էր» (հավանաբար փայտի, ի տարբերութիւն բամբակի թղթի) (էջ 324ա-բ):

Կազմի ետևում փակցված թղթի վրա և պահպանակին նշված է Սեբաստիայի եպիսկոպոսի (Տեր-Մովսիսյանի) ձեռքով ՈԺԲ-1563:

էջ 2ա-8ա. «Մեկնութիւն խորանացք աւետարանին»: Այս պրակը, սկսվելով գծային գլխազարդից, բուն շարադրանքից տարբեր բոլորգրով է, ճերմակ թղթի վրա հատակ, կանոնավոր, տառերի անկյունները ցայտուն, կարմիր գրերը կամ տողերը մուգ և բաց մանուշակագույն բանաքով:

էջ 11ա-12բ. սկսվում է ուղղանկյուն գլխազարդով. «Ցանգն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոյս, զի դիւրաւ գտցես, զոր կամիս»: Ցանկի վերջում նշված է. «Եւ վասն Մարկոսի. առանձին բանից սակաւ մեկնութիւն: Աստ գտցես: Եւ արտաքոյ սոցա ի Միխայէլ գրոց Ի վկայութեամբ ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի, այլև տումար ԺՁ ազգաց, նոր յարմարեալ և ի միասին հաւաքեալ, աշխատասիրեալ ումեմն աշակերտի, որոյ տէր ողորմեսցի: Ամէն»:

էջ 13ա-15ա. «Ցանկ է առաջին հատորի[ի]ն մեկնութեանց»:

էջ 15բ - «Գրիգորի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի հաւաքեալ բաղումածոյ մեկնութիւն Բ Աւետարանին Մաթէոսի նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմայրուխ, չորից աւետարանչացն հոգեբուղխ: Աւգենա Հոգիդ Սուրբ, Աստուած ճշմարիտ»:

էջ 21ա-22բ. Այս պրակում է Տարեացու խորանների մեկնությունը նորագված և նոր գրչությամբ սպիտակ ամուր թղթի վրա գծագրական բոլորգրով, ընդ որում, խորագիրը սկսվում է մանուշակագույն բոլորգրով 22բ էջի ստորին մասից. «Ի ցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ...» և այլն: Այստեղ նույն թղթե բերթերն ու ձեռագիրն են, ինչ սկզբում: Շնորհալուն վերագրված մեկնության ընդօրինակությունը:

էջ 23ա-27բ. Մեկնության շարունակությունն է մինչև ավարտը. 31բ էջում նորոգ թղթի վրա գրված է. «... Յայլմէ առացեալ...», մեր ե բնագրից (արտագրված է հանդիպակաց էջի հին թղթից, որի վերնագիրն ու կարմիր գրերը խունացել են: Վերնագիրն է. «Արդ այս է սպառճառ տասն խորանացդ»):

13. M – N 1282: Մեկնութիւն Մատթէոսեան Աւետարանին: 1604 թ., Օպատ անապատ (յերկիրն Մոկաց):

էջ 4ա-10բ. «Սակս տասն խորանացն»: էջ 11ա-15ա. «Ներսես եպիսկոպոսի եղբայր Գրիգորի կաթողիկոսի սակս Աւետարանին Մաթէոսի»: էջ 15բ-261ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի...»:

Փաստորեն այս ձեռագրում բացակայում է «եկեղեցական պատ-

մութենէ» հատվածը: Գրչությունը արևելյան ազատ ոճով լավ բոլորգիր է, երեք վերնագրերից յուրաքանչյուրը սկսվում է գլխագարդով (կիսախորանով) վասպուրականյան ոճի, բայց խիստ գծագրական: 83բ էջում ավարտվում է Շնորհալու մեկնության հատվածը (վերջին բառերը «... և կատարեացին գրեալքն գիտեն»): Այնուհետև նոր հեղինակը մեկնությունը շարունակում է առանց ընդհատման, ուղղակի ավետարանական հաջորդ բաղվածքով: 169ա էջից սկսվում է մեկնություն, որի վերնագիրը բոլորգրով, առաջին տողը կարմիր մելանով գրված է 164բ էջում, երկրորդ սյունակի հիշատակարանի տակ «Յոհաննու Ոսկիբերանի Կոստանդինուպաւղսի հայրապետի Գիրք երրորդ Կեսարացւոյ Փիլիպեա»[1]: Շնորհալու Մատթեոսի մեկնության հատվածի շարունակությունը չի համապատասխանում ոչ Հովհան Ոսկեբերանի, ոչ էլ Հովհաննես Երզնկացու մեկնություններին:

Գլխավոր հիշատակարանը (էջ 266բ-262ա) ունի պատմական հարուստ տեղեկություններ, բայց ոչ մի խոսք մեկնության հեղինակների մասին (տես «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ», 1601-1620 թթ., հատոր Ա, էջ 129-130):

14. N – N 5781: Ժողովածու: 1621 թ., ժէ դ.: Գրիչ Ներսես բահանայ (Ա), Ջանդեմիր (Բ): Ստացող Սարգիս վարդապետ Սպերցի (Ա): Նոտրգիր:

էջ 1ե-5ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»:

էջ 5բ-8ա. «Ցանկ է գլխաւորագոյն բոլոր գրոցս: Ձի դիւրաւ գտցես, զոր և կամիս»:

էջ 8ա-12բ. «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցւոյ, հաւաքեալ բաղուածոյ մեկնութիւն սուրբ Աւետարանին Մաթեոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոց Եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ, օգնեալ Հոգիդ Սուրբ»:

էջ 12բ- 15բ. «Ի ցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանաց, զոր արարեալ է մեծին Եւսեբեա ի խնդրո Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

էջ 15բ-17ա. «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառոտ հարցմամբ»:

էջ 17բ. «Սկիզբն Աւետարանի հետևեսցուք ինաստից քերթու-

[1] Տես «Յոհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպաւղսի եպիսկոպոսապետի բաւետարանագիրն Մատթէոս, գիրք երրորդ քերի և ի թուղթսն Պաւղոսի»: Հատուածք, ի Վենետիկ, 1826, էջ 1-2: Այնուհետև չեն համապատասխանում:

թեանց ...»:

Էջ 141բ. «Նորին հինգերորդ հատոր վասն Յերովդէի է և որդո նորա»:

Էջ 239ա-246բ. «Գրիգորի եռամեծի լուծումն համառօտ. խրատ գրչութեան Գէորգա վարդապետի, զոր նախ խնդրեալ էր ի նմանէ Կոստանդնա գրչի և ապա Գոներիգացոց Ստեփանոսի»:

Էջ 247ա-252բ. «Նորին Գրիգորի աշակերտի Յովհաննու լուծումն համառօտ դժվարինաց բանի ի գիրս գրչութեան Արիստակէսի ոռետորի» և այլն:

15. O – N 1278: Ավետարանների Մեկնություններ: 1625թ., 1644 թ.: Խոտանան (Ա), էջմիածին (Բ): Գրիչ Ղազար (Ա), Իսահակ (Բ): Կազմի ետևում փակցված թղթի վրա ձեռագիր գրված է. «Հանար 1, Մեկնութիւն Աւետարանին Սատթէոսի ի Ներսիսէ Շնորհալւոյ մեծաղիր, և ի Յոհան Օրձորեցոյ բոլորագիր գրեալ ի թուղթ բամբակի, շարակարգութեամբ Արիստակէս վարդապետի, թիւ և տեղի գրչութեան անյայտ: Յաւելուած. բովանդակէ յինքեան զՄեկնութիւն Ղուկասու յԻգնատիոս վարդապետէ գրեալ ի Ղազարայ ի խնդրոյ Մովսէսի Բաբունապետի... յամի ազգական ՌԳԹ և փրկչ. 1625 և Մեկնութիւն Յոհաննու Աւետարանին ի նաևայ վարդապետէ ասորոյ գրեալ ձեռամբ Իսահակ վարդապետի, հրամանաւ Մովսէս կաթողիկոսի, ի թուին հայոց ՈԼԹ և փրկչ. 1584 ի սուրբ էջմիածին: Ունի գլխատակարան»:

1ա էջում բոլորգրով գրված է. «Մեկնութիւն Աւետարանացն Մաթէոսի, Ղուկասու, Յովհաննու»: էջ 2ա-6ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին Սաղտէոսիյ»: էջ 6ա-7ա. «եկեղեցական պատմութենէ»: էջ 7բ. կիսախորան տիտղոսաթերթ նկարված մանուշակագույն և կապույտ (լեղակ) թանաքներով. վերնագիրը կարմիր թանաքով. «Ի ժողովումն Մեկնութեան սրբոյ Աւետարանի որ ըստ Մաթէոսի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգել և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբաւր Գրիգորիսի վերադիտողի հայոց»: Սկսվում է. «Սիրո գաւրութիւն գերագանց է» բառերից մանուշակագույն և կարմիր թանաքներով, առաջին երեք տողը բոլորագիծ երկաթագիր: էջ 10ա. ավարտվում է «. որ իշեն առաջին դուռն» (տպագրվածի «դրունքի»-ի փոխարեն) բառերով: Սկսվում է բուն մեկնությունը. «Գիրք լինելոյ որդոյ Դաւթի» բառերով, որտեղ Գ գլխատառ է, մնացածը նույն բոլորգիրն է: Ավետարանական բաղվածքներն ունեն հատուկ լուսանցագրություններ:

էջ 155ա. Մատթեոսի մեկնության ավարտը, որ սակայն Յովհաննես երգնկացունը չէ: էջ 155բ. Ներսես Շնորհալու աշակերտ Արիստակեսի հիշատակարանի ընդօրինակություն. «ԶԱրիստակես վարդապետ և զգովեալ աշակերտ նորին զեփրէմ յիշեսջիք ի Քրիստոս, զի նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչացն իմ ի յետ տեառն Ներսեսի: Յօրինակ էր այսչափ յիշատակարան Արիստակիսի, գայն որ կատարեալն էր չգտաք. անմեղադիր լերուք»: Ուրեմն, այս մեկնության մեջ կարելի է շատ տեղերից ընտրված հատվածներ բերել:

էջ 156ա-բ. «Ցանկն է Ղուկասու Աւետարանն»: «էջ 156բ. «Մեկնութիւն Ղուկայ Աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի» վերնագիրը, ապա մինչև 157բ էջը տրվում է Իգնատիոսի «Առաջաբանութիւնը» ուղղված «Գրիգորիս» կաթողիկոսին: էջ 158ա. «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի, արարեալ Իգնատիոսէ վարդապետէ ի խնդրոյ Գրիգորի հայոց կաթողիկոսի», որ սկսվում է. «Քանզի բազումք յաւժարեցին» բառերով (Ղուկ. Ա 1): էջ 277բ. Վերջ Ղուկասի Ավետարանի մեկնության և հիշատակարան ՌՅՂ (1625) թվի, որից բերում ենք հետևյալ քաղվածքը. «Գրեցաւ գիրքս այս և աստուածային տառս... ի բուականութեանս հայոց մեծաց ՌՅՂ, ի վիճակս Ստաթէի ի յերկիրս Աճանանու, ի գեաւղս Խոտանան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ի խնդրոյ Մովսես քաջ Րաբունապետին...»: էջ 279ա. Գլխազարդով և լուսանցազարդով, փոխված գրչությամբ. «Առաջաբանութիւն մեկնութեան Յովհաննու Աւետարանին»: էջ 282ա. «Երանելոյն Նաճայի Ասորոց վարդապետի մեկնութեան Յովհաննու սրբոյ Աւետարանին»: էջ 435ա. Մեկնության վերջը և գրիչ Իսահակի ՈԼԹ (1584) թ. հիշատակարաններ, որ գրել է «հրամանաւ տեառն Մովսես կաթողիկոսի, յաթոռն գերագահ սուրբ էջմիածնի» և ՈՃԼԹ (1684) թ., որը վերաբերում է գերությունից էջմիածին գրքի վերադարձմանը: «Արդ, գրեցաւ մեկնութիւն Գ գլխաւորի Աւետարանաց հրամանաւ տեառն Մովսես կաթողիկոսի, յաթոռն գերագահ սուրբ էջմիածնի, որ եղև կրկին լուսաւորիչ ազգիս և հոգիս՝ մերոյ և նորոգեց զսուրբ աթոռն էջմիածին: Եւ զայս գիրքս գրեալ ետ... ի բուականիս մերում ՈԼԹ ամին, ձեռամբ Իսահակայ վարդապետին»: ՈԼԹ Վ. Հակոբյանի հրատարակած հիշատակարաններում տրված է ՈՂԹ (1644 թ.), քանի որ ջնջման հետք կա գրչագրում[10]:

[10] «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ» (1641-1660 թթ.), հատոր Գ, էջ 139:

Բ – N 1312: Ներսես Շնորհալի. Մեկնութիւն Մատթէի: 1648 թ.: Նոր Ջուղա: Գրիչ Սահակ Ջուղայեցի: Ստացող Աւդէ Դարատա-ղենց:

էջ 2բ. Շնորհալու նկարն իր գրքով, նկարված ծաղուշակագույն և կապույտ բանաքներով: էջ 3ա. Մեկնություն խորանների առանց վերնագրի «Սատեանք...»: էջ 12ա. Մեկնության ավարտը և կարմիր գույնով նոր վերնագիր. «Ներսէսի եպիսկոպոսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի սակս Աւետարանին»: էջ 12բ. Նորից անվերնագիր. բնագիրն սկսվում է. «Աստուածային բարերարութիւն գերազանց է քան զբնութիւն» բառերով (տպագրվածում և այլուր «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն...»): էջ 18ա. Երկրորդ սյունակի ներքևում սկսվում է Մատթեոսի մեկնությունը. «Գիրք լինելոյ Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամի», որ հաջորդում է նախորդ գլխի վերջին տողերին («եւ որ իցեն առաջին դրունք»): էջ 102բ. Առաջին սյունակի 13-րդ տողում ավարտվում է Շնորհալու գրած մեկնության հատվածը (Մատ. Ե, 17). «... և կատարեսցեն գրեալքն գիտեն», ինչպես տպագրված մեկնության մեջ: Այնուհետև մեկնությունը շեղվում է Յովհաննես Երզնկացու տպագրված տարբերակից: էջ 264բ. «Տեառն Յովհաննու Ոսկեբերանի արարեալ մեկնութիւն գրոց չորրորդի, որ կոչի Յոհան Փարիսեցի. յԱւետարանին մեկնութիւն»:

17. Ը – N 4032: ժողովածու: 1659 թ.: Հրեշտակապետաց վանք (Սեբաստիա): Գրիչ Նորտունկ Յոռնկլացի:

էջ 4ա-8ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»:

էջ 9ա. «ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մաթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ, կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց»: Առաջին երկու տողը. «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն և այնքան մինչ...»:

էջ 11բ. Վերոհիշյալ տեքստը ավարտվում է. «... քանզի ահաւասիկ տեսանեմք բացեալ մեզ զդրունս աստուածայնոց բանից ի տեսանել և որ իցեն առաջին դուռն»: Այնուհետև նոր վերնագիր. ավելի շուտ մեկնության բնագիրն սկսվում է հետևյալ տողերով. «Գիրք լինելոյ որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու. Ջի՞նչ իսկ աւետարանիչս...»[11]: Շնորհալու հատվածն ավարտվում է 54բ էջի առաջին

[11] Տպագրվածում. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու.
Մեկնութիւն. զի՞նչ իսկ աւետարանիչս...».

սյունակի 5-րդ տողով. «... Ջի եւից զամենայնըն արդեամբք ի ծննդենէն մինչև յարութիւն. ըստ այնմ՝ թէ ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ և կատարեսցին գրեալքն»: Սխալմամբ 53ա էջում սև թանաքով նշված է, թե «մինչ աստ է Շնորհալւոյ. իսկ աստէն Օրբոորեցւոյն պատմագրեալ. Գ. եր. 86. 274»: Սինչդեռ մի մեկնություն էլ (Մատթ. Ե. 17) դեռ Շնորհալունն է: Մատիտով ստորին լուսանցքում նշված են Ավետարանի գլխահամարները, իսկ թանաքով ժամանակակից ձեռագրով գլխահամարը յուրաքանչյուր ավետարանական գլխի սկզբում: Հիշատակարանից պարզվում է, որ Շնորհալուն շարունակողը ոչ թե Օրբոորեցին է, այլ Արիստակես վարդապետը: Դրա համար էլ Օրբոորեցու շարունակությունը տեղ-տեղ է համապատասխանում: Արիստակեսին վերաբերող հիշատակարանը Վ. Հակոբյանը լրիվ չի բերում[12], որ այս է. «զԱրիստակէս վարդապետ և զգովեալ աշակերտ նորին գեփրէմ յիշեսջիք ի Քրիստոս. Ջի նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչացն ի մի յետ տեառն Ներսէսի: Յօրինակն այսչափ էր»: Ապա գրիչն ավելացնում է. «Յիշատակարան Արիստակիսի. զայն որ կատարեալն էր. չգտաք. անմեղադիր լերուք» (էջ 182բ):

18. R – N 5155: Մեկնութիւնք Աւետարանաց: 1669 թ.: Բաղէշ: Գրիչ Թումայ երեց. Դաւիթ վարդապետ Բաղիշեցի: Ստացող Դաւիթ վարդապետ Բաղիշեցի:

էջ 3ա - Կիսախորանով, լուսանցազարդով տիտղոսաթերթի տակ վերնագիրն է. «Սակս տասն խորանացն»: Երկու տող կարմիր նոտրգիրով ու թոչնագիր գլխատառով «Մատեանք»: Բնագրասյան աջ անկյունում սև գրված է. «Մեկն. Դուկասու. Իգնատիոս վարդապետ»: Պակասում է ութերորդ խորանի մեկնությունը:

2ա էջում ստացողի հիշատակարանն է. «Յիշեցէք ի Քրիստոս Աստուած զտրուպ մեղաւոր Դաւիթս, որ եւտու գրել զաստուածախօս մատեանս և ըստ տկար մտաց իմոց տնաւտե[ալ] սրբագրեցի»: 1ա էջում (մագաղաթյա պահպանակ) մանուշակագույն մելանով, մեծրոպ Տեր-Մովսիսյանի ձեռքով գրված է. «ՌճԺԸ-1669. Մ. եպ.» և սև մատիտով «Մեկ. Դուկ.»:

էջ 10բ. Լուսանցազարդ, կարմիր տառերով վերնագիր «Ներսես եպիսկոպոսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի. սակս Աւետարանին Մաթէոսի»: Երկու տող մանուշակագույն և կարմիր թանաքներով սկսվում է բնագիրը. «Սիրոյ զաւրութիւն գերազանց է քան զբնու-

[12] Վ. Հակոբյանի մոտ վերջին նախադասությունն է «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարանները» (1641-1660 թթ.), Հ. Գ., էջ 870:

թիւն և այնքան մինչ գի մոռացումն առ...»: 15ա էջում շարադրանքն ավարտվում է. «քանզի տեսանեմ մեզ բացեալ գործունս: Եւ ո՞ր իցեն առաջին դրունք»: Այս ավարտից հետո կա հիշատակարան. «Քաց և ստացողի սորին Դաւթի երանաշնորհ հոետորի և աստուածաբան վարդապետի զքո աստուածային դուռն տեր իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս, որում փառք ընդ Հաւր և Սուրբ Հոգոյդ, ամէն: Եւ ինձ պարտաւոր և սներես գրչիս Թումայի. մասն լիցի յադաւթից ընթերցողաց Սուրբ Գրոցս...» և այլն:

էջ 15բ - Կիսախորան և լուսանցազարդ: Մեկնության սկիզբը «Գիրք Ծննդեան լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու: Ջի՞նչ խաւսի աւետարանիչս...»:

էջ 89բ. Այստեղ վերևից 6-րդ տողում ավարտվում է Ճնորհալու հատվածը. «... թէ սիաւասիկ ելանենք յերուսաղէմ և կատարեսցին գրեալքն գիմէն»: Ամբողջ բնագրում լուսանցքներում ոլորուն նշաններ են դրված ավետարանական բաղվածքների համար: Սրան անմիջապես շարունակում է հաջորդ բաղվածքը (Մատթ. Ե, 18). «Մինչև անցցեն երկինք և երկիր, յոտ մի որ նշանախեց մի է ոչ անցէ յօրինաց և ի մարգարէից»: Այնուհետև շարունակվող մեկնությունը կտորներ ունի Օործորեցուց, բայց նրա գրածը չէ: Ըստ Ա.Տեր-Մկրտչյանի, «Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց» խորագիրը Արիստակեսինն է (սույն ձեռագրում այն չկա, բայց կա մեր մյուս ձեռագրերում) բաղկացած հետևյալ մասերից (ըստ Մատ. N 1253 ձեռագրի). Ա «... Ներսէսի հայոց կաթողիկոսի, ի խնդրոյ նորին եղբօրն Գրիգորիսի վերադիտողի հայոց» (էջ 15ա-134ա, «Սիրոյ գօրութիւն...»). Բ. «Նորին Յոհաննու (Ոսկեբերանի) ի Կապեռնաում. Գիրք երկրորդ» (էջ 134ա-224ա, սկիզբը. «Իբրև եմուտ Կապեռնաում» և այլն):

Շատ ձեռագրերում Արիստակեսի հիշատակարանը բացակայում է: Ի դեպ, աղբյուրների նշումով հարուստ է համարվում սույն ձեռագիրը: Այս կարգի այլ ձեռագրեր են Մատ. NN 1245, 1246, 1249, 1250, 1251, 1252, 1255, 1256, 1257, 1278, 1280, 1281, 1282, 1312, 4032, 5155, 6492 և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի NN 258, 283, 332, 458, 707, 889, 932, 1031, 2017 և այլն: N 1279 ձեռագրում արդեն Օործորեցին է ավարտել մեկնությունը[13]:

էջ 110բ. «Մատոյ պատարագ ասի վասն սրբութեան քո ...»: Այս

[13] Տես Հ. Ս. Անասյան. Հայկական մատենագիտություն. 5-ժԸ դդ., Հ. Բ, Երևան, 1976, էջ 772-775:

բաղվածքի մեկնութեան ավարտն է. «... Եթէ յիմէն եղև ամենայն ինչ և կատարեցաւ, թէպետ և չէիք ուղղելոց, այլ և գիմն արարի և կատարեցի»: Այս ավարտից հետո ուղղանկյուն գլխազարդ և վերնագիր (լուսանցազարդը հուշկապարիկ). «Տեառն Յովհաննու Ոսկեբերանին. Կապեոնաւում բանին տեառն մեկնութիւն», որի առաջին կարմիր տողն է. «Իբրև եմուտ ի Կապեոնաւում»:

էջ 185բ. Ուղղանկյուն գլխազարդ և խորագիր. «Յոհաննու Ոսկեբերանին Կոստանդնուպօլսի հայրապետի գիրք երրորդ Կեսարացւոյ Փիլիպպեա»: Առաջին տող. «Եւ ելեալ Յիսուսի ի կողմանս Փիլիպպեա Կեսարեայն...»:

էջ 185ա. Հիշատակարան գրչի և ստացողի և ստացողի մահից հետո. հետաքրքիր է վերջին հիշատակարանը. «Ես Բաղիշու քաղաքի վերատեսուչ տառապեալ տրուպ Մեսրովպ վարդապետս ի թուին ՌճԻԲ (1673) ելի ծովայշուրջ անապատն Լմայ, հանդերձ հոգևոր որդուովք իմովք Դաւիթ վարդապետաւն և Աւետիք բանասիրիւ: Դաւիթ վարդապետն վախճանեաց գկեանս իւր, գնաց առ Քրիստոս յոյս ամենի. որդւոց Որոտմանց տօնին. մինչ չէր Ը (8) եղբարսն կարդային և մարմին եղեալ եղև ընդ հովանեաւ սուրբ Գէորգեայ գօրավարին: Եւ այս աւետարանչացս մեկնիչս Ղուկասուն և Մատթէոսին. Դաւիթ վարդապետն էր իւր ձեռաց գրածն. եղաք յիշատակ բարի ի դուռն սրբոյն Գէորգեայ գօրավարին և ի վերա իւր գերեզմանին փակեալ...»:

էջ 288բ. Ավարտվում է բաղվածքով. «Յիշեցուք ասեն, գի մոլորացուցիչն այն ասէր. Թէպետ յերից աւուր յառնեմ: Եւ թէ մոլորեցուցիչ էր և սուտ պարծէր»:

էջ 289ա. Ուղղանկյուն գլխազարդ, ծոխ լուսանցազարդ: Վերնագիր նոտրգիրով. «Մեկնութիւն Աւետարանին, որ ըստ Ղուկա, ասացեալ Իգնատիոսի Աստուածաբանին և սրբոյ վարդապետի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի և լուսաւորչի. Սկզնեա տէր Յիսուս»: Առաջին տողը թոչնատառ. «Լնուլ գալյսլ իմաստ յաստուածային քո ըղձից...»: Ստորին լուսանցքում Դավթի հիշատակարանն է. «Ես Դաւիթ բանասէր ծառայ խնդրակատար Սուրբ Աստուածածնին աջողութեամբն Քրիստոսի սկսա և կատարեցի ի թվին ՌճԺԸ (1669)»:

էջ 494բ. Մեկնության ավարտ և ընծայական Իգնատիոսի առ Գրիգորիս, գրված կարմիր մելանով. «Ընկա՛լ ով աստուածային Գրիգորիոս...»:

էջ 495ա. Նախաբանություն Ղուկասի, որ սկսվում է այսպես.

«Սուրբ աւետարանիչն Ղուկաս անտիոքացի էր. ազգաւ ասորի. աշակերտ Գալիացոսի բժշկի...»:

Ձեռագրում «Սակս տասն խորանացն» գլխում որոշ տեղեր ընդգծված են կարմիր մելանով (տես բնագիրը) երբեմն տառ, երբեմն նախադասություն սկսող կիսատողը, որ ցույց է տալիս ստացող Դավթի *բանաստի* հորջորջման վավերականությունը: Այս գրքահատվածներում և գրքերում բաժանումներն արված են կարմիր տողերով և լուսանցքներում առկա են գանազան վկայությունների և հասկացությունների նշումներ: Օր. «Ներսէսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի...» գլխում բացի կարմիր տողերից լուսանցքներում գտնում ենք *Փիտոն, Գեհոն, Տիգր, աս(ե)ծ, եգ, արծ(իւ)* և այլ հասկացություններ, «Գիրք ծննդեան յիսուսոյ...» գրքում կան միայն կարմիր տողեր և գլխատառեր: «Տեառն Յովհաննու Ոսկեբերանին Կապեռնաում բանի տեառն մեկնութիւն» գլխի լուսանցքներում հանդիպում են վկայություններ *Եփ(րէմ), Կիր(ակոս), Գրի(գոր)*:

19. S – N 9240: Ժողովածու: 1671 թ.: Շտոռք: Գրիչ Մարգարիտ: Ստացող Արիստակես վարդապետ (գրչուհու եղբայրը):

էջ 1ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Ուղղանկյուն գլխագարդ առաջին սյունակում և լուսանցագարդ եղջյուրից դուրս եկող բուսագարդերի տեսքով: Վերնագիրը կարմրատառ: Առաջին տողը («Մատեանք...») զարդարուն գլխատառով և մանուշակագույն թանաքով բոլորգիր, երկրորդ տողը («աստուածագիծք և հոգեբուխ») կարմիր թանաքով: 1բ էջի լուսանցքում գրված է «Բ բուղք շրջէ. վայելչականն անդ կարդայ. յետո գիտորանսդ»: Յուրաքանչյուր խորանի մեկնության առաջին տողը կարմիր թանաքով է և տողահամարներով լուսանցքում կարմիր մելանով նշված: Ընդ որում, արտաքին լուսանցքում և սյունակների արանքում: Երկու բուղք հետո ստացվում է, որ շարունակությունը գրված է 3բ էջի երկրորդ և 4ա էջի առաջին սյունակում: Ընդ որում, որտեղ չեն նշված խորանների համարները, շարադրանքի մեջ կան կարմիր գլխատառերով ընդգծումներ:

էջ 4բ. «Ցանկն է գլխաւորագոյն բոլոր գրոցս: Ջի դիւրաւ գտցես զոր և կամիս»: Այն Տաթևացու մեկնության ցանկն է:

էջ 5բ. «Ցանգն է առաջին հատորին մեկնութեան»:

էջ 6բ. «Աւգննա Յոգի Սուրբ Աստուած ճշմարիտ»: Դրախտի չորս գետերի և նրանց խորհրդով մեկնվող չորս ավետարանիչների մասին:

էջ 9բ. «Արդ չորս կենդանիք. զոր ետես եզեկիէլ»: Միայն այս

գովածքն է սկսվում կարմիր տողերով:

էջ 10ա - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն: եւ վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ. տես գեղբայրութեան յեղանակն ի լուծմունս պարապմանց»: Փաստորեն սա Տաթևացու գրած խորանների մեկնությունն է, որ կապված է իր իսկ կազմած Մատթեոսի Ավետարանի մեկնության հետ:

էջ 13ա. «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառոտ հարցմամբ»: Վերնագիրն առանց գլխագարդի է:

էջ 36ա. «Ցանգն է երկրորդ հատորին»:

էջ 38ա. «Նորին երկրորդ հատոր մեկնութեան քաղուածոյս»:

էջ 76ա. «Ցանգն է երրորդ հատորին»:

էջ 77ա. «Նորին երրորդ հատոր մեկնութեան քաղուածոյս»:

էջ 95ա. «Ցանգն է չորրորդ հատորին»:

էջ 96ա. «Նորին չորրորդ հատոր ի քանն յայնմ ժամանակի»:

Այնուհետև գալիս են հինգերորդ և վեցերորդ հատորները:

Համդիպակաց էջերի վերին լուսանցքում գրված է հատորը. օր., «Ա հատոր», «Զ հատոր» և այլն:

էջ 186ա. «Գրիգորի Եռամեծի եւ քաջ հռետորի եւ իմաստասիրի աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ մակաւուն Կախելոյն և սերձ Յիսուսի: Ի յիղձ բաղձանաց բանասէր անձանց նորին աշակերտաց արարեալ լուծումն համառօտ Յառաջաբան Աւետարանին Յովհաննու լուծումն»:

էջ 190ա. Ուղղանկյուն գլխագարդ և աբաղադով լուսանցազարդ:

14բ էջի առաջին սյունակի հիշատակարանում բոլորգրով նշվում է, որ ստացողը Արիստակես վարդապետն է, իսկ երկրորդ սյունյակում Արիստակեսը հայտնում է, որ ինքը է «աշխարհաւ Բգնունեաց, ի Տահանգէն Ղարայ» և պանդուխտ է «ի յերկիրն Նախիջևանու»: Քույրը, «գծող տառիս», կուսակրոն է, աճունը Սարգարիտ, որ երբ «յարբունս հասեալ սկիզբն արարեալ գրչութեան արուեստի մինչև ի ծերութեան ժամանակի»:

184ա-185ա էջերի հիշատակարանում իրեն Արիստակեսը համարում է «վտարանդիս ի հայրենեաց» (184ա): Նա ցանկանում է «սուրբ գրոյս, որ է աւետաբեր քաղուածոյ սուրբ Աւետարանին գլխոյն Սաբեոսի և Յոհաննու»: Նա ասում է. «... Եւտու գրել զայս հարազատ քեռն իմոյ Մարգարտի ի յերկիրս յերնջակայ ի կուսաստանն Շաւարու, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի թվահաշվութեան ազին աւուրեան ՌՆ և Ի ամին, յիշխանութեան մեծի ար-

քային պարսից Շահ Իսմայիլի երկրորդի և ի հայրապետութեան սրբազանին Յակորայ Ջուղայեցւոյ» (184բ):

185ա էջում գրչուհու հիշատակարանն է, որ շատ հուզիչ ներկայացնում է ծեր կնոջ տառապանքները («... զերիս հասակս անցուցի ի վերայ երկրի ամենևիմբ անմասն ի բարեաց գործոց, ոչ ի մտաց, ոչ ի բանից և ոչ ի գործոց հաճոյ ինչ մատուցի Աստուծոյ, այլ զանձն իմ մատնեցի գազանին յափշտակողի, եկէր գիս և եկուլ գիս և թոյնք մահաբեր վիշապին թափեցան ի վերայ իմ և գանեցայ բազմավէր հարուածովք յամենայն դիմաց խղխեայթեալ և խարանաւ լցեալ...», 185ա): Խնդրում է հիշել և իր ընկերուհի կույսերին: Շատ հետաքրքիր է վերջին ոտանավոր-հիշատակարանը, որ ասես դամբանական է քրոջ և եղբոր վրա: Գրչությունը նման է արևելյան բոլորգրի, հիշեցնում է Հովհաննավանքի և Սաղմոսավանքի ԺԲ դարի ճառընտիրները (Ձեռ. N 1522, 3777):

20. Т – N 1281: Ժողովածու: Գրիչ Աւետիս: Ստացող Եփրէմ վարդապետ: էջ 7ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Նեղակագույն և մանուշակագույն գլխազարդ և լուսանցազարդ: Կարմիր նոտրգրով վերնագիր, առաջին տողը զարդարուն գլխատառեր, երկրորդ տողը կարմիր: Կարմիր տողերով ու լուսանցանիշերով օժտված են կարևոր տեղերը, ինչպես նախորդ ձեռագրերում: էջ 10ա. «Յեկեղեցական պատմութենէ»: Նույն ձևով: Առաջին տող. «Առաքեալք էին ԲԺ-ան և այլ աշակերտք ՅԲ և այլ բազումք...» (ինչպես տպագրվածում): էջ 11ա. «Ժողովումն մեկնութեանն Աւետարանին ըստ Մատթէոսի ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց օգնեա Յիսուսի Քրիստոս և ուղղեա»: Առաջին տող. «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն և այնքան...»: Վերջը «... քանզի ահաւասիկ տեսանեմք գործունս աստուածայնոց բանից առ ի տեսանել: Եւ որ իցեն Առաջին դուռն»: Տպագրի համեմատ ունի որոշ տարբերություններ: էջ 13բ. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Դաւթի...»: Շնորհալու մեկնությունը շարունակվում է մինչև 42ա էջը (երկրորդ սյունակ, տող 3-4) և ավարտվում «... ըստ այնմ թէ ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ և կատարեսցին գրեալքն»: Այնուհետև նույն տառերով շարունակվում է քաղվածքը Ավետարանից. «Մինչև անցցէ երկինք և երկիր յոտն մի որ նշանախեց մի է ոչ անցցէ օրինաց և ի մարգարէից մինչև ամենայն եղիցի»: Հաստատութիւն աստուածային բանիցն նշանակէ, թէ չէ հնար անցնել մինչև

յամենայն եղիցի, որպես այլուր ասէ, թէ դիւրին է անցանել քան օրինացն նշանախեցի միոյ անկանել...»: Սա համապատասխանում է տպագրվածի Ծործորեցու հատվածին:

էջ 50բ. Գլխագարդ չունի. լուսանցազարդ, ապա երկրորդ սյունակում կարմիր տառերով. «Նորին Յոհաննու ի Կապեռնաում գիրք երկրորդ»: էջ 76բ. «Նորին Յոհաննու Ոսկեբերանին. Գիրք երրորդ Կեսարացւոյ»: էջ 97բ. «Տեառն Յօհաննու Ոսկեբերանին գիրս չորրորդ Փարիսեցւոցն»: Սա չկա հրապարակված բնագրում[14]: Սկիզբը Մատթ. ԻԲ, 34. «Իսկ փարիսեցիքն իբրև լուան թէ պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին». դարձեալ պատճառ դնէ աւետարանիչն, վասն որոյ պարտ է լսել...»: էջ 118ա. Հատվածի վերջը. «... շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում ընդ Հօր և Հոգւոյն Սրբոյ փառք պատիւ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ամէն»: Ապա Արիստակեսի հայտնի հիշատակարանն է:

էջ 118բ. «Երևեցաւ նշան յերկինս. եւ ահաւասիկ վիշապ հրեղէն մեծ, որոյ էին գլուխ է և եղջիւրք ժ, և ի վերայ գլխից նորա է խոյր. և տուտն նորա քարշէր զԳ մասն աստեղաց յերկնից. և ընկեաց զնոսա յերկիր ի տեսանել...», «Յոհաննու»: Սա «Հայտնության» ԺԲ, 3 հատվածն է, որի մեծ մեկնություն է տրված: Կազմի ետևում փակցված թղթի վրա նշված է. «Մեկնութիւն Յայտնութեանց Յօհաննու»: Այնուհետև գալիս են Առաքել Սյունեցու անունով մեկնություններ Դավթի Սահմանքի, Պլատոնի, Արիստոտելի ինչ-որ ասույթների:

21. U – N 4618: Ժողովածու: 1569, 1693, 1695, 1696, 1706, 1714 թթ.: Ձեռագիրն ընդօրինակվել է տարբեր քաղաքներում, տարբեր գրիչների կողմից (երեք վայր և հինգ գրիչ): Վան, Երզրո՞ւմ, Մանծկերտ:

էջ 1ա. «Այս է պատմութիւն Ադամայ և Եվայի վարուցն, նախաստեղծիցն Աստուծոյ...»: էջ 6ա. «Քարոզ ի բանս Թագաւորութեանց, որ ասէ հրամայեաց Դաւիթ բռնել զժողովուրդն»: Առաջին տողը. «եւ զի նահապետքն երկար ապրէին վասն ուսուցանելոյ զաստուածապաշտութիւն որդւոց իւրեանց...»: էջ 9բ. «Հարցումն Լուսաւորչին Գրիգորի ընդ հրեշտակապետին Գաբրիէլի» (առաջին տող. «Ասէ սուրբն Գրիգոր ընդ հրեշտակին. Յորժամ առնուս զհոգի մարդոյն...»): էջ 10բ. «Ի լուսաւոր սուրբ գրոցն սրբոյ վարդապետի Վարդանայ Մեծի»: Բնագրից բերում եմ որոշ հատվածներ. «Եւ արդ,

[14] «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպոլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս», Գիրք կրկին, Վենետիկ, 1826:

վասն անմարմնոց դասուց գրեմք, որք բնակեալք են ի վերին քաղաքն Աստուծոյ ի նորն Սիոն: Ի գրոց է (7) դասս ստացաւ, և այլոց ոմանց Ը (9) դասս սահմանեցաւն նոքա, և ոմանց ասացաւ, թէ բոլորապատ քառակնածն շուրջ կան զաթոռովն Աստուծոյ, մի յետ միոյ, և մի քան զմի հեռաւորագոյն: Եւ այլ ասացաւ թէ իբրև զաստիճան սանդոց մի քան զմի բարձրագոյնք է և գլխ[աւոր] ամենայնի բարձրագոյն խորանն լուսոյ կայ, հաստատեալ յանարուեստ և ի սոսկալի յաթոռն Աստուծոյ: Եւ զօրք անմարմնոց են բաժանեալ յերիս խորանս, և մի խորանն յերիս դասս: Յառաջին խորանն կան սերովբէքն և քերովբէքն և աթոռքն բազմաչեայ, առ որս հանգուցեալ է զարմանագործն Աստուած թագաւորն բարձանց: Եւ են նոքա մի քան զմի մերձակայ առ Աստուած: Եւ ի միջի խորանն կան տերութիւնքն, և զօրութիւնքն և իշխանութիւնքն: Եւ մի քան զմի խոնարհագոյն: Եւ ի վերջի խորանն կան պետութիւնքն և հրեշտակապետքն և հրեշտակքն: Եւ ի ներքին դասս մերձ առ ազգի մարդկան են դասք հրեշտակացն, քան զայլ անմարմինս զուարթունս: Եւ են յերկնային զօրսն մեծ և փոքր, որպէս և են ի լուսաւորքդ, որք կան յերկինս: Եւ հրամանաւ Աստուծոյ հրեշտակքն բերեն առ ազգս մարդկան, որպէս և առնէին առ մարգարէսն և առ դասս առաքելոցն և առ ամենայն սուրբ...»: Այնուհետև քարոզների և խրատների մի շարք: Այս հատվածն արձագանքում է խորանների մեկնության որոշ հատվածի:

էջ 41բ. «Աւրհնութիւն յետ քարոզի տաճկի բառով: Թարգմանեալ Յամբեցւոյ Իգնատիոսէ, քարոզող քահանայէ, այժմ ի Վան բնակեցելոյն»: էջ 45ա-46բ. «Պատմութիւն փախստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵգիպտոսի»: Յավանաբար պարականոն պատմություն, որ պիտանի է պատկերագրության համար: Այնուհետև մինչև 57ա էջը զանազան քարոզներ:

էջ 55բ. «Վասն յորովայնամոլութեան ի գրոց Վարդանայ»:

էջ 57ա. «Սակս տասն խորանացն» (նոտրգիրն այստեղ այլ է): էջ 62ա. «Եկեղեցական պատմութիւն». առաջին տողը. «Առաքեալքն էին երկոտասան և այլ աշակերտք...»: Գրված է բոլորգրով և համահնչուն է տպագրվածին (Մատթեոսի մեկնության): Մնացած նյութերից պատկերագրության համար կարևոր պետք է համարել. «Սրբոյն Յոհաննու Մանդակունեցւոյ արարեալ Պատմութիւն յաղագս փոխման տիրամայր սուրբ Աստուածածնին, թէ ո՞րպէս եղև կամ ո՞րպէս շնորհեցաւ անարատ պատկերն ի փայտն կամ յո՞յր ծեռն կամ թէ ո՞վ եղև պատճառ խնդրոյն և կամ թէ ո՞վ եբեր ի Հայք: Զայս մեզ ստուգաբանեաց մեծ իմաստասէր այրն Աստուծոյ Մով-

սես...» (նկատի է առնված Խորենացին) (79ա): Այս բոլորգիր է, Վանում գրված Գրիգորի ձեռքով, ՌՆԽԲ թվին (1693):

22. V – N 1254: Ժողովածու: ժէ դ.: Թուղթ: Երկսյուն:

էջ 1ա. «Մեկնութիւն խորանաց Աւետարանին» (վերնագիրը կարմիր մելանով), էջ 5բ. Եկեղեցական պատմությունից, որի առաջին տողն է. «... և այլ բազումք, բայց սակայն [ամենայն առա]քելոց անտի Տեառն մերո պատմութիւն գրեալ Մատթեոս և Յոհաննէս...»: Վերնագրի տեղը և առաջին տողը բաց է թողած: Համահնչուն է տպագրվածին: էջ 7ա. «Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին ըստ Մաթէոսի ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ. կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց. աւգնեայ Քրիստոս Աստուած և ուղղեա»: Առաջին տող. «Սիրոյ զօրութիւն գերազանց է...»:

էջ 9ա. «Հարցումն զանազան, զոր ասացեալ է սուրբ վարդապետին Վանական և պատասխանիք բարառնաբար...»:

23. W - «Մեկնութիւն սուրբ Աւետարանի որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համար 17. հինգերորդ գլխոյն և անտի աւարտեալ յերանելոյն Յոհաննու Երզնկացւոյ որ և կոչի Օրծորեցի», տպագրեալ ըստ ընտիր օրինակաց վեհափառ հրամանաւ տեառն Կարապետի արքի եպիսկոպոսի և երանաշնորհ պատրիարգի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, արդեամբ մ[ա]հ[տե]սի Աբրահամ ամիրայի Անկեցւոյ յիւրում իսկ տպարանի: Յամի Տ[եա]ռն 1825. մարտի 16:

Սա հենց այն տպագրությունն է, որ մեզ ելակետ է ծառայել ձեռագրերը նկարագրելիս: էջ 5-12. «Մեկնութիւն սակս տասն խորանացն»: էջ 13-15. «Եկեղեցական պատմութեան»: Առաջին տողը «Առաքեալք էին երկոտասան և այլ աշակերտք յեօթանասուն երկու, և այլք բազումք...»: էջ 16-21. «Աստանօր խօսի Շնորհալին ի դէմս եղբօր իւրոյ տեառն Գրիգորի կաթուղիկոսի, որոյ հրամանաւ յանձն առեալ է զմեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, վասն որոյ ասէ»: Առաջին տողը «Սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն...»: էջ 23. «Աւետարան ըստ Մատթէոսի», Գլուխ Ա, Բան 1. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի...: 106 էջում ավարտվում է Շնորհալու մեկնության հատվածը: էջ 107. «Գլուխ Ե. Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի: Հաւաքեալ նուաստ վարդապետի Յոհաննու Երզնկացւոյ որ և ասի Օրծորեցի»: Սկիզբը. «Գերապատիւ և բարեհռչակ հայրն մեր ըստ հոգւոյ, և երկրորդ

լուսաւորիչն սուրբ եկեղեցւոյ... կորովամիտ և համեղաբան կաթուղիկոսն հայոց Ներսես Կլայեցի...»: Ուշագրավ է, որ այս լրումի մեջ ասվում է նաև, որ Շնորհալուց հետո. «Ոմանք նախքան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարագրութեան նորին, սակայն ոչ էր կարգաւոր որպես սրբոյն, այլ հատակոտոր արարեալ զբանս առաջին մեկնչաց. նաև զբնաբանութիւն Աւետարանին արտաքս մերժեալ. ուստի ոչ գայր դիւրաւ յինացումն ընթերցողացն: Յաղագս որոյ ես... ապիկար ոգիս Յոհան Երզնկացի սպասաւոր բանի բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի՝ ի վանս Ծործորու կոչեցեալ... եդեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոց Աւետարանին Մատթէի լնլով զբերի նորին ըստ կարողութեան իմում, շահեալ և օգտեալ յառաջին սրբոցն... Եւ արդ եղև գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի հազար երեք հայրուր տասն և վեց...»: Փաստորեն սա հիշատակարան է, որ մեզ ոչ մի ձեռագրում չի հանդիպել առայժմ: Նա գրել է մեկնությունը «բանաստր անճանց» խնդրանքով և անտեսել Արիստակես մեկնիչի բանաքաղությունը: էջ 108. Սկսվում է Յովհաննես Երզնկացու մեկնությունը:

24. X – N 1279: Ժողովածու (1655-ից հետո): Սպահան: Գրիչ Բարսեղ: էջ 5ա. «Մեկնութիւն խորհրդացն Աւետարանին»: էջ 9բ «Եկեղեցական պատմութենէ»: Առաջին տողը «Առաքեալք էին երկոտասանք...»: Վերնագիրը կարմիր մելանով: էջ 12ա. «Ժողովումն մեծ մեկնութեան սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց: Առաջին Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց»: Վերնագիրը կարմիր թանաքով: Սկիզբը «Սիրոյ զօրութիւն գերազանց է, քան զբնութիւն...»: էջ 15ա. Բնագիրն ավարտվում է. «... Քանզի ահաւասիկ տեսանենք բացեալ մեզ գործունս աստուածայնոցն բանիցն առ ի տեսանել. և որ իցեն առաջին դուռն»: էջ 15ա. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյ Դաւթի...»: Մեկնության շարադրանքը սև թանաքով է, միայն գլխատառն է կարմիր: էջ 62բ. Ավարտվում է Մատթեոսի Ավետարանի մեկնության Շնորհալու հատվածը. «... ըստ այնմ թէ ահաւասիկ ելանեմ յերուսաղէմ և կատարեսցին գրեալքն»: Չիք տպագրվածի «գյինեն» բառը: Ապա նույն էջում շարունակվում է. «Լրումն բերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի հաւաքեալ նուաստ վարդապետի Յոհաննու Երզնկացոյ որ և Ծործորեցի կոչեցեալ»: Նույն բնագիրն է, ինչ որ W

տպագիր օրինակում: Նույնն են նաև ավետարանական հատվածների մեկնությունները: էջ 339բ. Ավարտվում է բնագիրը նույն ձևով, ինչ W օրինակում: Նույն էջում ձեռագրի հիշատակարանն է. «Արդ գրեցաւ և աւարտեցաւ զսուրբ աւետարանչի մեկնութիւնս Մատթէոս և Ղուկաս ի քաղաքին Շօշ, որ կոչի Իսպահան և ի սուրբ ուխտիս Ամենափրկչի վանից ի թագաւորութեան պարսից փոքր Շահաբասին, ի հայրապետութեան հայգազան սեռիս տեառն Յակոբ Կաթողիկոսի և ձերոյ արհեպիսկոպոսի Դաւիթ սրբազան վարդապետի...» և այլն:

էջ 342ա. «Ցանկ է Ղուկասու Աւետարանին»: էջ 342բ. Ցանկն ավարտվում է, և սկսվում է վերնագիրը. «Մեկնութիւն Ղուկայ Աւետարանին, զոր արարեալ է Իգնատիոսի եպիսկոպոսի ի խնդրոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի»: Սկիզբը նույնն է, ինչ տպագրվածում. «Լնուլ զայս իմաստ աստուածային քոյ ըղձից պարտ համարեցայ ով քահանայապետական գլուխ և սիւն...» (Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, ի խնդրոյ տեառն Գրիգորիսի հայոց կաթողիկոսի», ... Արդեամբք աստուածասէր մահտեսի Աբրահամ ամիրայի Ակնեցւոյ Մահտեսի Յօհաննեան, յամի փրկչին 1824...):

25. Y – N 1247: ժԳ դ.: Կազմի ետևում սև թանաքով գրված է. «Ձմր. 6. Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի ի Ներսիսէ Շնորհալւոյ 16 համարն 5-րդ գլխոյն ութածալ բոլորագիր, գրեալ ի թուղթ բամբակի, անյայտ թուականու գրչութեան ու անուան գրողին...»: Վերջում նշված է. «Չունի յիշատակարան»: Ընտիր մագաղաթյա պահպանակից հետո թղթի վրա նոտրգրով գրված է. «Մեղա Տէր, մեղայ Տէր, մեղայ, վայ ինձ, վայ ինձ, վա՛յ»: Ավելի ներքև ավելի հաստ տառերով. «Գրքի կողի գիր գրելն մեղք է»:

էջ 2ա-8բ. Կոպիտ կիսախորանի լյունետների (կամարաղեղների) ներսում նոտրգիր վերնագիր է գրված. «Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին և այլ բանք, ժողովածու»: Հավանաբար ուշ է գրված: Առաջին տողը ծաղկագիր գլխատառով և կարմիր երկաթագրով, երկրորդը մանուշակագույն և երրորդը կարմիր բոլորգրով (այնուհետև խիստ երկրաչափական սև բոլորգրով) «Մատեանք աստուածագիծք և հոգեբուղխ...»: Յուրաքանչյուր խորանի մեկնությունը սկսվում է կարմիր տողով:

էջ 9ա. Բարակ ուղղանկյունածև գլխազարդ. վերնագիր կարմիր բոլորգրով. «Ներսէսի եպիսկոպոսի եղբօր Գրիգորի կաթողիկոսի վասն Աւետարանին Մատթէոսի»: Առաջին տող. «Աստուածային բա-

րերարութիւն գերազանց է քան զբնութիւն. և այնքան մինչ զի մոռացումն առնել...»:

էջ 13 բ. Գլխագարդով սկսվում է. «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդո Դաւթի, որդո Աբրահամու: Ձինչ խօսի աւետարանիչս...»: Մինչև 28բ էջը նույն բոլորգիրն է, ասես քանոնով գծած, յուրաքանչյուր քաղվածք ու մեկնություն սկսվում է կարմիր գլխատառերից: 28բ էջում գրչությունը փոխվում է, 29ա էջում թեք բոլորգիր է, բայց ավելի ազատ տառերի միջև եղած տարածությունները: Որոշ էջերում մեկնության ներսում ավետարանական քաղվածքները կարմիր տառերով են: Մինչև 98ա էջի կարմիր տողը գրեթե համապատասխանում է Ճնորհալու մեկնությանը (կան որոշ շեղումներ և բառափոխություններ): Այստեղ ավարտվում է Մատթեոսի մեկնության հետևյալ հատվածով. «Դարձեալ տուն մարմին և բնակիչ հոգին և լոյս բարոգութիւն առաքելոցն, որովք լուսաւորեցան ոգիք մարդկան գիտութեամբն Աստուծոյ»: Դա տպագրված գրքում ավարտվում է 104 էջում, որին անմիջապես հաջորդում է Մատթ. Ե 17 հատվածի մեկնությունը:

էջ 98ա. «Իսկ ձգելն Սովսէսի գառանն ի վերա ծովուն...» հավանաբար մեկնումն է Եզեկիելի: Այնուհետև կան մեկնություններ սաղմոսների, մարգարեների, կիրակիների ու շաբաթների, երբեմն վերնագրերով, որ փոքր չափի կարմիր բոլորգրով են, առաջին տողը օխրա և երրորդը կարմիր, քիչ հանդիպող է «Ներսէսի եպիսկոպոսի Տարսոնի ի Դուկայ Աւետարանէ» (165ա) մեկնությունը:

Բացի մեկնություններից կան և արտաքին գրվածքներ, ինչպես էջ 337բ. «Գրիգորի Եմէսացոյ Սահմանք զանազանք Արտորոշեալք ըստ սրբոց ի ծայրագոյն վարդապետաց. Յաղագս տարբերական այլևայլ անուանց»: էջ 340ա. «Արիստոտելի» (կարմիր քանաքով) վերնագրի տակ քաղվածք. «Արդ, գոլ զեակն յորժամ է և գոչ եակն ոչ գո[յ]ր յորժամ ոչ է....», ապա «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» (կարմիր թանաքով) մեկնություն. «աստանոր յայտնեսցէ»: էջ 344ա. «Սահմանք փիլիսոփայականք» և այլն:

Կան մանր գրվածքներ մարմնի մասերի, տունկերի, բժշկության, բնության երևույթների մասին (Նյուսացի. Անանիա, Արիստոտել), օր. Յաղագս ծովու, Յաղագս երկնային գարդուց, Յաղագս Կաթինդ Ծրոյ, Յաղագս հիւսիսայինն աստեղաց, Յաղագս լուսնի, Յաղագս կենդանատեսակացդ, Յաղագս աստեղաբաշխութեան և ապա մեկ-մեկ կենդանակերպերի մասին (օր. Յաղագս Առիւծուն, Յաղագս Խեցգետնոյն, Յաղագս Կշռոց, Յաղագս Ձկանց...):

էջ 371բ. «Հողմ արևելեայ որ կոչի Ապիղիոտես, ելանէ անծանօթ երկրէն սինեացոց...»:

էջ 372բ. «Յուսով խնամոցն աստուծոյ Մեկնութիւն խորանաց Աւետարանին. Սկզնեա Յիսուս Քրիստոս Տէր և Աստուած»:

էջ 376ա. «Վարդան վարդապետի արարեալ Հայր մեր որ յերկինս...»:

էջ 379ա. «Գիր հաւատոյ խոստովանութեանՀայաստանեայց եկեղեցոյ գրեալ ի Ներսէսի եպիսկոպոսէ յեղբօրէ կաթուղիկոսի հայոց տեառն Գրիգորիսի ի խնդրոյ գերայլպատիւ փեսայի ինքնակալ թագաւորի Հոռոմոց»: Ձեռագիրը փոփոխվող գրչություն ունի: Օգտագործվում են *ѳ*, երբեմն *ѳ* և *ѳ*, *ѣ*, կա նաև *ѣ* նախդիրի անտեղի գործածություն:

26. Z – N 2041: Ժողովածու: ԺԷ դար (1676 թ. առաջ): Գրիչ Կարապետ երեց, երեմիայ: Ստացող Աստուածատուր Վանեցի: Բովանդակում է Տօնապատճառ, Քարոզք և այլն: Ներկայացնում եմ միայն այն նյութերը, որոնք ուշագրավ են արվեստի տեսության և պատկերագրության տեսակետից:

էջ 4ա. «Ի տօնի Դաւթի մարգարէի և Յակոբու եղբօրն Տեառն, սրբոց վարդապետաց ասացեալ»: էջ 11բ. «Ի յիշատակի Նախավկային»: էջ 17ա. «Ի տօնի սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի» և այլն: էջ 26ա. «Յաղագս յայտնութեան Երագալուցին»: Գրված է Ծննդյան, Բեթղեհեմի, Հովիվների այցի և առհասարակ ողջ Ծննդյան շրջանի մասին: էջ 63ա. «Շարական Եփրէմի Ասորւոյ»: էջ 72բ. «Գրիգորի Աստուածաբանի Ազազացոյ ի Յայտնութեան Տեառն» մինչև 76ա էջ: էջ 111ա. «Կարգ և խորհուրդ Յարութեան Ղազարու»: էջ 115ա. «Խորհուրդ գալըստեան Տեառն յերուսաղէմ յաւուր Ողոգոմենին»: էջ 164բ. «Յովհաննու Ոսկեբերանին ի Գ[որ]ծ[ո]ցն մեկնութենէ սկիզբն»: էջ 171ա. «Յաղագս Իջման Սուրբ Հոգւոյն յառաքեալսն»: էջ 181ա. «Յաղագս տօնի Վարդավառին»: էջ 192բ. «Ի ննջու[մն] Աստուածածնօր կուսին» և այլն:

Կան անտարեթիվ հիշատակարաններ: Բայց հուգիչ է 1676 թ. հիշատակարանը. «Յունիսի է (7), որ է պահք Գիւտի նշխարաց սուրբ Լուսաւորչին յաւուր չորեքշաբթի, ոմն ժանդ և արեանարբու նզովեալ և երէք թշուառական այր յանկարծակի հարեալ դանակաւ զԱստուածատուր զանմեղ որդեակն ի տեառ ժամացն մահացաւ. Տէր Յիսուս Քրիստոս դասեցոյ զսա ըստ քոց սրբոց մարտիրոսացն, քանզի և սորայս հեղաւ վարդագոյն արիւն ի տարապարտուց: Թուին ՌԾԻԵ (1676)» (176բ):

27. b – N 4139: Տօնապատճառ: 1267 թ.: Հաղբատ: Գրիչ Յովսէփ, Տիրացու, Գրիգոր: Թերթ 489. 25x17: Յիշատակարան գրչի՝ 51ա, 134ա, 252ա, 386ա, 438ա, 488բ և այլուր:

1ա - Հետնագոյն շրջանի հիշատակարաններ: Որպես վերնագիր հազիվ ընթերցվում է. «Սկիզբն տաւնից և հոգևոր ուրախութեանց ամենայն հաւատացելոց. է տաւն Ծննդեան և Յայտնութեան Տեառն...»:

8բ - «Սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի». Սկիզբ. «Աստուածազարդ շուք տաւնիս լուսակազմ երևմամբն իւրով...»:

13բ - «Պետրոսի և Պաւղոսի»: Սկիզբ. «Աստուածարար սքանչելեացն բազումք են գոր իմանամք և ասել անգարանամք»: Գրիչը սխալվելով նորից կողքից ճիշտն է գրում ու շարունակում:

18ա - «Յոհաննու և Յակոբա»: Սկիզբ. «Աստուածահրաման պատեր ունէր Իսրայէլ, սկիզբն տաւնիս ևս մեծարանաւք ընդունել և ահիւ և գկատարումն կրկին պատուով և մեծաշուք փառաւք, գի մի թուիցին յագեալ և ծանծրացեալ տաւնողքն...»:

28ա - «Յաղագս Յայտնութեան ճրագալուցին»: Սկիզբ. «Ըստ արարչագործ նորոյ արարչութեանս սկիզբն հիմն և արմատ է Աստուածայայտնութեան տաւն...»:

30ա - «Քրիստոս ծնեալ ճառին պատճառ»: Սկիզբ. «Աստուածայայտնութեան խորհուրդ. քարոզեալ ծանուցաւ ազգի մարդկան...»:

40ա - «Նախեգան: Յաղագս խորանաց Աւետ. Մաթէոսի»: Սկիզբ. «Մատեանք աստուածագիծք...»:

45բ - «Պատճառք և թելադրութիւն չորից Աւետարանացն, թէ որպէս գրեցան և յորքան ժամանակս և թէ որպիսի աւրինաւք յառաջինսն խորհուրդ նոցայ երկնէր և գայր»: Սկիզբ. «Յարևելս ասի տնկեալ գդրախտն, ուստի և աղբիւր ելանէր գետահետեալ հորդիւք, յորմէ և չորս առաջս բաժանին, որոց անուանքն այսինչ է. Փիսոն, Գիհոն, Տիգրիս, Եփրատէս, որով արբեալ պարարտանայ երկիր, այլաւքն հանդերձ...»:

51ա - «Ներսիսի կաթողիկոսի ժողովեալ մեկնութիւն Աւետ. Մաթ. ի խնդրոյ նորուն եղբաւր Գրիգորիսի վերադիտողի հայոց: Յովսէփ գրիչս յիշեայ ով եղբ. աղաչեմ»: Սկիզբ. «Սիրոյ գաւրութիւն գերազանց է...»: Վերջ. «... և որ իցեն առաջին դրունք» (54բ):

54բ - «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյ Դաւթի, որդոյ Աբրահամու: Ջի՞նչ խաւսի աւետարանիչս, զՄիածնէ Որդոյ Աստուծոյ...»: Մեկնությունն ավարտվում է Գ գլխի վերջով և այսպես. «... և ոչ հրեշտակս կամ հրեշտակապետս պատրաստ է լինել մեզ

Մկրտութեամբն այլ Որդիս սիրելիս Աստուծոյ» (ինչպես տպագրվածում W):

62բ - «Պատճառ սրբոյ Յովհաննու Կարապետին»: Սկիզբ. «Բազմադիմի են ճանապարհ իմաստութեան աստուածեղէն տաւնից...»: Կան և այլ տոների մեկնություններ, որ մեր նյութին անմիջապես չեն վերաբերում:

116ա - «Կարգ և խորհուրդ յարութեան Ղազարու»: Այնուհետև սկսվում են ճառեր:

119ա - «Էր ոմն հիւանդ Ղազար»: Սկիզբ. «Բազումք ի մարդկանէ յորժամ տեսանեն զի սրբութիւնք և հաճոյք Աստուծոյ չարչարեալ լինին»: Լուսանցքում գարդի մեջ. «Ոսկերեր»-Ոսկերերան և ապա լուսանցքներում վկայություններ «Եփր», «Ոսկ», «Ստ», որոնք շարունակվում են:

130բ - «Խորհուրդ յաւանակաւ գալըստեան Տեառն յԵրուսաղէմ»: Սկիզբ. «Զսուրբ Արմաւենեացս աւր, զոր և աւրհնեալ անուանեցին իմաստունք եկեղեցւոյ. աւրինակ իմանամք միւսանգամ գալըստեան Քրիստոսի...»:

134ա - «Յովսէփ գրիչ. Պատճառ գալըստեան Տեառն յԵրուսաղէմ Քերոբի ումեմն ասացեալ ի բանն, որ ասէ. Եւ գան յերիքով: Աւետարան ըստ Մարկոս»: Սկիզբ. «Ջմեծասքանչ և զտիեզերածագ ծագումն իմանալի արեգական արդարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի զգալի և յիմանալի արարածս. նախանկար տեսութեամբ Հոգոյն Աստուծոյ...»:

Բացի եկեղեցու հայրերի ճառերից, կան նաև գրվածքներ այդ նույն հայրերից բազմաթիվ վկայակոչումներով: Հետաքրքիր է գրվածքը դրախտի գետերի մասին, որոնց հետ կապվում է և անգին քարերի թվարկումը: Արժե բերել քաղվածաբար.

«Եւ գետ ելանէր յԵդեմա ոռոգանել զդրախտն, և անտի բաժանի չորս առաջս: Անուն միումն Փիսոն, նա է, որ զատէ զամենայն երկիրն Եւիլատա, անդ ուր ոսկին է. և ոսկի երկրին այնորիկ ազնիւ է. և անդ է սուտակն և ակն դահանակն: Եւ գետն երկրորդ Գեհոն. նա է, որ պատէ զամենայն երկիրն Եթէոպիա: Եւ գետն երրորդ Տիգրիս. նա է, որ երթայ յանդիման Ասորեստանեաց: Եւ գետն չորրորդ Եփրատէս: Փիսոն գետ ելանէ յարևելից հեւսիսոյ ի Յենաւոն լեառնէ և գայ ի հարաւակողմն Հնդկաց և մտանէ ի ծովն Կարմիր: Հնդիկք Գանկէս կոչեն և պարսիկք Զեհոռտք, յոյնք Ինդոս, երբայեցիք Փիսոն: Եպիփան ասէ, թէ յոյնք Հնդիկէս կոչեն: Իսկ գԵւիլատ գներքին հնդիկսն ասեն. անդ է ոսկին ազնիւ, որ բուսմամբ է, որ պահեն

մրջմունքն մեծամեծք... Մաւսէս կարկէհան ասէ զսուտակն և յԱկանց գիրն կայծ ասի և գտանի ի յԱփրիկէ...»: Այնուհետև խոսում է Փիսոնի և նրա մոտի անգին քարերի մասին, որ տեղ-տեղ դժվարընթեռնելի է, խոսվում է մյուս գետերի, Հայաստանի հետ նրանց կապի (Տիգրիս, Եփրատ), դրանց տարբեր անունների մասին: Բավականաչափ հետաքրքիր և մութ բնագիր է: Այնուհետև սկսվում է գետերի համեմատությունը ավետարանիչների հետ, որ հետագայում օգտագործում է Գրիգոր Տաթևացին իր Մատեռոսի Ավետարանի մեկնության մեջ:

277ա - «Մեկնութիւն սուրբ Աւետարանին Յոհ. Ի սկզբանէ բանս»: Լուսանցքներում կան բազմաթիվ հղումներ Եփրեմ Ասորուց, Յովհաննէ Ոսկեբերանից, Ստեփանոս Սյունեցուց, Նաննա Ասորուց և այլն:

223ա - «Յաղագս Նաւակատեաց..., զոր արարեալ է սրբոյ Գրիգ. Աստուածաբանի»:

305բ - «Ի Նընջումն Աստուածածնայրն»: Սկիզբ. «Ի գերազանց լուսոյն պայծառացան ամենայն արարածք...»:

Ձեռագիրը շատ հարուստ է իր բազմապիսի մեկնություններով: Հիշատակարաններից. «Ջոգնամեղ և զոչ արժան գրոց գրոցս գրութեան գՏիրացու գրիչ յիշեցէք ի Տէր» (252ա): «Ո՛վ պատուական և բարեփառ եղբայր. յիշեա ի Տէր զաշխատող գր[իչ] և գհոգոյեղբայրն ի Յուսէփ...» (այլ գրչութեամբ շարունակվում է. «... ըզՍկրտիչ աճարժանս», որի սկիզբը չի ընթերցվում), 188բ էջում, որ նորոգված է, հիշատակարանից կարելի է որոշել, որ այս «Տէրունական տաւնից պատճառն» կոչվող ձեռագիրը պատվիրել է Տիրացուն «յաբոռակալութեան Տէր Յով[աննէս]ի, մեծ հոետորի և սուրբ վերադիտողի: Եւ ի մէջ համագումար եղբայրութեան ա[ռ]եալ մեր ի Վանանդ գաւառու ի Կարս քաղաքէ պանդխտանալ աստ և բազում ինչ աշխատել, վասն որոյ կրկին մաղթանաւք... հայցեմք» և այլն: Սինչդեռ էջի ստորին մասում սև մելանով նոր ձեռագրով գրված է. «Թւ. ՉժՁ (1267) ի վանս Հաղպատու, Յոհաննէս հոետ.»:

Գրության յուրահատկություններ. բարոյն, բագոյց, փառսն *փ̃ռ̃ս* փառս, սեփհականս, թել, գթութեանց *գ̃թ̃ց* գթութեանցն, ըմբէ, սրոբեական, ծաղկերանկ, գունովք, գԻսրայէղ, գանճուբս, նկարել *նկ̃ր̃ել* նկարեալ, յաւրինուածովք, սպասաւորութեամբք, հաւատոն, սաղոմոնեան, Սեբեկայ, նախամարք, բերանովք, սղալեցաք, ընճայից, մերաւք, ձերաւք *մ̃ր̃ք̃* մերովք ձերովք:

28. d – N 1245: Ներսես Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի: 1613 թ.: Համիր: Գրիչ Յովաննէս երէց: Ստացող Մաղաքիա Թօխաթեցի: Յի-

շատակարան գրչի 269բ: Հետագայի 1ա (1631), 2բ (1671), 1ա (1672):

1ա - 1631 թ. այս հիշատակարանը ուշագրավ է այնքանով, որ Կ. Պոլսի Իսկյուտարը արդեն նշում է իբրև ծեռագիր գրքի հավաքման կենտրոն: Այնուհետև նոտրգիրով սկսվում է մի այլ հիշատակարան, որը երկու տարեթիվ է բովանդակում մեկը 1672 թ. գրված ինչ-որ Ամետարանի, մյուսը խորանների ոտանավոր մեկնություն, որն ընդօրինակվել է հավանաբար Տիվրիկում 1647 թ.: Քանի որ մեկնությունը գրված է ուշ շրջանում, մենք այն տալիս ենք որպես խորանների ԺԲ մեկնություն: Այդ հիշատակարան-մեկնությունը ոտանավոր շարադրանքն է Գրիգոր Տաթևացու գրած խորանների մեկնության:

10ա - Կարմիր բոլորգրով վերնագիր Բ սյունակի վերջին տողում «Յեկեղեցական պատմութ[ենէ]»: 12բ - Կարմիր բոլորգրով վերնագիր «Ժողովումն մեկնութեան Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ, կարգեալ և յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց. առաջինն Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց: Աւգնեա Քրիստոս Աստուած և ուղղեա»: Սկիզբ «Սիրոյ գաւրութիւն գերազանց է...»:

Շնորհալու մեկնությունն ավարտվում է 87ա էջի Բ սյունակում «... ըստ այնմ, թէ ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ և կատարեսցին գրեալքն»: Այնուհետև («Մինչև անցցեն երկինք և երկիր յոմտ մի...») Արիստակեսի մեկնությունն է, որտեղ օգտագործված են Հովհան Ոսկեբերանի մեկնության հատվածներ: Դա հաստատվում է 269ա էջում Արիստակեսի արդեն հայտնի հիշատակարանով:

Արիստակեսի ԺԲ դարի հիշատակարանի ընդօրինակությանը հաջորդում է գրչի հիշատակարանը. «Փառք և աւրհնութիւն և գոհութիւն ամենասուրբ Երրորդութեան, եռանծնեա աներեւ էութեան, մի բնութեան, մի աստուածութեան և անմահ և անվախճան թագաւորութեան, յամենայն գոյից և գոյեղինացս, ի սեռից և ի մասանց արարածոց, յանտարրից և տարրեղինացս և ի մեր յանպիտան նուաստութեանց, վերառաքեցի փառաբանութիւն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտումն աստուածախաւս մեկնութեանս սուրբ Մաթեոսեան Աւետարանիս տկար և տարտամ ձեռամբ, անարհեստ և փծուն գրչի մեղապարտ Յովանիսի, լոկ անուամբ իրիցու, յամի ՌԿԲ (1062) թուի, ի Համիք մայրաքաղաքի, ի դռան սուրբ Սարգսի զաւրավարին սուրբ Կիրակոսի և այլ սրբոցս, որ ընդ հովանեաւ սոցին պարփա-

կիմք ի յըստացումն և ի վայելս գերապանծ րաբունւոյն, խրթին և աննիրհակաւն հսկողի, տէր Մաղաքիա աստուածաբան Թօխաթցոյ, յիշատակ իւրն և բարի ծնաւղաց իւր...» (269ա-բ): Այնուհետև ստացող Մաղաքիա վարդապետ Թոխաթեցու հիշատակարանն է:

29. ե – N 1253: Ներսես Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի: 1590: Մալաքիա: Գրիչ Մարտիրոս եպիսկոպոս: Կազմող Յոհաննես: Հիշատակարան գրչի 353բ, կազմողի 353բ (1598):

1ա - Դեղին, մանուշակագոյն և կապույտ գծանկար կիսախորանով և լուսանցազարդով տիտղոսաթերթ: Վերնագիրը կարմիր բոլորգիրով գլխազարդի մեջ. «Մեկնութիւն Խորանացն Աւետարանին»: Առաջին տողը գլխատառերով է. 2-5 տողերը կարմիր բոլորգիր: Հաջորդ էջերը բոլորգիրին մոտիկ նոտրգիր են: 11ա - «Յեկեղեցական պատմութիւն»: 15ա - «Յեկեղեցական պատմութեան» ավարտից հետո կարմիր գրով լուսանցքի խաչանշանի կողքին. «Ժողովումն Մեկնութեան սրբո Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, բանից իմաստուն վարդապետաց եկեղեցու կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջին»: 15բ էջում վերնագիրը շարունակվում է. «Ներսէսի հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօրն Գրիգորիսի վերադիտողի հայոց. Սկզնեայ Քրիստոս Աստուած իմ»: Մնացած ամեն ինչ համապատասխանում է Շնորհալու մեկնությանը և Սրիստակեսի կազմած քաղվածո շարունակությանը ընդհուպ համառոտ հիշատակարանը իր յուրահատուկ ավարտով. «Յաւրինակս այսչափ էր յիշատակարանն Սրիստագիսի. զայն որ կատարեալն էր, զայն չգտաք. անմեղադիր լերուք» (350ա): Այնուհետև գրչի հիշատակարանն է, որ սկսվում է. «փառք»-ով և ապա տալիս կոնկրետ տվյալներ. «Ի շրջագայութեան թուականիս հայ տումարիս Ռ և ԼԹ երորդի, քառասներորդի ի Մելտենի գաւառիս, որ կոչի տաճիկ բառով Մալաթիեայ, ի մենաստանիս, որ կոչի յանապատ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ընդ հովանեաւ սրբոյ Յովանիսի և սրբոց անարծաք բժշկացն Կոզմայի և Դամիանոսի և սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի և սրբոյն Սոփիայի ի յառաջնորդութեան և ի հայրապետութեան հայոց ազգի տեառն Ազարիայի հայոց կաթողիկոսի, աթոռակալ և պատրիարգ սրբոյ աթոռոց Երուսաղէմի և ի սպասաւորութեան և ի վերակացութեան սուրբ ուխտիս, մեղաւոր Մարտիրոս եպիսկոպոսի, որ չեմ արժանի կոչել ի կարգ առաջնորդութեան» (353բ): Նույն էջում կազմողի հիշատակարանն է. «Ոխ և է կազմող Յոհաննես, Մասրվանց գիւղ»:

30. f – N 1300: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւնք Մատթէի, Յով-

հաննու: 1456: Գրիչ Մատթեոս: Ստացող Իգնատիոս աբեղայ: 1ա - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Ձեռագրի մասին մանրամասն տես է մեկնության բաժինը (M):

31. g – N 1301: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, Քարոզք: Սևան: 1451: Գրիչ Դանիէլ աբեղայ: 2ա - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Ձեռագրի մասին մանրամասն տես է մեկնության բաժինը (N):

ԲՆԱԳԻՐ Դ
ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՄԲԱԳՐԱԾ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

1. A – N 2273: ժողովածու: 1252 թ.: Խորանաշատի վանք: Գրիչ Գրիգոր: Ստացող Ստեփաննոս քահանա: Կազմի ետևին փակցված թղթի վրա ձեռագրով «Նմր. 43 քարոզս ժողովածու գիրք քառածալ բոլորագիր գրեալ ի թուղթ բամբակի «ի Գրիգոր գրչէ Ռ-ն եղծեալ», «ի հայրապետութեան Ներսիսի աղուանից կաթուղիկոսի», ապա այլ ձեռագրով «ի վանս Խորանաշատու ի յաջորդութեամբ Գրիգորես վ[ա]րդ[ա]պ[ե]տի ձեռնասուն զառակի Վանական վ[ա]րդ[ա]պ[ե]տի»: Այնուհետև թղթի վրա գրված է «Ցանկ մատենիս... Վանա[կան]... [նա]խերգակ...»:

էջ 1ա – «Բաղձանք բանի բնաւորել յոգի բանական...»: էջ 8բ - «Վարդապետի Վանականի յարմարումն Սաղմոսաց մեկնութեան. «Ինձ յոյժ մեծարո(ւ) եղեն բարեկամք քո Աստուած»: Սկիզբ «Սիտրժումն եղբարց խնդիր արկեալ խորհուրդ»: էջ 37բ - «Յոհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Գործոց». առաջին տող «Բազմաց անգիտելի է մատեանս...»: էջ 50ա – «Վանական Վարդապետի վասն սաղմոսի «Քահանայի քո զգեսցին զարդարութ»: Առաջին տող «Նախահայրն Ադամ անցանել...»: էջ 60բ - «Պատճառ սուրբ Աւետարանին Յովհաննու ասացեալ սուրբ վարդապետին». առաջին տող «Որք արտաքին հանդիսիցն...»: էջ 81ա – «Երեմիա մարգարէ. մարգարեացաւ Երեմիա»: էջ 89ա – «Մեկնութիւն Յոբայ». սկիզբ «Բազում բանս մեզ ած...»: էջ 149ա – «Աւետարան ի Յոհաննէ. «Յաւժամ ետ գնայ ի ձեռս». սկիզբ «Բարեգործութիւն անմտաց չարութիւն...»: էջ 162ա - «Ի Մաթէոսի Աւետարանէն «Ջի որ այն փայլակն». սկիզբ «Մարգարէքն և առաքեալքն Հոգովն Սստուծոյ...»: էջ 173ա - «Վասն Աւետարանացին խորանացն». սկիզբ «Յաստուածագործ արարածս հատածք են Բ. գի կէսք...»: էջ 176ա - «Բանք իմաստասիրաց աբենագոց». սկիզբ «Պլուտարքոս ասէ յաճախեա ի խորհուրդ»: էջ 182բ - «Տնահամարք Աւետարանին...» և այլն:

Բոլորգիրը արևելյան է, որը աչքի է ընկնում գրերի ազատ տեղաբաշխումով: Ամեն վերնագիր չէ, որ սկսվում է կարմիր տառով: Խորանների մեկնության վերնագիրը բոլորգիր է՝ վանկերով անջատած: Բառերը գրեթե միմյանցից անջատ են: Յուրահատուկ է որոշ տառերի (յ, ի, չ, ճ և այլն) գրությունը: Վերնագրերը անջատելու համար գաղափարագրեր հիշեցնող նշաններ են դրված:

2. B – N 5611: Ժողովածու: ԺԹ դ.: Գրիչ Թումայ քահանա, անանուն: Թերթ 252: 17x12: Միասյուն: Հիշատակարան գրչի 120բ, 127ա:

էջ 1ա - «Յաղագս տաւնի որ ի ԺԶ սեպտեմբերի»:

էջ 2բ - Սև մելանով մանրատառ «Հարցմունք գանագանք Վանական վարդապետին և պատասխանի բարառնաբա[ր]»: Ապա շարունակվում է. «երկու աղալ[ի] մի երկանս, միևն առցի և միւսն թողցի. պատ. Առաջնոյն յայտնի է որբոցըն բանք...»: Լուսանցքներում քաղվածքների նշաններ և հեղինակների անուններ, որոնցից կան վկայակոչումներ «Վասն Հռոմա», «Փիլոն»: Կան և մանրատառ վերնագրեր. «Եւ Փիլոնի գրեալ այլաբանութիւն. Հարց»: 14բ-15ա էջերում լուսանցքներում գրված են թեմաներ, որոնց շուրջը գնում են «հարց ու պատասխանիքը». օր. «Մեռաւն», «Մանանայն», «Քանի էր պատարագ որ մատաղ լինէր», «շուշանի ծաղկելն» և այլն: Այդպես է նաև հաջորդ էջերում: «Վասն խորանաց Աւետարանին» հատվածը փաստորեն մտած է «Հարցմունքի» մեջ:

3. C – N 7443: Ճառընտիր: 1352-1358, 1575 թթ.: Քիմճակ (Ղրիմ, Ս), Իլով (Բ): Գրիչներ Անտոն քահանա, Մելքիսեդ (Ս), Ամիր Սեթ (1377 թ.): Առաջին երեսուն թերթերը վերևի եզրից բայքայված են խոնավությունից:

էջ 1ա-1բ - Ցանկ Ա-ից մինչև ՃԻՋ: Վերջին ՃԻՋ (126-րդ) ճառը «Տիրամայր պատկերին. միահամուռ ՃՕ ճառք»:

էջ 2ա - Մանուշակագույն թանաքի երանգներով շքեղ տիտղոսաթերթ գլխազարդով, զարդանախշերով և լուսանցազարդերով: Վերնագիրը կամարաղեղներից մեկում. «Ի մեծի աւուր ճրագալուցին ծննդեան և յայտնութեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, երանելոյ Սպերիանոսի եպիսկոպոսի եմասու- ասաց ի Ծնունդն Քրիստոսի յերուսաղէմ քաղաքի»: Ցանկում (էջ 1ա) տրված է առաջին տողը և ոչ թե վերնագիրը:

էջ 4բ - Հիշատակարան. «Քրիստոս Աստուած որ մարմնացար վասն մեր և տղայաբար յորովայնի անարատ կուսին Մարիամու և ծնար անճառապէս, Քրիստոս սուրբ ծննդեամբդ ողորմեա Քրիստոսատուր աբեղային և ծնաւղաց իւրոց և ամենայն ազգականաց զարմից և անպիտան գծագրողիս շնորհեացես գթողութիւն անճառ բանդ...»: Այնուհետև կարմիր բոլորգրով վերնագիր «Ի մեծի աւուր յայտնութեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Ազիազու եպիսկոպոսի, ասացեալ ի ծնունդն Տեառն»: Արծավատերևներով լուսանցազարդ, ապա սկիզբ «Քրիս-

տոս ծննեալ ի...» առաջին տողի առաջին տառը բոչնագարդ, մնացածները մանուշակագոյն:

Մուտավորապես այս ձևով (հիշատակարան սև բոլորգրով, որ տեքստից փոքր է, հեղինակի անունը և վերնագիրը կարմիր տառերով, առաջին տողը սկսվող երկու զարդատառերով և երկաթագրով, լուսանցազարդ բուսա-թոչնային) նաև մյուս վերնագրերն են:

էջ 143բ - Լվովում գրված հիշատակարան. «Ի թուականութեան յաբեղական տումարի ՌԻՀ (1575) ամի և ի յամսեանն սեպտեմբերի, Իլով քաղաքի»: Յովհաննեսը կրկին կագմում և նորոգում է մատյանը և ևշում. «Պակասութիւն ճառից գրեցի»: Իրոք, 144ա էջից գրչությունը փոխվում է, թեք կիլիկյան գրի փոխարեն (Ղրիմ) տեսնում ենք ուղիղ արևելյան բոլորգիր:

էջ 144ա - «Յաղագս զարմից Սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչին եւ բաւանդակ պատմութիւն սրբոյն Ներսէսի հայոց հայրապետի» (կարմիր տառերով): Առաջին տող՝ «Յութ եւ ի տասն ամի մեծին Տրդատա...» (լուսանցքում Գրիգոր Լուսավորչի պատկերն է գիրքը ձեռքին): Խորանների մեկնությունը ձեռագրի վերջում է և, բնականաբար, ոչ առաջին գրչի ընդօրինակածը:

էջ 583ա - «Մեկնութիւն խորանացն Աւետարանին»: Սկիզբ՝ «Առաջին խորանն Դ դեղաւքն կապուտակ. ծիրանի. կարմիր. բեհեզ. վուշ. երկրագոյն նկարեալ...»: Գլխահամարը գրված է ՃԻԵ: Սակայն ցանկում (էջ 1բ) այդ գլխի համար այսպես է գրված. «ՃԻԵ. Փոխմանն Տիրայմաւրն Բ ճառ. ՃԻՉ. Տիրամաւր պատկերին միահամուռ ՃՕ ճառք»:

էջ 583բ - «Երանելոյն Քերդողի Ստեփաննոսի Սիւնեցու պատասխանի առ վարդապետն Աղուանից»: Սկիզբ՝ «Սկիզբն և հիմն ամենայն պահոց զուրբաթ և գչորեքշաբաթ գտաք առաքեալական հրամանաւն յաշակերտաց Տեառն և զպահ սուրբ Խ-որդացն...»:

էջ 584ա - «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի: Յաղագս եկեղեցեաց կարգաց: Թէ գիտէ խորհուրդն»: Սկիզբ՝ «Վէմն անտաշ և անկոփ եդեալ ի հիմունս կանգնեալ ի մէջ խորանին և տեղոջն սեղանոյն աւրինակ...»:

էջ 585ա - «Խորհուրդ և կարգաւորութիւն եկեղեցոյ»: Սկիզբ՝ «Ուրախ լեր եկեղեցի սուրբ, իմանալի դրախտ, աստուածագործ հրաշք և սքանչելիք...»: Այնուհետև մի երկու գրվածքից հետո. էջ 596բ. «Զաքարիա Յայոց կաթողիկոսի և Մուսիսի Քերդողի ի փոխումն Աստուածամաւր և պատկերի նորա»: Գլ. ՃԻԵ: Սկիզբ՝ «Արարիչն արարածոց արար զլուսաւորս մեծամեծս և փոքունս զարեգակն և զլու-

սին և զաստեղս և զջահս և զկանթեղսն և զմոմեղենս...»: էջ 601բ - Գլ. ՃԻԸ. Վասն պատկերի սրբոհոյն»: Սկիզբ «Հրաւիրեալ լինի Աստուածամայր փոխմամբ առ Սիածին Որդին իւր...»: էջ 604ա - «Գլ. ՃԻԹ. Եւ յել հրաման յԱւգոստոս կայսերէ»: Սկիզբ «Վասնզի առաջին աշխարհակալ թագաւոր...»: Այնուհետև 608բ էջից հիշատակարաններ:

4. D – N 2042: Ժողովածու: ԺԴ դար: Գրիչ Սիմաւոն: Ստացող Աստուածատուր աբեղայ: Արևելյան բոլորգիր: Հիշատակարան գրչի 38բ, 305ա, ստացողի 259բ:

էջ 1ա - Կարմիր բոլորգրով վերնագիր «Յիշատակ Պետրոսի և Պաւղոսի Յոհ. Աւետ. մեկնութենէն»: Սկիզբ «Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճաշեցէք...»: էջ 3բ - «Պատճառ սուրբ Աւետարանին. վասն Յոհաննու»: Սկիզբ «Որք արտաքին հանդիսից լինին տեսողք յորժամ զբոնամարտիկն ոք մեծազարդ բարեկամաց և սիրելեաց պսակ...»: էջ 6բ - Նույն մեկնությունից. սկիզբ «Դարձաւ Պետրոս և տեսանէր զաշակերտն զոր սիրէր Յիսուս, որ անկաւ զլանջաւքն նորա...»: էջ 9բ - «Սուրբ վարդապետաց ասացեալ վասն Յայտնութեան և Ծննդեան և հաւատոց հաստատութեան ընդդէմ երկաբնակացն. վկայութեամբ Տեառնեղբարւրն և Կիւրղի Ե[րուսաղէ]մա հայրապետին»: Սկիզբ «Յորժամ ոք կամեսցի շինուածս հաստատել յառաջագոյն, գհիմունս մեծամեծ վիմաւք հաստատէ, զի յաւիտե[ա]ն անշարժ կայցէ շինուածն...»: էջ 11բ - «Յեկեղեցական պատմութենէ. զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետին»: Սկիզբ «Ի յարութենէն Քրիստոսի մինչև ցԹեկտոր հռոմայեցոց եպիսկոպոսն, որ է երեքտասաներորդի Հռոմ քաղաքի յետ Պետրոսի...»: Շարունակվում են վերնագրերը, որոնք «Տոնապատճառի» գլուխներն են Տիրոջ Ծննդի, Երկրորդ Գալստյան, Հոգեհանգստյան և այլ տոների առթիվ:

303բ – «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Գրեթե ամեն մի տողի վրա կա քաղվածքի նշան: Սկիզբ «Առաջին խորանն չորք դեղաւքն կապուտակ...»: 304բ – «Երանելոյն քերթողի Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Բ (2) պատասխանոյ առ վարդապետն Սղուանից»: 305ա – «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի յաղագս եկեղ. աւրինութեանցն կարգաց, թէ գինչ է խորհուրդն զԳրոցս. յիշեա աղաչեմ»: Սկիզբ «Վէմն անտաշ և անկոփ եդեալ ի հիմունս...»: Կան նաև այլ նյութեր, այդ թվում 321ա էջում «Զաքարիայի Հայոց կաթողիկոսի և Սուսիսի Քերթողի ասացեալք ի Փոխումն Աստուածածնայրն և պատկերի նորա», որ սկսվում է. «Արարիչն արարածոց

արար գլուսաւորս մեծամեծս և փոքունս. զարեգակն և գլուսինն և գաստեղս, և զջահս և զկանթեղս...»:

Յաճախ վաղակատար դերբայներում *ծայ* վերջավորության փոխարեն գրվում է *ծ* (օրինակ, զարդարել *մեզ* զարդարեալ), սակայն մեծ մասամբ կրճատման նշան է դրվում:

5. E – N 4853: ժԵ դար: Ճառընտիր: Գրիչ, ստացող Անտոն երեց: Հիշատակարան գրչի 29ա, 41ա, 115բ, 294բ, 397ա և այլն: Գրեթե փոված բոլորգրով: Նյութերը մասամբ նման են D (N 2042) ձեռագրի բովանդակած նյութերին:

Խորանների մեկնությանը նախորդում են «Ներբողեան գովեստ հաւօրէն գնդից սրբոց առաքելոցն երկոտասանից նախապատիւ պետաց գլխաւորաց» (366ա), սկիզբը՝ «Անբառամ սիրոյն ծադիկք...»: «Յաղագս եւթանասուն եւ երկու առաքելոցն» (371բ), սկիզբը՝ «Դամեք որ յետ սպանանելոյն Կայինի զեղբայր գիւր զԱբել...»:

374բ - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Շարունակվում է 388ա էջում: Կազմողը խառնել է թերթերի տեղերը: Ավարտվում է 389ա էջում: Այնուհետև. «Զաքարիայի Հայոց կաթուղիկոսի եւ Մովսիսի Քերդողի ասացեալ ի Փոխումն Աստուածամաւր եւ պատկերի նորին» (389ա):

6. F – N 2719: Ներսես Շնորհալի. Մեկնութիւն Մատթէի: 1683 թ.: Հիշատակարաններ. 6ա, 7բ, 15բ, 30ա, 35ա, 142ա:

6ա - «Էմմանուէլ» բառի մեկնություն և հիշատակարան:

6բ - Բազմագլուխ վիշապի պատկեր՝ մեղքերի մակագրություններով: Վիշապի պատկերը մեղքերի թվարկումով յուրահատուկ հիշատակարան է:

7ա - Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին: 7բ - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Սկիզբ՝ «Խորանն առաջին չորք տեղօք կապուտ, սպիտակ...»: 8ա - «Ժողովումն Մեկնութեան սրբոյ Աւետարանին, որ ըստ Մաթէոսի. ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցւոյ, կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց առաջի Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբօր Գրիգորիսի վերադիտողի հայոց ազգի. օգնեա Սուրբ Հոգիդ Աստուած»: Սկիզբ. «Սիրոյ գօրութիւն...», վերջ՝ «և որ իցեն առաջին նախադուռն»: Ունի գեղեցիկ գծանկար կիսախորան:

10բ - «Աւետարան ըստ Մաթէոսի և Մեկնութիւն»: Սկիզբ՝ «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի որդոյ Դաւթի...»:

47ա - Ավարտվում է Շնորհալու գրած հատվածը. «...ի ծննդենէն

մինչև գյարութիւն. ըստ այնմ թէ ահաւասիկ ելանէ յերուսաղէմ և կատարեսցեն գրեալքն»: Դա Բ սյունակում է: Ապա. «Մինչև անցցեն երկինք և երկիր յովտ մի...» բաղվածքն է ու մեկնություն, որ տարբեր է Յովհ. Ծործորեցու մեկնությունից: Արիստակեսինն է, որ բաղվածքներ ունի Ոսկեբերանից. «Նորին Յովհաննու ի Կապեռնաում. Գիրք երկրորդ» (57բ):

Այս անփույթ ծեռագրում, որ ըստ հիշատակարանի գալիս է նախագաղափար օրինակից, տարօրինակ կերպով տրված է ոչ թե երրորդ, այլ չորրորդ մեկնությունը: Հենց խորաննների մեկնությունից անմիջապես հետո գրիչը հիշատակարանում ասում է. «Ով պատուական եղբայր, ամէն եղծեալ էր, չկարացի գրել, տեղիս տեղիս գիր մնաց. չէ կատարեալ բան, մի նեղանար» (7բ):

ԲՆԱԳԻՐ Է
ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ԽՄԲԱԳՐԱԾ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Մի շարք ձեռագրերում առաջին բնագրին անմիջապես հաջորդում է հինգերորդ բնագիրը հիմնականում «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց» վերնագրով: Հիշյալ ձեռագրերում առաջին բնագիրը վերագրված է Ներսես Շնորհալուն, թեև այն բովանդակող հնագույն ձեռագրերը ԺԱ-ԺԲ դարերի են (տես առաջին բնագրի ձեռագրերի նկարագրությունը և ընդհանուր ներածությունը):

1. A – N 3714: Ավետարան: 1419 թ.: Տիպնա վանք (էջ 2ա-4բ): Չունի բնագրի վերջին տողերը («Կարպիանոս եգիպտացին... յաւիտեանս ամէն»):

2. B – N 7772: Ավետարան: 1443 թ.: Խլաթ:

3. C – N 198: Ավետարան: 1628 թ.: Բաղեշ: Վերնագիրն է «Յայլմէ վարդապետէ ասացեալ վասն խորանաց սրբոյ Աւետարանին» (էջ 37բ-48ա):

4. D – N 5634: Ավետարան: 1647 թ.: Վերնագիրն է. «Յայլմէ վարդապետի ստացեալ վասն խորանաց Աւետարանին» (էջ 33ա-36ա):

5. E – N 2111: Ժողովածու: 1645-1675 թթ.: Վերնագիրն է. «Վասն խորանաց Աւետարանին և համաբարբառացն» (էջ 235ա-237ա):

6. F – N 3602: Ավետարան: 1655 թ.: Կարին: Վերնագիրն է. «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց Աւետարանի» (էջ 14բ-21բ):

7. G – N 1258: Ժողովածու ԺԸ դ.: Վերնագիրն է. «Յայլմէ վարդապետէ ասացեալ վասն խորանաց սրբոյ Աւետարանիս» (էջ 5ա-9բ):

ԲՆԱԳԻՐ Զ
ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

1. N 5448: ժողովածու: ԺԹ դ.: Գրիչ Մարտիրոս քահանայ, Սարգիս: Ստացող Մովսես վարդապետ: Գրչի հիշատակարան՝ էջ 138ա, 226բ:

էջ 1գ - «Պատճառք և թելադրութիւնք Չորից Աւետարանացն, թէ որպէս գրեցան և յորքան ժամանակս և թէ որպէս աւրինակաւք յառաջինսն խորհուրդ սոցա երկնէր և գայր մինչև ի տնաւրէնութիւն»: Սկիզբ՝ «Յարևելս ասի տնկեալ գդրախտն ուստի և աղբիւր ելանէր գետահետ[եալ] յորդիւք, յորմէ և չորս առաջս բաժանին, որոց անուանք այսինչ և այս, որով արբեալ պարարտանայ երկիր այլովքն հանդերձ...»: Տիտղոսաթերթը բաղկացած է ուղղանկյունածև գլխագարդից և խաչով պսակվող լուսանցագարդից: Վերնագիրը կարմիր բոլորգրով, առաջին տողը գարդագիր գլխատառ և խառը միջին մեսրոպյան և արևելյան բոլորգիր: Ողջ բնագիրն ընտիր բոլորգիր է (ԺԹ դ. վե՞րջ), որ կիլիկյան ազդեցությամբ է կամ հենց կիլիկյան:

էջ 28ա. «Սեկնութիւն խորանացց Աւետարանին սրբոյ»: Սկիզբը՝ «Առաջին խորան Գ դեղաւք նկարեալ խորան...»:

էջ 30ա. «Պատճառ սուրբ Աւետարանին Յոհաննու սրբոց վարդապետաց ասացեալ»: Սկիզբ՝ «Որք արտաքին հանդիսիցն լինին տեսողք, յորժամ զբօնամարտիկ ոք մեծագաւր ի բարեկամաց և ի սիրելեաց պսակեալ տեսանեն կամ լսեն...»: Սա բանաքաղության տպավորություն է թողնում, որովհետև լուսանցքներում կան նշված մեկնիչների անուններ «Նաև...» (Նաևա), «Ոսկ», «Ոս» (Ոսկեբերան), «Ստ» (Ստեփանոս Սյունեցի՞), «Եփ» (Եփրեմ Ասորի) և այլն:

էջ 296բ. Մանր տառերով մի տող հիշատակարան. «Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա և գրողի և այլ աշխատաւորացիս»: Օխրայով գլխագարդից հետո վերնագիր կարմիր գրով. «Յայտնութիւն սրբոյն Յոհաննու Աստուածաբանի» համապատասխան «բաներով» և «մեկնություններով»: Սկիզբը՝ «Յայտնութի[ւն]ն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց որ լինելոց է վաղվաղակի: Յայտնութիւն ասի ծածուկ խորհրդոցն երևումն...»:

ԲՆԱԳԻՐ Է ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅ ՔԱՂՈՒԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

1. A – N 5591: Ժողովածու: 1427 թ.: Մեծոփայ վանք: Քաջբերունիք: Գրիչ Թովմա վարդապետ (Մեծոփեցի՞), Թովմա գրագիր, Յոհաննէս: Ստացող Թովմա վարդապետ (Երևի գրիչը):

1ա - Սկսվում է ուղղանկյուն գլխազարդով: «Նախադրութիւն յայլմէ վասն չորից Աւետարանացն և աւետարանչացն: Աստ եգեկիել մարգարէն: Եւ տեսանէի Դ դէմք միոյ...»: Սկիզբ՝ «Եւ արդ, վասնզի յոյժ զարմանալի է զի յամենայն սերմանիս ծածկեալ կայ...»:

5ա - «Դարձեալ վասն Աւետարանացն և աւետարանչացն»: Սկիզբ՝ «Արդ տեսցուք նախ թէ յամենայն աստուածային գրոց...»:

7բ - Ուղղանկյուն գլխազարդ. «Գրիգորի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի հաւաքեալ քաղուածոյ մեկնութեան խորանաց սուրբ Աւետարանացն: Նախերգաբար բաղդատութիւն չորից գետոց եդեմաբուխ և չորից աւետարանչացն հոգեբուղխ. օգնեա Հոգի Սուրբ»: Սկիզբ՝ «Արդ չորս գետն ննջանի չորից աւետարանչացն: Փիսոն, որ է [Գ]անգէս կամ Ինդոս: Ի Մատթէոս համեմատի ըստ հինգ եղանակաց: Նախ ըստ անուանն, զի Փիսոն բերան հրոյ թարգմանի: Եւ բերանն Մատթէոսի հրով Հոգոյն լցեալ՝ էհեղ և քարոզեաց զԱւետարանն: Երկրորդ, ըստ իրին, զի ջուր է մարմնական: Եւ Աւետարանն Մատթէոսի ջուր է հոգեկան, խաղացեալ ի կեանս յաւիտենական: Երրորդ ըստ կարգին, զի առաջին է Փիսոն ի չորեսին գետս: Եւ Մատթէոս առաջին է ի չորեսին Աւետարանն: Չորրորդ՝ ըստ տեղւոյն, զի Փիսոն նախ գարնելոյս արբուցանէ...»: Այնուհետև շատ վերնագրեր կարմիր թանաքով գրված են տողամեջերում:

8ա - «*Վասն անգանց*. Իսկ *սուտակ*, որ է կայծ և կարկեհան: Նշանակէ զքարոզողսն, որ բերեալ իբրև զկայծ վառեցան արեամբ. եւ *դահանակ* որ է կանաչ գմրուխտ, որ է դեղ աչաց՝: Նշանակէ զՀովմաս, որ լուսաւորեաց զաչս հոգոց մերոց...»:

«*Եւ զի՞նչ բարքման Մաթէոս*. Իսկ *Մաթէոս* բարքմանի երգ կենաց Դ կերպիւ...»:

8բ - «*Գեհոն և Մարկոս*. Եւ յետ սորա Գեհոն, որ է Ջահուն կամ Նեղոս, որ ննջանի ի Մարկոս, ըստ է (7) եղանակի: Նախ զի գետս այս ելանէ ի հարաւոյ արեւելից և պատէ զհարաւ և ոռոգէ զԵգիպտոս: Նոյնպէս աւետարանիչն Մարկոս, ելեալ յԵրուսաղէմայ յարևելից Եգիպտոսի և հրամանաւն Պետրոսի...»:

9ա - «Վասն եգիպտոսի»: Այսինքն դեպի եգիպտոս փախուստի մասին:

9բ - *«Զի՞նչ թարգմանի Մարկոս*. Իսկ Մարկոս թարգմանի բարձր պատուար...»:

10ա - «Տիգրիս և Ղուկաս...»:

10բ - *«Զի՞նչ թարգմանի Ղուկասն*. եւ Ղուկասն թարգմանի յարութիւն...»:

10բ - «Եփրատէս և Յոհաննէս...»:

11ա - *«Զի՞նչ թարգմանի Յոհաննէս*: Իսկ Յոհաննէս թարգմանի հնազանդութիւն Տեառն...»:

11գ - «Բաղդատութիւն չորից կենդանեաց և աւետարանչացն»:

12ա - «Ի ցանգ Աւետարանին տեսութեան վասն Ժ խորանացն. զոր արարեալ է Սեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

Վերնագրերից շատերը, թվանշանների մի մասն ու նախադասությունների սկզբնատառերը կարմիր գրով են: Լուսանցքներում ևս կան թվահամարներ խորանների (ամեն մի խորանի խորհուրդի բացատրության կամ նկարագրության դիմաց), բայց առաջին դեպքում (13բ-14ա) կարմիր բոլորգրով, երկրորդ դեպքում (15ա-15բ) սև: Մեկնությանը հաջորդում են.

16բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառաւտ հարցմամբ. Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած»: Սկիզբն. «Վասն է՞ր Տէրն մեր բանիւ քարոզեաց զաւրէնս և ոչ գրով, որպես Մովսես: Նաև աշակերտացն պատուիրեաց. Երթայք քարոզեցէք և ուսուցէք զամենայն հեթանոսս...»:

17ա - «Ձէ յորո՞ւ մ ժամանակի եւ ի տեղւոջ գրեցաւ Աւետարանն. Հարցումն»: Սկիզբ «Ո՞ւր և ե՞րբ գրեցին զԱւետարանն և կամ յո՞ր լեզուս...»: 17բ - «Վասն չորից աւետարանչացն. հարցումն»: 18ա էջում կան մանր ենթավերնագրեր. «Վասն Աւետարանացն. Հարցումն», «Վասն կարգի աւետարանչացն. Հարց»:

19բ - «Նախադրութիւն Ղուկասու Աւետարանի»: Այս բոլորգիր կարմիր վերնագրի վերևում կարմիր տառերով գրված է «յայլ օրինակէ»: Սկիզբ «Աւետարանն որ ըստ Ղուկասու գրեալ է նոյն ինքն Ղուկաս, աշակերտ էր Պետրոսի և եւ ձեռնադրեցաւ ընթացակից Պաւղոսի և վկայեցաւ ի նմանէ...»:

20բ-21բ. «Սկիզբն գլխոց Աւետարանին Ղուկասու». Տրված են գլուխների վերնագրերը (բովանդակությունը), ինչպես Ավետարաններում, և զուգահեռ համաձայնության ցանկը ըստ Եվսեբիոսի (ինչ-

պես Ավետարանների նախադրության մեջ):

23ա - Տիտղոսաթերթ մանուշակագույն թանաքով, բարդ գլխագարդով և լուսանցազարդով: Վերնագիր. «Մեկնութիւն Սուրբ Աւետարանին Ղուկասու: Հաւաք[ումն] սրբոյն Սարգսի Հայոց վարդապետի և անյաղթ հռետորի ի սրբոց աստուածաբան վարդապետացն մերոց Եփրէմի, Ոսկեբերանին, Կիւրեղի, Ստեփանոսի, Իգնատիոսի և այլոց վարդապետացն մերոց, զոր տեսանես յառաջիկայդ. Այգ-նեա Հոգի Սուրբ Աստուած ճշմարիտ»: Առաջին տողը մանուշակագույն գլխատառերով, երկրորդը կարմիր բոլորգրով. «Լնուլ գայս իմաստ աստուածային քո ըղձից պարտ համարեցայ, ով Գրիգորիոս քահանայապետական գլուխ և սիւն հաստատութեան եկեղեցւոյ»: Լուսանցքներում նշված է, թե որ հեղինակներից է արված բանաքաղությունը:

239բ էջում ավարտվում է Ղուկասի Ավետարանի մեկնությունը և սկսվում Սարգիս Կունտի հիշատակարանը, որ հետևյալն է. «Կատարեցաւ մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, որ էր հեթանոս յազգէ ասորոց, զոր ոմանք յեկեղեցւոյ վարդապետաց ի յունաց ասեն քաղաք անտիոքացի՝ աշակերտ գոլով Գալիանոս բժշկապետի, հաւատացեալ մերձ խաչելութեան Քրիստոսի եւ յետոյ աշակերտեալ առաքելոյն Պաւղոսի, հաւաքեալ ձեռամբ Սարգիս վարժապետի, որ է յազգէս հայոց ի գաւառէ Արարատեան յոյժ աշխատութեամբ և երկասէր վաստակաւք ի լուսաւորութիւն մտաց մանկանց եկեղեցւոյ և ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն...

Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի, ժամանեալ ի կետ նպատակի վերջին գծիս, որում ըղծայի: Ես տրուպս և անպիտանս ի ժառանգաւորս եկեղեցւոյ Սարգիս վարդապետ մականուն Կունտ կոչեցեալ, ի գաւառէ Արարատեան, բազում ջանիւ աշխատեցայ զտառս կենդանիս գտանել զանուշահոտ և գծաղկագարդ, գպայծառացեալ և զարփիահրաշ, զարեգակնածաւալ և գլուսափայլ մեկնութիւն սրբոց վարդապետացն, որ գծորանս շնորհաց Սուրբ Հոգւոյն իբր յանսպառ աղբերէ յանծինս իւրեանց ընկալեալ ունէին: Ջերանելոյն Եփրէմի, գտեառնն Կիւրղի Ալեքսանդրացւոյ և տեառն Ստեփանոսի Սիւնեաց վերադիտողի, գտէր Իգնատիոսի, եւ ուր ոչ այսոցիկ Յովհաննու Ոսկեբերանի, եւ սուղ ինչ յաստուածաբանին Գրիգորէ առեալ վկայութիւն: Եւ յեպիփանէ Կիպրացւոյ, եւ ի Նարեկացւոյ Գրիգոր վարդապետէ, եւ իմաստնոյն Սարկաւագ վարդապետէ ուրեք ուրեք մտառեալ, է ինչ որ ի Մովսես Քերթողէ և ի

Մամբրէէ Վերծանողէ, եւ ի Թեոփիլոսէ Ոսկեբերանի աշակերտէ, սակաւ ինչ յամենեցունց մասնաւորեալ գպատշաճաւորն, իբր իմաստուն մեղու թռչելով ի մարգս և ի լերինս և ի ծաղկաւէտ բուրաստանս, ժողովելով գպիտանիսն առ ի նոցանէ ի յաւգուստ և ի շահ փրկութեան մարդկան, հանգուցանելով ի պէսպէս աշխատութեանց հոգւոյ և մարմնոյ գվարդապետս եկեղեցւոյ, լուսաւորեալ ըստ ներքին մարդոյն, յորում բնակեալ Տեառն, հաւատայ սուրբ եկեղեցի, ըստ անձին մաքրութեան, գտկարութիւն ի բաց եդե[ա]լ ձեռն ի գ[որ]ծ արկի և բազմաշխատութեամբ ի մին տեղիք հաւաքեցի ի ՈԽԶ (1197) թուականութեանս հայկազեան սեռի, ի դառն և ի չար ժամանակիս, որ շփոթ էր կաթողիկոսութեան իշխանութիւն արբոյն Գրիգորի: Ջի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոս ի դղեկին Կոպիտառու: Եւ աղերս ընծայեցի ի սուրբ և յուղղափառ Հայաստանեայցդ եկեղեցի: Արդ աղաչեմ զամենեսեան, որք ճաշակէք յերկնաւոր պարգեւաց հոգւոյն Աստուծոյ, դասիւ և կամ ընթերցմամբ, յիշեսջիք և գինս աշխատութիւն և թողութիւն արարէք մեզ և հոգևոր և մարմնաւոր ծնողաց մերոց: Եւ Քրիստոս ձեզ առնէ թողութիւն յայսմ աշխարհի և հանդերձեալ աշխարհին: Եւ նմա փառք ընդ Հօր և Սուրբ Հոգւոյն. ամէն»:

240 թերթում Թովմա Մեծոփեցու հիշատակարանն է[1]:

242ա - «Յաղագս Յովհաննու Աւետարանին Վարդանա գրոց են եւ ի միաշաբթուն Մարիամ Մակդաղենացիին»: Այնուհետև կան այլ նյութեր ևս, որոնք ավելորդ եմ համարում հիշատակել այստեղ:

2. B – N 4290: Ժողովածու: 1571 թ. (՞): Գրիչ Սկրտում Սգուլեցի: Ստացող Մարտիրոս Սեբաստացի: Սկսվում է 30 էջից: Կողքին կա մատիտով թերթակալում: 1ա էջից սկսվում է քարոզ հայհոյության դեմ: Օր. «... Իսկ հիշոցնատուն փոխանակ աւրինելոյն և գովելոյն, յիշոցք տայ և հայհոյէ, վասն այն բարկանայ Աստուած ի վերայ յիշոցնատուին» (1բ), այնուհետև ռամկական լեզվով «յիշոց» բառի հետ գործածվում են «քուֆր», «մուրտար» և այլ բառեր, ապա գալիս է Թովմա առաքյալի պատմությունը նրա անհավատության մասին, ապա քահանայի վարք ու բարքի մասին: 18ա - «Պատմութիւն Նուշիռուանի թագաւորին»: Սկիզբ «Կայր թագաւոր մի պարսիկ անուն նորա Նշրուան յետիւ: Եւ ուներ թագ մի ոսկի և այն թագն էր շինած ԻԲ բերկ և ամեն բերկ ժ բան կայր խրատ...»: 26ա - «Պատմութիւն Խիկարայ դպրապետի և իմաստասիրի...» և այլն: Իսկ խորան-

[1] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ». Մաս առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1955, էջ 359-360:

ների մեկնության հատվածը սկսվում է 71ա էջից:

71ա - «Ի ցանկ Աւետարանին տեսութիւն և վասն տասն խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

78ա - «Այսքան վասն խորանացն և ի ցանկ Աւետարանիս» գրվածքով ավարտվում է խորանների մեկնությունը: Շարունակությունը նույն գրով. «Ամենայն որ լսէ զբանս իմ և առնէ նմանէ առն իմաստնոյ» և այլն: 104 ա - «Տաղ և աշխարհացոյց գեղեցիկ»: Սկիզբը «Եկայք Աղամայ որդիք արարածք ամենն Աստուծոյ բան, աւրհնեմք զարարիչն Աստուած, որ ստեղծեաց զեակս ամենայն»[2]: 108ա - Կարապետ Բաղիշեցու վերոբերյալ տաղի տակ հիշատակարան. «Յիշեցէք զանարժանս վերջի գրիչ Ագուլեցի Սկրտումս, Աստուած ողորմի ասեք մեզ և զծնեզ Տէրն յաւիտեան. Սեբաստացի սարկօաք, որ ասի Մարտիրոս անուամբ, զբանս հարկիւ նայ խնդրեաց իմաստնոցն է յոյժ գովական, որ և այսօր յերեսս անկեալ հառաչանաւք սրտի և արտասուագոչ պաղատանաւք աղերսեմք առհասարակ ի միասին: Ով աստուածածին Կոյս, ով աստուածակիր որովայն...» և կույսի փառաբանություն մինչև 109ա էջ, ապա շարունակվում են քարոզները:

3. C – N 5002: Եւսեբիոս, Մատենագրութիւնք: Այս խորագիրը, որ վերցված է «Ցուցակ ձեռագրաց»-ի Բ հատորից, ճիշտ չէ: Ձեռագիրը բովանդակում է Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Ժէ դ.: Գրիչ Սահակ սարկաւագ, Արութիւն դպիր: Յիշատակարան գրչի 120բ, 206բ, հետագայի 270ա (1904 թ.): 1ա - կարմիր նոտրգրով վերնագիր. «Ցանկն է գլխաւորագոյն բանից բոլորգրոցս, գի դիւրաւ»: Սկիզբ «Զառաջին հատորն վասն չորս գետոցն և չորք կենդանեացն...»: 2ա - «Ցանգն է առաջին հատորիս մեկնութեան»: 7ա - «Զցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպս. զոր եղբայր կոչէ»: 11ա - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ»: Սկիզբ. «*Հարցումն.* Վասն է՞ր տէրն մեր Քրիստոս բանիւ քարոզ[եաց] զօրէնս և ոչ գրով...»: 13ա - «մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, որ ասէ. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի»:

4. D – N 1259: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: 1563: Ի-լով: Սաներամասն տես 9 մեկնության բաժինը Լ:

---

[2] Տես «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)», Հատոր առաջին, Աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, Երևան, 1986, էջ 201-218, 622-624:

5. E – N 6649: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթեոսի: ժե դ.: Գրիչ Եղիայ: Մանրամասն տես Գ մեկնության բաժինը K:

6. F – N 5781: Ժողովածու: 1621 թ., ժէ դ.: Ձեռագրի մեծ մասը Գրիգոր Տաթևացու Մատթեոսի մեկնությունն է: Ավելի մանրամասն տես Գ մեկնության բաժինը N:

7. G – N 9420: Ժողովածու: 1671 թ.: Շուռնօ: Գրիչ Մարգարիտ: Ստացող Արիստակես վարդապետ գրչուհու եղբայրը: Ընդգրկում է Գրիգոր Տաթևացու Մատթեոսի մեկնությունը և Յովաննու Ավետարանի մեկնությունից: Մանրամասն տես Գ մեկնության բաժինը S:

8. H – N 1285: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: 1613 թ.: Նոր Ջուղա: Գրիչ Յովանէս աբեղայ: Ստացող Միքայէլ քահանայ: Յիշատակարան գրչի՝ 154ա, ստացողի՝ 154բ, հետագայի՝ 1ա (1699):

2ա - «Գրիգորի աշակերտի եռամեծ և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցւոյ հօաքել քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մատթէոսի նախերգաբար: Բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ: Աւգնեա Հոգի Սուրբ Աստուած»:

Կարմիր բոլորգրով բազմաթիվ ենթավերնագրերից հետո նույն ձևով. 7ա - «Ի ցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորհացն: Ջոր արարեալ է մեծին Եւսեբեա ի խնդր[ո]ո Կարպիանոսի, զոր եղբայր կոչէ»: 11ա - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ: Աւգնեա Սուրբ Հոգիդ Աստուած և առաջնորդեա...»:

Հիշատակարանից. «... Արդ գրեցաւ սա ի թվականիս հայոց ՌԿԲ (1613թ.) ի Շաւշ քաղաքի, որ է Ասպահան ի յաստուածախնամ գուղաքաղաքն Ջուղայ ի թագաւորութեան պարսից Շահապասին.

Արդ և ես յետինս ի գրչաց, թափուրս ի բարե[ե]աց Յովանէս աբեղա աղաչեմք զձեզ, ով ընթերցողք, զի խոշորութեան և սղալանաց գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր»:[3]

9. I – N 1289: Ժողովածու: ժէ դ.: Ս. Փրկիչ (Երուսաղե՞մ): Գրիչ Յոհաննես Սոկացի: Ստացող Տէր Սամուէլ: Հիշատակարան գրչի՝ 370բ: Կնիք՝ 370բ (1703 թ., հաչատուր վարդապետ):

Բովանդակում է «Մեկնութիւն Մատթեոսի ի Տաթևացւոյն», քառաօալ բոլորգիր, «Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու յՈրոտնեցւոյն

[3] Հիշատակարանը բացի «Փառք»-ից լրիվ տես «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ» (1601-1620 թթ.), հատոր Ա (կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան), Երևան, 1974, էջ 478-479:

հաւաքեալ յաշակերտէ նորին ի տէր Մատթէոսէ». «Լուծմունք Յոբայ գրոցն ի Գրիգորէ Տաթևացւոյ» - գրված է կազմի ետևում փակցված թղթի վրա:

3ա - Մատթեոսի Ավետարանի մեկնության ցանկը: 5ա - Կարմիր բոլորգրով. «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սուրբ Աւետարանին Մատթէոսի նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուխ, չորիցն աւետարանչացն հոգեբուխ»: 6ա - «[Ա]րդ չորս գետն ննջանի չորից աւետարանչացն...»: 10բ - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ Եւսեբեա ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչի»: 13բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ...»: 224ա - «Յոհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս րաբունապետի արարեալ բան յԱւետարանին Յոհաննու, որ ասէ. Ի սկզբանէ էր բանն և բանն էր Աստուած»: 274ա - «Այս ինչ է ի լուծմանս գրոց մեկնութեան Յովբայ»: Այստեղից գրչությունը տարբեր է, և տիտղոսաթերթը առաջվա երկու գրվածքների պես չունի կիսախորան:

370ա - «Արդ, ես վերջին ի ծնունդս եկեղեցւոյ, Գրիգոր մականուն, խնդրող բանի, որ ի վաղուց հետէ փափագէի բոլոր մեկնութեանս Յոբա, ի թվականութեանս հայոց ՊՕԷ (1408), ամի եկեալ յերկիրս Քաջբերունի և ծներեալ ի հրեշտակաբնակ վանք Մեծոփայ ի Սրպատու (Սրպատո՛ւ – Վ.Ղ.) դամբարանաց վարժապետաց սրբոց և ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ[ն] բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն Սոիստակէսի և Գէորգայ ի խրատ գրչութեան, ընդ ննջին և զքաղուածոյ մեկնութեանն Յոհաննու աւետարանչի: Եւ ընծայեցի ի պատիւ սուրբ տեղոյս ուսումնասէր անձանց ուղղադաւան մտացս: Եւ ի գլուխս բաժանելով, վասն միաւորի տեսութեան և ի զարդ ուսման, և ի պետս բեմասացութեան և ի խրատս գրուցատրութեան: Արդ եթէ գտցի ի սմա ըստ հաճոյից խնդրողաց Տեառն շնորհք և պակասն փոքր անօթոյս մերոց ներեսցի: Որ և լուսաւոր վարդապետին մերոյ Յոհաննու Որոտնեցւոյ, ի սմա մասն բարեաց յիշեալ եղիցի և մեր աշխատողաց, բազում և անթիւ սղալանաց թողութիւն եղբայրասէր կամաց ձերոց հայեսցի...»: Գրիգոր Տաթևացու սույն հիշատակարանի ընդօրինակումից հետո նույն ձեռագրով քիչ անց շարունակվում է. «Գրեցաւ այս գիրքս, որ է Յոբայ լուծմունք, ձեռամբ բազմամեղ և անիմաստ Յոհաննէս Սոկացոյ, ի դուռն սուրբ Փրկչին և կափարիչ սուրբ վեմին, որ

եմ սպասաւոր այս սուրբ տաճարիս, ի վայելումն տէր Սամուէլին, զոր Տէր Աստուած փութով հասուցանէ գինքն ի յաստիճան վարդապետական գաւազանին, ամեն»: Ապա այլ ձեռագրով «որ է երուսաղէմ»:

Ուրեմն, գրչության ձևով ու համակարգով, երկայուն էջերով Մատթեոսի և Յովհաննու Ավետարանների մեկնությունները կարելի է համարել մեկ գրչության արդյունք, իսկ Յովբի մեկնությունը մեկ այլ գրչության, քանի որ Յովհաննու մեկնության վերջում կա առանձին հիշատակարան. «Ի լրումն գրոցս է ըստ ոճ կարգի յիշատակարանն, որ և այս տեսչութեան բան ըստ նախասացեալ մեկնութեան, որ ըստ Ղուկաս Աւետարանին է դիցի: ... Արդ, սայ է մասն ինչ յաշխատութեան վարժապետին իմո Գրիգորի մեծի և մասն ինչ ի բրտանց հարց. և բոլորն իսկ առատաձիրն Տեառնէ, զոր և յոյժ աշխատութեամբ հաւաքեցի ի մի վայր առ ի դիւրահասութիւն մանկանցդ նորածնելոց եկեղեցեացդ Հայաստանեայց: Ձոր և հայցեմ երկրաման դիմաւք, ով դասք լուսափայլից, որք պատահիք այսմ աստուածաճեմ անդաստանիս, յիշեսջիք զանպիտանս ի բանս գյոգնամեղ անձս զՄաթեոս սպասաւոր բանի և զվարժապետն իմ զմեծն Գրիգոր և զմիւս Գրիգոր րաբունի զազգականն իմ, զիսնդրող այսմ աշխատանաց, և զսակաւ ծրիկս ուղղութեամբ ընթերցջիք և պակասն ուղղեցէք և գաւելորդն կշռեալ պարտիք և սխալանացն ներեցէք, զի ոչ թէ լիապէս գրեալ է աստ, այլ այս գլխաւոր բանից ելն լուծումն և որք պիտոյ են մեծի աշխատութեան, իսկ զայլ մասնաւորն եթէ...»:

Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանի հետ համեմատելով ձեռագրի երեք մասերը (Մատթեոսի և Յովհաննու Ավետարանների մեկնություններ, Յոբա մեկնություն), քննելով պրակները և դրանց վերաբերյալ նշումները, եզրակացրինք, որ այդ երեք մասերը երեք ձեռք են ցույց տալիս: Ափսոս, որ Մատթեոսի տաբևացիական մեկնությունը չի պահպանել բուն կամ ներծավոր հիշատակարանը, ինչպես հաջորդ երկու գործերում: 277բ էջում ավարտվում է Յոբի մեկնության առաջաբանը. «Նորին Գրիգորի, անյաղթ փիլիսոփայի և քաջ հռետորի, աշակերտի եռամեծի Յովհաննու Որոտնեցոյ համառօտ լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Յոբայ և ի բանս մեկնչաց»:

10 Կ – N 1295: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: 1410 թ.: Սարկաւագաց վանք: Գրիչ Աբէլ: Ստացող Յովաննէս վարդապետ Կարմիր: Հիշատակարան գրչի էջ 413, 679, կնիք 678 (1771 թ.,

Բաղդասա՛ր Պպիր): Գլխավոր տեղեկություններ հիշատակարանից. «Արդ, գրեցաւ սուրբ և գերամբարձ Աւետարանի քաղուածոյս ի լուսաւոր բանից Մաթեոս գլխոյ, յարմարեալ և աշխատասիրեալ Գրիգորի արի վարդապետի: Արդ ես մեղապարտ և անարժանս, տարտամ և ծոյլս ի բարեաց, ցանկացող եղէ սմայ, վասն տկարութեան և ծուլութեանս ոչ կարէի ձեռնարկել, վասն զի անհմուտ էի արուեստիս: Այլ հրամանաւ և աւգնականութեամբ վարդապետին իմոյ Յովանիսի մականուն Կարնիր կոչեցեալոյ, աշակերտի վերոյասացեալ վարդապետին Գրիգորի գրեցի: Զոր ի միում շաբաթոջ շրջան Բ. լուսաւոր ջահըն և զնեզ թողին խաւար, զոր յիշատակ նոցա աւրհնութիւն եղիցի: Քանզի ո՛վ կարէ զանչափ դառնութիւնն, որ յետ մահուան նոցա հանդիպեցաւ, պատմել, քանզի եղեն ազգս հայոց և բահանայքն մոլորեալ, իբրև զհաւտ առանց հովվի, և վանաւրէից հասանէին դառնութիւնք արբունաւտ և ի սուտ և ստահակ եղբարց, զոր Տէր խաղաղեցուսցէ:

Արդ, գրեցաւ աստուածաշունչ տառս ի թու. ՊՕԹ (1410), ձեռամբ մեղապարտ և ախմար գրչի Աբէլ սուտանուն աբեղայի, ի վանս Սարկաւագանց կոչեցելոյ, ընդ հովանեաւ Սբ. Կարապետիս, առ ոտս բազմերախտ հաւր իմոյ և վարժապետին Յովանէս Կարնրի» (679-680)[4]:

Սույն ձեռագիրն ավելի վաղ է, քան Մեծոփա վանքում Թովմա Մեծոփեցու ընդօրինակածը (N 5591, 1427 թ., A): Այստեղ Տաթևացու աշակերտը հանդես է գալիս ընդօրինակող գրչի ուսուցչի և խորհրդատուի դերում, իսկ այնտեղ Թովման, որը նա Տաթևացու աշակերտն էր, ինքն է գրիչը մեկ այլ Թովմայի հետ:

Ձեռագիրն էջակալած է սև բանաքով: Վերնագրերում գործածված են կարմիր և մանուշակագույն բոլորգիր և երկաթագիր: Այն վնասված է ջրով: Լուսանցքներում կան համարակալումներ (Ա, Բ, Գ և այլն), որոնք հարցերի պատասխանների կետերն են նշանակում, և այս կարգը շարունակվում է Տաթևացու քաղվածո մեկնության գրեթե բոլոր ընդօրինակություններում:

էջ 1 - «Գլխաւորագոյն [բան...] բոլորգրոցս: Չի դիւրաւ գտցես, զոր և կամեցիս»: Տրված է բոլոր վեց հատորների ցանկը:

էջ 4 - «[Ց]անգ է առաջին հատորի մեկնութեանս»: Սկիզբ «Առաջին բաղդատութիւն չորս գետոցն չորից աւետարանչացն...»: Ցանկում հետաքրքիր է այն գլուխների համառոտումը, որոնք վերաբե-

[4] «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 112:

րում են խորանների մեկնությանը. «Վեցերորդն. Վասն խորանաց Եվսեբեայ և միաբանութիւն նոցին և Յանցն իւրն և թէ զինչ աւգուտ է ցանգն: Եւթներորդն. Վասն զանազան գունոց և ժ խորանացն: Եւ վասն հրեշտակաց և զանազան թռչնոց և ծառոցն նշանակութիւնք: Այլև սիւնք և խարիսխ և խոյակք. և փոկք և չուանք և շուք և բացքն: Դարձեալ հարցումն զանազան կենդանեացն և տնկոցն: Եւ դարձեալ տեսութիւն գլխաւոր ցանգոյն: Թուական արհեստիւ տ[է]ս[եա]լ:[5] Եւ վասն վերնակետիցն ի գլուխ վերնագրին եդեալ: Ութերորդն. Ի սկիզբն մեկնութեան...» (էջ 5-6):

Էջ 11 – Կարմիր բոլորգրով, գծով և տեղ-տեղ մանուշակագույն պարզունակ կիսախորանի տակ. «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցոյ հաւաքեալ բազդաւածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի. նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ»:

Էջ 21 - «Ի ցանգ Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

Էջ 31 - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ. Ազնեա Սուրբ Հոգի Աստուած. Հարցումն. Վասն է՞ր Տէրն մեր Քրիստոս բանիւ քարոզէր զաւրէնս և ոչ գրով...»:

Անիմաստ է մեկ-մեկ նշել մեկնության բոլոր հատորների էջերը, բայց որպես հավաստի ձեռագիր, կարելի է դուրս գրել որոշ խորհուրդներ. «*Յարց.* Վասն է՞ր ստեղծ զծաղիկս այնպէս գեղեցիկ: *Պատասխան.* Երեք նշանակութիւն ցուցանէ. այսինքն գեր ի վերոյ քան զմիտս և ներքոյ մտաց և հ[ա]ւասար տեսութեանց: Արդ, ի վերոյ քան զմիտս չորս ինչ գ[ու]գ[անե]ն: Նախ. գիմաստութիւն Աստուծոյ: Երկրորդ զգաւրութիւն: Երրորդ զխնամս: Չորրորդ զփառսն նուաստագոյն ծաղիկն: Երկրորդ հաւասար տեսութեանց չորս ինչ նշանակէ. նախ զծաղիկն բխեալ յարմատոյն Եսսեայ, ըստ որում ասէրն. Ես ծաղիկ դաշտեաց, շուշան հովտաց, սպիտակութիւն աստուածութեան և կարմրութիւն մարմնոյն և դեղնութիւն առաքինութեան և հոտ անմարմին անբաժանելի ի մարմնոյն. միացեալ բնութիւն անբաժանելի: Երկրորդ. նշանակէ երկնաւոր զօրացն սպիտակն զպայծառութիւն և կարմիրն զսէրն որ առ Աստուած և առ մինեանս: Երրորդ նշանակէ հաւատացելոց ի ծովէ կենցաղոյս բարձրացեալք և սպիտակն կուսանաց և կարմիրն մարտիրոսաց: Չոր-

[5] Սատ. N 1289 ձեռագրում «աաե» (էջ 3բ):

րորդ՝ նշանակէ հանդերձելոյն, զանազան պսակացն և պատմուճանաց: Իսկ երրորդն ի ներքոյ մտաց: Զորս ինչ ցուցանէ. նախ զառաւետս (զառաւոտեան. – Վ. Դ.) ծաղկընկեց մեծութիւնս: Երկրորդ զի տկար է և ապականելի: Երրորդն զի խոցելի է և անպիտան: Չորրորդ զի ճարակէ հրոյ, որպէս մեծատունն, որ ագաներ բեհեզս և ծիրանիս, և հուրն այրէր: Այսքան վասն շուշանի» (234-235): Այս ամենը մտնում է «Յաղագս շուշանի» ենթավերնագրի տակ (էջ 232): Ահա մեկնության ևս մի հատված. «*Դարձ.* Վասն է՞ր շուշանն ասէ: *Պատասխան.* Նախ զի հանդերձն փոքր է, քան զկերակուր, ի բուսոց տայ աւրինակ: Երկրորդ զի շուշանն առաւել ունի զգեղեցկութիւն: Եւ գիտելի է, զի շուշանն Գ (3) ազգէ. որ ի ծովս բուսանի, զոր նունոֆար կոչեն: Երկրորդ ի վայրի, որ սպիտակ է գունով և անծրևով բուսանի: Երրորդ, որ կարմիր է և բոցով արեգականն ծաղկի» (232-233):

11. L – N 1298: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: ժԵ դ.: Գրիչ Աստուածատուր: Յիշատակարան գրչի 189բ:

1ա - «Ցանկ է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս զի դիւրապէս գտցես: զոր և կամեցաք: Ագնեա Յոգիդ Սուրբ Աստուած տկար մարմնոյս և անհաստատ մտացս և հասոյ զիս ի վերջ և յաւարտ գործոյս բարեխօսութեամբ ամենայն սրբոց և աւուրս շնորհի, Յիսուս Քրիստոս, յոյս և ապավէն իմ»: 2ա - «Ցանկն առաջին հատորին մեկնութեան»: 3ա - «Գրիգորի՝ աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցոյ՝ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի: Նախերգաբար բաղդատութիւն Դ գետոցն եղեմաբուխ, չորից Աւետարանացն հոգեբուխ: Յաջողեա Քրիստոս Աստուած...»: Սկիզբ՝ «Արդ, չորս գետն ննջանի չորից Աւետարանացն...»: 6բ - «Բաղդատութիւն չորից կենդանեացն և աւետարանչացն»: 7բ -«Ի ցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեա ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչի»: 11ա - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին»: Եվ հաջորդաբար շարունակվում է: Ունի հետևյալ հիշատակարանը. «Եւ գեղկելի գծողս Աստուածատուր յիշման արժանի առնել և Աստուած ձ[եղ]...» (189բ):

12. M – N 1300: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւնք Մատթէի, Յովհաննու: 1456 թ.: Գրիչ Մատթէոս: Ստացող Իգնատիոս աբեղա: Սիսայուն: Հիշատակարան գրչի 216բ:

1ա - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Սկիզբ՝ «Մատեանք աստուածագիծք...»: 6-րդ թերթը պետք է դրվեր 2-րդից առաջ: Վե-

րակազմելիս խառնվել է: 8ա - «Ցանկն է գլխաւորագոյն բոլորգրոցս զի դիւրաւ գտցես զոր և կամիս»: 10բ - «Ցանգն է առաջին հատորիս մեկնութեան»: 7-րդ թերթը պետք է դրվեր 11-րդ թերթից հետո, որովհետև ցանկի շարունակությունն է և ավարտը: 12ա - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ բաղդատածոյ մեկնութիւն սուրբ Աւետարանին Մաթէոսի...»: Սկիզբ «Արդ չորրորդ գետն ննջանի չորից աւետարանչացն»: 18բ - «Ի ցանգ Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորհացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ...»: 23բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ...»: 27ա - «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթէոսի, որ ասէ ի սկիզբն. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի...»: Ապա գալիս են մեկնության վեց հատորները: 317ա - «Գրիգորի եռամեծի և քաջ հռետորի և իմաստասիրի, աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ մակաւնում Կախելոյն ի սէրն Յիսուսի ի յիղձ բաղձանաց բանասէր անձանց, նորին աշակերտաց, արարեալ լուծումն համառաւտ. Յառաջաբան Աւետարանին Յովհաննու»: Սկիզբ. «Յառաջաբան: Լուծումն. Նախերգանս, ոչ է Նանայի մեկնչի, այլ վարդապետին, որ վասն խոնարհութեան զանուն իւր ոչ գրէ, որ թարգմանեալ է ի մեր լեզուս...»: Դրանից հետո սկսվում է. «Բան» և «Լուծումն» երկրաչափական մեթոդով: Այստեղ կա հիանալի հատված թանկարժեք քարերի մասին, որ արժե մեջ բերել.

«Բան. Ով զանձեռնարկելին խնդրէ. *Լուծումն.* Լաւ է գործարինն տալ, քան թէ զբաերն լուծանել: Եւ չորս է դժուարութիւն ի գիւտ տպագիոնին: Նախ հեռու ճանապարհն: Երկրորդ քարշեպն: Երրորդ բոխ, աւերակն կամ մութն: Չորրորդ ամփիալփալքն (?) դժուարին: Եւ վասն ականց պատմեն, թէ յաշխարհին Հնդկաց է ծոր խորին և դժուարին մարդկան կոխելոյ: Եւ վասն ջերմութեան տեղոյն և ի զաւրութենէ աստեղաց գոյանան: Եւ թագաւորքն հնարեալ շաղիղ գառին կամ ոչխարի թաւալեն ի ծորն և փակին ականքն ի նա. և աղծուիք և անկեղք տեղւոյն հանեն ի բոյնն կերակուր ծագուցն, և ականքն մնան ի տեղն: Եւ թագաւորք ի ձեռն մահապարտ արանց առնուն զականքն զանազան: Այլ և ասեն, թէ արծուիքն զականս ի բոյն իւրեանց շարեն, զի մի վնասեսցին յաւծից: Այսպէս և աւետարանիչս զաստուածաբանութիւնսն դնէ ընդդէմ հերձուածողաց: Նոյնպէս և խորէքն, որ հանէ զմարգարիտն, չորս ունի դժուարութիւն. նախ խորութիւն ծովուն, երկրորդ սաստիկ խռովութիւն: Չոր-

որոյ քանձր խտութիւն: Եւ զինքն տկար ասելով զերծանի ի գործոյն: Եւ սերն սերտ մնա սիրելւոյն: Այսպէս ասեն վասն մարգարտաց, որ լինի ի ծովն Հնդկաց, որ այժմ կոչի Քէշուբահրայ: Անձրևն, որ գայ ի մայիս ամսի, ոստրէոս ծուկն գայ երեսն և բանա զպատեանսն և առնու զկաթ անձրևուն և դարձեալ խփէ և սնուցանէ յինքեան: Եթէ բազում ընկալաւ շիթս, լինի մանր, և թէ սակաւ լինի մեծ մարգարիտ: Եւ թէ ծեր է դեղնագոյն լինի: Եւ թէ տղայ սպիտակ: Եւ թափէ յատակս ծովուն: Եւ զխորէքն, ասեն, թէ զանդրանիկ ծնիցելոյ փառն ածէ զերեսաւքն, զի թափանցէ, հանէ զշունչն, որպէս յարգանդին, և արգիլէ զջուրն: Եւ զբուշտն լցեալ ծիրով, իջանի ի խորն և լուսով նորին ժողովէ զմարգարիտս: Եւ յետոյ պատառէ, զի ծեքն յերեսն ելցէ և ընդ շող նորա յելանէ յերես ծովուն: Եւ սոքա նիւթականք այսպէս դժուարինք են, քանի՞ առաւել բանք աստուածայինք, որ սիրելի են քան զամենայն ոսկի և զտպազիոն և անխաւս մարգարիտն, որ ի յերկնից իջեալ, այսինքն անգին, որ [բարձր] է և անհաս մտաց: Ջի միտք մեր բանձր է և վայրաքարշ, ընդ մարմնոյս կապեալ, ոչ կարեմք ի հեռու տեսանել, քան եթէ քննութեամբ յայտնել» (317բ-318ա):

324բ - Սկսվում է բուն մեկնությունը. «Ի սկզբան էր բանն»: 318ա էջից հետո կան նաև հետաքրքիր պատմական վկայություններ Բագրատունիների, Նանա Աստրու մասին, որ Յովհաննեսն իր Ավետարանը գրեց նաև հերձվածողների դեմ. «Եւ գիտելի է. թէպետ երեք են աւետարանիչք, սակայն Յոհաննէս առաւել յայտնիչ է աստուածային գործոցն: Եւ զի աստուածաբան կոչի սա ոչ միայն վասն սկզբանն զի զանճառ ծնունդն աստուածաբանէ, այլև բովանդակ գլուխ Աւետարանիս. կատարելապէս ցուցանէ զաստուածութիւն Քրիստոսի՝ ի քառն գլուխս բաժանելով, զոր յայլ վարդապետաց ի նոր թարգմանս հաւաքեալ են: Վասն որոյ ի սկիզբն Աւետարանիս ենդի զամենայն առհասարակ: Եւ զիւրաքանչիւրսն գրեցից յիւրում գլխոջն: Ծիրանի գլխագիր և տող մանր, զի դիւրաւ գտցես: Եւ հաճոյ թուեցաւ մեզ վասն չորից. նախ զի ընդդէմ է անհաւատից, որք ուրանան զաստուածութիւն Քրիստոսի, որպէս հրեայք և այլազգիք: Երկրորդ ընդդէմ հերետիկոսաց, որպէս Արիոս, Եւնոմիոս և այլք, որք ոչ խոստովանեն զծնունդ Բանին Աստուծոյ: Երրորդ ընդդէմ է մարդաւաւան հերձուածողաց, որպէս Նեստորականք և քաղկեդոնիք, որք բաժանեն զբանն ի մարմնոյ: Չորրորդ հաստատութիւն է ուղղափառ եկեղեցւոյ և սուրբ վարդապետաց, որք ճշմարտապէս խոստովանեմք զՔրիստոս քննութեամբ Աստուած և Որդի Աստուծոյ

մարմնացեալ ի սուրբ և յԱստուածածին կուսին Մարիամայ»: (323ա-բ):

320ա - «Վասն եւթն գլխաւոր աթոռոց» - մեկը համարում է հայկականը «վասն սրբոյն Գրիգորի»: Ապա թվարկում է հայերի յոթ ժողովները:

13. N – N 1301: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի, Քարոզք: 1451: Սևան: Գրիչ Դանիէլ աբեղայ: Թերթ 338: Յիշատակարան գրչի 7բ, 58բ, 148բ, 223ա, 272ա, հետագայի 23բ (1606, 1708), 7բ (ԺԸ դ.):

1 – Ներբող «Ով անստուեր լոյս իմանալի փառաց և ճառագայթ անճառելի...»: 1բ - այլ բոլորգրով փոքրիկ մեկնություն Սուրբ Երրորդության: 2ա - «Մեկնութիւն խորանաց Աւետարանին»: Սկիզբ «Մատեանք աստուածագիծք...»: 7բ - գրչի հիշատակարան: 8ա - «Ցանգ է գլխաւորագոյն բոլոր գրոցս, զի դիւրաւ գտցես, զոր և կամիս»: Սկիզբ «Առաջին հատորն վասն չորս գետոցն...»: 11բ - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցոյ հաւաքեալ քաղուածոյ Մեկնութիւն սուրբ Աւետարանին Մաթէոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուղխ, չորից աւետարանչացն հոգեբուղխ: Այգնեա Հոգի Սուրբ»:16բ - «Ի ցանկն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորհացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: 21ա -«Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառօտ հարցմամբ. Հարց. Վասն է՞ր Տէրն մեր Քրիստոս բանիւ քարոզէր զօրէնս և ոչ գրով որպես Մովսէս...»: 23բ - Ուշ հիշատակարաններ: 24ա - «Ի սկիզբն Աւետարանիս հետևեսցուք իմաստից քերթութեանց...»: 24բ - Տալիս է Սբ. Գրքի տեսություն, ինչպես. *«Գիրք* այսինքն պատմութիւն կամ սկիզբն կամ նկար և այլք: Զոր Ջ. մտաւք է իմանալ: Նախ զի Գիրն պատմութիւն ասի, զի պատմագրէ մեզ զնարդեղութիւն Բանին Աստուծոյ և զայլ տնաւրէնութիւնսն: Երկրորդ՝ սկիզբն ծննդեան: Երրորդ՝ նկար և գաղափար ծննդեան: Չորրորդ՝ որպէս ի գրոցն յառաջ գայ բան և խաւսք ի յաւգուտ մարդկան, այսպէս և Աւետարանէս յառաջ գայ բան և պատուեր փրկութեան մարդկան: Հինգերորդ աւրինակաւ տայ իմանալ մեզ զանճառ միութիւն Քրիստոսի, զի որպէս գիրն երից միացեալ բանն և մելանն և քարտէզն, այսպէս և յերից միացեալ ասի մի Քրիստոս, այսինքն Բանն Աստուած առեալ զմերս մարդկային բնութիւն, մարմին զգալի և հոգի իմանալի: Վեցերորդ ասելով, Գիրք ցուցանէ մեզ զճշտութիւն Բանիցն: Զի գրեալն քե-

րեալ և պարգեալ ասի: Այսպես անկեղակարծ իմացիր զստուգ (զստուգութիւն.- Մատ. N1300, Վ. Ղ.) բանիցս, որ ի սմայ» (24բ): 271բ-272ա- Գրչի գլխավոր հիշատակարան: 278բ - «Նորին դարձեալ վասն խաչին ի բանն. Ետես Յակոբ սանդուխք մի յերկինս հաստեալ և Տէր հաստեալ ի սմայ»:

14. O – N 1303: Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն Մատթէի: 1417 թ.: Գրիչ, ծաղկող Գրիգոր Կրօնաւոր: Ստացող Յովաննես Րաբունի (եղծված և գրված Կիրակոս): Հիշատակարան գրչի 217բ, 284բ, ստացողի 44բ, 284բ (1424 թ.), 285բ (ԺՋ դ.) և այլն:

3ա - «Ցանգ է գլխաւորագոյն բանից բոլորգրոցս, գի դիւրաւ գտցես, զոր և կամիս», 6ա - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովաննու Որոտնեցւոյ հաւաքեալ բաղուածոյ մեկնութիւն սուրբ Աւետարանին Մաթէոսին, նախերգաբար բաղդատութիւն չորս գետ եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ»: 10բ - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորհացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: 13բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնի[ութեանն] Աւետարանին կարճառօտ հարցմամբ. օգն[եայ] Աստուած»: 15բ - «Ի սկիզբն Աւետարանիս հետևեցուք սակաւուք իմաստից բերութեանց, գի ասել. Գիրք, որ ի սկիզբն Մաթէոսի...»: 108ա էջից փոխվում են թուղթն ու գրչությունը (սպիտակ թուղթ և նոտրգիր), իսկ 123ա էջից նորից հին մագաղաթանման ծիրագույն թուղթ է և հին բոլորգիրը: Հիշատակարանները մանրամասն տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 205-206: Վեց հատորներից յուրաքանչյուրը սկսվում է կիսախորանով, ընդ որում 215բ էջում (Չ հատորի տիտղոսաթերթը) լուսանցքում Գրիգոր Տաթևացու նկարն է:

15. P – N 1305: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: ԺԵ դ.: Գրիչ Յովաննես, Ղազա՞ր: Հիշատակարան գրչի 97ա, 122ա, 272ա, հետագայի 97ա, 207ա (1602-1604 թթ.) և այլն:

1գ - «Ցանգն է գլխաւորագոյն բոլոր գրոց...»: Ձեռագիրը Տաթևացու Մատթեոսյան մեկնության մյուս ընդօրինակությունների նման է, ուստի նկարագրությունը բողնում եմ: 97ա էջում Բ հատորն ավարտվում է գրչի հիշատակարանով. «Ձմեղուցեալ գծողս զՅովաննես փծուն գրիչս յիշեցէք ի Տէր և զծնօղս իմ, ամեն»:

16. Q – N 1306: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի: 1419: Յուսկան որդւոյ վանք. յերկիրս Քաջբերունի: Գրիչ Մկրտիչ Նահա-

պետեանց. անանուն: Յիշատակարան գրչի 85բ, 142բ, 190բ, 246ա: Կնիք:

1ա - «Ցանկ է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս, զի դիւրաւ գտցես, գոր և կամիս»: Սկիզբ «Առաջին հատոր վասն չորս գետոցն և չորք կենդանեացն և զանազան գունոցն և տնկոցն և թռչնոցն և վասն գրոց...»: Մնացած նյութերը նույն հաջորդականությամբ են, ինչ մյուս տաբևացիական մեկնություններում: «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում» (առաջին մաս) բերված են միայն 142բ և 190բ էջերի հիշատակարանները: Բերում ենք 85բ էջի հիշատակարանի հատվածը. «...Ջտգետս ի Հին և ի Նոր Կտակարանաց և զվերջացեալս յաստուածային առաքինութեան, զանուանէ միայն վարդապետ և գործով ոչ, զՄկրտիչ յիշեցէք ի Քրիստոս յոյսն մեր...»:

17. R – N 1264: 1406 թ.: Տաթև: Գրիչ Յունան, Մուսես: Ստացող Յովհաննես աբեղա: Յիշատակարան գրչի 22բ, 62բ, 168ա, 437բ, հետագայի 2բ (1714), 1բ (1720): Գրված է թղթի վրա, և թուղթը, մանավանդ առաջին թերթերի, ենթակա է քայքայման:

1ա - Տրված է Հայկ Նահապետի հայր Թորգոմի տոհմածառը: 1բ - հիշատակարան 1720 թ. «Ի ՌՆԿՁ թուոջ և յամսեանն նոյեմբերի Լ (30) ես էի ի քաղաքն Օրուջուղ նուիրակ, և ի գիշերի [տ]եսի յերազի, զի մեկ ոգ[ա]լի մէջ շատ գրեանք, որ աստղագետի Պետրոս վարդապետն ինձ [ուղղեաց] և ես Բ. հին գիրք առի անտի, մեկի անունն կոչիւր ճրագ մտաց, միւսն...»: 2ա - «Պատմութիւն վասն սքանչելեացն Յովհաննու Սկրտիչն վիշապին, որ գոհո մատուցաւ: Քաղաքացիք յափշտակեցին զաղջիկ քրիստոնէի ի մատուցանել կերակուր վիշապին, իսկ հայր աղջկանն խնդրեալ տալ տեղի կալ յաղօթս առաջի աջին սրբոյն Յովհաննու, որոյ ընկալեալ զխնդիրս իւր և յաղօթելն եհատ ատամամբն զմատն սրբոյն աջոյն և գնացեալ փոխանակ աղջկանն ինքն եմուտ ի բերան վիշապ[ի]ն ունելով ընդ բերան իւր զնշխարն. և նոյնժամայն պայթեալ սատակեցաւ վիշապն: Դարձեալ ի բարձրացնել խաչին սրբոյ, ընդ նմին բարձրացնեին և զաջն. և բաշայր և փակէր զբուռն և զմ[ա]տ[ո]ւնս իւր ի նշան լիութեան և պակասութեան: Ջի մատանէր, որ ցուցանէր զՔրիստոս կայ մինչև ցայսօր ողջ իբրև մարմին»: Այնուհետև 2բ էջում ևս կա մի անհետաքրքիր հիշատակարան:

3ա - «Ցանգն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս զի դիւրաւ գտցես, գոր և կամեսցես»: Տրված է վեց հատորների ցանկը, ինչպես և այլ ձեռագրերում: 5ա - «Ցանգ է առաջին հատորի մեկնու-

թեան»: Փաստորեն այստեղ վեցերորդ և յոթերորդ գլուխներն են վերաբերում խորանների մեկնությանը. «Վեցերորդն. Վասն խորանացն Եւսեբեայ և միաբանութիւն նոցին և յանցն իւրն և թէ զինչ աւգուտ է ցանգն: Եւթներորդն. Վասն զանազան գունոց և ժ խորանացն և վասն հրեշտակաց և զանազան թռչնոց և ծառոցն նշանակութիւնք: Այլև սիւնք և խարիսխ և խոյակքն և փոկք և չուանք և շուք և բացքն: Դարձեալ հարցումն զանազան կենդանեացն և տնկոց և դարձեալ տեսութիւն գլխաւոր ցանգոյն: Թուական արհեստիւ տեսեալ և վասն վերնակետիցն ի գլուխ վերնագրին եղեալ»: 7բ - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթեոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուղխ, չորից աւետարանչացն հոգեբուղխ»: 14ա - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: 19ա - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառաւտ հարցմամբ: Աւգնեա Սուրբ Հոգիդ Աստուած»: 22բ - Հիշատակարան. «Ո՜հ, ո՜հ, ո՜հ: Ջրազմամեղ գրիչս Աւետարանիս գՅունան պիտակ աշակերտ աղաչեմ յիշել ի Տէր, և Քրիստոս գձեզ յիշէ յիւր բարին, ամեն»: 23ա - Գեղեցիկ կիսախորանով մեկնության սկիզբը. «ՅԱւետարանիս հետևեսցուք սակաւուք իմաստից քերթութեանց...»: 62բ - Երրորդ հատորի վերջում նույն Յունան գրչի հիշատակարանը: 275բ - Չ հատորի վերջում երկու փոքրիկ հիշատակարան, որոնք ծեռագրի հետ կապված ոչ մի հաղորդում չունեն: 338ա - «Ցանկն է Առակացն Սողոմոնի»: 339բ - «Գրիգորի աշակերտի եռամեծի Յովհաննու Որոտնեցոյ և քաջ դիտապետի համառաւտ հաւաքումն Յառակաց գրոցն Սաղոմօնի ի լուսաւոր բանից մեծին Ներսիսի. Աւգնեա Հոգի Սուրբ, Աստուած ճշմարիտ»: 403ա - «Ցանկ առաջ[ա]կա լուծմանց երգ երգոցի գրոցս»: 405բ - «Համառօտ հաւաքումն ի տեսութիւն լուծմանց երգոյ երգոցն, աշխատասիրեալ Գրիգորիոս հսկողի, արի և երջանիկ հռետորի, և քաջ փիլիսոփայի հայոց, աշակերտի եռամեծի Յոհաննու Որոտնեցոյ, լուսաւոր բանից վարդապետին Վարդանայ...»: 457բ - «Փառք ամենակարող զաւրութեան Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն մատնադետ և փցուն գրչի Մովսէս հիւանդ և ծոյլ աբեղաի հասանել ի վերջին գիծ լուսաւոր լուծմանցս այս: Արդ, գծեցաւ սա ի թուականի հայոց ՊՀ(Օ)Ե, յիշխանութեան պարոն Սմբատին և որդոյ նորին Բէշքենին և Իւանէին, ի հրեշտակաբնակ ուխտս Եւստաթէի (Տաթևի –

Վ.Պ.) սուրբ առաքելոյս, առ ոտս վարդապետին Մխիթարայ... յընտիր և ի ստոյգ աւրինակէ լուսաւոր վարդապետին Գրիգորի...»[6]:

18. S – N 1266: ԺԵ դ.: Յիշատակարան հետագայի 367ա (1608 թ.):

2ա - «Առաջին հատորն, վասն չորս գետոցն և չորք կենդանեացն և աւետարանչացն և վասն խորանացն, զանազան գունոց և տնկոց և թռչնոց և վասն գրոյ և յղութեան...»: Թվում է ձեռագրից թերթեր են ընկել: 4ա - «Ցանգն է առաջին հատորին»: 6բ - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննու Որոտնեցոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մատթէոսի, նախերգանաբար բաղդատութիւն չորս գետոցն եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուղխ: Աննախանձ Սուրբ Հոգիդ, Աստուած ճշմարիտ աւգնեայ ինձ»: 7ա - «Արդ, չորս գետն ննջանի...»: Սկսվում է կիսախորանով: 14բ - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեա ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: 20բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանին կարճառաւտ հարցմամբ. Աւգնեա և ինձ Սուրբ Հոգի»: Հատորները մեկնության գլխագարդով են: Նույնիսկ ուշ շրջանի անփույթ հիշատակարաններից չի երևում, թե ձեռագիրը որտեղ է պահպանվել:

19. T – N 5060: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէոսի: ԺԵ դ.: Ստացող Խաչատուր արքեպիսկոպոս: Յիշատակարան գրչի 39բ, 90ա, 114բ, 183ա, 199ա և այլուր, հետագայի 2ա (1804, 1806 թթ.), 1բ (1835), 137բ (1836):

1-2 թերթերում կան հետնագույն ձեռագիր հիշատակարաններ, որտեղ պարզորոշ նշված է, որ մեկնությունն ընթերցվել է: Օրինակ. «Ի թուին 1835 յամի Տեառն, իսկ ի հայոց 1284, ընթերցաք Հաւաքմունք Աւետարանի մեկնութեան գիրքս ես տրուպ իբրու սարկաւագ Դաւիթս, որ եմ յերկրէ Ռուսաստանու և ի գաւառէն Արցախու, իսկ ի քաղաքէն Ջուղայու, ի միաբանութեան գերահռաչ շինուածոյն Գանձասարու, որոյ այժմ բանդխտեցաք յերկիրս այս Քրտաղան ի Վան գոչեցեալ»: Նույնպիսի մի այլ 1806-ի հիշատակարան 2բ էջում. «Թվին ՌՄԾԵ-ին (1806) և յամսեան մարտի Բ-ին ի սրբազան առաքելոյն Թադէոսի և շնորհիւ նորին գոչեցեալ միաբան... ապիկար Գրիգորս ի գալս իմ Սուծումբար գիւղս և ի ժողովեալ յարդիւնս վասն սրբոյ վանից և զայս մեկնութեան սրբոյ Աւետարանին պատահեալ և սակաւ ինչ ընթերծեալ և զայսքան տառքս գրեցաք, ով սիրե-

[6] «ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին, էջ 58-59:

լի հարք և եղբարք իմ...»: 2բ և 3ա էջերում առանց թվականի գրված է արագագիր շղագրով. «Վարագայ վանքինն է այս գիրքը»: 3ա - «Ցանկ է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս, զի դիւրաւ գտցես, զոր և կամիս»: Սնացածը նույն կառուցվածքն ունի, ինչ մեկնության մյուս ձեռագրերը: 9բ - «Ի ցանկ Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր արարեալ է մեծին Եւսեբեայ ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»:

Ձեռագիրն ունի կանոնավոր, նույնիսկ ընտիր բոլորգիր, երկսյուն է, տեղեր են թողնված գլխազարդերի համար: Ձեռագրին ժամանակակից հիշատակարաններ. «Ջստացօղ սրբոյ տաճիս զտէր Խաչատուր վարդապետն և արհիեպիսկոպոսապետն յիշեցէք ի Քրիստոս հանդերձ իւրայովքն» (39բ), «Եւ զմեղապարտ գծողս յիշել աղաչեմ, ով սուրբ ընթերցող եղբարք և Աստուած զձեզ յիշէ, ամեն» (90ա): «Վա՛յ յիմար ոգոյս և թշուառ անձինս, զի ոչ ունեմ լապտեր, որով վառեցից» (199ա): 237բ էջում նորից Դաւիթ սարկավագի հետևագույն հիշատակարանն է. «Եկի ես սարկաւագ Դաւիթս, ի սուրբ ուխտս, որ է կառուցեալ անուամբ կենսատու խաչին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի լեռն Վարագայ ամփոփեալ է: Յամի Տեառն 1836 ու հայոց 1285»:

20. U – N 5133: Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէոսի: 1427 թ.: Երուսաղեմ: Գրիչ Թորոս Աբեղա, Վարդան աբեղա, Գեորգ երեց: Ստացող՝ Մելքիսեդ վարդապետ: Յիշատակարան գրչի՝ 10բ, 58ա, 152բ, 194ա, 295ա և այլուր, հետագայի՝ 246բ (1568), 222ա (1611), 58բ, 246բ (1614), 222ա (1904):

1բ-4ա - Լրիվ խունացած նոտրգրով «Նորին Գրիգորի աշակերտի Յհաննու Որոտնեցւոյ... ի խրատ գրչութեան Գեորգայ վարդապետի, զոր [նաև խնդրեալ է նմանէ Կոստանդնեայ] գրչի և ապա Գոյներիցացց Ստեփանոսի»: Մանավանդ կարմիր գրերը մասամբ լրիվ ջնջված են:

7ա - «Ցանգն է գլխաւորագոյն բանից բոլոր գրոցս, զի դիւրաւ գտցես, զոր և կամիս»: Սա արդեն ժե դարի բոլորգիր է իր կապգրություններով և այլ նրբություններով: 8բ - «Ցանկն է առաջին հատորին մեկնութեան, օգնեա...»: 10բ - Ա հատորի ցանկի վերջում փոքրիկ հիշատակարան. «Ջմելքիսէդ հեզահոգի վարդապետն և գվարդան սուտանուն աբեղայ. Աղաչեմ յիշել ի Տէր»: 12ա - «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցոյ հաւաքեալ...»: Սկիզբ. «Արդ չորս գետն նմանի...»: 18ա - «Ի ցանգն Աւետարանին տեսութիւն և վասն ժ խորանացն, զոր ա-

րարեալ է մեծին Եւսեբեա ի խնդրոյ Կարպիանոսի եպիսկոպոսի, զոր եղբայր կոչէ»: 22բ - «Նորին սկիզբն և պատճառ մեկնութեան Աւետարանի կարճառօտ հարցմամբ...»: 26ա - Բուն մեկնության սկիզբը. «Աւետարանիս հետևեցուք սակաւուք իմաստից քերթութեանց...»: 26բ էջից արդեն բնագիրը փոխվում է միասյունից երկսյունի և շարունակվում մինչև վերջ:

58ա էջում գրչի հիշատակարանն է. «Ով տէեարք, աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս ծեր գիեզահոգի վարդապետն Մելքիսէդ, որ ետ գրել զսայ... Ընդ նմին աղաչեմ յիշել յաղօթս զոչ արժան գրիչս զՅովրոսս... Գրեցաւ ի սուրբ և յաստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ի վանքս սուրբ Յակոբայ ի թվ. ՊՀՋ (1427)»[1]:

---

[1] «Ժե դարի ձեռագրերի հիշատակարաններ», Մասն առաջին, էջ 371-372:

ԲՆԱԳԻՐ Ը
ՊԱՏՊՈՍ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

N 5794: Աւետարան: Աւանց գիւղ (Վասպուրական): 1599 թ.: Գրիչ Կարապետ աբեղայ: Ծաղկող, կազմող Ջաքարիա Աւանցի: Երկայուն: Բոլորգիր: Ունի 26 տերունական, 4 ավետարանիչների մանրանկարներ, 10 խորան, կիսախորաններ և լուսանցազարդեր: Ճավշակազմ արծաթյա կազմով: Բովանդակություն նաև «Պօղոսի Րաբունապետի Մեկնութիւն ժ խորանաց»: Յիշատակարաններ գրչի 107բ, 203ա, 204ա, ծաղկողի 22ա, 22բ, 76ա, հետագայի 206ա (1601 թ.), 206բ (1602 թ.), 207ա (1606 թ.) և այլն:

1ա - Սև թանաքով ձեռագիր «Աստրախանայ հայոց Սրբոյ Աստուածածնի առագ եկեղեցւոյ: Համար 13. ձեռ. 1»: Կանաչ թանաքով «Աստրախանից Ս. Էջմիածին բերուած Մեսրոպ եպ. Տէր-Մովսեսեանի միջոցով»: 1բ-2ա - Շատ ինքնատիպ պատկերագրությամբ դեմ դիմաց միմյանց հայող խաչալուսապսակ Աստծո պատկերներ, երկու երեսների լուսանցքներում սև մելանով գրված «Հայր Աստուածն ի վերայ անպատում աթոռոյ»: 2ա էջի նկարի տակ բոլորգրով. «Առաջին աւրն երկինք և երկիր, ջուրք և անջրպետութիւնք. Բ աւրն հաստատեցան երկինք և երկիր, ջուրք և հուրք աստիճանաց»: 2բ-3ա - Երրորդ և չորրորդ օրերի աստվածային ստեղծագործությունը: 3բ -4ա - Չորրորդ և հինգերորդ օրերի աստվածային ստեղծագործությունը: 4բ - Հինգերորդ օրը «Աւրն հանգիստ ամենայն գործոց գոր արար Աստուած»: 5ա - «Տեսիլն Եզեկիէլի, զոր ետես ի գետն Քոբար զիսորհուրդ [չ]որեքկերպ[ե]ան աթոռոյն և սայլին և անուին»: 5բ - Նկարի կողքին բոլորգրով. «Ստեղծումն [Եւա]յի ի կողէն Ադամայ»: Ներքևում նկարի ձախ կողմում «[Դ] գետք ի դրա...», երկրորդ տող «[Ա]դամ», աջում «և Գեհոն»: 6ա - Նկարի վերևում «Չայնեալ Աստուածութեան Ադամա, թէ ուր ես»: Նկարի ներքևում «Աւծն խաւսի յունկն Եւայի և պտուղս, զոր եկեր... եդ Եւայի»: 7բ - Նկարից ներքև. «Աւետիքն Գաբրիէլի, զոր ետ սրբոյ Կուսին Մարիամու սուրբ [Աստուած]ածնին, որ յղացաւ զԲանն Աստուած»: 8ա - Ծննդյան նկարի վերևում. «Հրեշտակք», կողքին «Էշն և եզն. Անբանից մսուրն»: Ներքևում. «Ծնունդն Քրիստոսին ի յայրին: Յովիւքն բերեալ մատաղ զոչխարքն»: 8բ - Տյառնընդառաջի պատկերի կողքին. «Յովսէփ, Աստուածածինն», ներքևում. «[Գ]այուստն Քրիստոսի քառասնաւրեայ ի տաճարն, զոր ընկալեալ Սիմէովն ի գիրկն իւր»,

նույն լուսանցքում. «Ի բաց արա[ր]էք զվ[ծն]»: 9ա - Ղազարոսի հարության ձախ մասում. «Առաքեալք», աջում. «Տապանն Ղազարու», ներքևում. «Ք[րիստո]ս յարուցանէ զՂազարոս. բուրք Ղազարու Մա[րթա]. Մարիամ»: 9բ - Մուտք Երուսաղեմ պատկերի ձախ կողմում. «Առաքեալքն», աջում «ծերքն», ներքևում. «[Ծաղ]կազարդն է. Գալուստն Քրիստոսի յաւանական ի... քաղաքն Երուսաղէմ»: 10ա - Ոտնալվայի պատկերից ցած. «Բազմեալ մարդ գոտս առաքելոցն, նաղ (նախ) Պետրոսի»: 10բ - Խաչելության պատկերի վերևում. «Հրեշտակք», ձախում. «Աստուածածինն», աջում. «Յո[հա]ննէ», ներքևում. «[Խ]աչելութիւն Ք[րիստո]սի ամենազօր թագաւորին վերա գլխոյն Ադամա»: 11ա - Խաչից իջեցման պատկերի վերևում. «Հրեշտակք», աջում «կանայքն», «Նիկոդիմ», ներքևում «Պատանումն Ք[րիստո]սի ամենազաւր թագաւոր[ի]»: 11բ - Նկարի վերևում. «Աւերումն դժոխոց. Ք[րիստո]ս ըմբռնեալ հանէ զԱդ[ամ]», ձախում. «Եւայ», «Ադամ»: 12ա - Նկարի ձախում. «[Կ]անայք իղաբերք», աջում. «Գերեզմանն Ք[րիստո]սի», ներքևում. «Յարութիւն Ք[րիստո]սի լուսափայլ հրեշտակն ի վերա վիմի...»: 12բ - Նկարից վերև. «Յ[հսու]ս Ք[րիստո]ս», ձախում. «Հրեշտ[ակք]», «Առաքեալքն», ցածում «Աստուածածին. Համբարձումն Քրիստոսի յերկինս»: 13ա - Մեկնության վերևում. «Աջն հայրական և աղաւնակերպ Հոգին», ձախում. «Սուրբն Յովաննէս», աջում. «Հրեշտակք», ներքևում. «[Մկրտու]թիւն Քրիստոսի ի Յորդանան. վիշապն»: 13բ - Պայծառակերպության վերևում. «Յիսուս Քրիստոս», ձախում. «Եղիա», աջում «Մո[վսէս]», ներքևում «Յակովբոս, Յոհաննէս, Պետրոս. Պայծառակերպութիւն Ք[րիստո]սի ի լեառն Թաբոր»: 14ա - Հոգեգալուստի վերևում. «Աղաւնակերպ Հոգին», ձախում. «Առ[ա]ք[եալ]ք»: Ներքևում. «Մարդէք. Մարդ. իլածացիք», «Վերնատուն Քրիստոս իջեալ ի յառաքեալսն աղաւնակերպ, ողջո[յն] [տայ] ձեզ»: 14բ - Վերջին դատաստանի խաչապատկերի վերևում. աջից ձախ «Յիսուս Քրիստոս», խաչի ներքևի ձախ մասում նկարված անձի գլխի կողքին. «[Ստ]ացող աւ[ետա]րան»: Ներքևում. «Գաբրիէլի գոր հնչեն հրեշտակք և յառնեն ամենայն ննջեցեալքն»: 15ա - Վերևում «Չորեքկերպան ահեղատիպ աթոռն Ք[րիստո]սի», ձախում «[Ա]ծա[ծ]ինն», աջում. «Սուրբն Յովհաննէս», կշեռքի տակ «կշեռքն», ներքևի ձախ կողմում. «Ողորմութեան հրեշտակն», երկու անգամ «դեւք»: 15բ-20ա - Եվսեբիոսի թուղթը և խորանները, որոնցից ցած, լուսանցքում Պողոս Րաբունապետի խորանների մեկնությունն է:

20բ - Յիշատակարան Պողոսի. «Պաւղոս քաջ և արի րաբունա-

պետն յիշեցէք ի Քրիստոս, որ նա մեկնեաց զորպիսութիւն համաբարբառուցս ի յԱւետարանէն»: 21ա-բ - Մատթեոսի Ավետարանի գլխակարգությունը: 22ա - Հիշատակարան. «Աւարտեցաւ ի ՌԽԸ (1599) թուին ձեռամբ բազմաձեղ Ջաքարա Աւանցուն. մի բերան յիշեա. ճուք գուլակ. Տ[է]ր. Տ[է]ր և Աստուած զձեզ յիշէ»: 22բ - Մատթեոսի նկարը հիշատակարանով: 23ա - Մատթեոսի տիտղոսաթերթը: 74բ-75ա - Մարկոսի Ավետարանի նախադրություն: 75բ - Մարկոսի Ավետարանի գլխակարգություն: 76ա - «Նկարեցաւ և կազմեցաւ ի ՌԽԸ թուին. ձեռամբ Ջաքարի Աւանցուն մի բերան յիշեա...»: 107ա - 107բ Նախադրություն Ղուկասի Ավետարանի: 107բ - Հիշատակարան. «Փա՜ռք Փրկչին և յիշատակ բազմաձեղ գրչիս Կարապետի»: 110բ -111ա - Ղուկաս ավետարանիչ և տիտղոսաթերթ: 204ա-206ա - «Փառք Աստուծոյ լուսոյն մեծի, արարողի ամենայնի...» տողերով սկսվող ոտանավոր: 206ա էջում Կարապետ գրչի հիշատակարանը, որ ձեռագիրը գրվել է. «ի ՌԽՁ (1600 թ.) ամին», «Վարագա սուրբ ուխտի առաջնորդ Ստեփաննոսի ժամանակ»:

Այնուհետև կան տարբեր հիշատակարաններ, այդ թվում նաև Գանձասարում գրված (207ա), «ի թուաբերութիւնս հայոց ՈՃԵ (1606 թ.)», ինչպես նաև գրված Աստրախանում «ի Հաճթարխան» (1746 թ.) և այլն:

ԲՆԱԳԻՐ Թ
ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

N 9857, ժողովածու: 1674, 1698 թթ.: Ընդօրինակվել է Ս. Ստեփաննոս Նախավկա, Տփխիս, գրիչ Մարութա (Ա), Տեր Փիլիպոս (Բ), անանունք: Յիշատակարան նախագաղափար 226բ (1213 թ.), գրչի 18բ (1674 թ.), 210բ (1698 թ.), հետագայի տարբեր հիշատակարաններ:

1ա-16ա - Նախերգանք քարոզից (գրված 1674 թ.): 18բ էջի հիշատակարանի տակ նոտրգրով. «Ազգն որդոցն Նոյի»: Տրվում է, թե ինչ ազգեր են սերել Սեմից, Հաբեթից, Քամից, որ ոչ մի դասակարգման չի համապատասխանում. «Ի Սեմայ եբրայեցիք, ֆրանկք, պարսիկ և այլք: Եւ է սահման Սեմայ ընդ Միջերկրեայս, յարևելից յարևմտից, գՊարսից աշխարհ, գԱսորաց, գՊաղեստին մինչև ի Նեղոս գետ: [Հ]աբեթի ազգք հայք, մակեդոնացիք, մադացիք, յոյնք, լատինացիք, ալանք և վրացիք սահմանք... մինչ ի Գադիրոն հիւսիսոյ և այդ ունի ազգն Աբիդի յանգիւն Տիգրիս գետոյ, որ բաժանի ընդ մադէ և ընդ պարսս: [Ք]ամայիկ եգիպտացիք, հնդկացիք, հեթացիք, յեբուսացիք, հաբաշիք, որ են նուշացիք, ամովրացիք, գերգեսացիք, արաբացիք, քաղդեացիք, որն են ասորիք: Սահման Քամայ է գհարաւ...»: 19բ - «Յեօթն մահու չափ մեղքն...» (մի կենտրոնից դուրս եկող գծագիր, որտեղ նշված են մեղքերը): 20ա - «Թուվմար (Տումար – Վ.Պ.) արեգական և լուսնի», որտեղ նշված է, թե որ ամսվա որ օրը ինչպիսին է լինում: 33ա էջից մինչև 34ա էջ տրված է աղյուսակ ՌճԺԴ թվից մինչև ՌճԿԹ (1675-1714 թթ.), թե որ թվականը ինչ «տառնուտերի» (համաստեղության) է: 236ա - «Կարապետ վարդապետի մեծի ասացեալ խրատ պիտանի մանկանց եկեղեցոյ ոտանաւոր տառիւք»: 258բ - Կաթողիկոսի նկար: Այնուհետև մինչև խորանների մեկնությունը զանազան հարցեր ու պատասխաններ են մոտավորապես նույն ձեռագրով: Տարբեր ձեռագրով է խորանների մեկնությունը (269բ-271ա): Մեկնությունից հետո շարունակվում է հարց ու պատասխանը:

Հետաքրքիր է նաև 73ա էջից սկսվող քաղվածքների ժողովածուն. «Յառաջաբանութիւն և հաւաքումն սրբոց առաքինութեանց...»:

154բ - Եկեղեցու հիանալի նկար սանգինայի գույնի ներկով: 191բ - «Պատմութիւն Դրիմայ երկրին արարեալ Մարտիրոս վարդապետի Դրիմեցւոյ ոտանաւոր»: Այս և այլ գրվածքներ տարբեր նոտրգիրով են:

ԲՆԱԳԻՐ Ժ
ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ն 349: Աստվածաշունչ: 1686 թ.: Կ.Պոլիս: էջմիածին: Գրիչ Նահապետ Ուրֆայեցի՞: Ծաղկող Մարկոս Պատկերահան, Մաղաքիա Կ. Պոլսեցի: Ստացող Սարգիս Թեքերտաղցի, Նահապետ Ուրֆայեցի՞ (գրիչը): Մանրանկար տերունական 50 (և բազում լուսանցքներում), ավետարանիչ չորս, խորան 10: Խորանների մեկնության բնագիրն ընդօրինակված է Եվսեբիոսի թղթի և խորանների պատկերների տակ 453բ, 454ա, 455բ, 456ա, 457բ, 458ա, 459բ, 460ա, 461բ, 462ա: Աստվածաշնչի նկարագրությունն այստեղ իմաստ չունի, բայց կա մի հետաքրքիր հիշատակարան. «Քրիստոս Աստված վայելել տացէ զՍուրբ Աստուածաշունչս տեառն Նահապետ քաջ Բաբունապետին Ուլոխայեցւոյ, որքան կենդանի է, իսկ զկնի նորա եղիցի անքնջելի յիշատակ ի Սուրբ էջմիածին...»:

ԲՆԱԳԻՐ ԺԱ
ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

A – N 2152: Ժողովածու: ԺԹ դար, 1402-1408 թթ.: Բաղէշ (Բ): Գրիչ Ստեփանոս վարդապետ, Թումա վարդապետ (Բ): Ստացող Կարապետ (Բ): Մանրանկար Գրիգոր Տաթևացի: Հիշատակարաններ գրչի 79ա, 111ա, 122ա, 177բ, 228ա, հետագայի 69բ (1593), 236բ (1600) և այլն: Կազմի ետևում փակցված թերթի վրա կարդում ենք. «Համար 17. Քարոզ-գիրք Տաթևացւոյն քառածալ խառն ի խուռն աղճատ գրչութեամբ գրեալ ի թղթի, թիւն և անուն գրչաց անյայտ»: Այնուհետև մի փոքր ցանկով տրվում են այն գրվածքները, որոնք Տաթևացունը չեն («Բան վասն մահու վարդապետաց», «Մեկնութիւն Սրարածոց և Ելից գրոցն Մովսէսի, հեղինակն անյայտ» և այլն): Ուշագրավ է Տաթևացու պարզունակ նկարը երկու աշակերտների հետ: էջ 2ա - «Սկիզբն գրոցս, որ կոչի ցանկ»: Ցանկից հետո գալիս են զանազան քարոզներ («Նորին մեծի Գրիգորի քարոզ Ծնընդեան ի բան Աւետարանիս...», էջ 5ա, «Յայլմէ քարոզ վասն Սկրտութեան բան...», էջ 13ա, «Քարոզ վասն Տեառնընդառաջի ի բանն...», «Նորին դարձեալ վասն մահու ի բան Սողոմոնի, որ ասէ Լաւ է օր մահուն...», «Նորին քարոզ Փոխման Աստուածածնին ի բանն...» և այլն): Ուշագրավ են «Վասն իմաստասիրաց կարգին» (հույն իմաստասերների մասին), 139բ, «Հարց. Կարգաւորութիւն ցուցման օրինութիւնաբեր ցուցակին. Պատասխան. Երանելին Մովսես Խորենացին թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ որդոյ սրբոյն Ներսէսի, յետ ՃԺԱ (111) ամի սրբոյն Գրիգորի եղև սկիզբն թարգմանութեան...», 140ա:

Ուշագրավ են նաև այլ գրվածքներ, որոնք տարբեր ձեռագրերով են գրված, այդ թվում «Վասն խորանաց Աւետարանի» գրվածքը (էջ 206բ-207բ), որը հասնում է մինչև «Արդ, առաջին խորանն...» բառերը:

Բ – N 2379: Ավետարան: ԺԹ դար: Կազմող Պետրոս (1404 թ.): Հիշատակարանները 1404 թ. են: Խորանների մեկնությունը գրավում է 1ա-4բ էջերը՝ նախորդելով Եվսեբիոսի թղթին և խորաններին, որոնք աղյուսակաձև են (էջ 5բ-10ա): Այստեղ խորանների մեկնությունը սկսվում է «Ժ մարդկան բնութիւն» բառերից և շարունակվում մինչև վերջ, լրացնելով A ձեռագրի մեկնությունը:

C – N 6396: Յովհաննէս Օրոմորեցւոյ Մեկնութիւն քերականի:

1ա - 1822 թ. հանձնվել է Լազարյան ճեմարանին. «Մո ազգային բարերար վեհագնեայ Աղայ Յովակիմ Լազրիչի համալսարանն, ի նուաստ Մանուէլ վարդապետէս յիշատակ վասն հոգւոյ Սեբաստացի Յոհաննէս Արքեպիսկոպոսի ի յԱմասեայ քաղաք վախճանեցեալ հոգևոր ծնողի իմոյ. 1822 յաւգ. 25»: 1բ - Հավանաբար Ծործորեցու նկարը աշակերտների հետ, բերևս բարձրաստիճան հոգևորականների: 2ա - «Յովհաննու Ծործորեցոյ արարեալ Համառօտ մեկնութիւն քերականին, որ երգնկացի կոչեցեալ է»: Ունի լուսանցազարդեր. վերնագրերը կարմիր գրերով են: 9բ - Լուսանցքում Ծործորեցին: 34բ - Լուսանցքում կացինով մարդ, որ կտրում է ծառը, որի գլխին թռչունների բույնն է, և թռչունը կտցին ճյուղ է բերում: 43ա - Քերականության վերջում հիշատակարան. «Եւ ի վերա այսր ամենայնի գգծագրող Աստուածատուր բանասէրս Թամշասացի յիշեա. զի ի հին օրինակէ բազում աշխատանս կրեցի. ՌՃՂ (1761) նոյեմբերի Ի»: 43ա-44բ - «Մեկնութիւն համաբարբառ խորանացն Աւետարանի»: Այս ԺԸ դարի ձեռագիրն ընդգրկում է A և B ձեռագրերի բնագրերը միասին:

ԲՆԱԳԻՐ ԺԵ
ՍՏԵՓԱՆՈՍ ՉԻՔ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ ՉԱՓԱԾՈՅ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների արվեստի ինստիտուտ, B-45 (Մատենադարան, մաներաժապավեն N 264), Աւետարան: 1623 թ.: Սպահան: Գրիչ Ստեփանոս Չիք Ջուղայեցի: Ծաղկող Մեսրոպ դպիր Խիզանցի: 1-5 թերթերում խորանների մեկնությունն է գրված հեղինակողի Ստեփանոս Չիք Ջուղայեցու ձեռքով: 7բ-16ա խորաններ: 17ա-18ա «Մատթէոսի Աւետարանի գլուխք»: 19բ Մատթէոսի նկարը: 20ա Մատթէոսի Ավետարանի տիտղոսաթերթը: Առաջին տողը կրկեսային կերպարներ ցույց տվող տառերով: 90ա Մատթէոսի Ավետարանի ավարտը: Նախադրութիւն Մարկոսի Աւետարանին: 90բ-91բ «Սկիզբն Աւետարանին, որ ըստ Մարկոսի»: 92բ Մարկոս ավետարանչի նկարը: 93ա - տիտղոսաթերթ: 136ա Ղուկասի Ավետարանի նախադրությունը: 136բ-138ա «Սկիզբն գլխոց Աւետարանին Ղուկասու»: 138բ Ղուկաս ավետարանչի նկարը: 139ա Ղուկասի Ավետարանի տիտղոսաթերթը: 208ա «Կատարեցաւ Աւետարանս ըստ Ղուկասու...» և «Նախադրութիւն Յոհաննու Աւետարանի...»: 209ա-բ «Սկիզբն գլխոյ Աւետարանին Յոհաննու»: 210բ Հովհաննես ավետարանչի նկարը: 211ա Հովհաննեսի Ավետարանի տիտղոսաթերթը: 273ա Հովհաննեսի Ավետարանի ավարտը: Հիշատակարանները գրված են ընտիր բոլորգրով: 273ա–274ա Փառքի հիշատակարան և չորս թվի սիմվոլիկայի մասին: Սիա Ավետարանի հիշատակարանից, գրված Ստեփանոս Ջուղայեցու կողմից[1]. «Եւ արդ, ես չետին ի կարգաւորաց և անպիտանս... Ստեփանոս սուտանուն քահանայ... Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զաբ. Աւետարանս ի մեծ քուակաքիս Հայոց ՌՀԲ (1623), ի շօշ քաղաքս Սպահան, ի հայրապետութեան տեառն Մելքիսեդ կաթողիկոսի Ամենայն Հայոց, և յաջաջնորդ մերոյ աբոռոյ սբ. ուխտի Ամենափրկչի վանացս հայչապետութիւն Բաբունապետին, և թագաւորութեան Պարսից շահ Ապասին, որ բազում յաղթութիւն արարեալ է ի վերայ երկրի, նման Աղեկսանդրու Մակեդոնացոյն...»:

Բացի այս ինքնագիր ձեռագրից Մատենադարանում մեզ հայտնի է ևս երկու ոտանավոր մեկնություն: Դրանցից մեկը N 4171

[1] «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հատոր Բ, Կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 100:

Ավետարանն է ԺԳ դարի, գծանկար մանուշակագույն խորաններով և գեղեցիկ տիտղոսաթերթով. 347ա-349բ էջերում տրված է խորանների մեկնություն-հիշատակարանը հետևյալ խորագրով. «Յիշատակարան Աւետարանի որ արարեալ յոգնաժեղ Ստեփանոս երէց Զուղայեցի որդի Ստեփանոսի»: Այն չնչին տարբերություններ է տալիս ինքնագրից և ավարտվում է

Այս մեկնութիւն Ժ խորանիս
հալ[մածայնից սուրբ քարոզիս]
չորրորդ գլխոյն համակարգիս
ըստ Եւսեբեա մեծ պատմագրիս

քառատողով: Այս ոտանավոր մեկնության տարեթիվը չի տրված:

Հաջորդը N 1245 ձեռագիրն է (Շնորհալի. Մատթեոսի Ավետարանի մեկնություն), ընդօրինակված 1618 թ. Ամիդում (ձեռագրում Համիք): Սակայն ոտանավոր հիշատակարանը այլ ձեռագրով է գրված 1647 Թ.: Այստեղ ավելի մեծ շեղումներ կան ինքնագրից և վերջում ավելացված է հիշատակարան, որտեղ ընդօրինակողը առանց իր անունը տալու և առանց տալու հեղինակի անունը, նշում է

Հազար Ղ (իննսուն) և Ջ (վեց) թիւն
Հանդիպեցաք ի Տիրվիկին,
հետ Խաչատուր և Մարկոս վարդապետին,
գրեցի զոտանաւորս գլխովին,
յորժամ ասես զսայ ի դասին,
հոտ համաւ որս է հետ նորին,
յիշեայ և գիս յայնմ ժողովին
և ասացես զՏէր ողորմին, ամէն:

Սա Գ մեկնության ձեռագրերի շարքում ժ ձեռագիրն է, որտեղ կա նաև Ներսես Շնորհալու խորանների մեկնությունը:

ԲՆԱԳԻՐ ԺԳ
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒՆ ՎԵՐԱԳՐՈՒՈՂ
ԵՐԿՐՈՐԴ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

XIII մեկնությունը բովանդակված է Մատենադարանի N9432 ձեռագրում (Ավետարան, 1432 թ., որն ընդգրկում է Ա և Գ մեկնությունները, որոնք մեզ մոտ համապատասխան տեղերում հանդես են գալիս իբրև T և F ձեռագրեր):

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Խորանների մեկնությունների բնագրերի օրինակները բավական շատ են ինչպես Մաշտոցի անվ. Մատենադարանի, այնպես էլ տարբեր հավաքածոների բազմապիսի հայկական ձեռագրերում (Ավետարաններ, ժողովածուներ, Ավետարանների մեկնություններ և այլն)։ Մեր ձեռքի տակ եղել է Մատենադարանի շուրջ հարյուր ձեռագիր։ Ինչպես ցույց է տալիս նրանց բովանդակությունը, ձեռագրերի հնության ու հավաստիության աստիճանը և միջնադարյան վերագրումները, այս բնագրերը գրվել են Ը դարի սկզբից մինչև ԺԸ դարը։

***

Առաջին բնագիրը, որն սկսվում է «Ջառաւել հրաշից արժանի...» բառերով, վաղ ձեռագրերում անանուն և անհեղինակ է և ԺԴ-ԺԵ դարերից ունի երկու վերագրում – Ստեփանոս Սյունեցուն և Ներսես Շնորհալուն։ Այն բովանդակող և մեր դիտարկած հնագույն ձեռագրերը (aABCDER) անանուն են, ընդօրինակված հիմնականում Եվսեբիոսի թուղթը և համաբարբառի խորանները կրող թերթերի ազատ էջերում։ Այս խումբն էլ դրված է գիտական բնագրի հիմքում։

Բայց ահա 1380 թ. (F) արդեն նշվում է խորագիր՝ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի...»։ GLQ ձեռագրերում ևս նույն խորագիրն է գրված։ F ձեռագիրն ընդօրինակվել է Խաղտյաց գավառում (Խախճ մենաստան), որը հարում էր Բարձր Հայքի Սպեր գավառին։ Եթե ընդունենք, որ հարաբերություններ են եղել ղրիմահայության և Խաղտյաց գավառի (Հատկապես Բաբերդի) հայության միջև[1], ապա Ա մեկնության սույն խորագրով տարբերակը անցել է Ղրիմ և մեզ հայտնի ղրիմյան ձեռագրերում կրել «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի...» վերտառությունը։ Այս տարբերակը կարող էր մշակվել նաև Բարձր Հայքի գավառներում, որտեղից մեծաթիվ ազգաբ-

[1] Ղրիմի նշանավոր գրիչ և ծաղկող Նատերի որդի Գրիգորը 1357 թ. Խաղտյաց գավառի եպիսկոպոսն էր։ Նրա հայրը Նատերը, Ղրիմ էր եկել Բաբերդից (Խաղտյաց գավառ)։ Արդեն գրիչ-ծաղկողների այդ նշանավոր ընտանիքը ցույց է տալիս Խաղտյաց գավառի և Ղրիմի կապը գուտ գրքարվեստի բնագավառում (տես Վ. Ա. Միքայելյան. Ղրիմի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1964, էջ 297-298)։ ԺԴ դարում Խաղտյաց գավառի և Ղրիմի հայերի մշակութային և ընտանեկան կապերի մասին լրացուցիչ և կարևոր տեղեկություններ է բերում է. Կորիմձաքյանը. տես Э. М. Корхмазян. Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.). Ереван, 1978, с. 26-30։

նակչություն է գնացել Ղրիմ: Բայց դժբախտաբար մեզ հայտնի չէ Ա մեկնության Բարձր Հայքում արած այլ ընդօրինակություն, բացի Բ (1655 թ.) ձեռագրից, որը ուշ շրջանի է և պատկանում է վասպուրականյան խմբագրության (այդ մասին քիչ հետո): Ուրեմն, մեր ձեռագրերից FGLQ-ն կազմում են մի տարբերակ, որը ավանդաբար մեկնությունը վերագրում է Ստեփաննոս Սյունեցուն: Ի դեպ դրանց պետք է միացնել նաև Գարեգին Սրվանձտյանցի հրատարակած ընդօրինակությունը (մեզ մոտ S պայմանանիշի տակ):

Տարընթերցվածների հպանցիկ դիտարկումն իսկ ցույց է տալիս, որ այդ խումբը չի կարող լինել խմբագրություն, իսկ եթե խմբագրություն է, ապա հնագույն անվերնագիր ընդօրինակումների հետ միասին (aABCDEFGLQRS), որի առանձին ձեռագրեր կամ ձեռագրախմբեր կարող են ունենալ տարընթերցվածային տարբերություններ: Այսպես, ELPQ Առաւել *փխ.* Զառաւել, DLQ գեղեցկազարդ *փխ.* գեղեցկազարդեալ: Միայն FGLQ խմբի ընդօրինակությունները «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի...» վերտառությամբ առաջին էջում առանձին կամ խմբով հանդես են գալիս համեմատաբար ավելի սակավ. LQR երանկ(գ)տունք *փխ.* երանգմունք, FLQRS, որտեղ R-ը հնագույն օրինակ է, FLQR խոյակաց *փխ.* խորանաց, LQ կամարաւք *փխ.* կարմրաւք:

Գրեթե նույն օրինաչափությունը տեսնում ենք հաջորդ էջերում. այսպես, «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի...» խմբի օրինակները առանձին հանդես են գալիս հետևյալ տարընթերցվածներում. GLQ մի ըստ մի կամարացն *փխ.* մի ըստ մի, LQ կեալ (Q եկեալ) տա յայտելով *փխ.* արտայայտելով, որ բացահայտ վրիպակ է, որտեղ *(ե)կեալ* բառը մեխանիկորեն միացել է *արտայայտելով* բառի մասը կազմող *յայտելով*-ի հետ, GLQR գմբարն *փխ.* գմբաւն, LQ ամենեքեան *փխ.* արմաւենիքն: Այսպիսով, հիշյալ խումբը ավելի հաճախ մոտ է հնագույն գրչագրերին: Հնագույն կիլիկյան ձեռագրերը (ԺԱ-ԺԲ դարեր) միանում են «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի...» վերտառությունն ունեցող խմբի հետ իբրև մեկ միասնական խմբագրություն (մեր օգտագործած հնագույն օրինակներն են a – ԺԱ դար, R – ԺԲ դար, A –1232 թ., Թարգմանչաց Ավետարան, B – 1310 թ., Երզնկայի Ավետարան, C - Ավետարան, ընդօրինակված Դուդուշի քաղում Ս. Գրիգորի և Ս. Սարգիսի վանքերում, D – 1332 թ. Խաղտեաց ծորում, E – 1333 թ. վասպուրականյան ձեռագիր, բայց մեկնությունը անվերնագիր):

Ցիպնա վանքում 1419 թ. Գրիգոր վարդապետի (Գրիգոր Խլաթե-

ցի Ծերենցի)[2] ընդօրինակած Ավետարանում (H) Ա մեկնությունը վերագրվում է Ներսես Շնորհալուն («Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի եւ հոգեընդաց երգաւղի, տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ ժ խորանաց սրբոյ Աւետարանիս եւ վասն երանկ ըոանկ գունոցն ծաղկանց եւ հաւուցն եւ ծառոցն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»): Այս Ա մեկնությանը անմիջապես հաջորդում է մեկ այլ մեկնություն «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց Աւետարանիս» (մեր մեկնությունների շարքում հինգերորդը): Այս երկու մեկնությունները այնուհետև նույն խորագրերով կրկնվում են IKMNOP ձեռագրերում, որոնք, կարելի է ասել, կազմում են մի առանձին խմբագրություն և ընդօրինակված են Վասպուրականում (H- Ցիպնա վանք, որ և Ցիպնա կոգու վրա շինված Ս. Ստեփանոսի վանք[3], I – Խլաթ, K - Բաղեշ, M – Լիմ, N – տեղն անհայտ, բայց ստացողը Սիմեոն Ապարանցի, որ վասպուրականցի է (Ապարանքը գյուղ է Մոկսում), O – տարբեր վայրեր, այդ թվում Վանա լճի Կտուց կղզի, P – Կարին): Վերջին չորս ձեռագրերը ժէ դարի են, բայց միայն դրանցից մեկն է հստակ այլ վայր ցույց տալիս (P), պատկանելով սակայն վասպուրականյան խմբագրության, և դրանցից միայն M-ում է պակասում «Յայլմէ ասացեալ...» հինգերորդ մեկնությունը:

Ձեռագրերի այս խումբը (սրան հաճախ միանում է E ձեռագիրը[4], ընդօրինակված հավանաբար Վասպուրականում 1333 թ.) իրավամբ կարող ենք համարել վասպուրականյան խմբագրություն: Վերջինս ունի 48 տարբերթերցված, որոնց մեծագույն մասը՝ իմաստային և խմբագրական:

Այսպես, տեսնում ենք հետևյալ պատկերը. *Յատակ*-ի փոխարեն *Ատեկատս* (KMNO), բայու-ի *վրայ* բանիւ (KMNOP), *Ընկատակերպ*-ի փոխարեն *Ընկատակերտ* (GHIKMNOPR), *մարմնոցն վրայ, մարմնոյն*, իսկ KN-ում *անմարմնոցն*: Այստեղ անորոշ երկնային մարմնի մետաղի կամ նյութի փոխարեն հանդես է գալիս երկնային մարմինների կամ անմարմինների (հավանաբար ոչ ֆիզիկական երկնքի) մետաղ կամ նյութ, որ խմբագրական ուղղում է. *արտակայեալ* բառի փոխարեն *արտակայեալ* (EIKMP), խաւսելով *վրայ*. չխաւսելով (HIKMN), որ խմբագրական ուղղում է, ըստ որում այդ երկու հակա-

---

[2] Հ. Հ. Հակոբյան Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Բ. Երևան, 1982, էջ 141, ծանոթ. 95:

[3] Տե՛ս Հ. Ոսկեան. Վասպուրական-Վանի վանքերը. Ա մաս. Վիեննա, 1940, էջ 135 և հետո:

[4] Ձեռագրի մասին խոսք չկա Հր. Հակոբյանի գրքերում և ալբոմում:

դիր իմաստներն էլ տրամաբանական են թվում, քանի որ մի դեպքում պետք է հասկանալ, թե մարգարեական (Հին Կտակարանի) օրենքները եկեղեցու հիմնադրումով կորցնում են իրենց դերը – չեն խոսում եկեղեցու հետ, մյուս դեպքում Հին Կտակարանի օրենքները Նորի Քրիստոսի հիմնած եկեղեցու օրենքների խորհուրդն են, այսինքն խոսում են:

Այնուհետև հետևյալ պատկերն է. CDHIKMNOP *չիք* եկեալ: EHIKMNOP ամպն *փիս.* սեամբն (այստեղ թեև բառիմաստները տարբեր են, բայց մեզ թվում է խոսքը վերաբերում է ամպի այանը, որի մեջ թաքնված խոսում էր Աստված Մովսեսի հետ, իսկ ինչպես երևում է երրորդ Ընորհալու մեկնությունից, յոթերորդ և ութերորդ խորանները նվիրված էին Մովսեսին): EHIKMNOP *չիք* սեամբ (ինչպես տեսնում ենք, սույն խումբը, վերևում ունենալով *ամպն*, այստեղ հանել է *սեամբ* բառը, քանի որ *ամպը* ինքնին արդեն *պատրուակ* է, րող, որով ծածկված էր Քրիստոսի խոսքը, և բառի կրկնությունը կլիներ նույնաբանություն), մայրեացն *փիս.* մարեստանեաց. HIKMP (Օ մի փոքր այլ կերպ) վասնզի որք առին զՀոգին Սուրբ, ոչ են ստոյգ Հոգի Սուրբ, այլ ընդունակք Հոգւոյն Սրբոյ (այստեղ ավելացված հատվածները կարծես մեկնաբանող դեր կատարեն, ուստի թերևս դրանք հետագայի են), HIKMNP Քրիստոսի ի խաչին *փիս.* Քրիստոսի: Ապա ավելացվում է Ամբակում մարգարեի վկայությունը:

Այնուհետև կան ուրիշ ուշագրավ տարընթերցվածներ. HIKMNOP բանիւ *փիս.* բերանով: HIKMNOP զի ստուերն *փիս.* ստուերն: HIK և Քրիստոս յայտնեցաւ իւր արեամբն ի փրկութիւն *փիս.* յայտնեալ Քրիստոսի արեամբն փրկութիւն: HIKMNOP վասն որոյ *փիս.* վասն այնոցիկ: Ավելացված հատված. «ծայնիւ որսորդութեամբ ի ջուրսն զառատութիւն Հոգւոյն Սրբոյ եւ զառաջատեսութիւն մարգարէիցն շնորհաց ի յոտս աւետարանչացն նայելով»: HIKMNOP ոսկեգոյն *փիս.* ոսկեզգեստ: HIKMNOP կարմիրն հաստացեալ զհին քահանայութիւն ցուցանէ, որ նըւաղեալ ընդ կամարաւ (N *կարմիրսն* սխալ ընթերցված) եմուտ» (թվում է այս խմբագրությունում միտքը ավելի ճշտված է, թեև հին օրինակներում նախադասության միտքը ավելի անորոշ է, բայց տարբեր չէ, ուստի թողեցինք հին օրինակների ընթերցվածը):

Մենք մատնանշեցինք այս երկրորդ խմբագրությանը առավել հատուկ տարընթերցվածները: Որոշ տարբերություններ (ընդամենը երկուսը) բխում են գրիչների սխալ ընթերցումից (օրինակ,

CEFGLRQ նուագեալ *փիս* նուաղեալ):

Տարբեր ձեռագրերում այլքի են ընկնում նաև բեքմաճ տարբերությունները. *գ* կամ *ճ* հոդերի գործածությունը կամ դրանցից հրաժարվելը և այլն: Ընդ որում դրանք առկա են տարբեր ժամանակների ձեռագրերում: Բնագիրը կազմելիս մենք առաջնորդվել ենք վաղ ձեռագրերի ուղղագրությամբ: Կարելի է ցույց տալ օրինակներ զույգերի ձևով.

C-ի խորհուրդն *փիս* ի խորհուրդ, սեղան *փիս* սեղանն, դեղաւք *փիս* դեղովք, առինն *փիս* առին, զարդարելաւք *փիս* զարդարելովք և այլն:

E – պիտառեցան *փիս* պիտառեցին (նաև H-ում), զսեւաղեղսն *փիս* զսեաւաղեղսն, սեւ *փիս* սեաւն, մերծանալով *փիս* մերծենալով, կանովնին *փիս* կանոնին:

H – կարմրօք *փիս* կարմրաւք, չորս *փիս* չորք, զնոյն *փիս* զնոյնս:

I – անդէն *փիս* անդրեն:

A – խորաց *փիս* խորանաց, զնտրողական *փիս* զընտրողական, նմայ *փիս* նմա:

Եվ այսպես կարելի է բազմապատկել օրինակները, որ ավելորդ ենք համարում:

Քննական բնագիրը կազմելիս խուսափել ենք նշել նախադասության և բառիմաստների վրա չներգործող այն կարգի տարբերությունները, որոնք վերաբերում են ուղղագրական, խոսվածքային և բերականական (թեքում, դիմորոշ հոդեր և այլն) ոլորտներին: Մեր կարծիքով, այդ տարբերությունները բխում են հիմնականում այն բնագրերից, որոնցից օգտվում են գրիչները: Օրինակ, Ստեփանոս Սյունեցուն վերագրվող բնագրի օրինակների մեջ հանդիպող այդ կարգի տարբերությունները – տալիս ենք ձեռագրի նիշը. աքաղօղքն (H) - աքաղաղք. եղջերք (FP), եղջեւրք (DH) - եղջիւրքն. մարաստանեաց (D), մայրեստանեաց (L) – մարեստանեաց. զնփին խորն (Ը) - զնփին խաւարն (այստեղ տարբերությունը ուղղագրական է և ոչ իմաստային, քանի որ գրիչը *աւ* հապավել է *օ* և ոչ թե *ափ*): Նաև ստւերն (D) – ստուերն. կանովնին (L) – կանոնէն. Կանովնին (CE) – կանոնին. կանովնաց (GFPR) – կանոնաց. փետուրովն (N) - փետրովքն. ճողք (c) - ճոխք. կապուտ (C) – կապոյտ. բաւղն (CH) – քողն. զսեւաղեղսն (EI) - զսեաւաղեղսն. սեւն (E) – սեաւն. Սհարոնի (E) - Սհարովնի. զընթարակայիցն (O) - զընթերակայիցն. պիտանացւածս (H) – պիտանացուածս. երանկմունք (HI) - երանգմունք. ամբով (H) – ամպով. հարուբեան (D) – յարուբեան: 1443 թ.

ձեռագրում (մեր ցանկում I – N 7772) երկաթագրի նմանողությամբ *և*-ի փոխարեն գրվում է *եւ*: Լինում են և աստվածաշնչական առանձին անունների ուղղագրության տարբերություններ: Օրինակ. Ռախաբն (A) – Ռախաբն. զՄովսիսի (R) - զՄովսեսի: Երբեմն նույն բառի ուղղագրության մեջ գրիչն է լինում անհետևողական (օրինակ ԺՂ դարի N 7645 ձեռագրում – G, մի տեղ գրիչը գրում է *սև*, մի այլ տեղ *սեաւ*):

Խորանների սույն մեկնության համար Ընորհալու հեղինակ լինելը բացառվում է: Բայց երկրորդ խմբագրությունը, ինչպես ցույց տվեցինք, ունի հետագա ճշտումների և խմբագրումների հետքեր: Հնարավոր է, որ Ընորհալին Մատթեոսի մեկնությունը գրելուց առաջ խմբագրած լինի Սյունեցու մեկնությունը, քանի որ Վանական վարդապետին մեր վերագրած Դ մեկնության մեջ (ԺԳ դար) կան հետքեր, որոնք ցույց են տալիս, որ այդ դարում այդ խմբագրությունը գոյություն է ունեցել, օրինակ, Ամբակում մարգարեի հետ կապված հատվածը: Ընդհանրապես սույն մեկնությունը կարոտ է լեզվաոճական հետագա հետազոտության: Առաջին հայացքից կարելի է ասել, որ այն կրում է հունաբան ոճի հետքեր և որ այն խիստ խտացված ու տարողունակ շարադրանք է:

...

Բ մեկնությունը («Մեկնութիւն խորանաց Աւետարանին») ունի բազմաթիվ քաղվածքներ առաջինից: Այն մեզ հայտնի է միայն մեկ հնագույն ձեռագիր Ավետարանով (Մատենադարան N 2952, ԺԱ-ԺԲ դարեր): Այսպես Ա մեկնության «Արդ, առաջին խորանն չորք դեղովք նկարեալ, ունի զառաջին խորանին գչորեքնիւթեան խորհուրդն: Սիւնքն ծիրանիք զհաստատութիւն եական աթոռոյն արտաքոյ տարերց» հատվածը գրեթե նույնությամբ կրկնվում է երկրորդի առաջին տողերում: Հաջորդ նմանությունը Ա մեկնության «Եւ որպէս աքաղաղք ի մէջ մարեստանեաց (այլուր մայրեաց) ճոխք և համարձակք, հրամանատուք եւ ահարկուք» և Բ մեկնության «Ջի որպէս աքաղաղն ի մէջ մարեաց հրամանատուք եւ ահարկուք» հատվածներն են: Այնուհետև Բ-ի «Ծառք արմատեցիք, որ ի ստորոտս եւ ի վերայբուսեալք, վասն զի ճշմարտութիւնն յերկրէ աստի բուսաւ առ վերին կարգս կանաչացեալ վարդապետութեամբ...» կրկնում է Ա-ի «Իսկ արմատեցիքն ի ստորուստ ի վեր բուսեալ վասնզի յերկրէ աստի ճշմարտութիւն բուսաւ մերծենալով առ վերին կարգսն կանաչա-

ցեալ արդարութեամբն...» հատվածը: Ստորև բերվում են մնացած համեմատելի հատվածները:

Ա

«Իսկ եղիւրքն մերձ առ վերին սեղանն զՄովսէսի եւ զԱհարովնի բերեն գխորհուրդս»:

Բ

«Իսկ եղջիւրքն առ վերին սեղանն զՄովսէսի եւ զԱհարովնի բերեն խորհուրդ»:

Ա – «Իսկ վերնայարկ սեաւն լայնատարած տարածեալ գհանրաւքն, իբրեւ ամպով ծածկեալ, ունի գխորհուրդ աստուածային տնաւրէնութեանն եկեալ (մի տեղ աստուածայայտ տնաւրէնութիւն Քրիստոսի)»:

Բ – «Իսկ վերնայարկ սեաւն իբրեւ ամբ ծածկեալ ունի գխորհուրդ տնաւրէնութեանն Քրիստոսի...»:

Ա – «Եւ երկու աղաւնակերպ հաւքն ի նմա նայելով (այլուր հայելով), իբրեւ ոչ եթէ ստոյգ աղաւնիք, այլ նմանութեամբ, վասն գի որք առին գՀոգին Սուրբ, եղեն աւբեւանք Հոգւոյն Սրբոյ (այլուր վասն գի որք առին գՀոգին Սուրբ, ոչ են ստոյգ Հոգի Սուրբ, այլ ընդունակք Հոգւոյն սրբոյ)»:

Բ – «... Երկու աղաւնիքն ի նա հայելով, ոչ ստոյգ աղաւնիք, այլ լոկ նմանութիւն, վասն գի որք առին գՀոգին Սուրբ, ոչ եթէ նոքա էին սուրբ, այլ ընդունակք Հոգւոյն Սրբոյ»:

Այսպիսով, Բ բնագիրը Ա-ից վերցրել է մի շարք հատվածներ (ավելի մեծ թվով բառակապակցություններ): Բայց տարօրինակն այն է, որ Բ բնագրում ընտրված են երբեմն Ա-ի այն ընթերցվածները, որոնք հանդիպում են շատ ավելի ուշ ընդօրինակված ձեռագրերում (ԺԴ դարից հետո), մինչդեռ Բ բնագիրը բովանդակող ձեռագիր Ավետարանը չի կարող ԺԲ դարից ավելի ուշ գրված լինել: Այստեղից ևս կարելի է հետևցնել, որ Ա բնագրի երկրորդ խմբագրությունը շատ ավելի հին ծագում ունի, քան առկա ձեռագրերը (սկսած Գրիգոր Խլաթեցու ընդօրինակած 1419 թ. գրչագիր Աւետարանից):

***

Խորանների մեկնություններից ծավալով ամենամեծը և բովանդակությամբ ամենահարուստը Գ-ն է, որի բնագիրը կազմելու համար ընտրել ենք 26 ձեռագիր (այդ թվում նաև W տպագրված օրինակը, որը հետագայում իր հոդվածի հետ նույնությամբ դրել է Հ. Քյուրդյանը)[5]: Եղած նյութն էլ թույլ է տալիս հետևելու «Մեկնության ոդիսականին» տարբեր տիպի ձեռագրերում:

Առաջին տիպը պետք է համարել «ժողովածուները»: Դրանք հիմնականում ԺԳ դարի ձեռագրեր են, գրված Մեծ Հայքի հյուսիս-արևելյան գավառներում: Զարմանալի է, որ մեր իմացած կիլիկյան ոչ մի ձեռագիր չունի սրա ընդօրինակությունը: Առաջին ձեռագրում (a, 1255 թ., Խորանաշատ վանք) մեր բնագիրը հաջորդում է «Հարցմունք և պատասխանիք Վանական Վարդապետի» գրվածքին և նախորդում «Երանելոյն Աբանասի արհեպիսկոպոսի հարցմունք և պատասխանիք»-ին: Երկրորդում (A, 1274-1280 թթ., Գետիկ, Մահկանաբերդ) մեկնությունը հաջորդում է «Սկիզբն Եսայեայ մարգարէին» գրվածքին: Նրան հաջորդում են «Պատճառ թելադրութեան Դ Աւետարանացն, թէ որպէս գրեցան և յորքան ժամանակս...», որին հետևում է հատված Ներսես Շնորհալու «Մատթէոսի Աւետարանի մեկնությունից» («Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի...»): Երրորդ ձեռագրում ևս (B, 1280 թ., Դեղձուտ, Մահկանաբերդի գավառ) մեկնությունը գրված է Ներսես Շնորհալու Մատթէոսի Ավետարանի մեկնության հարևանությամբ (20բ-31ա, «Ի Մատթէի մեկնութենէն Ներսիսի հայոց վերադիտողի ի խնդրոյն նորին եղբաւրն Գրիգորիսի՝ առաջին վերադիտողի»), որին հաջորդում են ավետարանիչների այլաբանական մեկնությունները ինչպես A ձեռագրում: Չնայած դրան, այստեղ մեկնության համար որոշակի հեղինակ է նշված. «Երանելոյն Վարդանի ասացեալ յաղագս խորանաց Աւետարանին»: Փ. Անթապյանի կարծիքով, հիշյալ Վարդանը Ներսես Շնորհալու աշակերտ և մեկնիչ Վարդան Հաղբատացին է: Միանգամայն հնարավոր է, որ Վարդանը իր մեկնությամբ լրացրած լիներ իր բազմաշխատ ուսուցչի գրած ու կիսատ թողած գործը: Բայց արդյո՞ք նա ավելի մեծ հեղինակություն էր, քան Ներսես Շնորհալին, որ խորանների պատկերման արվեստի այսպիսի համապարփակ տեսություն տար: Բոլոր դեպքերում դա մնում է Վարդանի անունը հիշատակող

[5] Հ. Քյուրտեան. Մեկնութիւն խորանաց Աւետարանին ասացեալ տեառն Ներսէսի Շնորհալւոյ («Բազմավէպ», 3-4, 1973):

մեզ հայտնի միակ ձեռագիրը: Ոչ a, ոչ A, ոչ C ձեռագրերը, որոնք ընդօրինակված են նույն գավառում կամ շրջակայքում, որևէ հեղինակի անուն չեն հիշատակում խորանների մեկնության խորագրում:

Փ. Անթապյանը ԺԹ դարի առաջին կեսի չորս նշանավոր Վարդաններից (Վարդան Արևելցի, Վարդան Այգեկցի, Վարդան Բարձրաբերդցի, Վարդան Հաղբատացի) կանգ է առնում վերջինի վրա, քանի որ B ձեռագրում (1280 թ.) «երանելի» մականունը պիտի տրվեր Հաղբատացուն (նա ավելի վաղ էր վախճանվել, քան Արևելցին): Այստ կռվանն այն է, որ Վարդան Արևելցու լեզուն մատչելի, խոսակցական էր, չնայած նրա շոշափած ամենաբազմազան աստվածաբանական հարցերին և չնայած նրա վիթխարի համբավին ու մեծ վարկին Կիլիկիայում և Մեծ Հայքում, Կոստանդին կաթողիկոսից և Հերթում Ա բագավորից ստացած արտոնություններին: Մինչդեռ Վարդան Հաղբատացին Կիլիկիայում եղած ժամանակ «սերտորեն համագործակցել է Ներսես Շնորհալու հետ, վերջինիս խնդրանքով մատենագրական աշխատանքներ էլ է կատարել: Ներսես և հիշյալ մեկնությունը նման խնդրանքի արգասիք է»[6]:

Սա արդեն որոշ չափով օգնում է պարզելուն, թե որ Վարդանն է B ձեռագրում համարվել «երանելի» և մեկնության հեղինակ: Սակայն որպեսզի կասկած չունենայինք Վարդան Հաղբատացու հեղինակության վրա, նրա մեկնություններից առնվազն մի քանիսը պետք է դիտարկվեր ոճական առումով: Առայժմ այդ հնարավորությունը չունենք[7], քանի որ նախ պետք է պարզել, թե Շնորհալու պատվերով ինչ մեկնություն է գրել Վարդան Հաղբատացին: Գիտենք, որ խորանների սույն մեկնությունը հանդիպում է գրեթե միշտ Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության հետ, որը հետագայում շարունակվել է երկու տարբերակով. ա) Արիստակես գրչի (Շնորհալու աշակերտի) քաղված լինելով տարբեր հեղինակներից (ինչպես ասված է D ձեռագրի մեջ առկա հիշատակարանում. «Նա աշխատեալ ժողովեաց զբանս մեկնչաց ի մի յետ տեառն Ներսիսի»), բ) Հովհաննես Օձնեցու (W, X)[8], երբ տնահամարները մեկնվում են հերթա-

[6] Փ. Անթապյան. «Ժ խորանաց» երկու մեկնությունների չուրջ («Էջմիածին», Բ-Գ, 1987, էջ 86):

[7] Վարդան Հաղբատացին հարգված անուն է շնորհիվ իր մերձավորության Ներսես Շնորհալու հետ, որը նրա խնդրանքով մեկնություններ է կազմել, շնորհիվ նաև իր աշակերտների (Գալիք Քոբայրեցի, Խաչատուր, որը իր 1195 թ. հիշատակարանում գրվում է Վարդան և այլն): Վարդան Հաղբատացուն առայժմ վերագրվում է մեկ մեկնություն. «Դանիէլի գրոց» (տես Հ.Ն. Սկիճեան. Վարդան վրդ. Հաղբատացի. «Հանդէս ամսօրեայ», 1908, թիւ 8, էջ 232-235):

[8] W նիշով օգտագործված է տպագիր օրինակը: X-ը (№ 1279, 1655-ից հետո) մեր

կանությամբ, ինչպես Ընորհալու մոտ:

Իսկ հիմա դիմենք բուն բնագրին: Համեմատաբար միասնական բնագիր ունեն ԺԹ դարի ձեռագրերը (aAB): Երբեմն սրանց միանում է նաև նույն դարում ընդօրինակված C ձեռագիրը (Հաղբատ)*: Իսկ առհասարակ ոչ օրինաչափ շեղումներ տալիս է ամեն մի ձեռագիր, որ կարելի է համարել գրչական շեղում (գիտակցական թե ակամա):

Այսպես. CDEIKLMNOPQRSTVXYZ խումբը սկզբում տալիս է չորս տարբերություն (ախորժակաւք *փխ.* կամաւք. բանիս *փխ.* բանիւ. դիմեալ *փխ.* դիմեաց. կամակորութեան *փխ.* կամակորութեամբն), որոնցից մեկը կարելի է համարել իմաստային, մյուսները քերականական:

Նույն խումբը այնուհետև հաճախ C-ի բացակայությամբ (առնվազն 18 և ավելի ձեռագրեր) չորս-հինգ տարբերություն է տալիս (Տեառն *փխ.* Աստուծոյ, չափ *փխ.* ի չափ, գերազանցութեամբ *փխ.* գերազանց բնութեամբ, ձևացեալ *փխ.* ձևացելոց): Այստեղ իմաստային տարբերություններ չկան:

Ապա նույն խումբը մի տեղ A ձեռագրի մասնակցությամբ, ունի բացթողումներ. *չիք* և հանդերձ. *չիք* այսու. նկարեալ *փխ.* նկարեալք. *չիք* ի սկիզբն Աւետարանին. Աւետարանացն *փխ.* աւետարանչացն, ընդ որում, երեք տեղ պակասում են բառերը, մի տեղ տարընթերցված է, ձևացածները քերականական-իմաստային տարբերություններ են:

Այնուհետև հանդիպում են իմաստային և քերականական շեղումներ, փոփոխակներ. *չիք* ի վերոյ. մոլորութեանց *փխ.* մոլորութեան. առաքելոյ(ն) *փխ.* առաքելոցն. սարբիանոսացն *կամ* ընդդիմաբանոդացն *փխ.* (ընդդեմ) արիանոսացն. խորանն *փխ.* տաճարն:

Այս մեծ խմբի մեջ (C-ից կամ D-ից սկսած) կա ձեռագրերի մի կա-

ձեռագրերից միակն է, որտեղ Ընորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը ավարտել է Յովհաննես Օրձոորեցին: Հետաքրքիր է, որ Օրձոորեցու ավարտած Մատթեոսի մեկնության ձեռագրեր ավելի շատ են երևան եկել Սրբոց Հակոբյանց Սատենադարանում (N 719, աճթվակիր, N 967, ԺԸ դար և այլն) (տես «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց». հտ. երրորդ, Երուսաղէմ, 1968. հտ. չորրորդ, 1969. հտ. հինգերորդ, 1979, կազմեց Ն. Եպս. Պողարեան):

* Հ. Շահատակարաններից մեկում խնդրվում է ներել անհաջող գրչության համար. «Ընդ նմին (ստացող և գրիչ Բարսեղի-Վ. Պ.) յիշեսջիք և զմեղապարտ գրիչս և մի մեղաւոր լինիք, զի ծեր եմ և տկար և պակասել ի լուսոյ...» (96բ): Ըստ երևույթին նախագաղափար օրինակն էլ մի բան չի եղել. «Ընդրմնեցի Քրիստոս Աստուած սպասաւորի բանիս Բարսեղի և մեղաւոր և յետին գրչիս Յոհաննիսի. ամեն: Զի և յոյժ նեղիմ յաւրինակէս, և այն զի պակասել ի լուսոյ և տկար մարմնով և անցեալ զաւուրքք» (202բ, տես նաև «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները», ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 522):

յուն ենթախումբ (MPRUWY), որի մեջ մտնում է տպագրված տարբերակը (W): Դրանք հիմնականում ժե դարի ձեռագրեր են, որոնց կարող է հարել մնացած ձեռագրերից մեկը կամ մի քանիսը: Սիա այդ խմբի տարբերթերցվածները. *չիք* և անուշահոտութիւնք. FH-ի հետ յաւետսն *փխ.* յաւետիսն, զընչաստրն *փխ.* զընչաստրսն, զոր *փխ.* զոր և, սպասաւորութեամբ(ք) *փխ.* տպաւորութեամբ, խաւսեցին (խօսեցին) *փխ.* խաւսին, այնոցիկ *փխ.* այսոցիկ, ի տասն բանս *փխ.* ի բանս, բազմեալ *փխ.* բնակեալ, եօթերորդն և ութերորդն *փխ.* եաւթ և ութերորդ, *չիք* սեամբք, յայտնեաց *փխ.* յայտնեսցի, *չիք* զոր և մարգարէիցն ուսուցանէին, նշանակէ *փխ.* ակնարկէ, թուլութեամբ *փխ.* յուլութեամբ, *E-ի մասնակցությամբ* Իսկ երևալ եւթներորդ խորանն որ *փխ.* Իսկ եւթն և ութերորդ խորանն, կապոյտն *փխ.* սեաւն, և կարմրին նուաղ[գ]ութիւն *փխ.* և նուազ կարմիրն, որով և Մովսես *փխ.* յորում Մովսեսն, շինելոյ *փխ.* շինուածոյ, ընդհովանագրեն *փխ.* հովանագրեն, աշակերտս *փխ.* շնորհս, Ջամարա, Ռախաբու և Յոութայ *փխ.* Րահաբու և Ջամարայ և Յոութայ, որդիք մարգարէիցն *փխ.* դասք մարգարէիցն, Քրիստոսի *փխ.* Տեառն, հոգիս *փխ.* ոգիս, արբեցան *փխ.* սրբեցան, անձանց *փխ.* շրթանց, կազմեալք *փխ.* պարգեալք, գնիաւորութիւն *փխ.* գնիաբանութիւն, ի կատարման(ն) *փխ.* ի կատար աւարտմանն, *չիք* և զպետութիւնս, զպսակն եկեղեցւոյ *փխ.* զարեգակն եկեղեցւոյ, սակս *փխ.* սակաւ, երևելեօքս *փխ.* երևելի արարածովքս:

Այս փոքրիկ խմբի ձեռագրերը (բացի W-ից և Y-ից) ընդօրինակված են Նոր Ջուղայում, Բաղեշում, Վանում և ունեն հետևյալ առանձնահատկությունները. ա) ոճական-քերականական կանոնարկում և հղկում. բ) որոշ դեպքերում իմաստի պարզեցում. գ) բացթողումներ. դ) աստվածաշնչյան հղումների բաց թողած հատվածների վերականգնում: Առհասարակ այս (և ոչ միայն այս) ձեռագրերում նկատում ենք բնագրի նկատմամբ (նկատի ունենք հնագույն ձեռագրերը) բանասիրական մոտեցում, քերականական հստակումներ և ոճական հղկումներ: Բառերի և բառակապակցությունների մի մասն էլ կարելի է համարել պատահական ակամա բացթողում: Սակայն ըստ երևույթին, գիտակցաբար է հանվել «զոր և մարգարէիցն ուսուցանէին» արտահայտությունը, քանի որ նրանից վեր նշված է, թե երկրորդ և երրորդ խորանները նվիրված են «զմիջին և զվերջին քահանայապետութեանցն», երեք կամարով է, քանի որ «անձնաւորութիւն երրորդութեան գիտելի էր նոցա, ուսեալք ի սերովբէիցն յերեքսրբեանն», իսկ երբ այս հատվածին ավելացնում է «զոր և մար-

գարէիցն ուսուցանէին» չի հասկացվում, թե «գոր»-ը ո՞ւմ է վերաբերում միջին և վերջին քահանայապետությունների՞ն, թե «սերովբեներին» (ըստ Դիոնիսիոս Արիսպագացու ուսմունքի, մարգարեները կարող էին հաղորդակցվել վերջին քահանայապետության դասի հետ), թե՞ բոլորին, որոնց մասին մեզ ուսուցանել են մարգարեները:

Մի այլ տեղ «զընչաստրսն» ձևի փոխարեն գրված է «զընչաստրն» եզակի ձևը, որ հետո համապատասխանում է բայական եզակի կոչական ձևերին (երթ, վաճառեա), «բնակեալ ի լոյսն» հասարակ ձևի փոխարեն ընտրված է «բազմեալ ի լոյսն» վսեմ, հանդիսավոր ձևը: երկու հոմանիշներից երբեմն վերցվում է մեկը (օրինակ «իշխանութիւնս և գպետութիւնս» հոմանիշներից վերցված է «իշխանութիւնս»), այլ դեպքերում ընդունված է պարզ ձևը ավելի բարդից («հանելոյ պատարագ» *փխ.* «հանել պատարագս»): երբեմն վաղակատար բայերը փոխարինվում են ներկայով: Այդ խմբի գրիչները տեղ-տեղ բառերի կամ նախադասությունների տեղափոխում են կատարում ավելի գեղեցիկ հնչեղության համար: Այս խմբին հարում են Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի N 1250 (1638 թ. առաջ), N1252 (1635 թ., Զեյթուն), N 6573 (1715 թ., Կ. Պոլիս), N 6492 և այլ ձեռագրեր: Կան նաև ուշ ձեռագրեր (NN 4007, 1837, 6575, 5880), որոնք մոտ են մեր կազմած բնագրին:

Երուսաղեմի Սրբոց Յակոբյանց վանքի Մատենադարանի հավաքածոյում ևս կան խորանների գ մեկնությունը բովանդակող ձեռագրեր: Մենք աչքի ենք անցրել Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» աշխատության հատորները: 1620 թ. Կաֆայում ընդօրինակված Մատթեոսի Ավետարանի մեկնության (ձեռ. 258) վերնագրում ուղղակի իբրև հեղինակ նշված է Ներսես Շնորհալին «Մեկնութիւն խորանաց Աւետարանին ասացեալ տեառն Ներսէսի»[10]: 1486 թ. Սվագ վանքում ընդօրինակված նույնպիսի ձեռագրում (ձեռ. 283) կարդում ենք «Սակս տասն խորանաց» վերնագիրը, որ հատուկ է այն մեկնություններին, որոնք ավարտել է Հովհաննես Ծործորեցին[11]:

Կա նաև 1278 թ. առաջ ընդօրինակված մի Մատթեոսի մեկնություն («Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէի, ի բանից նախաշար վարդապետաց եկեղեցոյ, կարգեալ և յաւրինեալ դիւրահաս ընթերցողաց Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի

[10] «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հտ. երկրորդ. Կազմեց Ն. Տաք. Պողարեան. Երուսաղէմ, 1967, էջ 43 (ձեռ. 258, էջ 5):

[11] Բայց սա, ինչպես երևում է, ավարտել է Արիստակեսը (էջ 103-104):

խնդրոյն նորուն եղբաւր Գրիգորիսի առաջին վերադիտողի հայոց», որը ևս ունի խորանների մեկնությունը (ձեռ. 332)։ Սրա արժեքը ձեռագրի հնության մեջ է, բայց ափսոս որ վայրը հայտնի չէ (1278 թ. հետին ստացողը Բագնայրից է)[12]։

Ձեռագրերում, անկախ նրանց ընդօրինակման ժամանակից, գրության այս կարգի զուգահեռ ձևեր են հանդիպում, հոգեբուխ-հոգեբուղխ-հոգէբուղխ, ցանկեացես-ցանգեացես, բոլորից-բոլորիցս, բաբոյց-բագոյց, էհաս-եհաս, հաւատն-հաւատսն, կարօտութեան-կարոտութեանս, փափագեաք-փափաքեաքն, սերովբեական-սրովբեական-սրոբեական, գԻսրայէլ-գԻսրայէղ, կաթուղիկէ-կաթողիկէ, Կուռնելիոս-Կոռնելիոս, Րահաբու-Ռահաբու – Ռահաբու-Րախաբու, կանաց-կանանց(ն), զՄովսէսի և զԱհարովնէ-զՄովսէսի և զԱհարոնի, Եմմանուէլին-Էմմանուիլի, գնոցա-գնոցայն, Յովհաննես-Յովաննես, թևաւք-թևովք, վերոյ-վերնոյ և այլն։

***

Դ բնագիրը ևս պետք է համարել կարևոր և հնությամբ, և բովանդակությամբ։ Մեր ձեռքի տակ եղած հնագույն ընդօրինակությունը (Մատ. N 2273, A) արված է 1252 թ. Խորանաշատի վանքում։ Երկրորդ ձեռագիրը (Մատ. N 5611, B) համարվում է ԺԹ դարի և ընդգրկում է սույն մեկնության սկիզբը, մինչև «հաստատ եկեղեցի» բառերը։ A և B ձեռագրերը միանում են Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիքի» հատվածներին, ընդ որում B ձեռագրում որոշակի է խորագիրը. «Հարցմունք զանազանք Վանական Վարդապետին և պատասխանի բարառնաբա(ր)»։ Երրորդ ձեռագիրը (Մատ. N 7443, C) մի ճաոընտիր է, ընդօրինակված ԺԹ և ԺԸ դարերում։ Խորանների մեկնության սկիզբը չկա։ Բացի A ձեռագրից մյուսները պակասավոր են։ A-ն էլ իր հերթին ունի չորս տառասխալ, որոնք հեշտությամբ ուղղվում են B և C ձեռագրերի միջոցով (զվարժութիւնս *չխմ.* զուարճութիւնս, խոյճարաւն (անհնաստ բառ) *չխմ.* խորանաւն, առնին *չխմ.* առաջին և այլն)։ Այս մեկնության սկիզբը պարզեցված շարադրանքն է Գ մեկնության։ Գ մեկնություն (Շնորհալու) «Քանզի ամենայն ինչ, որ յաշխարհի է յերկուս հատանի. ի կարևորս և ի վայելչուս»։ Դ մեկնություն «Յաստուածագործ արարածս հատածք են Բ, զի կէսք ի տոցանէ կարևորք են և կէսք վայելչութիւնք միայն են»։ Մնացածը Ա մեկնության (Սյունեցու) քիչ թե

[12] Նույն տեղում, էջ 208։

շատ պարզեցված կրկնությունն է, ընդ որում հաճախ ավելի ուշ տարընթերցվածներով: Ա բնագրի մի տարընթերցվածը, որ մեր ձեռագրերի շարքում սկսվում է Հ-ից Գրիգոր Խլաթեցու ընդօրինակած 1419 թ. օրինակից, այստեղ կա 1252 թ. (Մատ. N 2273) ձեռագրում («... զհին աւրինակս տախտակացն նշանակէ, Բ միայն լինելով, զոր Ամբակումն ցուցանէ»):

Ուրեմն, 1252 թ. ձեռագրով վկայված այս հին բնագիրը խառնուրդ է Գ և Ա մեկնությունների: Այստեղ կա ձեռագրերի մի խումբ (DEF) ԺԴ-ԺԵ դարերի, որն սկսվում է «Խորանն առաջին չորք դեղաւք...» բառերից և շարունակվում է մինչև վերջ (ինչպես C ձեռագիրը – Մատ. N 7443, 1352-53 թթ., 1515 թ.):

***

Ե մեկնությունը, որն ունի «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց Աւետարանիս» վերտառությունը, մեր ձեռագրերում առաջին անգամ հանդիպում է Ցիպնա վանքում Գրիգոր վարդապետի (նշանավոր Գրիգոր Խլաթեցի Ծերենցի) ընդօրինակած 1419 թ. Ավետարանում (Մատ. N 3714): Այս ձեռագիրն ընդգրկում է նաև առաջին մեկնությունը, այն վերագրելով ոչ թե Ստեփանոս Սյունեցուն, այլ Ներսես Շնորհալուն: Այս հինգերորդ մեկնությունը համառոտումն է Գ Ներսես Շնորհալու մեկնության: Ա մեկնության երկրորդ խմբագրությունը և Ե մեկնությունն ընդգրկող երկրորդ ձեռագիրը Աստվածատուր ծաղկողի ընդօրինակած 1443 թ. Ավետարանն է (Մատ. N 7772), որը թե գրչությամբ, թե մանրանկարչությամբ պատճենն է Գրիգոր Խլաթեցու ընդօրինակած Ավետարանի[13]: Այստեղ նա Խլաթեցու օրինակով Ա մեկնությունը վերագրված է Շնորհալուն, որին հաջորդում է «Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց Աւետարանին» մեկնությունը, որը Շնորհալու մեկնության համառոտումն է: Այնուհետև Վասպուրականում այս երկու մեկնությունները շարունակում են ընդօրինակվել կողք-կողքի: Կարելի է ենթադրել, որ «Յայլմէ յասացեալ...» խորագրով գրվածքը համառոտել է ինքը Գրիգոր

[13] Արդեն ակադեմիկոս Լ. Խաչիկյանը նկատել է այդ ձեռագրերի նմանությունը («Ժե դարի հիշատակարաններ», Ա, էջ 554): «Աստուածատուրը, գրում է Հր. Հակոբյանը, իր ձեռագիր հիշատակարաններից և ոչ մեկում չի նշել Գրիգոր Խլաթեցու անունը (և դա շատ զարմանալի է), բայց նրա ձեռագրի մանրանկարների ինչպես պատկերագրության թեմայի, այնպես էլ ոճի առանձնահատկությունները աներկբայելիորեն այն ենթադրությանն են հանգեցնում, որ նա կապված է եղել և կամ աշակերտել է Խլաթեցուն» (Հ. Հ. Հակոբյան. Վասպուրականի մանրանկարչությունը. Գիրք Բ, Երևան, 1982, էջ 142, ծան. 106):

Խլաթեցին, Հայսմավուրքի և Գանձարանի այդ նշանավոր խմբագիրը, ժԵ դարի այդ ողբերգական անծնավորությունը, որին պետք է նվիրել Եղիշե Չարենցը: Անիծաստ եմ համարում ցույց տալ Շնորհալուն վերագրված Գ մեկնությունից արված քաղվածքներն ու համառոտումները, քանի որ դա ակնհայտ է: Իսկ ինչ վերաբերում է առաջին տողերին, դրանք էլ վերցված են Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության նախադրությունից, որն ունի տարբեր մասեր, և բազմաթիվ «փառքերից» որոնց մասին կխոսվի առանձին: Բնագրի հիմքը ընդունել ենք A ձեռագիրը, որի պակասող տողերը վերցրել ենք մյուս ձեռագրերից:

...

Ջ մեկնությունը բովանդակող ձեռագիրը (Մատ. N 5448) ժԳ դարի է: Հիշատակարանում չեն նշված ոչ վայրը, ոչ տարեթիվը: Դա առանձին բնագիր է, որի գրչությունը, դատելով բոլորգրի ոճությից, հավանաբար կիլիկյան ծագում ունի: Մեկնությունը հաջորդում է «Պատճառք և թելադրութիւնք յորից Աւետարանացն, թէ որպէս գրեցան և յորքան ժամանակս...» գրվածքին, որը մեզ հանդիպում է Շնորհալուն վերագրված Գ մեկնության A ձեռագրում (N 5197, 1274-1280 թթ.): Ընդ որում, այնտեղ հիշյալ գրվածքը հաջորդում է խորանների մեկնությանը: Նշանակում է, որ այն տարածված է եղել ժԳ դարում: Ջ մեկնության սկզբի «Առաջին խորանն, Գ դեղաւք...» բառերը միևչև «... փետրովն զարդարեալք պայծառք, որ Յիսուսիւ...» բառերը բանաքաղություն է ժԱ-ժԲ դարերի Բ մեկնությունից (ընդ որում անփույթ): Դժբախտաբար երկու մեկնություններն էլ մեզ հասել են մեկական ձեռագրով:

Այնուհետև մի տող չանցած «համապատիւ ճմին» բառերից միևչև նախավերջին նախադասությունը, որն ավարտվում է «... առաքեալքն և մարգարէքն, առ նորս և կատարեալս» բառերով, քաղված է Ա մեկնությունից: Վերջին նախադասության ուղղակի աղբյուրը պարզ չէ, այն վերաբերում է եվսեբիական թվային աղյուսակներին:

Այս բանաքաղությունների հետևանքով Ջ մեկնության մեջ սպրդել են որոշ սխալներ, որոնք կամ նախագաղափարից են գալիս, կամ էլ գրչի չընթռնելուց: Սխալներից բացի տեղ-տեղ ստացվել են աննշանակալի նախադասություններ: Բ մեկնությունից բերված քաղվածքում «չորեք դեղովն» բառերի փոխարեն գրված է «Գ դեղաւքն»: Միանգամայն սխալ է, քանի որ գրեթե բոլոր մեկնություն-

ներն էլ գույների թիվը չորսն են համարում, ըստ տարրերի թվի: Ավելի ներքև արդեն գրված է չորս (չորեք ձևի փոխարեն), այնուհետև «ի մաղաս յոսկերս» փոխանակ «ի խող յոսկերսն», «ոսկեզգես փետրովքն» փոխանակ «ոսկեզգեստ փետրովք»: Մի այլ տեղ արդեն ինչ-որ բան է բաց թողած, քանի որ Բ մեկնության «Յիսուսի ծաղկեալ արդարոց և մարգարէից դասք» միանգամայն հասկանալի արտահայտության փոխարեն գրված է. «Յիսուսիւ զարդարեցան համապատիւ նմին»: Դա նրանից է որ «համապատիւ նմին» վերցված է Ա մեկնությունից: Այնուհետև կարելի է Ջ մեկնությունը համեմատել Ա-ի հետ և գտնել անհարիր տեղերը, ինչպես օրինակ. «զի սոսկական զգիարդն ցուցանէ» փոխանակ «գիսկական գոյութիւնն ցուցանէ», կամ էլ «կապուտակն արեամբն երփնեալ առանձնական դրիւքն...» փոխանակ «կապուտակն նկարէն երփնեալ...» և այլն: Այնուհետև կա նույնիսկ Սյունեցու մեկնության երկրորդ խմբագրությունից քաղված կտոր, ինչպես հիշատակությունը Ամբակում մարգարեի մասին: Այս մեկնությունը փաստորեն գրեթե ոչինչ չի ավելացնում Ա և Բ մեկնություններին, բացի վերջին նախադասությունից, որտեղ եվսեբյան գլխահամարների չորս տիպերը համեմատվում են չորս առաքինությունների հետ:

...

Հաջորդը Գրիգոր Տաթևացու խորանների մեկնությունն է (է), որը մեծ ներդրում է խորանապատկերները մեկնող քննախոսությունների շարքում: Համեմատել ենք քսան ձեռագիր: Նրանց մեծամասնությունը Գրիգոր Տաթևացու գրած Մատթեոսի Ավետարանի մեկնության ընդօրինակություններն են, որի անքակտելի մասն է կազմում խորանների մեկնությունը (ինչպես Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ): Մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասն ընդօրինակվել է ԺԵ դարում:

Փորձենք համադրել հնագույն հավաստի ձեռագրերը (ԺԵ դարի սկզբում Տաթևացու գրվածքի ընդօրինակությունների այդ քանակը վկայում է նրա մեծ հեղինակության ու գրագետների շրջանում նրա վիթխարի ժողովրդականության մասին):

Մեր ձեռագրերի ցանկի Ա-ն (Մատ. N 5591, 1427 թ.) գրվել է Մեծոփա վանքում, ամենայն հավանականությամբ պատմիչ Ջովմա Մեծոփեցու կողմից, որը Գրիգոր Տաթևացու աշակերտն էր[14]: Կ-ն

[14] 1406-ից Ջովմա Մեծոփեցին եղել է Գրիգոր Տաթևացու աշակերտը: 1427 թ. եղել է Մեծոփա վանքի առաջնորդ, որտեղ էլ ընդօրինակվել է ձեռագիրը: Նա գրել է

(Մատ. N 1295, 1410 թ.) հնագույնն է: Այն գրվել է Գրիգոր վարդապետի (իմա՝ Տաթևացու) աշակերտ Յովհաննես Կարնեցի վարդապետի հրամանով Սարկավագաց վանքում, «ընդ հովանեաւ սբ. Կարապետի» (գուցե Մշո): O-ն (Մատ. N 1303, 1417 թ.) ընդօրինակել է Գրիգոր Կրոնավորը: Q-ն (Մատ. N 1306, 1419 թ.) գրվել է Քաջբերունիքում (Վասպուրական), R-ը (Մատ. N 1264, 1416 թ.) Տաթևում, «յընտիր և ի ստոյգ աւրինակէ լուսաւոր վարդապետին Գրիգորի...»: Վերջապես U-ն (Մատ. N 5133, 1427 թ.) գրված է Երուսաղեմում: Մի քանիսը, որոնք ժե դարի անթվակիր ձեռագրերն են, չենք նշում, ինչպես և ժԵ դարի երկրորդ կեսում ընդօրինակվածները:

A ձեռագրում (Թովմայի ընդօրինակած) խորանների մեկնությունը տարօրինակ կերպով չի դրված Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ: Նրան հաջորդում է Սարգիս Կունտի Ղուկասի մեկնությունը, նախորդում՝ «Վասն ականց» գրվածքը: Ուրեմն, մեր ունեցած հնագույն ձեռագիրը (K) 1410-ին է ընդօրինակված Տաթևացու աշակերտ Յովհաննես Կարնեցի կոչված վարդապետի համար և դրված է մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասի հիմքում: Այն բովանդակում է Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Ավետարանի մեկնությունը բաժանված է հատորների՝ յուրաքանչյուր հատորին առընթեր ցանկերով: Ընդ որում, սկզբում (էջ 1ա) տրված է բոլոր վեց հատորների համառոտ ցանկը: Շատ հետաքրքիր է առաջին հատորի ցանկում խորանների մեկնության ենթավերնագրերի ընդարձակաբար նշումը, որ բերում ենք ամբողջությամբ. «Վեցերորդն. Վասն խորանաց Եվսեբեայ և միաբանութիւն նոցին և Յանցն իւրն և թէ զինչ աւգուտ է ցանգն: Եւթներորդ Վասն զանազան գունոց և ժ խորանացն. Եւ վասն հրեշտակաց և զանազան թռչնոց և ծառոցն նշանակութիւնք: Այլև սիւնք և խարիսխ, և խոյակք, և փոկք և չուանք, և շուք և բացքն: Դարձեալ հարցումն զանազան կենդանեացն և տնկոցն: Եւ դարձեալ տեսութիւն գլխաւոր ցանգոյն, թուական արհեստիւ տ[ե]ս[եալ]»: Մեկնությանը նախորդում է միայն մեկ գլուխ, որ կա A ձեռագրում. «Գրիգորի աշակերտի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սրբոյ Աւետարանին Մաթեոսի, նախերգաբար բաղդատութիւն չորս գետոյն եդեմաբուխ, չորից աւետարանչացն հոգեբուխ»: A ձեռագրում բացակայում են ընդգծված բառերը: O, Q, R ձեռագրերը նույն հետևողականութ-

«Պատմութիւն Լանկ-Ծամուրայ և յաջորդաց նորին» (Փարիզ, 1860): Այս երկը հրատարակել է նաև ակ. Ն. Խալիկյանը:

յամբ են, ինչ K ձեռագիրը (պետք է նկատի ունենալ, որ R-ը գրվել է Տաթևում 1416թ., Գրիգոր Տաթևացու մահվանից 6 տարի անց):

Բոլոր ձեռագրերում (բացի A-ից և B-ից) խորանների մեկնությունը մտնում է Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ: Հետաքրքիրն այն է, որ առաջին տողերը բովանդակում է միայն A ձեռագիրը: Իսկ ընդհանրապես ձեռագրերի ընդգծված խմբագրական տարբերություններ չկան, թեև կան մեծ թվով տարընթերցվածներ (հիմնականում քերականական):

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Մատենադարանում մեծ թիվ են կազմում Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնության ընդօրինակությունները, բայց մեծ մասամբ ԺԷ-ԺԸ դարի են կամ անթվակիր:

***

Մնացած մեկնությունները ներկայացված են 1-3 ձեռագրերով:

Պողոս Րաբունապետի կազմած մեկնությունը տեսնում ենք 1599 թ. Ջաբար Ավանցու ընդօրինակած Ավետարանում, որն ավարտում է Կարապետ գրիչը 1600 թ., Վարագա վանքի առաջնորդ Ստեփանոսի ժամանակ: Այս մեկնության մեջ հատկանշական է կլոր ջ-ի առատությունը իրրև հապավման նշան երբեմն անսպասելի տեղերում աւ-ի կողքին. այսպես. «յայտնեցօ» փխ. «յայտնեցաւ», «աղօնիք» փխ. «աղաւնիք», «զերկրօրս», փխ. «զերկրաւորս», «զերկնօորն» փխ. «զերկնաւորն», «Օետարանին» փխ. «Աւետարանին», «հօք» փխ. «հաւք», «եսօա» փխ. «եսաւա»: Ժամանակով և ոճով Պողոս Րաբունապետի մեկնությանը մոտ հաջորդ մեկնության մեջ կլոր ջ-ի գործածությունը այդքան տարօրինակ ձևեր չի ընդունում: Պողոս Րաբունապետի մեկնությունը քաղվածքներ ունի Գրիգոր Տաթևացու մեկնության «Վասն Ժ խորանացն և զանազան գունոցն» գլխի «Տեսութիւն» բաժնից: Ժ մեկնությունը (Մատ. N 349, Աստվածաշունչ, 1686 թ., Կ. Պոլիս), պատկերազարդված նշանավոր Մարկոս Պատկերահանի կողմից, գրեթե համառոտագրություն է: Այն ունի ոճական առանձնահատկություններ, ինչպես «... և ոմանք յետս դարձուցեալ գկտնուցս զբամակսն քերեն...»: Մեկնության ուշ շրջանի լինելու վկայությունն է «Բ մայնուն» արտահայտությունը տասներորդ խորանում:

ԺԱ բնագիրը հայտնի է երեք ձեռագրով, ընդ որում, A ձեռագրի մի մասը գրված է ԺԹ դարում, մյուս մասը՝ շարունակությունը, 1402-1408 թվականներին: Հավանաբար «Վասն խորանաց Աւետարանի»

գրվածքը հենց ուշ շրջանի ընդօրինակություն է և բովանդակում է առաջին մասը մինչև «Առաջին խորանն ունի սիւնս ծիրանիս...» արտահայտությունը, որից հետո մինչև վերջ շարունակում է B ձեռագրի (ԺԹ դարի Ավետարան) ընդօրինակությունը: Իսկ A և B ձեռագրերի ընդօրինակությունները միասնաբար տեսնում ենք 1741 թ. C ձեռագրում (N 6396), որն արդեն չափազանց ուշ շրջանի է: Բայց այն թույլ է տալիս մեկնությունը դիտել իբրև հնագույն երկու ձեռագրերում մեկնության հատվածների ընդօրինակությունների գումար, իսկ ԺԹ և ԺԵ դարերի ընդօրինակությունների առկայությունը թույլ է տալիս մեկնությունը համարելու առնվազն ԺԹ դարի, այսինքն ժամանակակից ԺԹ դարի Դ մեկնությանը, որը կամ Վանական վարդապետինն է կամ էլ նրա միջավայրի ծնունդ: Առաջին մասը մինչև «Առաջին խորանն ունի սիւնս ծիրանիս...» վերցված է Դ մեկնությունից: Այնուհետև առանձին շարադրանք է: Հետաքրքիրն այն է, որ այստեղ Բ խորանի սյուների առթիվ գրված է. «...եւ սիւնքն կապոյտ խառհասո ոտիւքն...»: Այս բառերը («խառհասո ոտիւքն») <u>խառհասոստիւնք, խառհասոտեալ</u> բառերի ասես նոր հասկանալի տարբերակը լինեն (մի գուցե առաջարկվում է այդ բառերի մեկնություն, որն ավելի հասկանալի է):

Հաջորդ ԺԲ մեկնության հեղինակն է Ստեփաննոս Ձիք Ջուղայեցին: Մեկնության ինքնագիր տարբերակը գտնվում է Լենինգրադի Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների արվեստի ինստիտուտի B-45 (Մատենադարան, մանրաժապավեն N 264) հայերեն ձեռագրում: Այս մեկնության մի ընդօրինակությունը մինչ այդ ձեռագրի գոյության մասին իմանալս գտել էի Մատենադարանի N 1245 ձեռագրում (մանրամասն տես Գ մեկնության ժ ձեռագրի նկարագրությունը): Այն ներկայացնում է Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, ընդօրինակված 1613 թ. Սմիդ (Համիթ) քաղաքում: Այնուհետև ձեռագիրը 1631 թ. հայտնվում է «Յուսկուտար անուն տեղին արբայանիստ մեծ աւանին...» (իմա Կ. Պոլսի Իսկյուտար թաղամասը), ինչպես ցույց է տալիս 1ա էջի ոտանավոր հիշատակարանը: Ապա այդ հիշատակարանի ձեռագիրը (շղագիր) փոխվում է նոտրգիրի, և Իսկյուտարի ամառնամուտի շոգի նկարագրությանը հաջորդում է խորանների ոտանավոր մեկնությունը, որտեղ ոտանավորի ընդօրինակողը, առանց իր անունը տալու, նշում է, որ 1647 թ. Տիրվիկում Խաչատուր և Մարկոս վարդապետների հետ գրում է ոտանավորը, որը եթե ասվի դասի ժամանակ (կարևոր վկայություն, որ խորանների մեկնությունները իբրև դաս են անցել), ապա այդ

հավաքում (ժողովում, դասի ժամանակ) թող իրենց ողորմի ասեն:

Հազար իննսուն և վեց թվին
Հանդիպեցաք ի Տիրվիկին
Գրեցի զոտանաւորս գլխովին
Յորժամ ասես զսայ ի դասին,
Հետ համաւորս ի ժողովին
Եւ ասացես զՏէր ողորմին, ամէն:

Այս ձեռագրի հետ ինքնագրի համեմատությունը տալիս է ուղղագրական և այլ կարգի շատ տարբերություններ և կարող է թյուրիմացությունների տեղիք տալ: Երբ այս ձեռագիրն ընդօրինակված էր, լեզվաբան Եսայի Թադևոսյանը իմ ուշադրությունը հրավիրեց մի հիշատակարանի վրա[15], որտեղ խորանների մեկնությունների ազդեցությամբ կային մի քանի հետաքրքիր տողեր: Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանը իր հերթին մեզ ցույց տվեց մի այլ հիշատակարան և այն բոլոր տվյալները, որոնք կային այդ հիշատակարանի հարևանությամբ: Դրանցից են վերոհիշյալ Լենինգրադի B-45 (Մատենադարան, մաշտոցավանք N 264) ձեռագրի ինքնագիր մեկնություն-հիշատակարանը[16], որի տակ ծանոթության մեջ նշված են տվյալ մեկնություն-հիշատակարանը բովանդակող մի շարք աղբյուրներ: Վ. Հակոբյանը բերել է ոտանավոր-մեկնության այն հատվածը, որտեղ նրա հեղինակ Ստեփանոս Չիք Ջուղայեցին հիշատակում է իրեն, ձեռագրի ստացողին և ստացողի ընտանիքին: Ն. Ակինյանը «Ստեփանոս Չիք Ջուղայեցի. գրիչ, նկարիչ և տաղասաց քահանայ (1603-1637)» հոդվածում[17] այդ հեղինակին համարում է 1605 թ. Հին Ջուղայի տեղահանվողներից (հայտնի է նրա ողբը «Ափսոս քեզ հայոց խեղճուկ ժողովուրդ»): Ակինյանը նշում է նաև, որ 1610-ին Ստեփանոս Ջուղայեցին հանդիպել է Շահ Աբասին վերջինիս զբոսանքի ժամանակ (ըստ Ջաքարիա Սարկավագի), 1623 թ. օրինակած ձեռագրում թողել է «Յիշատակարան Աւետարանի և Մեկնութիւն Ժ խորանացն», ապա բերել է վերջինիս սկիզբը և վերջը: Այնուհետև Ակինյանը տալիս է ձեռագրերի մի փոքր ցանկ, որտեղ առկա է մեկնություն-հիշատակարանը՝ Ձեռ. Երուս., թ. 258 (1677), թ. 1343 (1672), ապա Ջմմառից, Հալեպից, ըստ

[15] Տես «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620)», հտ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. Երևան, 1974, էջ 195:

[16] Տես «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1631-1640 թթ.), հտ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան. Երևան, 1978, էջ 100-101 (նաև ծանոթագրությունները):

[17] «Հանդէս ամսօրեայ», 1947, փետրուար, թիւ 2:

Ա. արքեպս. Սյուրմելյանի ցուցակի, որոնք մատնանշում է նաև Վ. Հակոբյանը: Ըստ Ջ. վրդ. Արգումանյանի «Հայերէն ձեռագիր մը Նիւ Եորքի Public Library-ին մէջ» հոդվածի, այդ գրադարանի միակ հայերեն ձեռագրի գրիչն է Հովհաննես աբեղան, իսկ այնտեղ գետեղված է «Մեկնութիւն Աւետարանին Ստեփանոս Երէց Ջուղայեցի, որդի Ստեփանոսի»: Սա ևս խորանների ոտանավոր մեկնություն է: Հ. Բ. Սարգիսյանի Սբ. Ղազարի մատենադարանի ցուցակի բովանդակած մի ձեռագրում ևս (N 312, հին թիվ 163/2)[18] կա «Ոտանաւոր տեսութիւն ի վերայ խորանաց Աւետարանին և խորհրդական զարդուց նոցին», որը հենց Ստեփանոս Ջուղայեցու մեկնությունն է: Բ. Սարգիսյանին հայտնի էր Շնորհալու մեկնությունը, ուստի նա նշում է, որ «Մեկնութեանս անանուն հեղինակն դժուար է որ Ն. Շնորհալին ըլլայ, ինչպես կը տեսնուի գրութեան վերին թուագրութենէն («Ազգիս հայոց թուականին, կրկին քառեակ երկհարիւրին, Հ. Բ. ամին գրեցաւ գանձս աստուածային: Աւետարան խորհրդով լին...»), այլ հաւանօրէն Կլայեցվոյ խորանաց արձակ Մեկնութեան վրայ յերիւրուած է յիշեալ թուականին, այն է ԸճՀԲ (1413)ին ապրող պուետ մը»[19]: Այս օրինակում չկա և շաղկապը («կրկին քառեակ և երկհարիւրին եւթանասուներկու ամին»), որով կստացվի 800+200+72=1072+551=1623: Շփոթություն պատճառը հեղինակի անվան և շաղկապի բացակայությունն է: Ժե դարի մի ձեռագրում (Անթիլիաս, N 111)[20] ևս կա նույն մեկնություն-հիշատակարանը: Այն կա նաև Ջմմառի (N 485, ժողովածոյ իմաստասիրականաց, 1639 թ.)[21] մատենադարանում: Խորանների մի մեկնություն-հիշատակարան էլ լրիվ հրատարակված է Ա. արքեպս. Սյուրմելյանի մոտ[22]: Ի դեպ դա մեր իմացած միակ ամբողջապես հրատարակված մեկնություն-հիշատակարանն է և մոտ է ինքնագրին: Ի տարբերություն Բ. Սարգիսյանի, պետք է ասենք, որ ԺԲ մեկնությունը (այսինքն մեկնություն-հիշատակարանը) ձևված է ոչ թե Ներսես Շնորհալու (մեր Գ), այլ Գրիգոր Տաթևացու (է) խորանների մեկնության վրա: Բարեբախտաբար, Լենինգրադի ձեռագիրը, անկասկած, հեղինակի ինք-

[18] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Սիսիթարեանց ի Վենետիկ» Հ. Բ. Յօրինեց Հ. Բ. Վ. Սարգիսեան. Վենետիկ, Ս. Ղազար, 1924, էջ 1311:

[19] Նույն տեղում:

[20] «Մայր ցուցակ ձեռագրաց մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան». կազմեց Աճ. վրդ. Պանիէեան. Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 367:

[21] «Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանի». հտ. Բ. «Անտոնեան հաւաքածոյ». կազմեցին Հ. Ն. Ակինեան, Հ. Հ. Ոսկեան. Վիեննա, 1971:

[22] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց». Բ հատոր. կազմեց Արտաւազդ արքեպ. Սիւրմելյան. Հալէպ, 1936, էջ 116-118:

նագիրն է, որ հաստատվում է ինչպես մեկնություն-հիշատակարանով, այնպես էլ Ավետարան ձեռագրի հիշատակարանով: Ուստի, քանի որ ունենք ինքնագիրը, ապա համեմատությունը մեր ձեռքի տակ եղած մնացած երեք բնագրերի հետ (Մատ. N 1245, 1613 թ., մեկնություն-հիշատակարան 1647 թ., Մատ. N 4171, ժԹ դար, մեկնություն-հիշատակարանը կցված է Ավետարանին, Սիրմեյան, N 37. Գանձարան) դառնում է ավելորդ:

ժԹ մեկնությունը վերապահությամբ կարելի է համարել առաջնին մեկնություն, որովհետև այն տարբերակն է Ա մեկնության, ավելի մոտ Օ ձեռագրի բնագրին (ժէ դար), քեպետ ինքը գրված է 1432 թ. և Ա մեկնության երկրորդ խմբագրության նման վերագրված է Ներսես Շնորհալուն:

«ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ

Ձեև սկզբում տվել ենք բոլոր մեկնությունների ձեռագրերի համառոտ նկարագրությունները, կապված անմիջապես մեր նյութերի բովանդակության հետ, այսուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում հնարավորության դեպքում ուրվագծել այն օրինաչափությունները, որ ձեռագրերի մեջ կան մեր մեկնությունների և մատենագրական այլ նյութերի միջև, նաև՝ թե ինչ փոխառնչություն ունեն մեկնություններն ու այդ նյութերը:

Այդ օրինաչափությունների կամ ոչ օրինաչափությունների բացահայտումը երբեմն կարող է օգնել նույնիսկ մեկնությունների հեղինակների ճշտման գործին: Այդ ժամանակ կարելի է նկատել, որ երբեմն միջնադարյան վերագրումներն էլ սխալ կարող են լինել:

Սկսենք առաջինն մեկնությունից: Ըստ վերնագրերի, առաջին մեկնությունը, ինչպես վերը ցույց ենք տվել, վերագրված է Ստեփանոս Սյունեցուն և Ներսես Շնորհալուն: Ընդ որում, վերագրումը փոխվում է ըստ մեկնության խմբագրական պատկանելության և նյութերի հարևանության:

Հնագույն ձեռագրերը a (ԺԱ դար), A (1232 թ.), B (1310 թ.), C (1328 թ.), D (1332 թ.), E (1333 թ.), R (ԺԲ դար), ավետարանագրքեր են, ընդ որում a-ն և R-ը կիլիկյան (առաջինը մի փոքր կասկածելի): Բացի E-ից մյուս բոլոր մեկնությունները գրված են խորանապատկերների ետևում, մեծ մասամբ չեն նշված վերնագիրը և հեղինակի անունը: Հնագույն ձեռագիրն ընդօրինակված է ԺԱ դարում և չի կարող լինել Ներսես Շնորհալուն, քանի որ վերջինս ապրել է ԺԲ դարում: Մինչդեռ վասպուրականյան ընդօրինակություններում, սկսած Գրիգոր Խլաթեցուց (H, 1419 թ.), այն հիմնականում վերագրվում է Ներսես Շնորհալուն: Ուրեմն, մեկնությունը Շնորհալուն վերագրվում է ԺԵ դարի սկզբից, ընդ որում այն, ինչպես և «Յայլմէ ասացեալ...» բառերով սկսվող հինգերորդ մեկնությունը, որ միշտ ուղեկցում է այդ խմբագրությանը, նախորդում է խորանապատկերներին: Մինչդեռ F ձեռագրում (1380 թ., Խաղտեաց գավառ), այսինքն մինչև Գրիգոր Խլաթեցու ընդօրինակությունը, Բարձր Հայքի այդ գավառում այն վերագրվել է Ստեփանոս Սյունեցուն: Ընդ որում, այս ձեռագրում մեկնությունը հաջորդում է Եվսեբիոսի թղթին և, թղթի պես, նրա սկիզբն առնված է խորանազարդի մեջ, իսկ վերջը՝ կանոնների

խորանների ետևի երեսներին, ըստ ավանդության: Հետագայում մեկնությունը իբրև Ստեփանոս Սյունեցու գործ տեսնում ենք Գրիմում (G, ԺԴ դար), Կաֆայում (L, 1629 թ.) և ավելի ուշ:

Ավելի շատ են այն ձեռագրերը, որոնք մեկնությունը վերագրում են Ներսես Շնորհալուն (ձեռագրերի քննության բաժնում ցույց ենք տվել, որ սրանք առանձին խմբագրություն են): Ընդ որում, Ավետարանն սկսվում է Ա մեկնությամբ, որին հաջորդում է Ե մեկնությունը «Յայլմէ առացեալ բան վասն խորանաց Աւետարանին»: Բանն այն է, որ այս վերջին մեկնությունը Շնորհալու մեկնության համառոտումն է, և այդ համառոտած խմբագրության հեղինակը թերևս ինքը Գրիգոր Խլաթեցին է, թեև չունենք որևէ կռվան բացի այն, որ այդ մեկնությունը առաջին անգամ մեզ հանդիպում է Գրիգորի ընդօրինակած Ավետարանում (H, 1419 թ.): Այս ձեռագիրն ուշագրավ է նրանով նաև, որ ունի «Փառք»-ով սկսվող հիշատակարան, որտեղ տրվում է 4 թվի մեկնությունը[1]: I ձեռագիրը (1443 թ.) H-ի կրկնությունն է: Հաջորդ ձեռագրում (K, 1628 թ.) Ա և Ե մեկնությունները տրված են խորաններից և տերունական պատկերներից հետո և անմիջապես նախորդում են Մատթեոսի Ավետարանին: Վերջապես, Գրիգոր Խլաթեցուն է հիշեցնում նաև գլխավոր հիշատակարանին նախորդող 4 թվի մեկնությունը, թեև այլ շարադրանքով: K ձեռագրին մոտ է L-ը (1647 թ.), նույնպես ընդօրինակված Վասպուրականում: Առաջին մեկնությունը բովանդակում են նաև ուշ միջնադարում ընդօրինակված ժողովածուներ: Բայց նյութերի դասավորության տեսակետից դրանք որևէ օրինաչափության չեն ենթարկվում:

Այսպիսով, դիտարկելով Ա մեկնության հեղինակության հարցը, ըստ այն պարունակող ձեռագրերի համակարգի, չենք կարող Ներսես Շնորհալուն համարել նրա հեղինակ, որովհետև հնագույն ձեռագրերը ԺԱ-ԺԲ դարերի են, այսինքն ԺԱ դարի ձեռագիրն ընդօրինակվելու ժամանակ Շնորհալին ծնված չի եղել: Երկրորդ Շնորհալուն Գ մեկնության վերագրումը կապված է բնագրի երկրորդ խմբագրության հետ, որին թերևս դիպել է Շնորհալու ձեռքը: Երկրորդ խմբագրության տարընթերցումների հետքերը երևում են ԺԳ դարում կազմված չորրորդ մեկնության մեջ: Դրանք են «... Վասն զի որք առին զՀոգին Սուրբ, ոչ թէ նոքա էին Հոգի Սուրբ, այլ ընդունակք Հոգոյն Սրբոյ» և «... Բ միայն լինելով, զոր Ամբակում ցուցա-

[1] «Փառք»-ով սկսվող հիշատակարաններ, որոնք տալիս են 4 թվի խորհրդաբանությունը, մեզ հանդիպում են կիլիկյան շրջանից (տես Յվերի խորհրդաբանության բաժինը):

նէ» և այլն:

Հիմա դիտարկենք Գ մեկնությունը: a ձեռագրում (1255 թ.) այն հաջորդում է Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք»: Մեկնությանը հաջորդում է «Երանելոյն Աթանասի արհեպիսկոպոսի ասացեալ հարցմունք և պատասխանիք վայելուչ» գրվածքը: A-ում (1274-80 թթ.) մեկնությունը հաջորդում է «Սկիզբն Եսայեայ մարգարէի», գրվածքին, իսկ մեկնությանը հաջորդում են «Պատճառ թելադրութեան Դ Աւետարանացն», որ կարելի է համարել տեղեկություններ ավետարանիչների մասին: Սրանց հաջորդում է նաև «Գիրք լինելոյ Յիսուսի Քրիստոսի, որդոյ Դաւթի...», որը սկիզբն է Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության: Այստեղ երևում է, որ խորանների Գ մեկնության և Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության միջև ինչ-որ կապ կա: B ձեռագրում (1280 թ.) Գ մեկնությունն ունի հետևյալ վերտառությունը. «Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի ասացեալ յաղագս խորանաց Աւետարանին», սակայն դրան նախորդող չորս Ավետարանների պատճառից առաջ 20բ-31ա էջերում դրված է հատված Մատթեոսի մեկնությունից հետևյալ հայտնի վերնագրով. «Ի Մատթէի մեկնութենէն Ներսիսի Հայոց վերադիտողի ի խնդրոյն նորին եղբաւրն Գրիգորիսի առաջին վերադիտողի»: Այսինքն, չնայած Վարդանին վերագրվելուն, խորանների մեկնությունը հանդես է գալիս Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության հատվածի հետ: C ձեռագրում մեկնությունը այլ նյութերի հետ է: Առավել հատկանշական է b ձեռագիրը (1267 թ.), որտեղ մեկնությունը առաջին անգամ հանդես է գալիս այսպիսի խորագրով. «Նախերգան: Յաղագս խորանաց Աւետ[արանի] Մաթէոսի», այսինքն նախերգանը Մատթեոսի Ավետարանի շնորհալիական մեկնության, որին հաջորդում են, ինչպես նույն ժամանակվա այլ ձեռագրերում, «Պատճառ և թելադրութիւն չորից Աւետարանացն...» և «Ներսիսի կաթողիկոսի ժողովեալ մեկնութիւն Աւետ[արանի] Մաթ[էոսի]» վերնագրերը: Հետագա դարերի մի շարք ձեռագրերում (D, 1363 թ., I, ժԵ դ., M, 1604 թ., O, 1625 թ., 1644 թ., P, 1648 թ., Q, 1659 թ., R, 1669 թ., Y, ժԹ դ., d, 1245 թ., e, 1590 թ. և այլն) մեկնությունը հանդես է գալիս իբրև նախերգանք կամ նախադրություն Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության: Եթե հաշվի առնենք նաև, որ մեկնությունը գրվել է Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի Ներսես Շնորհալու եղբոր խնդրանքով, ինչպես նշվում է վերնագրերում, ապա այն առնվազն պետք է պատրաստ լիներ մինչև նրա մահը 1166 թվականը:

Այսքանից հետո, երբ 1267 թ. ձեռագրում (b) արդեն խորանների մեկնությունը գիտակցվում է իբրև Շնորհալու Մատթեոսի մեկնության նախերգանք և այդպես էլ շարունակվում է հետագայում (միայն մի տեղ այն վերագրվում է Վարդանին), պետք է կարծել, որ այն Շնորհալու գրչի արտադրությունն է: Խորանների մեկնությունը, հավանաբար, ասվել է բեմից եկեղեցու հոտի առջև, և այդ մասին ակնարկված է Ստեփանոս Ձիք Ջուղայեցու ոտանավոր մեկնությանը կցված հիշատակարանում.

Հետ Խաչատուր և Մարկոս վարդապետին
Գրեցի զոլտա}նաւորս գլխովին,
Յորժամ ասես զսայ ի ղասին
Հօտ համաւորս ի հետ նորին,
Յիշեայ և զիս յայնմ ժողովին
Եւ աստացիս զՏէր ողորմին, ամէն:

Սա գտնում ենք ժ ձեռագրում (1613 թ.), որտեղ ընդօրինակված է Մատթեոսի շնորհալիական մեկնությունը: Պատահական չէ, որ առաջին մեկնությունը, հետագայում երկրորդ և հինգերորդ մեկնությունները գրվել են անմիջապես Ավետարանների գրքերում: Դրանով իսկ նրանց տրված էր սրբազան արժեք: Եվ պատահական չէ, որ արդեն առաջին մեկնության հեղինակ Ստեփանոս Սյունեցին (նրան ենք վերագրում այդ մեկնությունը) ինքն է գրել Ավետարանների մեկնություն[2] (հիմքում ունենալով Մատթեոսի Ավետարանի մեկնությունը): Ներսես Շնորհալու և Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնություններին իբրև նախերգանք կամ նախադրություն կամ նախադրության մաս կցված են խորանների մեկնությունները: Ավելին, որոշ ձեռագրերում (K, ժԵ դար, L, 1563 թ., N, 1621 թ., S, 1671 թ., f, 1456 թ., g, 1451 թ.) Շնորհալու գրած խորանների մեկնությունը նախաբան է կազմում նաև Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնության համար, թեև այնտեղ հանված չէ վերջինիս խորանների մեկնությունը: Այսպիսով, Ներսես Շնորհալու երրորդ մեկնության հեղինակ լինելը շատ ավելի հավաստի է, քան Վարդան Հաղբատեցունը կամ առավել ևս Հովհաննես Երզնկացունը:

Չորրորդ մեկնության վերագրման միակ հավանականությունն այն է, որ A (1252 թ.) և B (ժԳ դար) ձեռագրերում այն դրված է Վա-

[2] Ստեփանոս Սիւնեցի. Մեկնութիւն չորից աւետարանչացն (աշխ. Գ. Կաթ. Հովսեփյանի) Համառ Արևելցի. Մեկնութիւն առակաց (աշխ. Մ. բիհ. Սարիբեկյանի) «Արեգ» հրատ., Երևան, 1994:

նական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիքի» հետ: Մնացած CDEF ձեռագրերում այն այլ ցյութերի հարևանությամբ է: Ընդ որում F ձեռագրում (1683 թ.) այն դրված է Ներսիսյան Մատթեոսի Ավետարանի մեկնության սկզբում, Գ մեկնության փոխարեն: Այսքանը մեզ կարող է լավագույն դեպքում ենթադրել տալ, որ չորրորդ մեկնությունը Վանական Վարդապետի մշակած տարբերակն է՝ հենված Ա, Բ, և Գ մեկնությունների վրա, քանի որ նրանում երեքից էլ կան վերախմբագրված հատվածներ:

Հինգերորդ մեկնության մասին խոսեցինք առաջին մեկնության առիթով, քանի որ այն միշտ դրվում է Ա մեկնության երկրորդ խմբագրության հարևանությամբ, իբրև Ավետարանների նախադուռ: Քանի որ այն առաջին անգամ հանդիպում է Գրիգոր Խլաթեցու ընդօրինակած Ավետարանում, ենթադրել ենք, որ այն երրորդ մեկնության Գրիգոր Խլաթեցու խմբագրած տարբերակն է:

Յոթերորդ մեկնությունն արդեն վերագրման կարիք չունի, քանի որ նրա առաջին ընդօրինակությունները Գրիգոր Տաթևացու «Մատթեոսի Ավետարանի մեկնության» մեջ արված են կամ նրա կենդանության ժամանակ՝ նրա աշակերտների ձեռքով կամ պատվերով: A ձեռագիրը (1427 թ.) գրված է երկու Թովմաների ձեռքով, որոնցից մեկը նրա աշակերտ Թովմա Սեծոփեցին է: K ձեռագիրը (1410 թ.), որ ընդօրինակվել է Տաթևացու մահից մեկ տարի անց, գրված է նրա աշակերտ Հովհաննես Կարմիր մականվանվածի պատվերով: O-ն ընդօրինակված է 1417 թ., Q-ն՝ 1419-ին, R-ը՝ 1416-ին հենց Տաթևի վանքում, ընդ որում, ըստ հիշատակարանի, «յընտիր և ի ստոյգ աւրինակէ լուսաւոր վարդապետի Գրիգորի...»[3], U-ն՝ 1427-ին հեռավոր Երուսաղեմում: Ուրեմն, Տաթևացու հեղինակությունը այս մեկնության նկատմամբ կասկածի ենթակա չէ:

Մնացած մեկնությունները մեզ հասել են հիմնականում մեկ ձեռագիր օրինակով:

---

[3] «Ժե դարի հայերեն հիշատակարաններ», Մասն առաջին, էջ 59:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ողջ միջնադարյան քրիստոնեական աշխարհում արվեստի տեսության այդ եզակի վավերագրերը, բովանդակելով զանազան խորհուրդներ (սիմվոլներ), այլաբանություններ և թվային միստիկա, ունեն նաև ուշագրավ գեղագիտական հարցադրումներ, որոնց մի մասը մինչև այժմ էլ ուժի մեջ է:

Գեղագիտական հարցադրումները կերպարվեստում սահմանափակում ենք վայելքի ու գեղեցիկի միասնական մեկնաբանումով, նաև գույների, ճարտարապետական ու զարդային տարբեր մոտիվների հուզական բովանդակությամբ: Բայց թվային խորհուրդների հարաբերությունները, նման և ոչ նման այլաբանությունների ու խորհուրդների բարդ համակարգը, աստվածաբանական բազմաթիվ մեջբերումները, որոնք կազմում են արվեստի տեսության համակարգի անքակտելի մասը, նույնպես ունեն գեղագիտական ուղղվածություն: Դրանց մանրամասն անդրադառնում ենք առանձին:

Ավետարանը համեմատելով դրախտի և Տիրոջ տանից բխող կենաց ջրի հետ, Ներսես Շնորհալին դիմում է մեկնության և խորանապատկերների գեղագիտական ուղղվածությանը. «Այս որ ցանկեալս է ոչ պակուցիչ հրով և սրովբէական սրով բոցեղինեաւ, այլ հեշտալի և ծաղկերանգ նկարիւք և պաճուճագարդ գունաւք, խորանաց կերպագրութեամբ, այլև տնկոց ոմանց ստեղծագործութեանց և ծագուց ճնագելոց և յաւրինուածք սեղանոց, և սեանց, և ծաղկանց, որք ունին յինքեանս խորհուրդս խորինս, և իմաստս անյայտս և հանճարս ծածուկս, որովք ոչ է պարտ զանց առնել վայրապար»: Միանգամից իմաստալից գեղագիտական վայելքով, որ հակադրված է խստությանը, թեկուզ սերովբեական, մենք խորանների գեղեցիկ պատկերների բովանդակած հոգևոր իմաստները վերապրելու հնարավորություն ենք ստանում:

Ըստ Դիոնիսիոս Արիսպագացու ևս զգայական պատկերներն են միակ ուղին հոգևոր իմաստներն ըմբռնելու համար: Սինչդեռ երկնայինները (երկնային ոլորտների հրեշտակային դասերը) զգայական պատկերների կարիք չեն զգում: «...Ձստուած և զաստուածային առաքինութիւն նոքա (երկնայինները – Վ. Դ.) որպէս իմացութիւնք իմանան, գրված է Տիմոթեոսին ուղղված թղթում, որպէս իւ-

րեանց պարտ է, իսկ մեք գգալաւք պատկերաւք յաստուծայինսն կոյս ըստ կարողութեան համբառնանք տեսութիւնս» («Յաղագս յեկեղեցական քահանայապետութեան», Մատենադարան, N 49, թ. 77)[1]:

Շնորհալու մեկնությունից վերը բերված քաղվածքում արտահայտություններն անթերի են թվում արվեստի տեսության առումով, հատկապես այսպես կոչված ձևի (ֆորմալ) ըմբռնման տեսակետից. «Հեշտալի և ծաղկերանգ նկարիւք», «պաճուճազարդ գունաւք», «խորանաց կերպագրութեամբ», «յաւրինուածք սեղանոց և սեանց, և ծաղկանց» և այլն: «Պաճուճազարդ գունաւք», անմիջապես զարդի (օրնամենտի) գունային մշակում, «խորանների կերպագրութեամբ»[2] - խորանների կերպի կամ կառուցվածքի ստեղծում. «հեշտալի և ծաղկերանգ նկարիւք»-աչքի համար հաճելի և պայծառ գույներով պատկերներ (ծաղիկներն ունեն միայն պայծառ և մաքուր գույներ). «յաւրինուածք սեղանոց և սեանց, և ծաղկանց» - սեղանների, ծաղիկների, այուների բաշխում ըստ կառուցվածքի («յաւրինուածքի»), որպեսզի հարստանա խորանի կերպագրությունը: Այնուհետև «տնկոց ոմանց ստեղծագործութեանց և ծագուց ձևացելոց» արտահայտությունը ևս ունի երանգ ոճավորելու և ձև տալու, ընդ որում, ինչպես բխում է շարադրանքից, խորանի «կերպագրության» մեջ: Մեր հեղինակը «սիմետրիկ» (նմանողական) արժեքի հետ

[1] «... Նրանք (երկնայինները – Վ. Դ.) Աստծուն և Աստվածային առաքինությունը ճանաչում են որպես իմացություններ, ինչպես և պարտավոր են, իսկ մենք զգայական պատկերներով ենք բարձրանում դեպի աստվածային տեսիլքները, դրանք ըմբռնելով ըստ մեր կարողության»:
Այս մեկնակերպը, որ յուրաքանչյուր պատկերամոտիվ նշանակում է մի այլ իմաստ, քան ինքն է ներկայացնում, գալիս է մինչև այսօր: Պիոնիոիոից բերված քաղվածքը մի փոքր այլ ձևով (արվեստը աներևույթ աշխարհի տպավորումն է) ներկայացվում է Վ. Տատարկևիչի գրքում (W. Tatarkiewicz. A History of Six Ideas. An Essay in Aesthetics. 1980, Warszawa, p. 30): Որպես նման ըմբռնման ժամանակակից օրինակ, Վ. Տատարկևիչը բերում է Սյուզան Կ. Լանգերի այն միտքը, որ արվեստը յուրատեսակ ձևաստեղծում է (մեր մեկնիչի մոտ «կերպագրություն»), այսինքն ձևերի, որոնք խորհրդանշում են մարդկային հույզեր (նույն տեղում, էջ 32): Ըստ Կրոչեի ևս, «... եթե սիմվոլը դիտվում է իբրև ինչ-որ անբաժան մի բան գեղարվեստական ինտուիցիայից, ապա այն հանդիսանում է հոմանիշ բուն ինտուիցիայի, որը միշտ ունի իդեալական բնույթ. Արվեստը երկակի էություն չի դրսևորում, այն ունի միայն մեկ հիմք. ամեն ինչ երևում սիմվոլիկ է, քանի որ ամեն ինչ իդեալական է» (Б. Кроче. Эстетика как наука о выражении и как общая лингвистика. Часть I. Теория. М. 1920, с. 39):

[2] Ըստ նշանավոր գեղագետների և արվեստագետների, սկսած Արիստոտելից, ձևակերտումը կամ, ինչպես մեր մեկնիչի մոտ է «կերպագրությունը», համարում են արվեստի նպատակներից մեկը (հաճախ հիմնական) (Tatarkiewicz. Op. cit., p. 29-30):

ընդունում է «տնկոց ոմանց ստեղծագործութեանց» (այսինքն հորինելու, վերակերտելու, ոճածնման) առկայությունը և ոչ թե այլ կերպ, քան «խորին խորհուրդների», «անհայտ իմաստների», «ծածուկ հանճարների» կրողներ: Այս հատվածում մեկնիչը մի կողմից ցույց է տալիս կերպարվեստի նրբությունների ընկալում, մյուս կողմից հավատարմություն աստվածային գեղեցիկի և բարու (կալոկագաթիա) պլատոնական ըմբռնմանը: Ըստ Շնորհալու մեկնության, «աստուածագիծ մատեանները» (Սբ. Գիրքը, ավելի շուտ Ավետարանները, քանի որ խորանները նախորդում են Ավետարաններին) Աստծուն հռչակում են իբրև հավիտենական բարի, և մեզ հասած բարին, որից հրաժարվում ենք սատանայի հորդորմամբ, աստվածային բարիի մասն է: Եվ չնայած բարուց մեր բոլոր խոտորումներին, բարիի արմատը չի ցամաքում մեզ համար (որա վկայությունը Հոր կողմից աստվածային Որդու ուղարկումն է Երկիր՝ հանուն մեր փրկության): Եվ ահա խորանների բովանդակած պատկերամոտիվները ծառայում են հոգևոր վայելչությունների և անապական (անանց, հավերժական) գեղեցկությունների համար: Եվ քանի որ բարին աստվածայինի էությունն է, ապա գեղեցիկը ևս նրա էությունը պիտի կազմի, քանի որ բարին և գեղեցիկը անբաժան են իրարից: «Այս բարիս աւրհնաբանի առ ի սրբազանից աստուածաբանիցն և որպէս ագնիւ և որպէս գեղեցիկ և որպէս զսէր և որպէս զսիրելի, և որքան այլ ինչ են վայելուչք ազնուարարի և բերկրեցելոյ գեղեցկութեանն աստուածանուանութիւնք»[3]:

Արդ, բարին, գեղեցիկը, ագնիվը և այլ հատկանիշներ (ազնիվ, սիրելի, բերկրալի) աստվածային տարբեր անուններ են, որոնք նույն էությունն են նշանակում:

Ի դեպ, զանազան պատկերամոտիվների (ծաղիկների, թռչունների, այուների, կամարների, գույների և այլն), իբրև աստվածային մտավոր (այսինքն հոգևոր) վայելքներին հասնելու նախադռան, Ներսես Շնորհալու և մյուս մեկնիչների բացատրությունը, պարզվում է, որ հենց միջնադարյան գեղանկարչության գլխավոր գաղափարներից է, որոնց սաղմերը ֆրանսիական արվեստաբան և միջնադարագետ Ա. Գրաբարը տեսնում է նոր պլատոնականության

[3] «Այս բարին սրբազան աստվածաբանները օրհնաբանում են և որպես ազնիվ, և որպես գեղեցիկ, և որպես սեր և որպես սիրելի և շատ ուրիշ խոսքերով, որոնք վայելուչ են աստվածային անունների ազնվացնող և բերկրեցնող գեղեցկությանը» (տես «The Armenian Version of the Works Attributed to Dionisios the Areopagite». Ed. by Robert W. Thomson. Louvain in Aedibus E. Peeters. 1987 (Scriptores armeniaci. Tomus 17. D. N. IV, 7, p. 159).

հիմնադիր Պլոտինոսի մոտ (Էննեադներ, 4, 3, 11): Ըստ Պլոտինոսի, ինչպես մեկնաբանում է նա, պատկերը վերարտադրված իրի հայելին է, որը ոչ միայն նյութական իրերի արտաքին տեսքը արտացոլելու համար է, այլև, և հատկապես, հասնելու տիեզերական հոգուն, իրերի հոգևոր էությանը և դրա միջոցով աստվածայինին: Այսինքն Պլոտինոսի համար պատկերի դերը բարձրագույն բանականության կամ բանական տեսիլքի գեղեցկությունն է[4]:

Չորրորդ մեկնությունը, որ վերագրել ենք Վանական Վարդապետին և որտեղ գրեթե բառացի են կրկնվում նոր պլատոնական հասկացությունները, ավելի որոշակի է արտահայտվում. «Յայս նայեցեալ յաւրինիչք Աւետարանիս (նկատի ունի ընդօրինակողներին և պատկերազարդողներին – Վ. Դ.) գեղեցկերանգ ե որակաւք նկարեցին զսկիզբն և զնախադրութիւն (այսինքն նախադուռը խորանները – Վ. Դ.) <u>փառազարդ և աստուածապայծառ մտաւոր գանձուցն</u>, որ ի բանս Աւետարանացն գանձեալ են... խոթեալք յորդորմամբ առաքաւոր իմաստիւքս, խնդրեացուք, գի զոր ինչ ոչ երևի աչաց»: Աւետարանի խոսքերի բովանդակած «մտավոր գանձերը» հիշեցնում են Պլոտինի «մտավոր գեղեցկությունը», որ կապվում էր բանականության կամ «ձևերի» հետ[5]:

Իսկ Շնորհալին ուշիմ դիտողից խնդրում է կերպագրված, ձևացված, ստեղծագործված պատկերների բովանդակած «խորին խորհուրդները», «անհայտ իմաստները», «ծածուկ հանճարները» զանց չառնել թեթևամտորեն: Ինչո՞ւ:

«Քանզի,- գրում է մեկնիչը,- ամենայն ինչ, որ յաշխարհի է յերկուս հատանի. ի կարևորն և ի վայելմունս: Կարևորքն հարկաւորք են, որպես լոյս և աւդ և երկիր, և նմանեք հաց և աղբիւրք ջուրց և հանդերձ, առանց որոց ոչ է հնար կեալ, իսկ վայելչութիւնքն հեշտալիքն են և փափկացուցիչքն, որպես գինի և միրգք և համենք և խորտկարարութիւնք և անուշահոտութիւնք և պայծառագունութիւնք և ականջաց հեշտալրութիւնք, որք զգայութեանց են հեշտացուցիչք և վայելչութիւնք և հանգիստք[6]: Այլ որք ոչ թուին զկարևորք,

---

[4] Տես A. Graber. Plotin et les origines de l'estetique medievale. – "Cahiers archéologique. Fin de l' antquite et Moyen Age", Vol. 1, 1945, p. 17, 22.

[5] Plotinus with an English Translation by A. H. Armstrong in Six Volumes. I, 1-9. The Loeb Classical Library. Cambridge, Mass., Harvard University Press, London, 1966, p. 261-263 (Enneads I, 6-9). Տես նաև Պլոտինոս, Էննեադներ, Գիրք V (հադրագս Բանականի). Թարգմ. հին հունարենից, ուսումնասիրությունը և մեկնությունները Ալբերտ Ստեփանյանի. 1999, Սարգիս Խալենց, Երևան («Հադրագս իմաննալի գեղեցիկի» V, 8), էջ 80-99:

[6] Փիլոն Եբրայեցու (Ա դար) «Կեանք իմաստնոց» գրվածքում գրեթե նույն կերպ են

մեծապես ազդում գործեն կատարելոցն յորժամ այս երևելի գունովս և հառնով և հոտով և լրովն և հանգստեամբ ամբառնամք ի հոգևորն և յիմանալի վայելչութիւնս յաւետիսն Աստուծոյ, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց[7]... Յայս նայեցեալ ցանկիչք և հիմնադիրք Աւետարանիս, հեշտալի դեղաւք և գոյնագոյն ծաղկաւք նկարեալք, պէսպէս յաւրինուածով, երկնաւորաց և երկրաւորաց կանխաձայնութեամբ և առաքինութեանց տպաւորութեամբ. և որ ինչ հոգևոր վայելչութիւնք են և անապական գեղեցկութիւնք յառաջիկայ բնարանութիւնս, և զայս ևս տայ տոքաւք մեզ իմանալ»[8]:

Այստեղ մեկնիչները հասնում են երկրորդ կարևոր գեղագիտական ըմբռնմանը – վայելչականի և կենսականի ոլորտների սահմանազատմանը: Այս ընդարձակ քաղվածքի սկզբնամասը չգտանք ձևակերպված ոչ անտիկ, ոչ քրիստոնյա հեղինակների, ոչ էլ Պիոնիոս Արիսպագացու երկերում, որոնք մեծ ազդեցություն են ունե-

---

բազատրված զգայական վայելքները, թեպետ առաջնային են համարվում «լսելիքն ու տեսանելիքը»: «Հինգ քաղաքս ի մեզ զգայութիւնքս են հեշտ ցանկութեանց գործիք, ի ծնոն որոց ամենեքեան կատարելագործին: Քանզի կամ տեսանելով զգունոց և գծոց զանազան պայծառութիւնս ի շնչաւորս և յանշունչս, հեշտանամք կամ ձայնից նուագաւորաց լսելով, կամ ըստ ճաշակի այնր որ ի կերակուր և լըմպելիք, և կամ ըստ հոտոյ յանուշահոտութիւն գոլորշեաց, և կամ որ կանղութեան և ջերմութեան և ողորկից և ըստ շոշափման» («Փիլոնի Երրայեցւոյ ճառք թարգմանեալք նախնեաց մերոց, որոց հնչեն բնագիրք հասին առ մեզ». Վենետիկ, 1892, էջ 71-72):

Մեթոդիոսը Սվետարանների հինգ իմաստուն կանանց համեմատում է «առաքինության հինգ արահետների» հինգ զգայությունների հետ, արտինքն մեր մարմինը «հինգ լուսով լապտերի» հետ, որ հոգին կրում է իբրև լապտեր Քրիստոսին դիմավորելու համար հարության ժամանակ (տես G. Matthew. Byzantine Aesthetics. London, 1967, p. 40):

[7] Ա Կորնթ., Բ, 9: Սույն թղթի նույն բանատողն օգտագործված է Օգոստինոս Երանելու «Խոստովանաբանքում». «... Մենք (Օգոստինոսը և նրա մայր Մոնիկան – Վ. Ղ.) մեր ներսում որոնում էինք ներկա ճշմարտությունը (որ Պու ես), թէ ինչպիսին է լինելու սրբերի հավիտենական կյանքը, որ աչքը չի տեսել, ականջը չի լսել, ոչ էլ այն մտել է մարդու սիրտը. Բայց մենք մեր սրտի շրթներով տենչում էինք Քո աղբյուրի վերին ջրերին, կենաց աղբյուրի...» (St. Augustine's Confessions with an English Translation by W. Watts in two Volumes. II, Cambridge, Mass., London, 1968, Book IX, Chap. X, p. 47-49): Տես նաև Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ. 2002. Անկյունաքար, Երևան, էջ 162:

[8] Չորրորդ վանական Վարդապետին վերագրած մեկնութեան մեջ շատ ավելի հստակ է վայելչությունների բնութագրումը. «Իսկ վայելչութիւնք են, որ ի գալով և ի գեղեցկութիւն և յառաւել հանգիստ տուեալ են յամենատես պարգևաց Աստուծոյ, որպէս գինի և միրգ և հառնիմք և ամենայն գոյն ազնիւ և քաղցրահաւութիւն հառուց և հոտ անուշ, որ ի վայելչ զգայութեանց են հանգստեան աղացալ, այլև մեծաշահ ազդում է ի տոքայ»: Ուշագրավ է գույներին տրվող բնորոշումը «ամենայն գոյն ազնիւ»:

ցել մեկնիչների վրա: Առաջավորապես այսօրինակ բաժանում («ամենայն ինչ, որ յաշխարհի է յերկուս հատանի. ի կարևորն և ի վայելմունս»)[9], բայց ոչ աշխարհի, այլ ցանկությունների համար, գտնում ենք հատկապես էպիկուրի մոտ: Դիոգենես Լայերտացին վկայում է, որ, ըստ էպիկուրի, «ցանկությունները լինում են. ոմանք բնական և անհրաժեշտ, մյուսները բնական, բայց ոչ անհրաժեշտ, երրորդ՝ ոչ բնական և ոչ էլ անհրաժեշտ: Բնական և անհրաժեշտ ցանկությունները էպիկուրը համարում է նրանք, որոնք ազատում են տառապանքներից, օրինակ, ըմպելիքը ծարավի ժամանակ. բնական, բայց ոչ անհրաժեշտ նրանք են, որոնք բազմազան են դարձնում վայելքը, բայց չեն վերացնում տառապանքները, օրինակ, ճոխ սեղանը. ոչ բնական և ոչ անհրաժեշտ են, օրինակ, պսակները և պատվավոր արձանները»[10]: Մենք ավելի չենք խորանում, որովհետև էպիկուրը և մեր մեկնությունները սկսում են անսահմանորեն հեռանալ միմյանցից:

Այնուհետև ըստ մեկնության, կարևորն այն է, առանց որի անհնարին է ապրել (օդ, լույս, հաց, ջուր, հանդերձ), իսկ վայելչականը (հեդոնիստականը), առանց որի կարելի է ապրել (որոնք անհրաժեշտ չեն, ըստ էպիկուրի), բայց հեշտալի են և փափկացուցիչ (հանգստավետ) զգայարանների համար (գինի, միրգ, համեմունք, խորտիկներ, անուշահոտություններ, ախորժելի ձայներ): Ինչո՞ւ են այդ վայելչությունները: Աշխարհում այդ վայելքները ստեղծված են, որպեսզի «այս երևելի գունովս, և համով և հոտով և լոովն (լսողությամբ - Վ. Ղ.) և հանգստեամբս ամբառնամք ի հոգևորն և յիմանալի վայելչութիւն յաւետիսն (որոշ ձեռագրեր տալիս են «յաւետսն», ոմանք էլ՝ «յաւիտենին» - Վ. Ղ.) Աստուծոյ, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»: Այստեղ գրիչները «յաւետիսն» բառը հասկացել են և իբրև «խոստացված» և իբրև «հավիտենական» և ըստ էության չեն սխալվել: Ուրեմն, կարևորը կամ անհրաժեշտը պահանջի

---

[9] В. Татаркевич. Античная эстетика. М., "Искусство", 1977.Ըստ Վ. Բիչկովի, գեղեցիկի հեդոնիստական ֆունկցիան աստվածայինը կամ հոգևորը ընկալելու նպատակով, արտահայտված է Բարսեղ Կեսարացու մոտ (В. В. Бычков. Византийская эстетика (теоретические проблемы). М. "Искусство", 1977, с. 83): Բ. Կրոչեն թեև աշխարհի այսօրինակ բաժանման մասին չի խոսում, սակայն գեղագիտական (ինձ գեղարվեստական) ստեղծագործության մի փուլը համարում է «հեդոնիստական ուղեկցությունը կամ գեղեցիկի վայելքը (գեղագիտական վայելք)» (Кроче, с. 109):

[10] Диоген Лаэртский. О жизни ученых и изречениях знаменитых философов. М., "Мысль", 1979, с. 440 (X, 149).

(քաղց, ցուրտ և այլն) բավարարումով այլևս չի զործում: Սինչդեռ այն, ինչ վայելչության համար է և անհրաժեշտ չի թվում, ոչ թե անպիտանի է (ըստ էպիկուրի դիոգենեսյան տարբերակի), այլ, ընդհակառակը, ըստ մեր մեկնիչների «մեծապես ազդուտ գործեն կատարելոցն». երբ դրանց միջոցով միակ հնարավորությունն ենք ստանում բարձրանալու դեպի «Աստծո հավիտենական կամ խոստացված հոգևոր և իմանալի վայելչությունները», որոնք անհաս են մարդուն: Եվ իրոք, բազմաթիվ ու բազմապիսի մոտիվների խորհուրդներն ու այլաբանությունները պարզելուց հետո Շնորհալու մեկնությունն ավարտվում է, կարելի է ասել, վսեմ բանաստեղծական ներբողով ելփրված խորանների արվեստին, որ բարձրացվում է մինչև մարդու մաքրագործման, կատարելագործման և խորանների ձևավորման արվեստի շնորհիվ աստվածային «անապական» փառքի խորանը (Ավետարանների խորքերը) մտնելու արտոնության, հիմք ընդունելով Պողոս առաքյալի խոսքը. «Աներևոյթքն Աստուծոյ երևելի արարածովքս իմացեալ տեսանին» (Հռոմ. Բ 20): Դա փիլիսոփայորեն հիմնավորել են ս. Դավիթ Անհաղթը Աստծու անիմանալիության մասին Պիռհոն սկեպտիկի դեմ ուղղված իր հատվածում և երանելի Օգոստինոսը, որ ինքն էր քանդում դեպի աստվածայինը տանող ճանապարհի բոլոր արգելքները և նոր տեսակի գույներ, լույսեր, բույրեր ու ձայներ որոնելով, ազդարարում էր, որ «մարդիկ կարող են հարցնել, թե ինչպես իրենք հստակ կարող են տեսնել աներևույթ բաներն Աստծու, որոնք հասկանալի են արարված բաներով»[11]:

---

[11] « St. Augustine's Confessions...», II (Book IV, Chap. XII), p. 91: Նաև Դավիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք. Երևան, 1980, էջ 35:
Մեր մեկնիչները քաջ գիտեին, որ չափավոր և տևական վայելքները, երևելի գույները, համերը, հոտերը, անդորրը, «հասկացող» և «կատարյալ» մարդկանց համար կարող էին ոտնակ լինել բարձրանալու դեպի Աստծո խոստացված «իմանալի» (հոգևոր) վայելչությունները, որոնց այնպես ձգտում էր երանելի Օգոստինոսը: «Ի՞նչ պետք է ես սիրեմ, երբ սիրում եմ Քեզ, գրում է նա դիմելով Աստծուն: - Ոչ մարմնացյալ էակների գեղեցկությունը, ոչ ժամանակների կարգը, ոչ մեր ըմբոշխնած լույսի պայծառությունը, այնքան հաճելի մեր աչքերին, ոչ ամեն տեսակ երգերի մեղեդիները, ոչ ծաղիկների անուշ բույրը, ոչ օծանելիքներն ու համեմունքները... Ես այս բաներից ոչ մեկը չեմ սիրում: Ես սիրում եմ իմ Աստծուն, որ և լույս է և ձայն և անուշաբուրություն և կերակուր և ողջագուրանք իմ ներքին մարդու համար: Ո՞րտեղ է շողում այն լույսը իմ հոգու համար, որ ոչ մի տեղից այն չի ստանում. ո՞րտեղ է հնչում այն ձայնը, որից ժամանակը չի զրկի ինձ, և ո՞ւր է գալիս այն բույրը, որ ոչ մի քամի չի տարածում, և ո՞րտեղ են ճաշակում այն կերակուրը, որը չի վերբանում... Սա այն է, ինչ սիրում եմ ես, երբ սիրում եմ իմ Աստծուն»(«St. Augustine's Confessions...», II (Book X, Chap. VI), p. 87-89):
Մենք կավելացնենք, որ դա այն է, ինչը ձգտում էին խորհրդանշել մեր մեկնիչները խորանապատկերների մոտիվներով:

Ս. Արևշատյանը Դավիթ Անհաղթի «Երկասիրութիւնք փիլիսոփայականք» գրքի առաջաբանում ուրվագծում է այն ուղին, որով անցել է վերոհիշյալ միտքը (զգայական իմաստալի վայելքների միջոցով դեպի աստվածայինը բարձրանալու) մինչև Շնորհալին: Նա դա ցույց է տալիս Դավիթ Անհաղթի «Սահմանք»-ի և Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկի որոշ ընդհանուր մտքերը քննելիս: «Ըստ Դավթի,-գրում է նա,- փիլիսոփայական գիտությունը օգնում է մարդուն Աստծո կողմից ստեղծված բնությունը ճանաչելով, մոտենալ և ըմբռնել նաև նրա արարչին, տեսանելիի ճանաչման միջոցով ըմբռնել անտեսանելին և գերզգայականը... Դրա համար Դավիթը բաժանում է տեսական փիլիսոփայությունը բնաբանության (ֆիզիկայի), մաթեմատիկայի և աստվածաբանության: Սկզբից հետազոտելով բնությունը, այնուհետև վերացական մտածողության մաթեմատիկայի միջոցով միայն իմաստասերը կարող է ստեղծել կամուրջ զգայականի և գերզգայականի միջև և անցնել աստվածաբանության (ինչպես անում են նաև մեր մեկնությունների հեղինակները, պատկերային խորհրդաբանությունը հաճախ ամրացնելով թվայինով, գուցե դրա համար էր Շնորհալին բնաբանություն-ֆիզիկա համարում իր տրակտատը-Վ. Ղ.): Նույն բանն է ասում նաև Արիսպագացին՝ պնդելով, որ «դրա պատճառը մեր բնության հատկությունն է, այն, որ մենք չենք կարող անմիջականորեն ամբառնալ դեպի հոգևոր էությունների ճանաչումը, մենք կարիք ունենք մեր բնությանը հատուկ ու համապատասխան միջոցների, որոնք մեզ համար հասկանալի պատկերներով երևան են հանում անպատկերելին և գերզգայականը... որպեսզի մենք <u>զգայականի միջոցով բարձրանանք դեպի հոգևորը և սիմվոլիկ պատկերների միջոցով ըմբռնենք պարզ, բարձրաբերձ երկնային քահանայապետությունը</u>»[12]:

---

[12] Դաւիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք. Համահավաք քննական բնագիրը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1980, էջ 19-20: «Բարձրագույն հաղթանակը Արիսպագացին թերևս տոնում է արևմտյան հողի վրա», գրում է Օ. Բարդենհեվերը (O. Bardenhewer. Geschichte der altchristlichen Literatur. Dritter Band. Darmstadt, 1962. S. 680): Տե՛ս նաև Օգոստինոս Երանելի. Խոստովանություններ. թարգմ. լատիներենից անգլ. թարգմ. համեմատությամբ Խաչիկ Գրիգորյանի, 2002, Երևան, էջ 174 (Գիրք Տասներորդ, VI):
Կարծում ենք՝ հարկ չկա հիմնավորել Արիսպագացու ազդեցությունը ողջ եվրոպական միջնադարի վրա, որ հաստատված է գիտական և հանրամատչելի աշխատություններում: Հայ միջնադարի վրա նրա ազդեցությունը սպասում է իր ուսումնասիրողին: Չէ՞ որ թե հայերենի թարգմանիչը (Ստեփանոս Սյունեցի), թե լատիներենինը (Յոհաննես Սկոտուս Էուգիենա) եղել են մեծ աստվածաբաններ և նորոգիչներ: Մենք որոշ չափով ցույց ենք տալիս այդ ազդեցությունը խորանների

Ինչպես ցույց է տալիս Հ. Սագվայրը, փաստորեն պատկերին (eikon) այլ իմաստ տալու գաղափարը վերցնում են Պիոնիսիոս Արիսապագացու երկերից: Այս հիմնադրույթը Բյուզանդիայում ուղղակի փոխառել է Հովհան Դամասկացին, որը ժամանակակիցն է Ստեփանոս Սյունեցու և Հովհան Օծնեցու: Պատկերներին նվիրված իր առաջին ճառում նա ասում է. «Աստծո մոտ եղած աշխարհի արարումից ի վեր երևում և հասկացվում են աներևույթ բաները արարված իրերի միջոցով: Մենք տեսնում ենք ստեղծվող պատկերները, որոնք մեզ ներկայացնում են Աստծո աղոտ արծագանքները, ինչպես, օրինակ, մենք խոսում ենք սուրբ և հավերժական Երրորդության մասին պատկերված իբրև արև կամ լույս կամ ճառագայթ կամ ցայտող աղբյուր կամ... վարդի թուփ կամ ծաղիկ կամ քաղցր անուշահոտություն»[13]: Ինչպես տեսնում ենք Դամասկացին դիմում է ավելի շատ գրական պատկերների, ի տարբերություն մեր մեկնիչների, որոնք դիմում են խորանների պատկերամոտիվներին[14]:

Ուրեմն, ինչպես արվեստի (այստեղ խորանապատկերների), այնպես էլ գույների, հաների, հոտերի, զգայական ու հեշտալի վայելքը

մեկնությունների վրա:

[13] Տես H. Maguire. Art and Eloquence in Byzantium. 1981, Princeton University Press, p. 10.

[14] Ոռմանական տաճարներում պատկերների բազմազանությունը լրիվ այլ կերպ էր ընկալվում սուրբ Բեռնարդի կողմից, որը սուրբ Ծիերրիի աբբա Վիլյամին գրում էր. «Ուսնքում այնտեղ կարդացող եղբայրների աչքի առաջ ի՞նչ օգուտ կա այն ծիծաղելի հրեշներից, այն զարմանահրաշ ու ծնախենդված գեղեցկությունից, այն գեղեցիկ ձևախեղումից: Ի՞նչ նպատակով են այն այլանդակ կապիկները, այն կատաղի առյուծները, այն հրեշավոր կենտավրոսները, այն կիսամարդիկ, այն շերտավոր վագրերը, այն մարտնչող զոսպետները, իրենց փողերը փչող այն որսորդները: Այնտեղ շատ մարմիններ երևում են մի գլխի տակ կամ էլ շատ գլուխներ մի առանձին մարմնի վրա: Այնտեղ չորքոտանի գազանն ունի օձի պոչ, ձուկը գազանի գլուխ: Այստեղ նաև ձիու առաջի մասը շարունակվում է ետևում այծի մասով կամ եղջերավոր գազանը կրում է ձիու ետամասը: Կարճ ասած, այնքան շատ և զարմանահրաշ են ծեռակերտ ձևերի բազմազանությունը, որ մենք ավելի շուտ գայթակղվում ենք կարդալ մարմարը, քան մեր գրքերը, և մեր ամբողջ զարմանքը սպառում ենք ավելի շատ այս բաների վրա, քան թե Աստծու Օրենքի շուրջը խորհրդածելու...»: Ուրեմն, ըստ սուրբ Բեռնարդի, «այս վանական քանդակները լրիվ զուրկ են դիդակտիկ իմաստից կամ կրոնական խորհրդապաշտությունից... Հրեշները Բեռնարդի կողմից,-գրում է Մ. Շապիրոն, չեն ճանաչվում իբրև չարի սիմվոլներ, ոչ էլ պատճառ կա ենթադրելու, որ բանդակագործներն են դրանք այդպիսին համարել մտածված կերպով» (M. Shapiro. Romanesque Art. 1977, London, p. 6):

Նույնիսկ գրքի գլխատառերը, ինչպես նաև ողջ շքեղ եկեղեցական արդուզարդը միայն աչքին հաճույք պատճառելու տեսանկյունից էին ընկալվում գեստերգյան վանականների կողմից ԺԲ դարում (նույն տեղում, էջ 10): Միևնույն մեր մեկնիչները յուրաքանչյուր պատկերամոտիվ, նույնիսկ գույն, անկախ նրանց հրապույրի աստիճանից, դիտում էին իբրև խորհուրդ (սիմվոլ):

մեզ մոտեցնում է ընկալելու այն տևական կամ խոստացված հոգևոր վայելքը, ինչ պահված է մեզ համար: Այսինքն «իմանալիին», «Աստծո խոստացված» վայելքը մենք կարող ենք ընկալել զգայական վայելքի (հեդոնիզմի) շնորհիվ[15]: Այստեղ մենք կանգ ենք առնում երկու գաղափարի առջև: Առաջինի մասին խոսվեց վերևում, և այն վերաբերում է պատկերի իմացական նպատակադրմանը: Երկրորդ գաղափարը հեդոնիստական է, առանց որի մենք ոչ մի աստվածային իմացության չենք հասնելու: Այդ մտածողությունը (ճանաչումը զգայության միջոցով) արտահայտված էր արդեն Փիլոն Ալեքսանդրացու մոտ. «Կին է նշանակաւ զգայութիւն և այր միտք. արդ ի հարկէ պատահէ զգայութիւն զգալւոյ. իսկ կցորդութեանն զգայութեանն անցք անցանեն և ընդ միտսն. քանզի շարժեալ լինի զգայութիւնն ի ստորակայէն, իսկ միտքն ի զգայութենէն»[16]:

---

[15] Գեղագիտական ոլորտում մեր հեղինակները, ինչպես և ստոյիկներին մոտ կանգնած մի շարք ուրիշ մտածողներ (Կիկերոն, Փիլոն Ալեքսանդրացի և այլք) փորձում էին դիալեկտիկորեն հաշտեցնել պլատոնականությունը, որն արվեստն ընդունում էր այնքանով, որքանով այն կարող էր նպաստել իմանալիների (իդեաների, մտքի, հոգևորի) ընկալմանը, և էպիկուրյան հեդոնիզմը (արվեստը և զգայությունները ծառայում են վայելքին): Ըստ որում, ըստ Փիլոն Ալեքսանդրացու, միայն Աստծուն հատուկ բացարձակ գեղեցիկին փոքր-ինչ մերձենալու համար ուտենակ պետք է ծառայի վայելքը: Այդ մասին տես "История эстетической мысли". Том первый (Древний мир, средние века). М., "Искусство", 1985, с. 246.

Հայերեն հնագույն թարգմանության մեջ վերոհիշյալ միտքը չգտանք («Փիլոնի աստուածային աւրինացն այլաբանութիւն»): Փոխարենը երկու այլ ճառերում այն փոքր-ինչ այլ ձևով է արտահայտված և ավելի համահնչուն է մեր մեկնիչներին, որոնք վայելքները արվեստից առաջ կապում են զգայությունների հետ: Փիլոնը չի տարբերակում այսպես կոչված «կարևորը» և «վայելչականը», ինչպես մեր մեկնիչները և մասամբ էպիկուրը: Բայց նա աստվածային կամ հոգու ճանաչման համար քողնում է միայն տեսողությունը և մասամբ լսողությունը, ճաշակելիքը, հոտոտելիքը և շոշափելիքը դիտելով իբրև ստորակարգ և կենդանական, սուկ մարմինը ապրեցնելու միջոց (տես Փիլոնի «Կեանք իմաստնոց» գրվածքը - «Փիլոնի Յերրայեցւոյ ճառք թարգմանեալք նախնեաց մերոց, որոց հնչէն բնագիրք հասին առ մեզ». Վենետիկ, 1892, էջ 71-74): Մեր մեկնիչները, ի տարբերություն Փիլոնի և այլ քրիստոնյա ու անտիկ հեղինակների, հետևելով Դավթին և Արիսպագացուն, «ստորակա» զգայությունները չեն զրկում «աստվածային խոստացված վայելքին» ծառայելու հնարավորությունից:

[16] «Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են Մեկնութիւն Ծննդոց և Ելից, ճառք ի Սանփսոն, ի Յովնան և Յերիս մանկունս կամ Ի հրեշտակս ի հին թարգմանութենէ եղեալ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց հեղեալ ի լատին բարբառ, աշխատասիրութեամբ Ղ. Մկրտչի աթոռակալ վարդապետի Միսիթարեան Աւգերեանց». Վենետիկ, 1826, էջ 26:

Հեդոնիզմի նույնատիպ տեսություն տեսնում ենք Պոլ Վալերիի 1934 թ. «Էսթետիկական ասվերջություն» հոդվածում: «Երբ մարդ քաղցած է,- գրում է նա,- քաղցի զգացումը նրան ստիպում է այնպես վարվել, որ քաղցը շուտ չքանա: Բայց եթե մարդ վայելում է ուտելիքը, ապա ուզում է այդ վայելքը պահի, որպեսզի այն տևի կամ վերսկսվի...»: Այնուհետև նշելով, որ նույնը վերաբերում է

Ամփոփելով խորանների մեկնություններում մեր գեղագիտական դիտարկումների արդյունքները, կստանանք հետևյալ ուրվագիծը:

Նախ խորանների բովանդակած բոլոր պատկերամոտիվները ոչ թե կամայական են, այլ օժտված են սիմվոլով (խորհուրդով):

Երկրորդ՝ այդ պատկերամոտիվները, անմիջապես ներգործելով զգայարանների վրա և գեղագիտական հաճույք պատճառելով նրանց (ներգործելով կամարների, սյուների, խոյակների ճարտարապետական կառուցվածքով, ծաղիկների, տունկերի, թռչունների, կենդանիների կերպագրությամբ և գույներով), այդ խորհուրդները ճանաչողներին (դրա համար էլ գրված են մեկնությունները) հոգեպես նախապատրաստում են վերստին մտնելու ավետարանական խոսքերի բովանդակության խորքերը, այսպես ասած, նախադուռ են ծառայում Ավետարանների համար: Եվ զգայական (իմա գեղագիտական) վայելքը դառնում է անհայտը, աստվածայինը, հոգևորը, մտայինը (նոր պլատոնական հասկացություններ) ճանաչելու ուղի (ինչպես զգայականը Դավիթ Անհաղթի և աստվածաբանների կամ Սուրբ Գրքի հեղինակների ստեղծած պատկերները Դիոնիսիոս Արիսպագացու, բանաստեղծական պատկերները Հովհան Դամասկացու համար):

Երրորդ՝ նոր պլատոնականության մեջ և հատկապես Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» գրվածքում բարին և գեղեցիկը, ինչպես նաև ազնիվը, լույսը և այլն, հանդես են գալիս իբրև աստվածային անուններ, որոնք արտացոլվելով առարկաների և արարված (Աստծու կողմից) աշխարհի մեջ, մեզ միշտ հիշեցնում են աստվածայինի մասին: Այդ սկզբունքը առաջնորդում է նաև մեր մեկնիչներին:

Չորրորդ՝ մեկնիչներն աշխարհը բաժանում են երկու մասի՝ անհրաժեշտի (պրակտիկի, ուտիլիտարի) և վայելչականի (հեդոնիզմ): Այսպիսի բաժանումը գալիս է էպիկուրյան փիլիսոփայությունից:

Եթե անհրաժեշտի (պրակտիկի) ոլորտը այն բաներն են, առանց որոնց մարդ չի կարող ապրել (օդ, ջուր, օթևան, հագուստ, առաջին անհրաժեշտության անուններ), ապա վայելչականի ոլորտն ընդգրկում

մյուս զգայություններին ու զգացումներին. Վալերին շարունակում է. «Տեսողությունը, շոշափելիքը, հոտառությունը, լսողությունը, շարժումը, խոսքը ժամանակ առ ժամանակ ղրկում են որոնել նրանց հարուցած զգայությունները, ամրապնդել կամ վերսկսել դրանք: Այդ էֆեկտների գումարը իրենց անվերջական ուղղվածությամբ, որոնք ես թվարկեցի այստեղ, կարող է կազմել էսթետիկական երևույթների ոլորտը... Այդ ոլորտում բավարարումը վերստեղծում է պահանջ, հետևանքը հարուցում է պատճառը...» (Поль Валери. Об искусстве. М., "Искусство", 1976, с. 113–114).

է այն բաները (պայծառ գույներ, քաղցր ձայներ, նուրբ քիմքի համար ստեղծված գինի, խորտկեղեն, համեմունք, անուշ բույրեր և այլն), առանց որոնց մարդ կարող է գոյատևել, բայց չի կարող բարձրանալ աստվածայինը ճաշակելու աստիճանի: Ուրեմն, զգայական վայելքը (դա չպետք է հասկանալ կոպիտ ձևով) գեղարվեստական արտահայտության առաջին աստիճանն է: Այսինքն, մեր հասկացածով, եթե նկարվում է ծաղիկ ու թռչուն, նրանց հետ բացի գույնից ու կերպից, որոնք ներգործում են տեսողության վրա, գործում են նաև անուշ բույրի ու համի և քաղցր ձայնի զգացողությունը: Պատահական չէ, որ մեկնիչները աքաղաղների պատկերի առիթով խոսում են առավոտյան կանչի մասին, նռենու պատկերի առիթով նրա կեղևի դառը համի և կեղևի մեջ պարփակված նռան հատիկների քաղցր համի մասին և այլն: Պատկերված առարկան անկախ մեր կամքից հարուցում է տարբեր որակի զգայություններ:

Խորանների մեկնությունների բովանդակած գեղագիտական հարցադրումներն այսօր ևս գործում են և ենթակա են նոր հարստացումների գեղարվեստի ետնագույն նյութի վրա:

ԳՈՒՅՆԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԵՐԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գեղագիտական երկու կարևոր հարցադրումներից հետո (պատկերները իբրև գեղեցիկի խորհուրդներ Ավետարանների կամ աստվածային խոսքի խորքերը մտնելու համար և վայելքը իբրև աստվածային հոգևորի կամ բանականի ընկալման միակ միջոց) մենք դիմում ենք մեկնություններում գույնի տեսությանը, որը կազմում է գեղագիտական վայելքի բաղկացուցիչ մասը և, իբրև արվեստի տեսության ստորոգություն, ունի առանձին նշանակություն: Մանավանդ երբ խոսքը վերաբերում է միջնադարյան գեղարվեստական գունամտածողությանը: Ըստ խորանների մեկնությունների, պայծառ կամ «ազնիվ» գույները զգայությունների վրա ներգործող այլ գործոնների հետ (համ, բույր, ձայն, հանգիստ) կատարյալներին (հավատացյալներին)[1] օգնում են բարձրանալու դեպի այն «հոգևոր և իմանալի» վայելչությունները, որոնք նախապատրաստել է Աստված մարդու համար, ինչպես «տաճարի և խորանի զարդերով դաստիարակէր Աստուած զԻսրայէլ»: Այսինքն գույնի արվեստը (այստեղ խորանների մանրանկարչության մեջ) ամենասերտ կերպով կապվում է բնախոսական և հոգեբանական երևույթների հետ, ինչպես հավաստում են Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու, Վանական Վարդապետին մեր վերագրած խորանների մեկնությունները: Լ. Գերիկեի և Կ. Շյոնեի «Գույնի երևույթը. նրա կիրառման պատմության և տեսության շուրջը» աշխատությունը մեզ հնարավորություն է տալիս հետևելու մեր մեկնություններում գույնի ուսմունքի պատմական տեղին և նշանակությանը, որ դուրս է գալիս միջնադարում գույնի, գուտ իբրև խորհրդաբանական համակարգի, ընդունված տեսակետի սահմաններից:

Գույնը վայելչության մյուս գործոններից (համ, բույր, լսողություն, հանգիստ) երբեմն առաջադասվում է, ինչպես ցույց է տալիս Ստեփանոս Սյունեցու մեկնության սկիզբը. «Զառաւել հրաշից արժանի սոսկալի գերապանծութիւն բանից գեղեցկազարդեալ պիտանացուածս զառ ի չորից աւետարանչացն մեզ պիտառութիւն արտայայտելով վսեմական բայիւ, տասնեցուց կանոնացն խորանա-

[1] Այս հասկացությունը («կատարյալ») հիշեցնում է ստոյիկյան փիլիսոփայության «իմաստուն» հասկացությունը (այդ մասին տես Ա. Լոսևի «Ստոյիցիզմ» հոդվածը – "Философская энциклопедия". Т. 5. М., 1970, с. 137).

յարկ գունակ գունակ դեղոգն երիներիմ երանգմունք, որոց հիզան գերկնայիմ մարմնոյն մետալփսն բացատրելով պարտականապես այնպես համագոյգ բանիւք մի առ մի շաղաշարեալ զընթերակայիցն հոլովսն արտակալեալ, որ վասն Քրիստոսի են վկայութեան բանք»[2]:

Գրեթե բոլոր մեկնություններում խորանապատկերներն օժտված են չորս գույներով կարմիր, կանաչ, սև և կապույտ: Երբեմն նշվում են նաև լրացուցիչ երանգներ ծիրանի, բեհեզ, վուշ, երկնագույն (կամ երկրագույն): Դիտարկենք չորս գույների ընդհանուր խորհրդաբանությունը մեկնություններում, սկսած Ը դարից: Ըստ Ստեփանոս Սյունեցու, առաջին խորանը նկարված է չորս գույնով, որոնք նշանակում են «զառաջին խորանին չորեքնիւթեան խորհուրդը»[3]:

Պարզվում է, որ խորանների չորս գույները, իրև չորս տարրերը խորհրդանշող գույներ, պատահական չեն ընտրված կամ լոկ արծագանք չեն անտիկ փիլիսոփաների չորս գույներ-չորս տարրեր համակարգի: Հավանաբար գույների այդ յուրօրինակ ընտրությունը գալիս է Փիլոն Եբրայեցու «Այնոքիկ որ Յելսն է խնդրոց և լուծմանց» գրքի «Ընդէ՞ր սրահին ի բեհեզի մանելոյ ի կապուտակի և ի ծիրանւոյ և ի կարմրոց մանելոյ» հատվածից, որը վերաբերում է Մովսեսի խորանի տասը սրահներին: Ահա թե ինչ է գրում Փիլոնը Մովսեսի խորանի նյութի մասին. «Կազմին առացեալքդ, և ի միասին անկեալքդ չորս են թուով, չորից տարերցդ նշանակ են, երկրի, ջրոյ, օդոյ, հրոյ... Քանզի գերկիր առակէ ի ծեռն բեհեզին. քանզի վուշ երկրաւոր է, և յերկրէ. և ջուր ի ծեռն ծիրանւոյն, վասն զի ջուր է ծնունդ [կամ ծնօդ] նորա. և զօդ ի ծեռն կապուտակին. քանզի սևա-

---

[2] «Առաւել զարմանքի արժանի [աստւածաշունչ] բանի սուրբ գալի մեծությունը. իր ամբողջ գեղեցկազարդ օգուտով հանդերձ, որ չորս ավետարանիչները արտահայտել են վսեմ խոսքերով, բովանդակում են տասը կանոնների խորանածև նկարագրված գույն գույն նեղների պես երանգները, որոնք որպես երկնային մարմնի [բնության] մետաղը [նյութը], բացատրում ենք ներդաշնակ խոսքերով, մեկ մեկ հիշատակելով ըստ այն շարադրանքի, որը վկայում է Քրիստոսի մասին»:

[3] Չորս գլխավոր գույների և չորս տարրերի (էլեմենտների՝ օդ, ջուր, հող, կրակ) հարաբերության մասին խոսում էին արդեն անտիկ փիլիսոփաները էմպեդոկլեսը և Պեմոկրիտը, չորս տարրերին համապատասխանեցնելով հետևյալ չորս գույները սպիտակ, սև, կարմիր և դեղին (տես L. Gericke, K. Schöne. Das Phänomen der Farbe. Zur Geschichte und Theorie ihrer Anwendung. Henschelverlag-Berlin, 1970, S. 12): Հետաքրքիր է, որ Լեոնարդո դա Վինչին ևս հիմնական գույները (դեղին, կանաչ, կապույտ, կարմիր) կապում է չորս տարրերի և բնական երևույթների հետ՝ սպիտակը լույսի, դեղինը երկրի, կանաչը ջրի, կապույտը օդի, կարմիրը հրի, սևը խավարի հետ (Gericke, Schöne..., S. 18, 20):

թույր է օդ, ոչինչ ունի յինքեան լուսածնութիւն. վասն որոյ յայլմէ լուսոյ լուսաւորեալ լինի. և գիուր ի ձեռն կարմրոյն. քանզի գոյնն հրատեսիլ է»[4]: Ուրեմն, մեր մեկնիչների ընդունած հիմնական երանգներից Փիլոնի երկում չկա կանաչը:

Չորս գույնով է նկարված նաև երկրորդ խորանը, որոնցից նշված են սևը, իբրև «իսկական գոյութիւն» (Քրիստոսի), իբրև աստվածաբանական խորհուրդ, հանուն Աստծուն առաջին տեսնողների, կարմիրը սևի վրա կամարի ձևով, իբրև պատարագների գոհերի արյան խորհուրդ, փրկելու համար Աստծուց շեղվողներին («ի խնդիր Աստուծոյ ելողացն»): Եթե ներքևը սև է, վերևը կարմիր, դրանց միջև կապուտակն է, որը խորհրդանշում է հոգևորը (աստվածայինը) մարմնավոր կյանքում: Ոսկեգույն միջին կամարը (առանձին երանգով նշված է ոսկին) համարվում է քահանայական, իսկ պետք է ենթադրել, նրա վրա ծգված գինեգույն կարմիրը ցույց է տալիս Մելքիսեդեկին, որը Քրիստոսին է խորհրդանշում: Իսկ ամենավերևում տարածված սև կամարը խորհրդանշում է Աստծու գալուստը: Չորս գույներով են նկարված նաև երրորդ և չորրորդ խորանները: Երրորդ խորանի առթիվ գույների անունները չեն տրվում: Չորրորդ խորանում կամարների վերևում նշված սեղանի վրա մութը նոսրացել է և բոցը պայծառացել, իսկ կամարների ստորոտում խոյակներից դուրս եկող «եղջյուրները» կարմիր և կապույտ գույներով են, կանաչ են խորանի ստորին մասից դեպի վեր բուսած արմավենիները: Հավքերի համար նշված է սոսկ կարմիրը իբրև նրանց կտուցների և պոչերի (որոշ ձեռագրերում ոտքերի) գույն: Մնացած խորանների համար, պետք է ենթադրել, որ ևս չորս գույն է նախատեսված: Ընդ որում, անվերջ կամ ստվերն է պակասում և կարմիրը պայծառանում, կամ սևը նվազում և կարմիրը թանձրանում կամ հարստանում:

Հաջորդ մեկնությունը, գրված ԺԱ-ԺԲ դարերում (պահպանված է մեզ հայտնի մեկ ձեռագրում՝ ԺԱ-ԺԲ դդ., Մատենադարան № 2952), ևս գույների մասին ժուժկալ է արտահայտվում: Առաջին խորանը չորս գույնով է, կարմիր գինեգույնը նշանակում է Մելքիսեդեկը ի դեմս Քրիստոսի, իսկ սև, կանաչ և կապույտ գույներով նկարված կամարը մարդու մարմինն է խորհրդանշում՝ կազմված արյունից, «ի խող» (հավանաբար ոսկրածուծից), ոսկորներից և մարմնի ծածկույթից (երևի մաշկը), որոնք իրենց հերթին նշանակում են «հայրական,

[4] «Փիլոնի Երրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են մեկնութիւն Ծննդոց, և ելից, Ճառք ի Սամփսոն, ի Յովնան, և Յերիս մանկունս կամ ի հրեշտակս. Աշխատասիրութեամբ Ղ. Սկյուտիյ աթոռակալ վարդապետի Միսիթարեան Ազգերեանց. Վենետիկ, 1826, էջ 525-526:

որդիական, հոգիական» խորհուրդը, որ վերստին միավորված է:

Այդ նույն խորհուրդը կա Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» գրվածքում (ենթադրվում է, որ այն թարգմանել է Ստեփանոս Սյունեցին)[5]: Վերը նշվեց, որ չորս գույները հանդիսանում են նաև չորս տարրերի խորհուրդը: Ստացվում է՝ չորս գույներն ունեն եռաստիճան խորհուրդ. ա) խորհրդանշում են չորս տարրերը. բ) խորհրդանշում են մարդու մարմնի չորս բաղադրիչ մասերը, որոնք ըստ Եմեսացու, նաև չորս տարրերն են նշանակում. գ) մարդու մարմնի չորս տարրերը խորհրդանշում են Հայր, Որդի, Սուրբ Հոգի և նրանց «միավորական» խորհուրդը: Ըստ երևույթին երրորդ խորանում է, որ սևը թանձրանում է, կարմիրը նվազում: Երկրորդ խորանի առթիվ խոսվում է նաև կարմրի մասին հավքերի կտուցներին և ոտքերին, նաև «խարխարստիւնք» (ակոսազարդ) կապույտ սյուների մասին հնգական մասերով զարդարված: Երրորդ և չորրորդ խորանների մասին նշվում է, որ արդեն սևն է նվաղում և կարմիրը հարստանում: Հինգ և վեցերորդ խորաններում էլ ավելի է ուժեղանում գույների պայծառությունը, որն արտահայտված է նաև սյուների վարդագույն երանգով: Վարդագույնը կապված է համաբարբառ ավետարանիչների հետ, նշանակելով փրկության ավետումը: Այդ խորանները հարուստ են խորհուրդներով մարգարեների (աքաղաղների), արմավենիների, որոնք երկրից երկինք են բարձրանում կանաչ տերևներով և պտուղները իջեցնում դեպի երկիր: Յոթերորդ և ութերորդ խորաններում սևը նորից է պակասում և կարմիրը պայծառանում, քանի որ խաչի մերձենալու հետ մթագնում է Հին Օրենքը (Հին Կտակարանը և Մովսիսյան օրենքները): Խոսվում է նաև ոսկեգույն կամարի, իբրև քահանայական խորհրդի մասին: Տասներորդ խորանը ծաղկած խաչի հետ կապված խորհուրդ ունի, և ուստի կամարների սյուները «կարմրագոյնք, համակ պայծառ վարդագոյն» էին: Այնուհետև խոսք չկա գույների մասին:

Չորրորդ և վեցերորդ մեկնությունները (ԺԹ-ԺԴ դարեր) ավելի մոտ են միմյանց: Դ մեկնության մեջ պատվիրվում է առաջին խորանը նկարել երեք, վեցերորդ մեկնության մեջ՝ չորս գույներով, թեպետ վեցերորդում գույների թիվը («կապուտակ, ծիրանի, կարմիր,

---

[5] Հայ մատենագրության մեջ «Յաղագս բնութեան մարդոյ» գրվածքի հեղինակ է համարվում Բարսեղ Կեսարացին (տես Կ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ. Երևան, 1976, էջ 73, 180): Մատենագիտական տվյալները տես Ս. վրդ. Գրիգորեան. Ստեփանոս Սիւնեցի. Պեյրութ, Լիբանան, 1958, էջ 31-32:

բեհեզ, վուշ, երկնագույն նկարեալ կամարն»)* անցնում է երեքից: Սյուներն ունեն ծիրանի գույն («գիաստատութիւն աթոռոյն արտաքոյ տարերցս»): Հետաքրքիրն այն է, որ երկու մեկնության մեջ էլ առաջին երեք խորանները չեն տարանջատված, և առաջին խորանի ատրիբուտների մեկնությունից հետո անմիջապես սկսվում է չորրորդ խորանի մեկնությունը:

Ուրեմն, երկու մեկնության մեջ էլ առաջին խորանի սյուները, ինչպես տեսանք, ծիրանի են: Այնուհետև վեցերորդ մեկնության մեջ խոսվում է «արտաքին» անի մասին (Մելքիսեդեկի քահանայությունը ի դեմս Քրիստոսի): Պատվիրված է կամարները նկարել չորս գույնով (սևով և կարմիրով, կանաչով և կապուտակով), ինչպես մարդու մարմինը կազմված է «յարիւն և ի մաղաս, յոսկերս և ի ծածկոյթ մարմնոյ», որոնք էլ իրենց հերթին խորհրդանշում են հայրական, որդիական, հոգիական և դարձյալ միավորական խորհուրդը: Դա վերցված է երկրորդ մեկնությունից: Հետաքրքիր է, որ մարդու մարմինը կազմող այդ նյութերից երկուսը, ըստ Գրիգոր Նյուսացու (Նեմեսիոս Էմեսացու) նմանեցված է չորս տարրերին. «Նմանեցուցանեն երկրի սեաւ մաղձ, և ջրոյ զմաղաս, օդոյ զարիւն, և հրոյ զխարտեաշ մաղձ» (ՆՀԲ, Բ, էջ 198): Այդ հատվածը չկա Դ մեկնության մեջ: Այնտեղ խոսվում է երկրորդ խորանի մասին, որ զարդարված է չորս գույնով, «ի ներքոյ ունելով զանաղեղն, որ զսոսկական զարդն ցուցանին զխորանին զնրբագոյնն, վասն առաջին տեսողացն», որի վրա կարմիր «կամարն ձգեալ», իբրև պատարագի արյան գոհ, ինչպես Սյունեցու մոտ է և երկրորդ մեկնության մեջ: Այդ նույնը, առանց խորանի համարը նշելու, ասվում է վեցերորդ մեկնության մեջ: Այնուհետև յոթերորդ մեկնության մեջ շարունակվում է կարմիր գինեգույնի խորհուրդը (Մելքիսեդեկն ի դեմս Քրիստոսի), որի մասին ավելի վերևում խոսվել է չորրորդ մեկնության առթիվ: Շարունակությունը նորից սկսվում է նմանվել: Չորրորդ մեկնության մեջ առաջին խորանի կամ կանոնի համար վերստին առաջարկվում է «Գ Գ (թերևս 3-ական. Վ.Ղ.) գոյն մի մի կամարն» (վեցերորդ մեկնության մեջ ավելի անորոշ ձևով), որ միասնական երրորդության գաղափարն է արտահայտում և կամարների վրա «կարմիր սեղանն բոցախառն հրով և ի վերա [նմին] ամպն»: Այնուհետև գալիս է մի հարուստ սիմվոլիկա, որտեղ գույները ինչի՞ համար են և ո՞ր խորա-

* Որոշ ձեռագրեր տալիս են «երկնագույն» ձևը, որը ճիշտ չէ, եթե իրոք այդ սիմվոլիկայի ակունքը Փիլոն Եբրայեցու գրվածքն է: Վերջինիս մոտ բեհեզ, վուշ, երկնագույն հաջորդ են գալիս միասին («... Քանզի զերկիր առակէ բեհեզին. քանզի վուշ երկրաւոր է...») (Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս..., էջ 525):

նում, մնում է անորոշ և նման Ստեփանոս Սյունեցու մեկնությանը: Հինգերորդ խորանի առթիվ նշվում է, որ ստվերը պակասում է և կարմիրը պայծառանում, ծաղկում շուշան ծաղիկը:

Խորանների մի քանի մեկնություններ կապվում են Շնորհալու մեկնության հետ, որտեղ առաջին անգամ պայծառ գույները համարվում են գլխավոր վայելչություններից մեկը: Դիմելով Ավետարանների ցանկիչներին և հիմնադիրներին (այստեղ խորանների աղյուսակները և բնագիրը իրականացնողներին), Շնորհալին բացատրում է, որ հիշյալ գրվածքում խոսվում է հոգևոր վայելչությունների և «անապական գեղեցկությունների» մասին, որոնք արտահայտվում են հեշտալի դեղերով, գույնզգույն ծաղիկներով և պետպես հորինվածքներով: Հիմնական գույները նույնն են կարմիր, կանաչ, սև և կապույտ, և այս չորս գույներից բացի նաև ծիրանի: Այս մեկնության մեջ առանձին խորանների գունաշարը քննելիս հստակ չի նշվում, թե դրանք քանի գույնից են բաղկացած: Սակայն նշվում են այն գույները, որոնք հուզական և սիմվոլիկ լիցք են կրում: Շնորհալին այդ հիմնական գույներն օժտում է հուզական առարկայական բովանդակությամբ, այն, ինչ Գյոթեն համարում է գույների զգայա-բարոյական մշակում: Այսպես, առաջին խորանում գույնը համակ ծիրանի է[7] և նվիրված ամենակալ Աստծուն Սուրբ Երրորդությանը, և խորհրդանշում է «ամենակալ բազավորությունը» «անսպառ և անվախճան»:

Երկրորդ և երրորդ խորանները նկարված են կանաչով և սևով, իբրև գլխավոր գույներ, և խորհրդանշում են միջին և վերջին քահանայապետությունները, ընդ որում կանաչը նրանց անմահությունն է գույց տալիս, սևը Աստծո անհասությունը նրանց համար: Այստեղ ոսկին նշված է սիրամարգերի համար («ոսկեփետուրք և ոսկետունք»), որոնք այս դասերի մաքուր և անաղարտ բնությունն են ակնարկում: Չորրորդ խորանը կապվում է երկրային դրախտի, հետևապես չորս տարրերի հետ: Այստեղ իշխող գույներն են սևը և կապույտը, իբրև սգո գույներ, քանի որ Ադամը և նրա որդիները զրկվում են դրախտից (Գյոթեն ևս կապույտը[8] դիտում է իբրև սգո

[7] Ծիրանի ասելով մեր մեկնիչները (ինչպես Գյոթեն և Շոպենհաուերը գույների մասին իրենց ուսմունքներում) նկատի ունեն կատարյալ կարմիրը, որն իր արժանիքների համար արքայական է համարվել և սպեկտրում ավելի շատ հակված է դեպի կապույտը, քան դեպի նարնջագույնը (Gericke, Schöne..., S. 36, 48):

[8] Ըստ Գյոթեի, ինչպես դեղինը միշտ լույս է կրում, այնպես էլ, կարելի է ասել, որ կապույտը միշտ կրում է մութը (Gericke, Schöne..., S. 36, 48), նաև, որ «կապույտ ապակին առարկաները գույց է տալիս սգո լույսով» (նույն տեղում, էջ 36):

գույն):

Հինգ և վեցերորդ խորաններում ավելանում է կարմիրը, որ կապված է Աբրահամի անվան հետ: Իր հերթին Աբրահամի անունը կապվում է Մելքիսեդեկի անվան հետ, որն արդեն Պողոս առաքյալի կողմից համարվում է Քրիստոսի նախատիպար: «Եւ աստ սեաւնց գինեգոյն որակն նշանակէ զՄելքիսեդէկի քահանայութիւն ի դէմս Քրիստոսի»,- ասված է մեկնության մեջ: Որոշ ձեռագրեր գինեգույն բառի փոխարեն տալիս են գույնգույն կամ գույն և գույն: Մենք հակված ենք ավելի շուտ գինեգույն բառին, քանի որ այն ավելի մոտ է կարմիրին և առանձնապես ծիրանիին (պուրպուրին), մանավանդ որ Սյուներու և այլ մեկնություններում Մելքիսեդեկի անունը կապվում է գինեգույնի հետ: Այս խորանների ատրիբուտների հետ Շնորհալին հատուկ կանգ է առնում շուշան ծաղկի վրա, որին հատկացնում է երեք գույն («իսկ շուշան երիս որակս ունի») սպիտակ, դեղին և կարմիր: Սպիտակը նշում է նահապետների կյանքի մաքրությունը և պարզությունը, դեղինը ժուժկալությունը և կարմրությունը՝ վաստակը:

Յոթերորդ և ութերորդ խորաններն արտահայտում են մովսիսյան խորանի պայծառությունը: Սակայն սյուները կապույտով են ներկված «խառխառուտք»: Երկրորդ մեկնության մեջ (ԺԱ-ԺԲ դդ.) Մովսեսի խորանը երրորդն է, նույնպես կապույտ սյուներով «խարխարտիւնք»: Չորրորդ (Վանական Վարդապետի խմբագրած) մեկնության մեջ կապույտ սյուները պատկանում են չորրորդ խորանին և «հինգ հինգ մասամբ խազիազուտեալք»: Հինգերորդ մեկնության մեջ (հնագույն ձեռագիրը 1419 թ., գրված Գրիգոր Խլաթեցու ձեռքով) «խարխառուտք», վեցերորդ մեկնությունը տալիս է «խազիազեալք» բառը: Այս բոլոր բառերը համադրելով հանգում ենք այն եզրակացության, որ սյուները ներկված են ակոսավոր խազերով ու գույներով, այսինքն որևէ քարի (օրինակ, մարմարի) նմանակելով: Խազ ասելով պետք է հասկանանք ակոս, իսկ Թ-Ժ դարերի ձեռագրերի խորաններում սյուները հաճախ ակոսավոր են (կաննելյուրներով) նմանակելով անտիկ սյուներին: Տասնմեկերորդ մեկնության մեջ երկրորդ խորանի առթիվ նշված է. «Սիւնքն կապոյտք խառխառ ոստիւքն...»: Սա արդեն միանգամից փոխում է իմաստը: Ուրեմն, կապույտ սյուները ոչ թե նմանակում են քարի, այլ ներկված են խառը ոստերով կամ շյուղերով, որ ևս հնագույն շրջաններից հատուկ է խորանապատկերներին: Այստեղ կամարների տակ (հավանաբար ստորին կամարը) սևը թանձրանում է և կարմիրը նվազում: Մի մեծ խումբ ձեռագրեր կամարների տակ սևի թանձրացման մա-

սին ոչ մի խոսք չեն ասում:

Իններորդ խորանն ավելի «զարդարուն է երանգներով», քանի որ սևն ու կապույտը նվազում են, կարմիրը՝ պայծառանում, քանզի այդ ժամանակներում մարգարեները հռչակում են Աստծու Որդու գալուստը: Տասներորդ խորանը. «որ կայ հանդէպ իններորդին», «առաւել զարդարուն և շնորհաշուք և պայծառ է», «վարդագոյն ներկուածով կարմրութեամբ», որտեղ գրեթե չկան սևն ու կապուտակը, «զի հինն էանց խաւարն մեղաց և անգիտութեան, սգոյ և տխրութեան, և ամենայն ինչ նոր եղև արեամբն Քրիստոսի ներկեալ երկինք և երկիր, ամենայն մասամբք իւրեանց, և զարդիւք», որտեղ խաչը բարձրացվում է «ի գլուխն վերնոյ կամարին»:

Չորրորդ մեկնությունն ունի որոշ երանգներ, որոնք հարստացնում են զարդ դիտարկված գույնի տեսության համակարգը: Եթե առանձին խորանների բնութագրումը նման է Շնորհալու մեկնության մեջ եղած բնորոշումներին (դա վերաբերում է խորհրդաբանության ոլորտին), ապա չորս գույների կիրառումը տարբեր խորաններում հիշեցնում է Սյունեցու մեկնությունը: Առաջին երկու խորանները չորս գույներով են, թեև նշված է վեց անուն կապուտակ, ծիրանի, կարմիր, բեհեզ, վուշ, երկրագույն: Երկրագույնը այստեղ փոխարինում է սևին, կանաչը բացակայում է, «բեհեզ» և «վուշ» կոչվող գույները մեզ համար անորոշ են: Առաջին խորանում բացի ընդհանուր գույներից, առանձին նշվում են ծիրանի սյուները «զհաստատութիւն առաջին աթոռոյն արտաքոյ տարերց»: Շատ հարուստ է երկրորդ խորանի կամարների նկարագրությունը – ներքևի կամարը սև գույնով է նշվում (ըստ երևույթին թույլ սև). «Ջսոսկական զարդն ցուցանին զխորանին նրբագոյնն, վասն առաջին տեսողացն...»: Պետք է ենթատեքստից հասկանալ, որ սև գույնը Աստծուն առաջին տեսնողների զգացած երկյուղի արտահայտությունն է: Նրանից վեր կարմիր կամարն է, որպես պատարագի զոհերի խորհուրդ, իսկ «միջոցն կապուտակ», պետք է հասկանալ կարմիրի և սևի միջև, ինչպես Ստեփանոս Սյունեցու մոտ է: Այնուհետև նշվում է «ոսկեգոյն կամարն գինեգոյն», իբրև Մելքիսեդեկի խորհուրդ ի դեմս Քրիստոսի: Այստեղ կա բնագրի աղճատում, որ ուղղված և ճշտված է մի այլ ձեռագրում (ԺԷ դարի)- «Իսկ ոսկեգոյն կամարն զքահանայական ունի խորհուրդ ի միջի կացեալ: Իսկ կարմիր գինեգոյն բերէ զխորհուրդ Մելքիսեդէկին ի դէմս Քրիստոսի»: Այս ուղղումը կատարված է Սյունեցու մեկնության հիման վրա: Եվ փաստորեն ոսկու քահանայական (այսինքն հանդիսավոր) խորհուրդն անմիջապես կապվում է

գինեգույն կարմիրի կամ ծիրանիի (Մելքիսեդեկի խորհուրդ) հետ: Համարների հիմնականում կապույտ, ոսկի, կարմիր (գինեգույն) գունահարաբերությունը, որ կա Սյունեցու և ուրիշների մեկնությունների մեջ, ինչպես նշում է Վան Բիեման Հյուլցելի գույնի ուսումնքի առթիվ 1930 թ., սրբազան խորալային տրամադրություն է բերում (լուսավոր հանդես է գալիս ոսկին, միջին տոն՝ շողշողուն կարմիրը, իբրև խավար՝ մուգ կապույտը)[9]:

Ներսես Շնորհալուց հետո մյուս մեկնությունը, որտեղ որոշակի ու մանրագնին է արծարծվում գույների կարգը, Գրիգոր Տաթևացունն է: «Վասն ժ խորանացն և զանազան գունոցն» ենթագլխում նա նախ նշում է կիրառվող գույները, որոնք համապատասխանում են չորս տարրերին, և ոսկին. «Կարմիր, կանաչ, սեաւ, կապոյտ և ոսկին անապական հինգերորդ էութեան երկնից»: Մյուս մեկնություններում ոսկին հանդես է գալիս տարբեր կապակցություններում (ոսկեզգեստ, ոսկեձույլ, ոսկետտունք և այլն), բայց այստեղ է, որ այն հանդես է գալիս իր ուղղակի իմաստով իբրև հինգերորդ էության՝ երկնքի խորհուրդ, որ վերնյութական է և վերտարերային[10]: Ըստ եկեղեցու հայրերի (ինչպես գույց են տալիս մի շարք գիտնականներ ու բյուզանդագետներ Դվորժակ, Շյոնե, Վեսսել, Ավերինցև և այլք), ոսկին պետք է հասկանալ իբրև աստվածային լույս կամ արփիափայլություն[11]: Հաջորդ նախադասության մեջ անհասկանալի է «դարձեալ Դ աստառէ ծաղկի» արտահայտությունը: Բայց եթե առաջնորդվենք բնագրի տրամաբանությամբ, ապա կհասնենք մի

[9] Gericke, Schöne..., S. 93:

[10] Ի տարբերություն երկրի «երկինք է առաւել պարզ, գի ոչ է ի յորից տարերց, այլ մի պարզագոյն տարր, այսինքն հինգերորդ էութիւն»,-գրում է Յովհան Որոտնեցին (տես Հ. Հ. Քյոսեյան. Յովհաննես Մայրագոմեցին և հայ միջնադարյան խորհրդաճշաքի աստվածաբանական մի քանի հարցեր - «Էջմիածին», Յունուար, 1986, էջ 53-54):

[11] Գյոթեն լույսին ամենամոտիկ գույնը համարում է դեղինը: Իսկ ոսկու առթիվ խոսում է իբրև մի նոր ու վսեմ ըմբռնման մասին, որպես ավելի ամուր դեղին: Այդ առումով նա ավելի հարուստ ընկալում է հայտնաբերում, քան պարզապես ոսկու կապույտը աստվածային լույսի հետ (Gericke, Schöne..., S. 35): Միջնադարում ոսկու արժեքի և իմաստի մասին հիմնական մեկնաբանությունները հավաքված են Կ. Վեսսելի «Ոսկե ֆոն» («Goldgrund») հոդվածում (տես «Reallexikon zur byzantinischen Kunst». B. II. 1971, Stuttgart, S. 880-894):

Ըստ Վ. Բիչկովի, դեղինը Դիոնիսիոս Արիսպագացու մոտ ընկալվել է իբրև «ոսկեկերպ», իսկ ոսկին իբրև «լուսակերպ» (Бычков. Византийская эстетика, с. 106): Միջնադարյան մատենագրության մեջ ոսկու իմաստների մասին հետաքրքիր ուսումնասիրություն է գրել Ս. Ավերինցը – С. С. Аверинцев. Золото в системе ранневизантийской культуры ("Византия, южные славяне и Древняя Русь, Западная Европа". Искусство и культура. Сб. статей в честь В. Н. Лазарева. М., 1973, с. 43-52):

ըմբռնման, որ լրիվ նոր է մինչև այժմ հանդիպած մեկնությունների մեջ: Նախադասությունը բերենք լրիվ. «Դարձեալ Դ աստառէ ծաղկի և Բ շուք, և Բ բաց, մի ծիրանի և մի ոսկի, որ լինի ժ ըստ ժ խորանացն»: Տաթևացին չորս սիմվոլիկ գույներն իրենց երանգներով ուզում է հասցնել խորանների սրբազան թվին, այսինքն տասի: Աստառ բառն այստեղ հավանաբար երանգի կամ գույնի իմաստ ունի, քանի որ այն բացատրվում է շուք և բաց տերմիններով: Նշանակում է նախադասությունը կարելի է թարգմանել այսպես. «Չորս գունամակերեսին ավելանում է երկու ստվերային և երկու լուսավոր մակերես, նաև մի ծիրանի և մի ոսկի, որ ստացվում է տասը՝ ըստ տասը խորանների թվի»: Ուրեմն, խոսքը վերաբերում է նույն գույնի մուգ և բաց երանգների հակադրությանը, որ նորություն էր խորանների մեկնություններում և նույնպես հիմնված գործող մանրաանկարչության վրա, քանի որ նկարիչները հիմնական վառ գույները (կանաչ, կարմիր, կապույտ) հատկապես Կիլիկիայում և Գլաձորում չէին թողնում առանց մուգ և բաց երանգների, ընդ որում մուգից դեպի բաց գնում էին աստիճանաբար:

Առաջին խորանում, ինչպես Շնորհալու մոտ, գերիշխող ծիրանի գույնը բազավորական է: Այն բառացի համընկնում է պուրպուր գույնին Գյոթեի տված բացատրությանը նրա «Գույների ուսմունքում» այսինքն «կարելի է ծիրանին համարել արքայական բնույթի»[12]: Թագավորական է, նշում է Տաթևացին, որովհետև «ցուցանէ զամենակալ թագաւորութիւն Աստուծոյ» և «բոլորովին, գի անվախճան է»: Երկրորդ և երրորդ խորանները կանաչ են, ցույց տալով հրեշտակների անվախճան կյանքը: Եվ կանաչի հետ խոսվում է նաև սիրամարգի գլխի ոսկի փետուրի և պոչի մասին, իբրև առավոտյան և երեկոյան ճանաչման սիմվոլների, նաև անապական բնության մասին: Սև ոտքերը նշանակում են կրկնակի տրտմություն մեղավոր մարդկանց (Ադամի սերունդների) և «անկելոց», այսինքն հրեշտակների դասի: Չորրորդ խորանի (Ադամի դրախտ) սյուները չորսն են, իբրև չորս տարրերը, գույները՝ սև և կապույտ, թեպետ որոշակի չի ասվում, թե դրանք կամարների, թե՞ սյուների գույներն են: Սևը ցույց է տալիս Ադամի մաշկյա հագուստը, կապույտը՝ մարդու անկումից հետո դեռևս աստվածային նշույլ կրելու առկայությունը:

Հինգերորդ և վեցերորդ խորանների առթիվ կարմիր գույնը դիտվում է իբրև Նոյի ու Աբրահամի մատուցած պատարագի գոհ, իբրև խորհրդանիշ «արեանն Որդոյն Աստուծոյ»: Շուշանի համար երեք

[12] Sb u Gericke, Schöne..., S. 45.

գույն է տրված, ինչպես Շնորհալու մոտ սպիտակ, դեղին և կարմիր: Յոթ և ութերորդ խորանների առթիվ նշվում է կարմիրի նվագման և կապույտի ու սևի ավելացման մասին, քանի որ դեռ «ստուերական էր աւրէնքն և արիւն անասնոցն սակաւ ինչ սրբութիւն մարմնոյ»: Իններորդ խորանում նվագում են սևն ու կապույտը, և ավելանում է կարմիրը, քանի որ մոտենում է Քրիստոսի գալուստը (աքաղաղը մարգարեների խորհուրդն է, նռենենիները՝ նրանց խոսքը): Տասներորդ խորանը (եկեղեցին իր պայծառությամբ) համատարած կարմիր է, իսկ թռչունների կարմիր բերաններն ու ոտքերը ցույց են տալիս Քրիստոսի մարդեղությունը: Այստեղ մուգ գույնի ուժեղացման հետ տրտմության և պայծառ գույների հետ ուրախության և հույսի հույզերի մեկնաբանումը հիշեցնում է Շնորհալու մեկնությունը:

Գրիգոր Տաթևացին գույների տեսությունը տարածում է նաև Ավետարանների ցանկերի չորս տեսակ գրերի վրա: Կարմիրով գրված տասը գլխագիրների տակ պետք է հասկանալ տասը կանոնները, որոնք խորաններում հաճախ գրվում են կարմիրով: Իսկ կանաչ գիրը թեպետ գործածվում է, բայց այստեղ դժվար է որսալ նրա իմաստը: Կապույտը, իբրև կիրակի և այլ տոների նշում, որոնք գտնվում են կիրակիների միջև, ևս գործածական է: Սևը հանդես է գալիս իբրև տնահամարների և համաձայնության տախտակների «ճապաղ ցանկերի» կամ «ցրվացանկերի» գիրի գույն (ավետարանական բնագրերի ստորին լուսանցքում): Ծիրանին (հաճախ կարմիրն ու ծիրանին շփոթված են), իրոք, հանդես է գալիս գլխագիր (գլխատառ) և գլխի առաջին տող (փոխառաջ), ուստի նշանակում է՝ Աստվածաշունչ գրքի գլխի և ամեն ինչի սկիզբն է Աստված: Ոսկի տառերը և տողերը ավետարանական բնագրում նշանակում են Տիրոջ «անսուտ և անսուրական» խոսքերը, որոնցով լուսավորվում են հավատացյալների միտքն ու հոգին: Տաթևացին գունավոր գրերի խորհրդաբանական հատվածը մտցնում է այս մեկնության մեջ, որովհետև այն ավելի խորն է մշակված իր իսկ գրած Գեորգ Սկևռացու Գրչության արվեստի մեկնության մեջ:

Որ գույների տեսությունը խորանների մեկնություններում ունեցել է կարևոր նշանակություն, երևում է նաև Ստեփանոս Սյունեցու մեկնության երկրորդ խմբագրության վերնագրից. «Տիեզերալուր և աշխարհալոյս վարդապետի և հոգենըւագ երգաւղի, տեառն Ներսէսի կաթողիկոսի Կլայեցւոյ արարեալ պատճառ ժ խորանաց սրբոյ Աւետարանին և վասն երանեկ ըռանկ գունոցն, ծաղկանց և հաւուցն և ծառոցն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Ուրեմն, խորհուրդ

կրող ատրիբուտների շարքում առաջինը տրվում է գույների անունը: Եվ այս վերնագիրը մեզ համար անհայտ աղբյուրից դրել է Գրիգոր Խլաթեցին: Նրա իսկ գրած հիշատակարանը սկսվում է վառքով և չորս թվի մեկնությամբ, որտեղ Ավետարանները համարում է «շաղկապեալ սրբոց աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայնանկելով հանճար»: «Վասն ականց» (Մատենադարան N 6649, ԺԵ դար) խորհրդապաշտական երկում ակն օժտված է չորս հատկությամբ. ա) գույն, բ) պայծառություն, գ) պարզություն, դ) ներգործություն և ազդումն: Այդ բոլոր հատկանիշները, որ տրված են թանկարժեք քարին, փաստորեն խորանների մեկնություններում հանդես են գալիս իբրև գույնի հատկանիշներ: Իսկ դա ստիպում է վերանայել ընդունված այն տեսակետը, թե քրիստոնեական միջնադարում գույնը բացառապես կապված է եղել խորհրդանիշի ու կանոնի հետ[13]: Մինչև այժմ անհամեմատ քիչ է ուշադրություն դարձվել միջնադարում գույնի գեղագիտական և հոգեբանական կողմի վրա[14], թեկուզ խորհրդաբանության մակարդակով, որ բացահայտորեն ներկայացնում են մեր մեկնիչները: Ըստ նրանց, կարմիրը իր երանգներով (ծիրանի, վարդագույն) գիտակցվել է իբրև առավելագույն ներգործություն ունեցող արժեքով գույն, որը այդ իմաստով անփոխարինելի է, և նրա ուժեղացման ու թուլացման, և, ընդհակառակը, կապույտի ու սևի թուլացման ու ուժեղացման հետ են կապվում բոլոր անցումները մեծագույն ցնծությունից մինչև խոր սրբազան տրտմություն և նորից թևակոխում դեպի ցնծագին գունաշխարհ:

Վերջերս լույս տեսան Ա. Արևշատյանի «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ» վերնագրով երաժշտության տեսության հայ միջնադարյան բնագրեր ուսումնասիրությամբ հանդերձ: Այդ բնագրերը կարծես «խորանների մեկնությունների» երաժշտական

---

[13] Տես Gericke, Schöne..., S. 16-17: Նաև «Farbensymbolik» հոդվածը («Reallexikon zur byzantinischen Kunst», B. II, 1971, Stuttgart, S. 524-533):

[14] Այդ իմաստով բացառիկ փորձ պետք է համարել Ն. Քոթանջյանի ուսումնասիրությունները (Н. Г. Котанджян. Цвет в раннесредневековой живописи Армении. Ереван, 1978; Н. Г. Котанджян. Цвет в начальных миниатюрах Эчмиадзинского Евангелия ("Древнерусское искусство". Рукописная книга. Сб. третий. М., 1963, с. 281-299):
Կիլիկյան մանրանկարներում գույների պիգմենտների և խառնուրդների մասին հետաքրքիր ուսումնասիրություն է կատարված քիմիական տեսակետից փորձանմուշների միջոցով: Տես D. E. Cabelli, M. V. Orna, Th. F. Mathews. Analaysis of Medieval Pigments from Cilician Armenia.- ACS Advances in Chemistry Series. No. 205. Archeological Chemistry. 1984, p. 243-254.

գուգահեռներն են, ինչպես նկատել է երաժշտագետը[15]: Ընդ որում, դրանցից երկուսը գրել են մեր մեկնությունների հեղինակները (Վանական Վարդապետ, ս. Գրիգոր Տաթևացի):

Գեղագիտական որոշ հարցադրումներ կամ մոտ են, կամ նույնանում են: Դրանցից է 4 և 10 թվերի խորհրդաբանությունը կապված չորս տարրերի և 10-ի կատարելության հետ, գուգորդվելով ձայների կամ գույների թվին. Մովսեսի խորանի գույներին ու տասնաբանյա պատվիրաններին: Թովմա Մեծոփեցին ուղղակի գրում է չորս ձայների և բաց ու մուգ գույների բազմազանության ու անկրկնելիության մասին[16]: Ինչպես յուրաքանչյուր գույն կամ գունահամադրություն առաջացնում է որոշակի զգացում և տրամադրություն, նույնը վերաբերում է նաև յուրաքանչյուր ձայնի, ինչպես գույց են տալիս մեկնիչները (Անանիա Նարեկացի), ս. Դավիթ Անհաղթը, նաև արաբ մտածողները ըստ Ա. Արևշատյանի դիտարկումների[17]: Եվ ինչպես ս. Ներսես Շնորհալին խոսում է պատկերներում գույնի, հածի, ձայնի և այլ զգայությունների հարուցման մասին, այդպես էլ արաբ փիլիսոփա Ալ Քինդին (Ը դար) «փորձում էր ընդհանրություն հաստատել մեղեդիների, գույների և բուրմունքների գեղագիտական ընկալման մեջ... որ գոյություն ունի որոշակի համապատասխանություն առանձին գույների ու մեղեդիների միջև, նրանց առաջացրած զգացումների տեսակետից: Նույնը նկատելի է, պնդում էր նա, բուրմունքների դեպքում, որոնք յուրօրինակ անձայն երաժշտության տեսակ են ներկայացնում»[18]: Այսինքն էսթետիկական նման խնդիրները հուզում էին նաև իսլամի մտածողներին:

---

[15] Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «Ձայնից» մեկնություններ, «Կոմիտաս», Երևան 2003, էջ 62-63:
[16] Նույն տեղում, էջ 72, 134-135:
[17] Նույն տեղում, էջ 78-79:
[18] Նույն տեղում, էջ 84:

ՊԱՏԿԵՐԱՍՏՈՒՎԱԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեկնություններում խորանների և կաճոնների քանակը համապատասխանում է (ծեռագիր Ավետարաններում նրանց թիվը մեծ մասամբ տարբերվում է, եթե չհաշվենք խորանածև պատկերազարդված եվսեբիոսի թղթի թերթերը): Այդ թիվը տասն է խորհրդավոր մի թիվ («Իսկ խորհրդով տեսեալ զտասն վասն զի թիւ է սրբագոյն և նուեր Աստուծոյ»): Իսկ թե ինչո՞ւմ է կայանում տասի խորհրդավոր կամ աստվածային թիվ լինելը, մանրամասն կխոսվի թվերին նվիրված բաժնում: Տասը խորաններն օժտված են առանձին-առանձին խորհուրդներով: Մեր կարծիքով, հարմար կլիներ քննել ինչպես առանձին-առանձին խորանների, այնպես էլ նրանց բովանդակած պատկերամոտիվների արտահայտած խորհուրդները: Դա թույլ կտա մի տեղում միավորել այն բոլոր մոտիվները, որոնք վերաբերում են տվյալ խորանին և որոնք նշում են տարբեր մեկնիչները:

Բայց նախ հարկ է պարզել <u>խորան</u> հասկացության խորհրդանշական ստուգաբանական բացատրությունը, որ տալիս են մեր մեկնությունները: Բարեբախտաբար, այդ գործը զգալի չափով կատարել է պրոֆ. Ռ. Թոմսոնը[1]: Նախ եկեղեցու համեմատությունը երկնքի հետ Արիստակես Լաստիվերցու մոտ («...եկեղեցիք, որ ի նոսա (վանքերում-Վ. Ղ.) որ գերկնից բերեն գնմանութիւն վասն պայծառ շինուածոցն, և վասն գեղեցկաշուք զարդարանացն...»)[2], ապա իրև Աստծո տուն համեմատելով երկնակամարի հետ, որ գուգորդվում է առաջին խորանի խորհուրդին («Գրեալ ևս է տեսակ (ծև-Վ. Ղ.) մեծութեան վերնումն կամարին»)[3], իսկ կամարն էլ, որ հունարենից է փոխառված, իր հերթին խորանի իմաստով է գործածվում[4] (ըստ Թոմսոնի, <u>խորան</u> բառը Ս. Գրքում գործածվում է մի քանի հարյուր անգամ):

Ստեփանոս Սյունեցու մոտ <u>խորան</u> բառը մի դեպքում գործածվում է իբրև կաճոն (համաբարբառի աղյուսակ), ինչպես «Արդ առա-

---

[1] Տես R. W. Thomson. Architectural Symbolizm in Classical Armenian Literature (Extract from the Journal of Theological Studies. New Series. Vol. XXX. Part I. 1979. Oxford. p. 102-114).

[2] «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ» աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի. Երևան 1963, էջ 55:

[3] «Սիրոյն Յովն մերոյ Գրիգորի Նարեկայ վանքի վանականի Մատենագրութիւնք» ի Վենետիկ 1840, էջ 198 (Բան ՃԲ, ժ):

[4] Տես Թոմսոն, նույն տեղում, էջ 105:

ջին խորանն...», այլ դեպքերում իբրև կամար բառի հոմանիշ, որը իր գույներով խորհրդանշում է «զերկնային մարմնոյն մետալիսն»: Խորան բառը կամարի իմաստով է գործածվում պուն բառի հետ («արիւնաներկեալ կարմրաւ սեաւցն և խորանացն»): Շնորհալին կամար և խորան բառերը տարբեր նշանակությամբ է գործածում: Իսկ Գրիգոր Տաթևացին, հավանաբար ելնելով ԺԱ-ԺԴ դարերի խորանների պատկերման պրակտիկայից (խորանների գլխազարդերը վերածվում են ուղղանկյունածև գորգադաշտի, երբեմն ներառնելով նաև կամարի պատկերը), տիեզերքի և երկնքի խորհուրդ է նրանց վերագրում: «Իսկ (խորանի-Վ. Դ.) ձևն կամար և չորք անկիւնի զերկնից և զկողմանց աշխարհիս ունի զնմանութիւն»[5]:

Ինչ վերաբերում է թռչունների և կենդանիների պատկերներին, ապա ինչպես արևմտյան «Բեստիարիումներում», այնպես էլ «Խորանների մեկնություններում» կենդանիները նմանեցվում են կրոնական և բարոյագիտական կերպարների ու հասկացությունների[6], երբեմն, ինչպես ասում է Գրիգոր Տաթևացին, «զանազան կենդանիքս այս զգանազան բարս նշանակեն մարդկան» (իսկ մարդկանց բարքերը տիպականացված են Սուրբ Գրքում): Այդ «Բեստիարիումների» համար աղբյուր են հանդիսացել «ֆիզիոլոգոսի» կամ «Բարոյախաւսի» հունական ծեռագրերը, որը որպես տրակտատ կենդանիների մասին Ե-Զ դարերում թարգմանվել է լատիներեն, ասորերեն, հայերեն, եթովպերեն[7]: «Բարոյախաւսը» կենդանիների մասին անտիկ երկերի մեկնաբանություն է[8]: Ինչպես ցույց է տալիս «Խորանների մեկնությունների» համեմատությունը Կ. Մուրատովայի «Բեստիարիումների» մասին հետազոտության և Ն. Մառի հրապարակած «Բարոյախաւսի» հայերեն թարգմանության հետ[9],

---

[5] Յովհան Որոտնեցին, որն ուսուցիչն էր Գրիգոր Տաթևացու, խոսում է երկրաչափական ձևերի կատարելության աստիճանի մասին, ամենակատարյալը «բոլորակը» նմանեցնելով երկնքին (Տաթևացու մոտ կամարը, որ բոլորակի հատվածն է). «Եւ գիտելի է, զի ամենայն երկինն ի հարկէ պարտի ունել զձև բոլորակի. Մասնջին. զի այն, որ է առաւել պարզ մարմին, պարտ է ունել զառաւել պարզագոյն ձև: Իսկ երկինք է առաւել պարզ... Իսկ ի մէջ ամենայն ձևոց առաւել պարզ է բոլորակ ձև, զի եռանգիւնին երից գծից բաղկանայ և քառանգիւնին ի քառից... Իսկ բոլորակ ձևն ի միոյ գծոյ բաղկանայ...» (տես Ղ. Քոսեյան. Մայրագոմեցին և հայ միջնադարյան խորհրդանշանի աստվածաբանական մի քանի հարցեր- «Էջմիածին», 1986, Յունուար, էջ 53-54, ծան. 24):

[6] Муратова К. Средневековый бестиарий. Москва. Изд. "Искусство", 1984, с. 5.

[7] Նույն տեղում, էջ 13:

[8] Նույն տեղում, էջ 11:

[9] "Тексты и разыскания по армяно-грузинской филологии". Книга VI. Физиолог. Армяно-грузинский извод. Грузинский и армянский тексты ис-

նրանց միավորում է միայն խորհրդաբանական և այլաբանական ուղղվածությունը, հիմնված Սուրբ Գրքի և եկեղեցու հայրերի ուսմունքի վրա:

Մենք յուրաքանչյուր խորանի խորհրդաբանական քննարկումը կսկսենք երրորդ մեկնությունից (Շնորհալու), քանի որ այն ավելի լրիվ է ներկայացնում յուրաքանչյուր խորանի խորհուրդը: Այնուհետև կդիտարկենք նաև մյուս մեկնությունները: Ուրեմն, առաջին խորանը խորհրդանշում է Աստվածությունը, որը բնակվում է «ի լոյսն անմատչելի»: Այստեղ Աստվածության տակ հասկացվում է Սուրբ Երրորդությունը, որ շրջում է միայնակ (շրջել բառը միայն զբոսնել չի նշանակում, այլ ավելի հարուստ իմաստ է բովանդակում): Այս խորանը փակված է վարագույրով, որ նշանակում է, թե Աստվածության տեսքը կարող էին միայն վայելել վերին երեք դասերը, ըստ Դիոնիսիոս Արիսպագացու, աթոռները, սերովբեները և քերովբեները: Նույն խորհրդանշական իմաստով է բացատրում վարագույրի դերը ս. Հովհան Օձնեցին (կաթ. 717-728), որի ժամանակ (711-713թթ.) արդեն թարգմանված էր Դիոնիսիոս Արիսպագացու «Երկնային քահանայապետությունը»-ը[10]: Ըստ Ստեփանոս Սյունեցու մեկնության, առաջին խորանի բովանդակած չորս գույներն ունեն «զառաջին խորանին զչորեքնիւթեան խորհուրդն»: Հետաքրքիրն այն է, որ ծիրանի սյուները նշանակում են աստվածային («էական») աթոռի կամ գահի հաստատությունը, չորս տարրերից դուրս: Կամարների վրա պատկերված սիրամարգ հավքերը խոսում էին եկեղեցուց դուրս գտնվող հին օրենքի (մովսիսական) հետ, որով առաջնորդվում էին մարգարեները:

Երկրորդ մեկնության մեջ սիրամարգն իր պայծառ փետուրներով ծառայում է իբրև խորհուրդ «Յիսուսի ծաղկեալ արդարոց» և «մարգարէիցն» դասերի: Չորրորդ մեկնությունը խորացնում է և ընդարձակում խորանների տասը աստվածային թվի սահմանները: Այստեղ առաջին խորանի առթիվ ոչ մի նոր պատկերաձոտիվ չի ավելանում: Հինգերորդ մեկնությունը ևս նոր բան չի ասում: Որոշ լրացումներ կան յոթերորդ (Տաթևացու) մեկնության մեջ: Առաջին տար-

---

слѣдовал, издал и перевел Н. Марр. Санкт-Петербургъ.

[10] Ըստ Հովհան Օձնեցու «վարագուրին աւքրպետութիւն (եկեղեցիում-Վ. Պ.) զառաջին երկնից ցուցանէ որոշումն, որ միայնակ երրորդութիւն ասի բնակիլ յերկինս երկնից. և այն ևս աւքրպետ որ ընդ մէջ մեր և աննմարմին էութեանց կայ» («Տեառն Յովհաննու Իմաստասէրի Աւծնեցւոյ Մատենագրութիւնք թարգմանեալ ի լատին բարբառ» երկասիրութեամբ տն. Ղ. Սկրտչի վարդապետի Ագերեան. ի Վենետիկ, 1834, էջ 302):

բերությունն այն է, որ Տաթևացին նախ ուշադրություն է հրավիրում խորանի արտաքին ձևի վրա, այն ևս օժտելով խորհուրդով (սիմվոլիկայով) - «Իսկ ձևն կամար և չորք անկիւնի զերկնից և զկողմանց աշխարհիս ունի զնմանութիւն»: Հայկական մանրանկարչության ալբոմները թերթած մարդը կնկատի, որ ԺԱ դարի կեսերից մուտք է գործում քառանկյուն (ուղղանկյունաձև) գլխազարդով խորանը: Սիրված ձև է դառնում այն գլխազարդը, որը միավորում է կամարն ու քառանկյունին: Ահա այդ երկու երկրաչափական ձևերի միավորումը տարածված էր հենց Գրիգոր Տաթևացու ժամանակ: Կամարը նման է երկնքին (երկնակամարին), իսկ քառանկյունին աշխարհի չորս կողմերն է ցույց տալիս: Առաջին խորանը «բոլորակ» ձև ունի, քանի որ բոլորակը, ինչ շրջանը, անվերջ է («անվախճան»), իսկ առաջին խորանը հենց նվիրված է անվերջական Աստվածությանը: Շրջանը, իբրև կատարելագույն ձև, իբրև անվախճանի խորհուրդ, հայտնի էր արդեն պյութագորյան տեսությունից: Այստեղ ծիրանի սյուների կողքին նորություն է «բոլոր փոկքն» արտահայտությունը, որը մեզ համար այնքան էլ պարզ չէ:

Ութերորդ և իններորդ մեկնություններում առաջին խորանը կազմված է համակ ծիրանի նկարված սյուներից և շրջաններից (բոլորակք), որտեղ կանաչը ցույց է տալիս հրեշտակների անմահությունը, սիրամարգի սև ոտքերը սադայելյանների անկումը (այդ մասին չկա նախորդ մեկնություններում): Սիրամարգն ինքնին նշանակում է «զառաւաւտեան ճանաչումն հրեշտակաց» ընդ որում, առավոտը ևս խորհուրդ է:

Ըստ Շնորհալու, երկրորդ և երրորդ խորանները խորհրդանշում են միջին և վերջին քահանայապետությունները: Այս քահանայապետությունները աստվածայինի մասին իմանում են միջնորդաբար, այսինքն «երեք են կամարքն, քանզի անձնաւորութիւն Երրորդութեան գիտելի էր նոցա, ուսեալք ի սերովբէիցն յերեքսրբեանն, զոր և մարգարէիցն ուսուցանէին»: Պետք է հասկանալ, որ միջին և վերջին քահանայապետությունների հրեշտակները սերովբեներից ստացած գիտությունը ուսուցանում էին մարգարեներին, ինչպես ուսուցանում է Դիոնիսիոս Արիսպագացին: Այս խորաններում պատկերված են արմավենի ծառեր և սիրամարգ հավքեր: Ծառերը ցույց են տալիս նրանց բարձրությունը «բնութեամբ և տեղեաւ և փառաւք», իսկ արմավի պտուղը «զամենաքաղցր աւրհնաբանութիւն նոցա», իսկ սիրամարգերը «ոսկեփետուրք և ոսկետտունք» նրանց անարատ և մաքուր բնությունն են ակնարկում:

«Բեստիարիումում» սիրամարգը մի կողմից օժտված է դրական հատկություններով (սիրամարգի ճիչը համեմատվում է քարոզչի պերճախոսության հետ, սիրամարգը խորհրդանշում է հեզություն, շափյուղայի գույնի կուրծքն ու պոչը համեմատվում են հրեշտակների հետ և այլն), մյուս կողմից բացասական (սատանայի ձայնը, գողի բայլվածքը, օձի գլուխ)[11]: Նշված հատկություններից ոչ մեկը չկա «Խորանների մեկնություններում» (միայն Շնորհալու մոտ սիրամարգի ոսկե փետուրները և պոչը ցույց են տալիս հրեշտակների անարատ և մաքուր բնությունը):

Սյունեցու մեկնության մեջ, չնայած խրթնաբանությանը, զգացվում է, որ շեշտը դրված է գունային խորհրդաբանության վրա: Կամարների վրա պատկերված է բոցախառն հրով սեղան, վրան ամպ, որը իբրև քողով ծածկում էր հին ժամանակներում Քրիստոսի խորհուրդը: Պատկերված աքաղաղները ներկայացվում են իրենց հատկանիշներով («ի մէջ մարեստանեաց <u>(այլ ձեռագրերում</u> մայրեացն) ճոխք և համարձակք, հրամանատուք և ահարկուք»), որոնք էլ հիմնավորում են նրանց գլխավոր խորհուրդը՝ ուղղված դեպի «տնաւրէնութիւնն և ի խաչն»: Այսինքն նրանց առաքելության մասին է խոսքը, որ Շնորհալու մոտ հանդես է գալիս այլ խորանում:

Երկրորդ մեկնության մեջ առաջին խորանից անմիջապես հետո գալիս է երրորդը: Բայց կարելի է մտածել, որ ասվածը վերաբերում է նաև երկրորդ խորանին: Այսուհանդերձ, այն կապվում է մարգարեների հետ, պայծառանում է իբրև մովսիսյան խորան, բայց չգիտես ինչու այստեղ կամարի վրա հայտնվում է ծկնաքաղը (ծուկ բռնող հավքեր), «որ ի ջուրս հոգևոր առնեն որս և զՄկրտութեան կրել խորհուրդս, զՅոգւոյ նախագոհութիւն առ աւրինաւքն»: Նա կարմիր ոտքերով և բերանով նայում է դեպի խորանի մեջ պատկերված սեղանը: Սյուները այստեղ կապույտ են, հինգ-հինգ մասերով զարդարված՝ արտահայտելով մովսիսյան օրենքի տասը պատգամների խորհուրդը: Առաջին երեք խորանները հատկանշում են երեք հաճաբարբառ Ավետարանները: Այս խորհրդին մենք դեռ հանդիպելու ենք Շնորհալու մոտ:

Չորրորդ մեկնությունը մեզ նորից մտցնում է գունային խորհրդաբանության տարերքի մեջ: Երրորդ խորանի մասին խոսք չկա, բայց պետք է ենթադրենք, որ «միասնական Երրորդության» գաղափարի տակ առաջին երեք խորաններն էին հասկացվում, իսկ բոցախառն հրով ամպը կարմիր սեղանի վրա, «ճոխ» աքաղաղները «ի

[11] Муратова. Средневековый бестиарий. с. 156.

մէջ մարեաց» նույնպես «ահարկուք և հաւարծակ և հրաժանատուք», հիշեցնում են Այուեցու մեկնությունը: Ի դեպ, երկրորդ և երրորդ խորանների բաժնում շատ մեկնիչներ (երրորդ մեկնություն, հինգերորդ մեկնություն) հանկարծ անդրադառնում են առաջին խորանին («Եւ է առաջին խորանին կամարք երեք, որ յայտնէ...»): Տաթևացու մեկնության մեջ երկրորդ և երրորդ խորանների բովանդակած երկրորդ և երրորդ քահանայապետությունների մասին գրված է. «Երկրորդն խորան տերութեանց, զաւրութեանց, իշխանութեանց ի մի քահանայապետութիւն: Երրորդ խորան պետութեանց, հրեշտակապետաց և հրեշտակաց ի վերջի քահանայապետութիւն: Եւ սոքա մի քան զմի բարձր են տեղեաւ, որպէս երկինք քան զերկիրս: Եւ բարձր փառաւք, որպէս արեգակն քան զլուսին և զաստեղս, և նոյն գերագոյն էութեամբ, որպէս ուսուցանէ մեծն Դիոնէսիոս»: Մեկնություններում փաստորեն առաջին անգամ վկայակոչվում է Դիոնիսիոս Արիսպագացին, որը զանազան առումներով ներգործել է խորանների մեկնությունները կազմողների վրա: Խորանները Տաթևացին օժտում է կանայք գույնով, իբրև հրեշտակների անվախճան կյանքը, հետևելով Շնորհալու մեկնությանը: Գեղեցիկ է սիրամարգի խորհրդի բացատրությունը, որը բավական խոր աստվածաբանական իմաստ ունի: Նրա ոսկեփետուր գլուխը «առաւաւտեան ճաճաչումը», իսկ պոչը «երեկոյան ճաճաչումն» է ցույց տալիս: Ընդ որում խորհուրդները մեկնաբանման կարիք ունեն: Ոսկի փետուրը նշանակում է նրանց (այսինքն միջին և վերջին քահանայապետությունների դասերի, որոնք ավելի մոտ էին մարդկանց) «մաքուր և անապական» բնությունը, իսկ սիրամարգի սև ոտքերը ցույց են տալիս նրանց «կրկնակի տրտմությունը» մեղավոր մարդկանց և «անկելոց դասուց» (հրեշտակների) համար: Այսինքն այդ դասերի հրեշտակները տխուր են Ադամի և նրա որդիների գործած մեղքի համար, ինչպես նաև Աստծուց մերժված հրեշտակների համար: Թեպետ կարելի է դա հասկանալ իբրև տրտմություն, որ այդ դասերը անմիջապես չեն վայելում աստվածային լույսը, այլ ավելի բարձր դասերի միջնորդությամբ: Տաթևացին իմաստավորում է նույնիսկ թռչունների շարժումը: Եվ այստեղ սիրամարգի կտուցը սեղանին («ծնաւտ սիրամարգաց ի սեղանն») նշանակում է, որ հրեշտակների միջին և վերջին դասերը մտավոր (իմա հոգևոր) սնունդ են ստանում Աստծո սեղանից («ցուցանէ զճաշակ իմաստից նոցա ի սեղանոյն Աստուածոյ»): Նրբերանգ է մտցվում նաև արմավենու սիմվոլի մեջ: Այն ոչ միայն ցույց է տալիս հրեշտակների դասերի բարձրութ-

յունը գիտությամբ և փառքով, այլև այն, որ վերին դասերը լուսավորում են ստորիններին (նոր պլատոնական աստիճանակարգ): Տաթևացին, ըստ իս, նկատի ունի նաև արմավենու կախված ճյուղերը:

Ուշադրավոր մեկնությունը, որը վերաշարադրանքն է Տաթևացու մեկնության, որոշ ինքնահատուկ լրացումներ ու ճշտումներ է մտցնում, որոնք այնքան էլ հստակ չեն Տաթևացու բնագրում: Հատուկ չեշտվում են սև գույնով նկարված սիրամարգի երկու ոտքերը, դրանք համեմատելով «կրկին» տրտմության հետ, որոնցից մեկը վերաբերում է «մարդկան մեղաւորին» («մարդկան մեղաւորաց» Տաթևացու մոտ), մյուսը «ստորանկեալ դասին» (դա Տաթևացու «անկելոց դասուցն» արտահայտության մեկնումն է): Հետաքրքիր է, որ «անկելոց դասուց», այսինքն «հրեշտակների դասերի» տակ մեր բանաստեղծը հասկացել է «ստորանկեալ դաս», այսինքն հրեշտակների մի ամբողջ դաս, որ ցած է նետվել: «Ժողովեցաւ ի միասին Չարատեսակ դասք խաւարին», «զդասօքն անդնդային»,- գրում է Առաքել Սյունեցին (1355-1425) «Աղամգրքում» նկատի ունենալով սատանաների դասը:

Ութերորդ և իններորդ մեկնությունները երկրորդ խորանը բացատրում են առանձին, իսկ երրորդը մեկնում չորրորդ խորանի հետ: Ավելի համառոտ կերպով սրանք կրկնում են Տաթևացուն: Սակայն Պողոս Բարունապետը (ութերորդ մեկնություն) ավելացնում է մի մոտիվ, որը մինչև այստեղ չի հանդիպել «զլուխ սեանց գխորհուրդ չորեքկերպեան կենդանեաց»: Թերևս այս սիմվոլը ավելացվել է ելնելով մանրանկարչական փորձից:

Չորրորդ խորանը, ըստ Շնորհալու, խորհուրդն է դրախտի: Դա երկրային (Հին Կտակարան) դրախտն է, քանի որ խորանը կազմված է չորս սյուներից, իսկ չորսը խորհրդանշում է չորս տարրերը («զգալի տարերքս»): Երկրորդ և երրորդ խորանների կամարների միջև բոցավառ սեղան է պատկերված, որ նշանակում է անմարմինների հոգևոր սնունդը («զիմանալի կերակուր անմարմնոցն») և Աստծուն մատուցվող պատարագը: Մյուս խորաններում սեղանն ավելի մթնած է պատկերվում, իսկ կամարների տակ մուգ և աղոտ խաչը ցույց է տալիս Քրիստոսի խորհուրդը, «որ գայր ծածկապէս ի ժամանակսն առաջինս ի վայր իջեալ յԱստուծոյ ի հրեշտակս և ի նոցանէ յԱդամ և ի ծնունդ նոցա, խորհուրդ հանճարոյն»:

Ավելի բարդ ու հարուստ է խորհուրդներով չորրորդ խորանը Ստեփանոս Սյունեցու մոտ: Այն սկսվում է նրանով, որ ներկայացնում է եկեղեցու դեմքը իր չորս գույներով և զանազան կամարնե-

րով, որոնց մեջ խաչ է նկարված: Խաչին նայում են աղավնակերպ հավքեր («իբր ոչ եթէ ստոյգ աղաւնիք, այլ նմանութեամբ»), որովհետև ովքեր Սուրբ Հոգուց ստացան (ներշնչվեցին), դարձան նրա օթևանը: Իսկ աղավնին, ինչպես գիտենք, Սուրբ Հոգու խորհրդանիշն է տերունական նկարներում: Այնուհետև մեկնությունն այնպես է ընթանում, որ կարծես այն լինի ոչ թե դրախտին, այլ Սովսեսին նվիրված խորանը: Սևը նրբանում է, քանի որ Քրիստոսի արյունով մարդկության մաքրագործումը անասունների զոհաբերումը դարձնում է ավելորդ: Սեղանի վրայի մութը պակասում է, բոցը պայծառանում (դա Քրիստոսից եկող բոցի խորհրդանիշն է): Այստեղ ևս արմավենիներ են բարձրանում, ներկայացնելով երկրից աճող ճշմարտությունը, որը դիտվում է որպես արդարության հոմանիշ: Կարմրակտուց և կարմրապոչ հավքերը (տեսակը չի նշվում) նման էին առաջին խորանի սպասավորներին. գուցե Սովսեսի խորանը նկատի ունի, քանի որ դրանք մեկուսի էին համարվում նոր խորհրդից, թեև «ծայնիւ և բերանով զնոյնս բերէին գիսորհուրդ», այսինքն նույն նպատակին էին ծառայում (մարդու փրկության):

Առաջին մեկնության երկրորդ խմբագրության մեջ այս խորանին նվիրված հատվածում վկայակոչվում է Ամբակում մարգարեն: Առաջին խմբագրության մեջ նախադասությունը հետևյալն է. «Իսկ եղջիւրք կամարացն անդրէն ի վերայ խոյակացն գոյգ առ միմեանս կարմիր և կապուտ խարսխեալ հինգ հինգ մասամբք մերձ ընդ մերձ գհինգ դատողական և գհինգ տախտակաց աւրինացն նշանակէ»: Երկրորդ խմբագրություն. «Իսկ եղջիւրք կամարացն անդրէն ի վերայ խոյակացն գոյգ առ միմեանս կարմիր և կապուտ խարսխեալ հինգ հինգ մասամբք խազխազոտեալք մերձ ընդ մերձ գհինգ դատողական և գհինգ բանս աւրինացն տախտակացն նշանակէ. Բ միայն լինելով, զոր Ամբակումն ցուցանէ»: Ստացվում է, որ հինգական մասերով դատողական (դատաստանի) և օրենքների տախտակները միայն երկու պետք է լինեն, ինչպես վկայում է Ամբակում մարգարեն (այլ մեկնություններում կտեսնենք, որ խոսքը վերաբերում է դատողական և հրաժարական օրենքներին): Հիմա տեսնենք, թե ի՞նչ է վկայում Ամբակումը: «... Տէր, հայեցայ ի գործս քո եւ զարհուրեցայ, ի մէջ երկուց գազանաց ծանիցիս...» (Ամբակում 9, 2): «Աստուած ի Թեմանայ եկեսցէ և Սուրբն ի հովանաւոր և անտառախիտ լեռնէ...» (9, 3), «ծառագայթք նորա իբրև գլոյս եղիցին, և եղջեւրք ի ձեռին նորա. եւ հաստատեաց զսէր սաստիկ զօրութեան իւրոյ» (9, 4-5): Ի՞նչ է վկայում այս տողերով Ամբակումը. ա) Երկրորդ

օրինաց, գլ. ԼԹ, որտեղ ևս նշվում է Աստծո գալուստը և Սովսեի կողմից Տիրոջ օրենքների ընդունման մասին. ուրեմն, «Բ միայն լինելով» կարելի է հասկանալ երկրորդ Օրինաց գիրքը. բ) Հետաքրքիր է Աստծո ճառագայթների հետ նաև նրա ձեռքի եղջյուրների գոյությունը, որ ևս Ամբակումի մոտ է, իսկ մեկնության մեջ կապված է օրենքների հետ[12]: Ի դեպ, բացառություն չեն խորանասյուների խոյակների եզրերից հառնող եղջերաձև հնգաբլթակ երկգույն արմավաճյուղերը ժ դարի ձեռագրերում: Ընդ որում «եղջերք» նշանակում է զորություն, ինչպես հայտնի է դառնում նախադատության շարունակության մեջ և ընդունված է աստվածաշնչյան բառարաններում[13]

Երկրորդ մեկնության մեջ երրորդ և չորրորդ խորանները նկարագրվում են միմյանց հետ: Խորհուրդների նկարագրությունն սկսվում է գույներից (սևի նվազում, կարմիրի ուժեղացում, որ գույց է տալիս հեթանոսների փրկությունը Քրիստոսի արյունով): Կամարների վրայի կաթավները խորհրդանշում են «պոռնիկ» Մուրիամին ու Ռախաբին:

Չորրորդ մեկնության մեջ չորրորդ խորանը «յայտնէ զդէմն եկեղեցոյ», կամարների մեջ ունենալով խաչ: Երկու աղավնիները (« ոչ ստոյգ աղաւնիք, այլ նմանութեամբ») նայում են խաչին: Աղավնիների ողջ պատմությունը նույնությամբ վերցված է Սյունեցու մեկնությունից: Այստեղ չորրորդ խորանի մեկնությունն ամենաբնորոշն է: Այնուհետև գալիս է սեղանի մեկնությունը, որի վրա պայծառանում է Քրիստոսի արձակած հոգևոր «իմացական հուրը»: Խոյակներից բարձրանում են կամարների եղջյուրները կարմիր և կապույտ գույներով հինգ-հինգ մասերով, որոնց նշանակությունը մի քիչ

---

[12] Ամբակումի մարգարեության օուսերեն թարգմանության մեջ փաստորեն չկան առաջին մեկնության մեջ նշված խորհրդանիշները (երկու գազանների միջև Տիրոջ հայտնվելը, Աստծո հետ սրբի գալուստը «ի հովանաւոր եւ անտառախիտ լեռնէ...», ճառագայթներից բացի նաև եղջյուրների մատնանշումը): Ես հետաքրքրության համար բաց արեցի Septuagint-ի օրինակը անգլերեն թարգմանության հետ միասին և վերը բերված Ամբակումի հատվածները, որոնք անգլերեն թարգմանության մեջ հետևյալ տեսքն ունեն. "... I considered thy works amazed: thou shalt be known between the two living creatures" (Amb. III, 2); "God shall come from Thaeman, and the Holy One from the dark shady mont Pharan..." (III, 3); "... And his brightness shall be as light; three were horns in his hands, and he caused a mighty love of his strenght" (III, 4) ("The Septuagint Version of the Old Testament, with an English Translation; and with Various Readings and Critical Notes". Zonderman Publishing House, Grand Rapids, Michigan 1970).

[13] "Encyclopedic Dictionary of the Bible" New York, Toronto, London. 1963, p. 1028-1029 (Horn).

դժվար է պարզաբանել («Հինգ հինգ մասամբ խազխազոտեալք մերձընդմերձ հինգ դատողականն, գհինգ աւրինակս (այլ օրինակում աւրինացս) տախտակաց նշանակէ. Բ միայն լինելով, զոր Ամբակում ցուցանէ»): Այնուհետև, ինչպես Սյունեցու մոտ, խոսվում է կարմրակտուց և կարմրապոչ երկու հավքերի մասին:

Չորրորդ խորանը իբրև Աղամի դրախտ է հանդես գալիս հինգերորդ մեկնության մեջ և Տաթևացու մոտ («Չորրորդ խորանն դրախտն Աղամայ»): Տաթևացու մոտ ավելանում է երկու նոր խորհուրդ - սև գույնը, իբրև Աղամի հագուստ («զմաշկեական Աղամայ») և Աստծո խորհուրդը, որ ծածկվեց նրանից, և կապույտը, իբրև աստվածային նշույլ, որ մնաց մարդու հետ:

Պողոս Բաբունապետի և իններորդ մեկնություններում երրորդ և չորրորդ խորանները, որոնք դրախտ են նշանակում, իբրև նորություն, ներկայացվում են «մայմունք, որք ըմպռնեալ կան զմոմքն, նշանակեն զմարտիրոսքն վասն սիրոյն Քրիստոսի այրեցան հրով»:

Ըստ Ներսես Շնորհալու, հինգերորդ խորանը նշանակում է Նոյի տապանը, վեցերորդը «խորանն Աբրահամու»[14]: Ըստ երևույթին, «խորանն Աբրահամու» արտահայտությունը համապատասխանում է Աբրահամի հյուրընկալմանը: Ստեփանոս Սյունեցու մոտ չորրորդ խորանը ներկայացնում է «զդէմս եկեղեցւոյ»: Այստեղ ավելի պարզ է դա բացատրվում հինգերորդ և վեցերորդ մեկնությունների առթիվ: Կարմիրն ուժեղանում է, որովհետև Նոյի «տապանաւն և խորանաւն Աբրահամու պայծառացաւ արեանն Քրիստոսի խորհուրդն և եկեղեցւոյ առաքինութիւնն, որ է հաւատն» (հավատի շնորհիվ էր, որ Աբրահամը զոհաբերում էր իր որդուն): Եվ եկեղեցին խորհրդանշում էր «Սաբեկայ տնկովն և խոյիւն», այսինքն Սաբեկա ծառի վրա Իսահակի փոխարեն զոհաբերվել էր խոյը: Եկեղեցու հետ էր կապվում Մելքիսեդեկի քահանայությունը, որը հանդես էր գալիս իբրև Քրիստոսի քահանայության խորհուրդ: Այս խորաններում պատկերվում են ձիթենի ծառեր և շուշան ծաղիկներ, որոնք բավական բարդ խորհրդաբանական լիցք են կրում: Առաջին հերթին դրանք խորհրդանշում են Հին Կտակարանի նահապետների (Նոյ, Աբրահամ, Ի-

[14] «Դամաքատակի այս սրբարանի խորհուրդ և ընդ խորանին Աբրահամու, յորում տաղաւարեաց Աստուած երկու հրեշտակօքն. վասն զի ի սմա բնակէ խորհրդական երրորդութիւն, որպես ասաց մարգարէին. «Ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա» (Սաղմոս 134, 14),- գրում է Հովհան Օձնեցին եկեղեցուն նվիրված ծառում («Տեառն Յովհաննու Ւձնեցւոյ Մատենագրութիւնք թարգմանեալ ի լատին բարբառ», երկասիրութեամբ տն. Հ. Սկրտչի վարդապետի Ւզգերեան. Վենետիկ, 1834, էջ 294):

սահակ և այլք) «զբազմաժամանակեայ կեանս», որպես իրաւտ, քանի որ նրանց օրենքները գրված չէին, նրանք պահպանում էին իրենց առաքինությունը, «որպէս ծիթենի զվարսագեղ վայելչութիւն իւր», իսկ ծիթապտղի տտպահամությունը խորհրդանշում էր նրանց առաքինության դժվարություններն ու մեծ կյանքը. և ինչպես ծիթենու պտղից ստացվում է «նիւթ լուսոյ», այնպես էլ Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յակորի և Յովսեփի առաքինության լույսով երևում էր Աստծո կամքը: Շուշան ծաղիկը ներկայացվում է երեք գույներով, որոնք գուտ այլաբանական գործառնություն ունեն- սպիտակ, որ նշանակում է նահապետների «մաքրությունը և պարզությունը», դեղին, որ ցույց է տալիս նրանց ժուժկալությունը, կարմիր, որ ցույց է տալիս նրանց վաստակը, որ հառնելու է Յարության ժամանակ: Բայց շուշանի խորհուրդները չեն վերաբերում նահապետներով: Նշվում են երեք տեսակի շուշաններ, որոնցից մեկը բուսնում է ծովի վրա ու բարձրանում, ինչպես նահապետները, որոնք հավատով և գործերով «վերացան» աշխարհից: Երկրորդը աճում է անապատներում և բարձր տեղերում, ինչպես հեթանոսները, որոնք «բնական գիտութեամբ հաճոյացան Աստուծոյ, որպէս Կոռնելիոս և այլք բազումք», և վերջապես շուշանի երրորդ տեսակը ծաղկում է արևի բոցով, երբ այդ հրի մեջ այլ ծաղիկներ չորանում են: Դրանք «անապատականների» դասերն են, որոնք նվիրված էին Քրիստոսին և այրվում էին նրա ծարավից:

Ստեփանոս Սյունեցու մոտ խոսքը վերաբերում է հինգերորդ խորանին (վեցերորդը նշվում է յոթերորդի հետ մի երկու տողով): Այս խորանում ստվերը պակասում է, կարմիրը պայծառանում, շուշան ծաղիկը ծաղկում: Բայց դեռևս «բողն ի վերայ կայ», այսինքն դեռ Քրիստոսի խորհուրդը չի հասել, դեռ գուշակները մարգարեանում են «Քրիստոսի արեամբն փրկութիւն հեթանոսաց»: Այս պատճառով էլ այս խորանում կա երեք խորհուրդ մարգարեական, թագավորական և քահանայական: Ահա թե ինչու պատկերված նոներին երեք ճյուղով է դուրս գալիս մի փնջի մեջ, Հին Կտակարանով ակնարկելով Նորը, դառն կեղևով (նոան), այսինքն դառն կյանքով, ընդգրկելով քաղցրությունը նոան պտղի (Քրիստոսի գալստյան): Իսկ այս և մյուս (այսինքն երևի վեցերորդ) կանոնում (խորանում) խոսվում է «եղջյուրների» մասին, որոնք Սովսեսի և Աիարոնի խորհուրդն ունեն: Այդ եղջյուրները հավանաբար այն երկգույն տերևներն են, հինգական բլթակներով, որոնք դուրս են գալիս խորանների եզրային սյուների խոյակներից դեպի դուրս, անմիջապես կամարի ու հեծա-

նի (քիվի) հետ միացման հատվածներում: Այստեղ խոսվում է մի քանի տեսակ թռչունների մասին՝ կաքավների, որոնք Մարիամի և Ռախաբի խորհուրդն են, ծկնաքաղերի, որոնք ջրի մեջ որս էին անում, ըստ մարգարեների՝ Սուրբ Հոգուց առած գուշակության, և նապաստակների ավետարանիչների ոտքերին (այստեղ պետք է հասկանալ, որ մարգարեների գուշակություններն արդեն որպես իրականություն շարադրված են ավետարանիչների մոտ), և աքաղաղների, որոնք զարդարված էին «ոսկեզգեստ փետրաւքն», որովհետև Սուրբ Հոգուն արժանի մարդիկ նախ իրենց աննճն էին մաքրում (կատարելագործում): Շնորհալու մեկնությունից գիտենք, որ աքաղաղները խորհրդանշում էին մարգարեներին:

Երկրորդ մեկնության մեջ հինգերորդ և վեցերորդ խորաններում գույներն ավելի էին շողշողում, երկուական կամարներով, որոնք երկու հավաբարբառ ավետարանիչների են վատնանշում (իրոք, ըստ Եվսեբիոս Կեսարացու, հինգ և վեցերորդ կանոններում երկու ավետարանիչներն են վատնանշված, որոնք համաձայնում են միմյանց հետ): Այստեղ վարդագույն սյուները ցույց են տալիս, որ մոտալուտ է փրկությունը: Թռչնային տեսակներից ընդգրկված են աքաղաղները («որպէս աքաղաղքն գուշակեն զառաւաւտն, նոյնպէս և մարգարէքն առ ի Երուսաղէմ, առաքեալք ի հեթանոս...»[15]): Որպես ծառեր նշված են արմավենիները և ձիթենիները: Ընդ որում, եթե արմավենիները, ինչպես և այլ մեկնություններում, համարվում են երկրից դեպի վերին կարգերը (դասերը) բուսած ճշմարտության սիմվոլ, «կանաչացեալ վարդապետութեամբ», ապա ձիթենիները հանդես են գալիս իբրև հավիտյան արդարների պայծառություն, «արտաքոյ խորանին պտղաւետեալ գծեթ լուսոյն» (Շնորհալու մոտ ձիթենին նահապետների խորհրդանիշն էր):

Երբ անդրադառնում ենք չորրորդ մեկնությանը, ապա բացի ստվերի պակասումից և կարմիրի պայծառությունից, հանդիպում ենք ծաղկող շուշանին, որ խորհրդանշում է խաչի մերձեցումը և Հարության օրը «յայտնեալ Քրիստոս իւր արեամբն, ի փրկութիւն հեթանոսաց»: Բայց դեռևս մնացած քողը (ստվերը) նշանակում է, որ դա մարգարեական խորանն է, թեև չի հասկացվում, թե մարգարեական, թագավորական և քահանայական խորհուրդ նշանակող երեք քիվն ինչի՞ն է վերաբերում (գուցե սյուներին կամ կամարներին):

[15] Այստեղ ավելացված է «առաքեալք ի հեթանոս» արտահայտությունը, ընդ որում պետք է հասկանալ, որ առաքյալները ոչ թե գուշակում էին, այլ ուղղակի գործում էին հեթանոսների մեջ, ինչպես նշվում է այլ մեկնություններում:

Նամանավանդ որ նռենիները բարձրանում են չորս ճյուղերով մի փունջ կազմած (եթե երեքը վերաբերեր նռենիներին, ապա այն երեք ճյուղ կազմած կլիներ, ինչպես նկատում ենք Ստեփանոս Սյունեցու մեկնության մեջ նույն խորանի առնչությամբ): Թերևս մեկնիչը կամ գրիչը ինչ-որ բան շփոթել է (Գ և Դ տառերը, որոնցից առաջինը երեք է նշանակում, երկրորդը՝ չորս): Եվ այսպես շարունակվում է մնացածը, ինչպես Սյունեցու մոտ:

Հինգերորդ մեկնությունը առանձին-առանձին է բացատրում հինգերորդ և վեցերորդ խորանները, կրկնելով և համառոտելով Շնորհալուն: Նոյի տապանը նշանակող հինգերորդ խորանի առթիվ մեկնվում է կարմիր գույնը, իսկ Աբրահամի խորանը նշանակող վեցերորդ խորանի առթիվ նշվում են սեղանը, խոյը, ծառը և Իսահակը, որոնք բոլորը միասին Քրիստոսի խորհուրդն են: Սյուներն արյան գույնի են: Մնացածը վերաբերում է ծիթենուն և չուշան ծաղկին:

Տաթևացին և Պողոս Ռաբունապետը ևս համառոտում են Շնորհալուն: Իսկ իններորդ մեկնությունը վեցերորդ խորանի համար իբրև թռչուն նախատեսում է կաքավը «ի խորհուրդ պոռնիկ կանանցն Թամար, Ռահաբ, Հռութ, Բերսաբէ»:

Շնորհալու մեկնության մեջ յոթերորդ և ութերորդ խորանները համարվում են «Մովսեսի սրբութեան սրբոց և արտաքին խորանն»: Այստեղ է ահա խոսվում հինգ-հինգ մասերով զարդարված, կապույտ «խառխառոտք» (թերևս ակոսավոր) սյուների մասին: Այնուհետև բացի գունային խորհրդաբանությունից մնացածը փոքր-ինչ անորոշ է գրված: Սակայն յոթերորդ խորանի առթիվ նշվում է, որ այն համեմատելի է Աղամի դրախտի հետ: Այստեղ ուղղակի ասվում է, որ նկարվում են կարմրակտուց աղավնիներ, որոնք նշանակում են Սուրբ Հոգուց շնորհ ստացած մովսիսյան խորանի ճարտարապետներին Բեսելիելին և Եղիաբին, նաև Մովսեսին, Հեսուին և յոթանասուն ծերերին: «Բարոյախաւսում» և «Բեստիարիումում» աղավնին կապվում է Սուրբ Հոգու հետ: Ութերորդ խորանում պատկերված են կաքավներ, իբրև «նշանակ պոռնիկ և աւտարազգի կանանցն Ռահաբու և Թամարայ և Հռութայ», և ինչպես կաքավը սովորություն ունի գողանալ ուրիշի ձուն և թուխս նստել, այնպես էլ այս կանայք խառնվեցին Աբրահամի ցեղի հետ և «եղեն նախամարք Քրիստոսի»[16] Այստեղ փորձ է արվում իմաստավորել նաև աղավնի-

[16] «Բարոյախաւսի» հայերեն թարգմանության մեջ կաքավի մասին ասվում է, որ նա գողանալով ուրիշի ձվերը, տանում է իր բունը, թուխս նստում և ճտեր հանում: Բայց «Բարոյախաւսում» կաքավի կերպարը զուգորդվում է աւտարացի հետ, որը նույն ձևով գողանում է մարդկանց գարնը ("Тексты и разыскания". Книга VI.

ների կեցվածքները, որոնց սիմվոլները որոշել էր մեկնիչը յոթերորդ խորանի առթիվ: Աղավնիներից ոմանք նայում են սեղանին, ինչպես Մովսեսը և մովսիսյանները, Հեսուն և Դավիթը, որոնք նայում էին սեղանին և որոնց հետ «իբրև բարեկամի խաւսեցաւ Աստուած»: Աղավնիներից ոմանք էլ ետ են նայում, որով զարմանք և հիացմունք են արտահայտում: Եվ կտուցները կարմիր են, «զի խաւսեցաւ զխորհուրդ մարդեղութեան Քրիստոսի»: Այստեղ էլ իբրև Մովսեսի և Ահարոնի սիմվոլներ հանդես են գալիս «երկու եղջիւրք սեղանւոյն»: Ըստ երևույթին նկատի ունի խորանի, իբրև սեղանի պատկերը, որտեղ սյուների և կամարների միացման տեղից անկյունածև և եղջերածև դուրս են գալիս հնգաբլթակ ականքատերևներ:

Սյուներու մոտ վեցերորդ և յոթերորդ, երկրորդ մեկնության մեջ հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ խորանների առթիվ շատ համառոտ է գրված. սևը նվազել է, կարմիրը ուժեղացել, քահանայությունը թուլացել և մտել կամարների տակ (ըստ երևույթին, սևը կամարների տակի գույնն է, իսկ նվազած քահանայությունը Հին Կտակարանի քահանայությունը, որն իր դերը ավարտում է Քրիստոսի գալստյամբ):

Երկրորդ մեկնության մեջ յոթերորդ և ութերորդ խորանները հանդես են գալիս միասին: Այստեղ էլ սևը պակասում է, կարմիրը պայծառանում, քանի որ խաչի մոտենալու հետ Հին Օրենքը ստվերական է դառնում, իսկ շուշանը ծաղկում է, և սեղանը «ի մէջ խորանաց անմթեր», այսինքն՝ ոչ մթագնած: Սեղանի մոտ նկարված է երկու շուշան: Խորանների տակ սյուները կարմիր են «առ տաճարն հրեական և յաւրինաւոր սրբութիւնս», որ նորոգում են հրեա մարգարեները, քահանաների դասերը: Կամարի վրա պատկերված են աքաղաղներ: Այստեղ նշվում է նաև վերին կամարի սևության, ինչպես և քահանայական խորհուրդ ունեցող ոսկեգույն կամարի մասին: Աղավնիները նույն խորհուրդն են կրում, ինչ Սյուներու մոտ, բացի դրանից, խոսվում է երկու «կարմրակտուց և կարմրատտունք» հավքերի մասին «խարխարոտեալք մերձ ընդ մերձ» (հավաքաբար՝ քջջող), որոնց նայում են աղավնիները:

Հինգերորդ մեկնությունը հետևում է Շնորհալուն: Յոթերորդ և ութերորդ խորանների սյուները համարելով «խարխաոուտք և գոյնն կապոյտ», ըստ մեկնիչի, «ցուցանէ զհինգ աւրէնքն յանծնառական և զհինգն հրաժարական» (հինգ ընդունելի և հինգ մերժելի): Այստեղ

Физиолог..., с. 100): Նույնը ասվում է նաև «Բեստիարիումի» մեջ (Муратова. Средневековый бестиарий. с. 171):

որոշ չափով իմաստավորվում է Շնորհալու և Այուենցու մոտ պատգամների հինգ-հինգ մասերի բաժանումը (սյուների և եղջյուրների) – հանճնառական և հրաժարական պատգամներ: Եվ հաջորդ սրբագրումն այն է, որ երկու եղջյուրը խորանին է և ոչ թե սեղանին: Ուրեմն Շնորհալու մոտ թերևս սեղանն բառի տակ պետք է հասկանալ խորան:

Գրիգոր Տաթևացին յոթերորդ խորանը համարում է «Մովսեսի սուրբն սրբոց», ութերորդը «արտաքին քաւութիւն ժողովրդեանն»: Այս վերջին իմաստը Շնորհալու մոտ հատուկ չի նշվում: Յոթերորդ խորանի հավքերը աղավնիներ են, որոնք խորհրդանշում են Բեսելիելին, Եղիաբին, Մովսեսին և այլն, ինչպես Շնորհալու մոտ: Ութերորդ խորանում պատկերվող չորս կաքավները խորհրդանշում են չորս պոռնիկ կանանց (Թամարին, Ռախաբին, Հռութին և Բերսաբեին): Այստեղ գրված է. «Ի սմա սեղանն եղջերաւոր նշանակ Մովսէսի և Ահարոնի», ինչպես Շնորհալու մոտ է (այստեղ էլ թերևս սեղանի տակ պետք է հասկանալ խորան):

Ըստ Շնորհալու, իններորդ խորանը նշանակում է Սողոմոնի տաճարը: Այն ցույց է տալիս, որ մերձեցել է Էմմանուելի (Քրիստոսի) գալուստը, և մարգարեների դասերը (պատկերված աղավնիները) ցույց են տալիս, որ մոտ է արդարությունը, իսկ մակաբայեցի վկաները գուշակում են Քրիստոսի մահը: Նռենիի ծառերը նշանակում են մարգարեների խոսքերը, որոնք, ինչպես կեղևով, առակներով էին ծածկում հեթանոսներին ուղղված քաղցր լուրը Փրկչի գալստյան մասին: Արմավենի ծառը կապված է Դավթի սաղմոսի խոսքի հետ: Այդ խորանը խորհրդանշական է, քանի որ բաղկացած է երեք անգամ երեքից, որ նշանակում է համաբարբառ ավետարանիչներին՝ Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին, որոնք, միմյանց հետ համաձայնելով, գրեցին Քրիստոսի մարդեղության մասին, նրա երկրային ազգատոհմը ցույց տալով ըստ տեղի և ժամանակի: Ընդհանրապես այս խորանի առթիվ Շնորհալին, որևէ պատկերամոտիվ, իրրև խորհրդանիշ, ցույց չի տալիս:

Տասներորդ խորանը, ըստ Շնորհալու, խորհրդանշում է «ամենակատար և լի ճշմարտութեամբ սուրբ և կաթողիկէ եկեղեցի, որ յինքն բովանդակեալ ունի զամենեցուն խորհուրդն»: Այն պատկերվում է «Յանդէպ իններորդին», բովանդակելով բոլոր խորանների խորհուրդը, իբրև եկեղեցի, որ «ճշմարտութեամբ» ուղեց հին ստվերական օրենքը: Իսկ նրանց միջև Հովհաննեսն էր «արուսեակ արեգականն արդարութեան, կատարումն մարգարէիցն և սկիզբն

առաքելոցն»: Այս երկու սիմվոլի միացումը (մարգարեների ավարտ և առաքյալների սկիզբ) բերում է նրան, որ աքաղաղների (մարգարեների) դիմաց նկարվում են «հաւք ծկնաքաղք»[17], որոնք խորհրդանշում են առաքյալներին և Քրիստոսի հրամանով «ի մահունաւէ ի կեանս» որսացին Ավետարանի հավատացյալներին: Ըստ ծկնաքաղների կեցվածքի բնութագրվում է նաև առաքյալների վարքը: Այսպես, եթե ծկնաքաղներից ոմանք դարձել են դեպի աքաղաղները, նշանակում է, որ նրանք մարգարեների մեկնիչներն են: Իսկ եթե նրանք միմյանց են նայում, նշանակում է, որ նրանք նույն կրոնն էին քարոզում, և եթե ոմանք հակված էին դեպի սեղանը, նշանակում է առաջին աղբյուրից էին առնում իրենց քարոզները: Սրտիմ հավքերը (վայրի բաղեր) խորհրդանշում են ավետարանիչներին: Այնուհետև սկսվում է մի ավելի անորսալի խորհրդաբանություն, որ ցույց է տալիս, թե մեկնիչը ձգտում է ամեն մի պատկերամոտիվ վերածել խորհուրդի և այդ խորհուրդների (սիմվոլների) միջև ստեղծել բարդ շարժուն հարաբերություններ: Եվ այդ բարդացման հետ բնագիրն ավելի բանաստեղծական լիցք է ստանում: Օրինակ.

«Իսկ սրտիմքն մերձ կացեալք զաւետարանիչսն նշանակեն ի կատարմանն, որք միջամուխս և ծովամուխք եղեն խորոցն Աստուծոյ, արբին ի յորդառատ պարգևաց Հոգւոյն Սրբոյ և, նովին թևաւք թռուցեալք, առ ամենեքումք ի նոյն կենստատու ջրոյն առեալ գանեցին զգաւդն բժշկութեան ի գամաքուտ և ի հիւանդացեալ ոգիս մարդկան, ի յառողջութիւն և յոռոգումն անմահութեան»: Բացի այն, որ սրտիմներն ավետարանիչների խորհուրդն են կրում, այստեղ խոսվում է ավետարանիչների գործունեության մասին: Իսկ խորհրդաբանության երբացման մասին գաղափար կազմելու համար ասենք, որ սրտիմների կարմիր ոտքերը «զմարգարէիցն ստուգեն», այսինքն մարգարեների այն խոսքն են հաստատում, որ գեղեցիկ են ավետարանիչների ոտքերը (Եսայի ԾԲ, 7): Սրտիմների կարմիր կտուցները ևս խորհուրդ են կրում: Նույնիսկ ծկնաքաղների ոլորված և միմյանց ագուցված պարանոցները և սրտիմների միմյանց

[17] Հավքերի ի՞նչ տեսակներ նկատի ուներ Ներսես Շնորհալին ծկնաքաղ հաւք ասելով: «Նոր հայկազյան բառարանը» ծկնաքաղ մեկնաբանում է իբրև կաքաւ, լիւղ, նաև իբրև ծկնկուղ («Նոր բառգիրք հայկազեան լեզուի». Հատոր երկրորդ. Վենետիկ, 1837, էջ 159): Կարելի է ընդլայնել ծկնաքաղ հավքերի տեսակների ցանկը, ելնելով խորանների պրակտիկայից – հավալուսն, կռունկ, արագիլ, ֆլամինգո և այլն: «Բնաստիարիումում» այդ թռչունները չեն նմանեցվում առաքյալներին: Բարսեղ Կեսարացին գրում է, «կիկնոս, այսինքն փոր կամ ծկնաքաղ», որ երկար պարանոցով է (Բարսեղ Կեսարացի. Յաղագս վեցաւրեայ արարչութեան. Աշխատասիրութեամբ Կիմ Սուրադեանի. Երևան, 1984, էջ 280-281):

պարգած գլուխներն են խորհրդանշում Հին և Նոր Կտակարանների միաբանությունը: Այստեղ եկեղեցու հաղթանակը խորհրդանշվում է նաև վերին կամարի վրա խաչի պատկերով և պայծառ գույներով:

Առաջին մեկնության մեջ ութ, ինը և տասներորդ խորանների մասին շատ ընդհանուր է գրված, որ մի տող է կազմում. «... համազոյգ միմեանց և համազարդեալք Հնովս և Նորովս, ի խաչն և խաչելեալն, յառաքեալսն և ի մարգարէս առ Նորս կատարեալ»: Ըե ինչ է նշանակում այս ամենը, մենք տեսանք Շնորհալու մոտ:

Երկրորդ մեկնությունը իններորդ խորանի մասին ոչինչ չի խոսում, բայց առաջին մեկնության համեմատությամբ փորձում է ճշտել տասներորդ խորանի սիմվոլիկայի սահմանները: Գուցե իններորդը տասներորդի հետ պետք է մեկնաբանվեր և չի օրինակվել գրչի անփութության պատճառով: Այդ կասկածը բխում է այն տողերից, որոնք բացի «ծաղկած խաչի» խորհրդից ընդունում են Հին և Նոր Կտակարանների հարության գուշակ քահանաներին, իսկ ավելի նոր ժամանակներում առաքյալներին և մարգարեներին: Այուները կարմիր են և վարդագույն: Բայց ծառերը նոճենիներ են, որովհետև այն պտղի քաղցրությունը ծածկում էր կերևի դառնությամբ, ինչպես Հին Օրենքով, որ իր պտուղը գտավ Ավետարաններում, որոնց հետևում է կաթողիկե եկեղեցին: Նոճենիների այս խորհրդաբանությունը կրկնված է Շնորհալու մոտ իններորդ խորանի առթիվ:

Չորրորդ մեկնությունը ոչինչ չի ասում իններորդ և տասներորդ խորանների մասին: Իսկ հինգերորդը, համառոտելով Շնորհալուն, տասներորդ խորանի գագաթի խաչի բացատրությանն ավելացնում է վերին Երուսաղեմի սիմվոլը, իբրև «կայան արդարոց», Քրիստոսի «միւսանգամ գալուստը»: Իսկ խաչի ու խորանի պայծառությունը ցույց է տալիս արդարների պայծառ փառքը և աշխարհի նորոգում, «որ պայծառանայ ի նմանութիւն դրախտին»:

Գրիգոր Տաթևացու մոտ ևս իններորդ և տասներորդ խորանները նույնն են, ինչ Շնորհալու մոտ: Ըստ Տաթևացու, իններորդ խորանում նկարված արմավենին, «ներքուստ ի վեր ծգտեալ», նմանեցված է Մարիամ Աստվածածնին, որ, երկրային ծնունդ ունենալով, ծնեց Քրիստոսին իբրև «քաղցր պտուղ» (համեմատությունը արմավապտղի հետ): Այստեղ ճշտվում է նաև Հովհաննես Մկրտչի տեղը (« եւ մին աքաղաղն հայի ի ժ խորանն, Յովաննէս Մկրտիչն կատարումն մարգարէիցն և սկիզբն առաքելոցն»): Այնուհետև ոչինչ չի ավելանում Շնորհալու մեկնությանը:

Յոթերորդ (Պողոս Բաբունապետի) մեկնության մեջ իններորդ

խորանի մեկնությունը ոչ մի նորություն չի բովանդակում: Սակայն տասներորդ խորանի առթիվ նշվում են թռչուններ, զանազան վիճակներում, և ամեն մի վիճակ ենթադրում է որոշակի խորհուրդ: Այստեղ նշվում է, որ նկարվում են «բազում հաւք զանազան կերպիւք» և որպես օրինակ բերվում են մրտիմները «նման աւետարանչացն»: Այնուհետև նշվում է, որ նրանցից ոմանք «կտուցն յետոյ գինքեանս քորեն», քանի որ Քրիստոսի աշակերտներից ոմանք ետ կանգնեցին: Ոմանք ոտքերն են քորում, «զի երկրօրս խորհեցան», ինչպես Յուդան: Իսկ նրանք, որ գլուխները սեղանի տակ են մտցրել, նման են Կոռնելիոսին և Ղուկիանոսիին, որոնք իրենց պարանոցը դրեցին Ավետարանների «լծի տակ»: Իսկ ծառերի շուրջը սև ագռավանման թռչունները երեսներն ուղղել են խորանից դուրս «նման Եսօա ազգին և կամ Բաղամ սուտ մարգարէ[ին]»: Իսկ այլ հավքեր գլուխները վեր են պարգել, ինչպես նրանք, «որ քողեալ երկրօրս (երկրավորը- Վ. Պ.), զերկնօրն (երկնայինի մասին –Վ. Պ.) խորհեցան»:

Այս ամբողջ հատվածը վերաշարադրանքն է Տաթևացու մեկնության «Վասն զանազան հաւուց» ենթագլխի մի մասի, որտեղ չեն նշված խորանների համարները:

Մյուս մեկնություններն առանձնապես չեն հարստացնում տասներորդ խորանի խորհրդաբանությունը:

Ը և Ժ մեկնություններում հանդիպում են նաև այլ կենդանիների և թռչունների անուններ – կապիկների, որ ծեռքերին մոմ են պահում և նշանակում են նահատակներին, որոնց այրվեցին հրով հանուն Քրիստոսի սիրո, երկու արծիվների, ջրային թռչունների առանց անունները նշելու: Խորաններում պատկերվում են նաև փյունիկներ, բվեճներ, ոչխար, նապաստակ, ուղտ, վայրի խոզեր, կոկորդիլոսներ, գազանորսության տեսարաններ, հովազներ, ընձառյուծներ և այլն, որոնց մասին խոսվում է «Բեստիարիումի» մեջ: Բայց քանի որ ինչպես «Բեստիարիումի», այնպես էլ «Բարոյախաւսի» մեջ թռչունների և կենդանիների մեկնությունը տարբեր է «Խորանների մեկնություններում» առկա խորհրդաբանությունից, ապա յուրաքանչյուր մոտիվի մեկնաբանության ժամանակ հարկավոր է խիստ զգույշ լինել: Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ արարչութիւնը» ընթերցելիս (հայերէն թարգմանութիւնը Ե դարի) մենք շատ զուգահեռներ ենք նկատել «Բարոյախաւսի» թարգմանութեան հետ (օրինակ, ծիծառի, ագռավի բարքի նկարագրությունը), բայց «Խորանների մեկնություններում» ուղղակի փոխառումներ չենք հայտնաբերել:

Երբ խորաններում պատկերված խորհուրդների այս անտառը ուզում ենք դիտել մի գաղափարի լույսի տակ, պարզվում է, որ դա եկեղեցու և Քրիստոսի գաղափարն է, ընդ որում տարբեր խորանների բնութագրերը («Դրախտ», «Մովսեսի խորան», «Աբրահամի տուն», «Սողոմոնի տաճար» և այլն) հանդես են գալիս, ինչպես որոշակի ցույց է տալիս Հովհան Օձնեցին իր «Յաղագս եկեղեցւոյ» ճառի մեջ, իբրև եկեղեցու հիպոստասներ (անձնավորումներ):

ԹՎԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնություններում թվային խորհրդաբանությունը հիմնականում ունի այլաբանական նշանակություն, ինչպես կենդանիներինը և բույսերինը, կապված ավետարանական և հին կտակարանային իրակությունների հետ:

Օրինակ, 4 թվի սիմվոլիկան: Ստեփանոս Սյունեցու մոտ այդ թվով հիմնավորվում է գույների քանակը, քանի որ այն համապատասխանում է անտիկ բնափիլիսոփայության մեջ ընդունված չորս տարրերի թվին: Երկրորդ և չորրորդ մեկնություններում այդ թիվը եռաստիճան խորհուրդ է ստանում բացի չորս տարրերից նշանակելով նաև մարդու մարմնի բաղկացուցիչ չորս մասերը, որոնք էլ իրենց հերթին, խորհրդանշում են Հորը, Որդուն, Սուրբ Հոգուն և այնուհետև միավորական Աստվածությունը: Շնորհալու մեկնության մեջ բացի չորս գույնից, չորս են նաև ծառերը, միայն թե այստեղ հանդես է գալիս նաև լրացուցիչ հինգերորդ գույնը (ծիրանի) և հինգերորդ ծառը (արմավենի): Քանի որ այստեղ չորրորդ խորանը խորհրդանշում է երկրային դրախտը, որը բովանդակում էր չորս տարրերը, ապա այս խորանում նկարված չորս սյուները ևս խորհրդանշում են չորս տարրերը: Գրիգոր Տաթևացու մեկնության մեջ չորսը նախ քննվում է մյուս թվերի հետ ըստ համաձայնության կանոնների (կխոսվի առանձին), ապա իբրև գույների թիվ, ըստ չորս տարրերի, որոնց ավելանում է հինգերորդ երկնային էությունը: Այնուհետև չորսը հանդես է գալիս իբրև չորս գույների լրացում – չորս աստառ (գունամակերես), որ բաղկացած է երկու լուսավոր և երկու ստվերոտ մասերից, մի ծիրանի և մի ոսկի, որ ստացվում է տասը, այսինքն խորանների թիվը: Վերջապես, չորսը հանդես է գալիս իբրև խորանի կազմած քառանկյան խորհուրդ, որի անկյունները խորհրդանշում են աշխարհի չորս կողմերը: Չորս է նաև կաքավների թիվը ութերորդ խորանում:

Չորսը Տաթևացին համարում է նաև գրերի համար նախատեսված գլխավոր գույների խորհուրդ, որոնք են կարմիրը, կանաչը, կապույտը, սևը: Դրան ավելանում է նաև ոսկե գիրը («Իսկ ոսկին նշանակէ զանսուտ և զանապական բանքն Տեառն ի սմա, որպէս ասաց երկինք և երկիր անցցեն և բանք իմ ոչ անցցեն»): Վերջապես կա հիշատակարաններին երբեմն կցվող մի նախադրություն, որ սկսվում է «Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան ընդ Հաւր և Որդոյ և

Հոգոյն Սրբոյ» (Մատենադարան N 3714, Ավետարան, 1419 թ., գրիչ Գրիգոր Խլաթեցի) և տալիս է չորս թվի ամենատարբեր խորհուրդներ ընդգրկված ինչպես խորանների մեկնություններում, այնպես էլ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունների նախադրություններում: Դա մի փառավոր գովք է Ավետարանների, որոնք չորսն են և չորսն էլ բազում պատճառներով, ինչպես ասված է Գրիգոր Խլաթեցու հիշատակարանի նախաբանում. նախ, որովհետև աստվածաշնչյան կենդանիները չորեքկերպյան են (եզեկիել մարգարեի տեսիլքը) մարդ, առյուծ, եզ, արծիվ: Աշխարհը բաղկացած է չորս նյութից հող, ջուր, օդ և հուր, «թշնամիք անհաշտելիք», այլ ծեռագրերում (Կիլիկիա) «հակառակք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք» (անտիկ բնափիլիսոփայության չորս տարրերը), Աստվածության չորս անունները (Երրորդություն, Հայր, Որդի և Սուրբ Հոգի), սեղանի չորս անկյունները, հոգու չորս առաքինությունները (խոհեմություն, արիություն, ողջախոհություն, արդարություն), աշխարհի չորս կողմերը, չորս Ավետարանները: Ինչպես տեսնում ենք, չորսը մեծ բովանդակություն ունի իր այլաբանական երանգներով: Ընդ որում, այս բոլոր խորհուրդները գործում են միացած ինչ-որ աստվածաբանական կապով[1]:

Նույնքան հարուստ է իր խորհրդաբանությամբ տասը թիվը: Կանոնների թիվն ընտրվել է 10, որովհետև այն «թիւ է սրբագոյն և նուեր Աստուծոյ»[2]: Տասն են մովսիսյան օրենքները, տասն են «զգայարանք մարմնոյ»[3] և «զաւրութիւնք հոգւոյ», տասն են Արիս-

---

[1] Շրջա թվի հետ կապված այդ «Փառքը» նույնությամբ մեզ հանդիպում է Կիլիկիայում: «Փառքը» լինում է նաև ընդարձակ, երբ չորսի խորհուրդը ավարտվելուց հետո խոսվում է չորս ավետարանիչների մասին: Արդեն Կիլիկիայում «Փառքի» այդ երկու տիպին էլ հանդիպում ենք առանց ավետարանիչների մասին մեկնաբանությունների 1299 թ. Դրազարկի մի ծեռագրում (տես «Հայերեն ծեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար. Կազմեց Ս. Ա. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 213) և ավետարանիչների մասին ծանոթագրությամբ 1290 թ. Դրազարկի մի այլ ծեռագրում (Մատենադարան N 1290, գրիչ Ծորոս. Նույն տեղում, էջ 655-656) և Սիսի 1291 թ. մի ծեռագրում (Բոստոնի Համրային գրադարան, հայկ. ծեռ. 3) (տես "A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States". By Avedis K. Sanjian. Berkeley. Los Angeles. London. 1976, p. 353-354):

Չորսի մի քանի խորհրդանիշներ չորս տարրերը, տարվա չորս եղանակները, աշխարհի չորս կողմերը (ըստ Ա. Լոսևի, տարածական չորս պատկերները) նորպլատոնական ոգով դիտարկում էր Փիլոն Ալեքսանդրացին (տես А. Ф. Лосев. История античной эстетики. Поздний эллинизм. М., 1980, с. 95).

[2] Փիլոն Ալեքսանդրացին տասի մասին ասում է. «...Քանզի սա է ամենակատար լիագոյն և վերագոյն թիւ առաձինն իւր իսկ աստուածային խորհրդով» («Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս...», Վենետիկ, 1826, էջ 330):

[3] «Իսկ հինգերեակն զգայութեանց յատի է» (նույն տեղում):

տոտելի ստորոգությունները (կատեգորիաները) և Տիրոջ աղոթքի խոսքերը. Նիկիայի հավատո հանգանակը, հետևաբար, տասն են նաև խորանները: Տասի խորհրդաբանությունն ավելի է ընդլայնում չորրորդ մեկնությունը: Այսպես տաս են համարվել մոլորակների թիվը[4] (յոթ մոլորակ և մեկ անմոլար, այսինքն Արեգակը, մեկ Լուսինը, և մեկ Աստծո խոսքը, որ վարում է նրանց բոլորին, այդ ամենը միասին ստացվում է տասը), տարվա ամիսների թիվը (տասը, ինչպես Հռոմում էր ընդունված), նշանակելով որ երկու ամիսները «զուգաւորութիւնք են գարնան և աշնան»:

Գրիգոր Տաթևացին ավելի է հարստացնում տասը թվի խորհրդաբանությունը: Այսպես, տասը բաղկացած է չորսից կամ չորս թվերի գումարից, այսինքն 1+2+3+4=10: Այդ պատճառով էլ տասը կանոնները բաղկացած են չորս թվային համակցություններից: Այսինքն կանոնները կամ համաձայնության տախտակները կազմված են հետևյալ կերպ. չորս գումարելիներից նախակարգ է համարվում 4-ը, ապա 3-ը, ապա 2-ը և վերջում մեկը: Ինչպես գիտենք, Դ դարի վերջում Եվսեբիոս Կեսարացին (մահ. 339 կամ 340 թ.) գլխագրել է բոլոր Ավետարանները և կազմել այդ գլուխների համարների այսպես կոչված համաձայնության տախտակներ (աղյուսակներ), որոնցից օգտվելու կարգը բացատրել է ոմն եգիպտացի Կարպիանոսին ուղղված թղթում: Ըստ այդմ, նա նախ համաձայնեցնում է չորս այունակում այն գլխահամարները, որոնք համապատասխանում են չորս Ավետարաններում («առաջին խորանն, յորս Դ-ն միաբանին Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս»), ապա նրանք, որոնք համապատասխանում են երեք Ավետարաններում երեք համակցություններով («Մաթէոս, Մարկոս, Ղուկաս», «Մաթէոս, Ղուկաս, Յովհաննէս», «Մաթէոս, Մարկոս, Յովհաննէս»), ապա այն գլխահամարները, որոնք համապատասխանում են երկու Ավետարաններում հինգ համակցություններով («Մաթէոս, Ղուկաս», «Մաթէոս, Մարկոս», «Մաթէոս Յովհաննէս», «Ղուկաս, Մարկոս», «Ղուկաս, Յովհաննէս»), վերջապես նա հաշվում է այն գլուխները, որոնք զուգահեռ չունեն մյուս Ավետարաններում («առանձնական խաւսին»)[5]: Մենք դասավորեցինք գլխահամարներն այնպես, ինչպես ներկա-

[4] «Բայց այսչափ այժմ ասելի է, զի և յաշխարհի տասն ամենայն է, և ի մարդ. յաշխարհիս եօթներեակք (մոլորակք- լատիներեն թարգմանության մեջ իրավացիորեն ավելացնում է Մ. Ավգերյանը), և ութերորդ աննմոլարիւ գունդն (Արեգակը – Վ. Դ.), և որ ընդ լուսնաւս մի տեսակ փոփոխելի են ըստ ինքեանց - Աստուծոյ բանն վարիչ և մատակարարն բոլորեցունց» («Փիլոն Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս...», էջ 331): Ինչպես տեսնում ենք, Փիլոնի միջոցով նոր-պյութագորական ազդեցությունը ուղղակի է մեր մեկնիչների վրա:

[5] Տե՛ս C. Nordenfalk. Die spätantiken Kanontafeln. Textband und Tafelband. Göteborg, 1938, S. 46–47.

յացնում է Գրիգոր Տաթևացին: Այսպիսով ստացվում է տասը աղյուսակ (4+3+2+1):

Ինչպես ցույց է տալիս Կ. Նորդենֆալկը, տասը պահպանելու նպատակով Եվսեբիոսը բաց է թողել «Մարկոս-Ղուկաս-Յովհաննէս» և «Մարկոս-Յովհաննէս»[8]համակցությունները, քանի որ այդ դեպքում կստացվեր 12: Եվսեբիոսը, ինչպես երևում է Կոստանդին Մեծի հիսնամյա կառավարության հոբելյանին նվիրված ճառից, մեծ ակնածանք ուներ խորհրդավոր տասը թվի հանդեպ. «Չորս թիվը, գրում է նա, տալիս է տասը թիվը: Քանի որ մեկի, և երկուսի, և երեքի, և չորսի գումարը տասն է... Վերստին տասը թիվը, որ բովանդակում է բոլոր թվերի ավարտը և սահման դառնում նրանց վրա իրեններով, լիակատար և կատարյալ մի թիվ է, որն ընդգրկում է թվերի բոլոր տեսակները և չափերը, համամասները, համաձայնությունը և դաշնությունները»[7]: Տասի կատարելությունն ընդունում էին դեռևս պյութագորյանները (ընդ որում նրանք էին տասը համարում երկնային մարմինների թիվը, ինչպես նաև մի շարքում էին դնում տասը սկզբունքները, որոնք կազմում էին հինգ գոյց հակադրություններ, որոնք հետագայում Արիստոտելի մոտ վերածվում են տասը կատեգորիաների կամ ստորոգությունների)[8]: Երրորդ մեկնության մեջ նշված են արարածների տասը մասերը[9]: Տաթևացին խոսում է քառանկյան մասին, որն ունի չորս կողմեր, որոնք ցույց են տալիս աշխարհի չորս կողմերը: Քառանկյան չորս կողմերի ու նրանց ներդաշնակության մասին խոսում է նաև սուրբ Օգոստինոսը: 1, 2, 3, 4 թվերի գումարի մասին (10) կա նաև վերջինիս մոտ[10]: Այդ հարաբերությունը, ինչպես տեսանք, տառացի բերում է Գրիգոր Տաթևացին:

Հետաքրքիր խորհրդաբանություն է նաև տասի տրոհումը հինգ

---

[8] Նույն տեղում, էջ 47-48:

[7] C. Nordenfalk. The Beginning of Book Decoration.-Beiträge für Georg Swarzenski zum 11 Januar 1951. Chicago, p. 16 (թարգմանված է Նորդենֆալկի բերած քաղվածքից):

[8] Տես "Антология мировой философии в четырех томах". Т. I, часть I. М., Изд. "Мысль", 1969, с. 283; Аристотель. Сочинения в четырех томах. Том I. М., Изд. "Мысль", 1976, с. 76 ("Метафизика", I, 5).

[9] Ըստ եգնիկի, մարդուն իբրև ժառանգություն Աստծու արարած մասերը հետևյալներն են. «այլ նախ զերկինս և զերկիր, զջուրս և զիուր և զօդ և զբոյսս և զտունկս, զգազանս և զանասունս և զթռչունս» («Եգնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց» Վիֆլիզ 1914, էջ 162):

[10] Սուրբ Օգոստինոսի մոտ թվային խորհուրդների մասին տես Ք. Գյոբերտ, Գ. Կուն. История эстетики. М., Изд. Иностранной литературы, 1960, с. 149-153.

Ծվում է մեր մեկնիչները այդ գործողությունը (1+2+3+4) փոխառել են Փիլոն Ալեքսանդրացուց և Եվսեբիոս Կեսարացուց (Լոսև, նույն տեղում, էջ 95. նաև Nordenfalk. The Beginning..., p. 16):

հինգ մասերի: Սյունեցու մեկնության մեջ չորրորդ խորանում հինգական կարմիր և կապույտ մասերի են բաժանված «եղջիւրք կամարաց անդրէն ի վերոյ խոյակաց», նշանակելով հինգ դատողական և հինգ Օրենքների տախտակները: Տեղում նշեցինք, որ Թ և ժ դարերի ձեռագիր խորանները, իրոք, հանդես են գալիս իբրև արմավատերևներ եզրային սյուների և կամարների հանդիպման տեղում: Երկրորդ մեկնության մեջ, հավանաբար հինգերորդ և վեցերորդ խորանների համար, ասվում է, որ այդ եղջյուրները «առ վերին սեղան» (այսինքն կամարների կրնկամասերից կամ ուղղանկյուն գլխազարդերի ակրոտերիոններից դուրս եկող) խորհրդանշում են Մովսեսին և Ահարոնին: Երրորդ մեկնության մեջ (յոթերորդ և ութերորդ խորան) սյուներն են հինգ-հինգ մասի բաժանված: Հինգերորդ մեկնության մեջ սյուները ցույց են տալիս «զհինգ աւրէնս յաճճառական և զհինգն հրաժարական»:

Սրանով չի վերջանում թվային խորհրդաբանությունը խորաններում: Իններորդ խորանը երրորդ մեկնության մեջ համարվում է «խորհրդական» (սիմվոլիկ) նշանակելով երեք անգամ երեք, այսինքն համաբարբառ (սինոպտիկ) ավետարանիչներին Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին: Էլ ավելի բարդ թվային համակարգ կա Գրիգոր Տաթևացու մոտ, որը կատարում է թվային այլաբանական գործողություններ 4 և 10 սրբազան թվերի հետ, ստանալով 24 «գլխավոր արարածոց», 24 մարգարեների, եբրայական այբուբենի 24 գրերի, Քրիստոսի երկրային կյանքի 33 տարիների, դժոխքում 33 ժամ քարոզության թվերը և այլն: Երեք և չորս թվերի բազմապատկումով նա ստանում է առաքյալների թիվը, երեքը երեքով բազմապատկելով հրեշտակների ինը դասերի:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ թվային խորհրդաբանությունը նույնքան էական տեղ է գրավում խորանների մեկնություններում, որքան գույների և թռչունների ու բույսերի: Ընդ որում, շատ դեպքերում ելակետային են համարվում թվերի նոր պյութագորական ակունքները:

ԽՈՐԱՆԱԶԱՐԴԵՐՆ ԸՍՏ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին խորան

Գ, Ե, Է, ԺԲ – Աստվածության (Երրորդության) խորան, որն ապրում է լույսի մեջ (Ե մեկնություն), չորս տարրերից դուրս:

Գույները. Ա, Բ, Դ, Զ - Չորս գույնը նշանակում է առաջին (մովսեսյան) խորանի չորս նյութերի խորհուրդը:

Զ - Երեք գույն չորս նյութերի խորհուրդը (երեքի փոխարեն պետք է լիներ չորս. գրչի թյուրընթերցում):

Դ - Կապուտակ, ծիրանի, կարմիր, բեհեզ, վուշ, երկրագույն (այլընթերցում՝ երկնագույն) - այս ամենը իբրև չորս գույն:

ԺԳ - Կապուտակ, ծիրանի, կարմիր և սպիտակ:

Գ, Ե, Է, Ժ, ԺԲ - Ծիրանի, իբրև արքայական գույն (առնենակալ թագավորության խորհուրդ):

Բ, Դ, ԺԱ - Կարմիր գինեգույն Մելքիսեդեկի, իբրև Քրիստոսի խորհուրդ:

Գ - Ընդհանրապես խորանների համար՝ չորս գույն – կարմիր, կանաչ, սև, կապույտ, մի առանձին գույն՝ ծիրանի:

Է, ԺԲ - Ընդհանրապես խորանների համար՝ կարմիր, կանաչ, սև, կապույտ և ոսկի (չորս նյութ և «անապական էութիւն երկնից»):

Բ, Զ - Չորս գույներ (սև և կարմիր, կանաչ և կապուտակ) խորհրդանշում են մարդու մարմնի բաղադրիչ մասերը՝ «յարիւն և ի խող, յոսկերս և ի ծածկոյթ մարմնոյն» (Բ մեկնություն) կամ «յարիւն և ի մաղաս, յոսկերս և ի ծածկոյթ մարմնոյ», որոնք նշանակում են նաև Հոր, Որդու, Հոգու և նրանց միավորության խորհուրդները:

Ը, Թ – Այուները՝ ծիրանի, կանաչը՝ հրեշտակների անմահ բնությունը, սևը՝ սաղայելյանների անկումը:

ԺԳ - Չորս գույն՝ կապուտակ, ծիրանի, կարմիր և սպիտակ, առաջին (Մովսեսի) խորանի չորս գույնը – չորս տարրերին համապատասխան:

Այուները, կամարները. Ա, Բ, Դ, Զ, Թ, ԺԱ - Այուները ծիրանի – հաստատություն էական (աստվածային) աթոռի, չորս տարրերից դուրս:

Գ, Ե - Հածակ ծիրանի կամարներ և երեք այուներ (ծիրանի գույնը՝ ամենակալ թագավորություն):

ԺԳ - Ծիրանի այուներ՝ հաստատություն առաջին լույսի՝ Աստծո

(եական) աթոռի, դուրս չորս տարրերից:

Է, Ը, Թ – Խորանի ծնը՝ ծիրանի սյուներ և բոլորածև:

Բ - Ստորին կամարների միջև սևը հաստանում է, կարմիրը՝ նվաղում (Հին Օրենքը ստվերն էր Նորի, որը նշանավորվում է Քրիստոսի արյամբ):

Ե - Երեք կամարներ:

Ժ, ԺԲ - Երեք սյուն և բոլորածև կամար, փոկեր (պարաններ):

ԺԱ - Սև կամարը ցույց է տալիս Աստվածության խորքը, կարմիր գինեգույնը մատնանշում է Մելքիսեդեկին, որը Քրիստոսի խորհուրդն է:

Վարագույրը. Գ, Ե, է, Ժ, ԺԲ - Խորանը ծածկված է վարագույրով:

Բույսերը. Ը, Ի - Արմավենիներ իբրև գիտության բարձրացում. զանազան գույները հրեշտակների գեղեցկություն: Կանաչը անմահության գույն, սևը սաղայելյանների անկում:

Թռչունները. Ա, Բ, Դ, Զ, ԺԳ - Սիրամարգ հավքերը կամարների վրա՝ Հին Օրենքի (Կտակարանի) մարգարեական և ընտրողական (՞) խորհուրդ:

Ը, Թ, ԺԱ - Սիրամարգ ոսկեփետուր հրեշտակների անարատ բնության և նահապետների խորհուրդ:

Երկրորդ խորան

Գ, Ե, է - Անմարմինների (երկնայինների) միջին և վերջին քահանայապետություններ:

Ա, ԺԳ – Համապատիվ առաջին խորանին:

Ը – Հրեշտակների փառքն ու անմահությունը:

Բ – Համեմատվում է մովսեսյան խորանի հետ:

Ժ – Հրեշտակների խորան:

ԺԲ – Անմարմին հրեշտակների խորան:

Զ – Քաց է թողել երկրորդ խորանի անունը, բայց նկարագրությունները համընկնում են Ա և Բ մեկնություններին:

Գույները. Բ, Դ - Նույն գույները, ինչ առաջին խորանում (Բ մեկնության մեջ սխալմամբ գրված է Գ խորան):

Ա, Դ, ԺԳ - Կարմիր գինեգույնն Մելքիսեդեկի խորանն ի դեմս Քրիստոսի:

Գ, Ե, է – Կանաչ և սև (կանաչը երկրորդ և երրորդ քահանայապետությունների անվախճան կյանքը, սևը Աստծու անհասությունը նրանց համար, որ համեմատելի է Դիոնիսիոս Արիսպագացու ուսմունքի հետ, ըստ որի ծածկված էր աստվածային խորհուրդը):

է, ԺԲ – Կանաչ հրեշտակների անվախճան կյանքը:

ժ – Կանաչ հրեշտակների մշտատև և անմահ բնությունը, սև գույնը սակավ:

ԺԱ – Չորս գույն՝ սև, կարմիր, կանաչ և կապուտակ՝ մարդու մարմնի չորս բաղադրիչները՝ մարմին և ոսկորներ, արյուն և ջիղ:

Կամարները. Ա, ԺԳ – Կամարի տակի սև գույնը «իսկական» (աստվածային) գոյություն:

Ա, Դ, ԺԳ – Կամարի վրայի կարմիր գույնը՝ պատարագի գոհեր:

Ա, Դ, ԺԳ – Միջին կապույտ կամարը (Դ-ում «երփներփին») - «վասն մարմնաւոր գնացիւք գիտգնորն կարգելով»: Ոսկեգույն կամարը՝ քահանայական խորհուրդ: Վերին սևը, որ ծածկում է բոլոր կամարները, խորհուրդն է աստվածային տնօրենության:

Ա – Կամարների վերևում՝ «վերնահարկ սև գույն», աստվածային տնօրենության խորհուրդ:

Գ, Ե, Ը, ԺԲ – Երեք կամարներ, որոնք ցույց են տալիս, որ Սուրբ Երրորդության մասին երկրորդ քահանայապետությունը գիտեր սերովբեներից և սովորեցնում էր մարգարեներին:

Բ – Սյուները՝ կապույտ, հինգ-հինգ մասով զարդարված, իբրև Օրենքի տասը պատգամների խորհուրդներ:

ժ – Երեք կամարներ:

Սյուները. Ը, Ճ – Սյուների գլուխները՝ չորեքկերպյան կենդանիներ:

ԺԱ – Սյուները՝ կապույտ «խառխառ ոստիւք», հինգ մասով զարդարված. սևը հարստանում է, կարմիրը՝ նվազում:

Սեղան. Գ – Սեղան կամարների միջև՝ բոցավառ:

Ծառերը. Գ, Ե, է, Ճ, ժ, ԺԲ – Արմավենիներ:

Թռչունները. Բ – Հավքերը՝ կամարների վրա՝ ծկնաքաղեր, որոնք ջրերի մեջ որս են անում և կրում են Սկրտության խորհուրդը:

Գ, Ճ, ԺԲ – Սիրամարգեր՝ ոսկեփետուր և ոսկետուն (հրեշտակների դասերի անարատ բնությունը):

ժ – Սիրամարգեր և ոսկեգույն և կարմրակտուց թռչուններ ծառերի վրա:

է, ԺԲ – Սիրամարգի ոսկե փետուրները՝ առավոտյան և ոսկե տտուկը՝ երեկոյան ճանաչում, սև ոտքերը՝ կրկնակի տրտմություն ընկած հրեշտակների և մեղավորների:

է, Ը, Ճ, ԺԲ – Սիրամարգերի ծնոտը սեղանն է ցույց տալիս և Աստծու սեղանից իմաստների ճաշակումը:

Երրորդ խորան

է – Խորան պետությանց, հրեշտակապետների և հրեշտակների (վերին քահանայապետության): Մնացածը նույնն է, ինչ երկրորդ խորանը:

Բ, Դ, ԺԱ – Առաջին երեք խորաններ՝ երեք համաբարբառ Ավետարաններ:

Գ, Ե, Ժ, ԺԲ – Նույնը, ինչ երկրորդ խորանը:

Ը, Ի – Ադամի դրախտ:

ԺԱ – Հեսու Նավեա և դատավորների խորհուրդ, որոնք Իսրայելին բաշխեցին ավետյաց կաթի և մեղրի երկիրը, իսկ համաբարբառ ավետարանիչները՝ Տիրոջ ծննդյան տեղի և Սկրտության խորհուրդները:

Չ, ԺԳ – Աստվածահայտնության խորհուրդ, որը պիտի գա մարմնացած:

Գույները. Ա, Դ, Չ, ԺԳ – Նույն չորս գույներն այստեղ իբրև Աստվածահայտնության խորհուրդ: Առաջին երեք կանոնները՝ իբրև մի աստվածության (Երրորդության) խորհուրդ:

Ը, Թ – Չորս գույն՝ չորս տարերք: Սև գույնը՝ Ադամի մորթե զգեստը (մաշկյակ): Կապույտը՝ մարդու անկումը փառքից:

Բ, ԺԱ – Նույն չորս գույները՝ սևը նվազում է, կարմիրը հարստանում (Քրիստոսի արյունը՝ հեթանոսների փրկություն):

Այուները. Ը – Չորս այուները՝ չորս զգալի տարրեր:

Սեղան. Ա, Դ, Չ, ԺԳ – Կամարների վրա սեղան բոցախառն հրով և սեղանի վրա ամպ («նսեմ»-մութ), որ ծածկում էր Քրիստոսի խորհուրդը:

Հավքեր և կենդանիները. Ա, Դ, Չ, ԺԳ – Աքաղաղներ (ճոխ և հրամանատու), որոնք նայում են խաչին:

Բ, ԺԱ – Կաքավներ՝ խորհրդանշող մեկը Մարիամին, մյուսը Ռախաբին (ԺԱ մեկնության մեջ՝ Թամարին և Ռախաբին):

Ը, Թ – Մոմ բռնած «մայմունք», իբրև նահատակներ Քրիստոսի սիրով:

Չորրորդ խորան

Ա, Դ, Զ, ԺԳ – Եկեղեցու դեմքը չորս գույնով, համաբարբառ պատմությամբ:

Բ – Նույնը, ինչ երկրորդ խորանը:

Գ, Ե, է, ժ, ԺԲ – Դրախտ (Ադամի):

Ը, Ⱚ – Նույնը, ինչ երրորդ խորանը:

ԺԱ – Խորանը ցույց է տալիս մարգարեների ժամանակը:

Գույները. Ա, Դ, Զ, ԺԳ - Չորս գույներ:

Գ, Ե, է, ժ, ԺԲ – Գույները կապույտ և սև (հիմնականում սյուների), քանի որ անհայտացավ Ադամի և նրա որդիների համար դրախտի պայծառությունը, «գոր և մաշկեա պատմուճանն առակէր»:

ԺԱ – Հարստանում է կարմիրը (մարգարեները հայտնում են փրկության մասին):

Կամարները. Ա, Դ, ԺԳ – Ձանազան կամարներ խաչի պատկերով:

Զ – Չորս կամարներ:

ժ – Կամարների տակ մթին (ընդաղոտ) խաչ:

Ե – Կամարները մութ գույնի («մթատեսակ»), թույլ գույնով խաչ խորհուրդ տնօրենության Քրիստոսի:

Սյուները. Գ, Ե, է, ԺԲ – Չորս գույներ իբրև չորս զգալի տարրերը:

Սեղան. Ա, Դ, Զ, ԺԳ – Սեղանի վրայի մութը նոսրացած է, պայծառանալով իմացականապես:

Գ – Սեղան երկրորդ և երրորդ խորանների (կամարների) միջև:

Ե – Բոցավառ սեղան կամարների միջև (անմահների կերակուր և բանական պատարագ):

Խաչ. Գ – Կամարների տակ ընդաղոտ խաչ:

Դ, Զ – Կամարների մեջ խաչ:

Եղջյուրները. Ա, Դ, Զ, ԺԳ – Կողմնային խոյակների վրա կամարների ստորոտից ելնում են եղջյուրներ՝ կարմիր և կապույտ հինգական մասերով (հինգ դատողական և հինգ Օրինաց տախտակներ):

Ըույսեր. Ա, Դ, Զ, ԺԳ – Արմավենի ծառեր (արդարության և ճշմարտության խորհուրդ):

Թռչունները. Ա, Դ, Զ, ԺԳ – Երկու հավք աղավնու նմանությամբ (ոչ թե Սուրբ Հոգու, այլ նրանց խորհուրդ, ովքեր ընդունակ էին Սուրբ Հոգու ընկալման): Երկու հավք կարմիր կտուցով և կարմիր պոչով (հեռու լինելով նոր խորհուրդից, ձայնով այդ խորհուրդն էին ազդարարում):

ԺԱ – Աքաղաղներ (գիշերն ազդարարում են առավոտյան մասին):

Հինգերորդ խորան

Ա, Դ, Զ, ԺԹ – Նույն խորհուրդը (սիմվոլը), ինչ չորրորդ խորանը (այսինքն եկեղեցին): Բայց միաժամանակ սերտ է կապը Հին Կտակարանի հետ, նշանակելով մարգարեական, թագավորական և քահանայական խորհուրդները:

Գ, Ե, Է, Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ – Նոյի տապանի խորհուրդ: Վեցերորդ խորանը՝ Աբրահամի խորանի խորհուրդ:

Գույներ. Ա, Դ, Զ, ԺԹ – Ստվերը պակասում է, կարմիրը պայծառանում: Եղած ստվերը (քողը) նշանակում է մարգարեական խորհուրդ:

Բ, ԺԱ – Առավել շողշողուն գույներ:

Ե – Կարմիր գույն՝ իբրև Քրիստոսի եկեղեցին և անապական մարմինն ու արյունը և քրիստոնեական հավատը:

Է, Ը, Թ, ԺԲ – Կարմիր գույնը՝ Աստծու Որդու արյուն, որ Նոյը և Աբրահամը իրենց պատարագում խորհրդանշեցին:

Գ, Ժ – Կարմիրի ավելացում:

Կամարները. Բ, ԺԱ - Երկու կամար (խորան), իբրև երկու համաբարբառ ավետարանիչներ (ԺԱ - Մատթեոսը և Ղուկասը, որոնք ցույց են տալիս Քրիստոսի նախահայր թագավորներին):

Սյուները. Բ, ԺԱ - Վարդագույն սյուներ, իբրև իր ժամանակին փրկության խորհուրդ:

Գ - Գինեգույն սյուներ, իբրև Մելքիսեդեկի քահանայությունը՝ ի դեմս Քրիստոսի:

Ժ - Գույնզգույն սյուներ:

Սեղան. Բ, ԺԱ - Կամարների (խորանների) միջև՝ մթով և ամպով ծածկված:

Գ - Սեղանը՝ խաչով կամարների վերևում (վեցերո՞րդ խորան):

Է, Ը, ԺԲ - Խաչը (Սաբեկա ծառը, իբրև խաչ, որ տեսավ Աբրահամը):

Եղջյուրները. Ա, Բ, Դ, Զ, ԺԹ - Վերին սեղանի (աղյուսակի վերևի) եղջյուրներ՝ իբրև Մովսեսի և Ահարոնի խորհուրդ և նրբագույն կամար, որովհետև Քրիստոսի արյան շնորհիվ դուրս եկանք Հին Օրենքից:

Բույսեր. Ա, Դ, Զ, ԺԹ - Շուշանը (նշան, որ պիտի լինի շուշան) ծաղկում է, քանի որ ծաղկում է խաչը (շուշանը՝ խաչի խորհուրդ): Նաև նռներիներ, մի փնջից ելնելով (Դ մեկնության մեջ չորս, Զ մեկնության մեջ թիվը չի նշված) ճյուղերի են բաժանվում («երեք (չորք)

ստեղունք ի միում փնջի ելեալ»):

Բ - Արմավենիներ քաղցր պտղով: Սեղանի (հավանաբար աղյուսակի) աջից ու ձախից ձիթենիներ, քանի որ ձեթի լույսը գուշակում է հավիտյան արդարների արդարությունը:

Գ, է, Ը, ԺԲ - Ձիթենիներ (նահապետների երկար կյանքը) և շուշան (երեք գույնով սպիտակ, դեղին և կարմիր) ամեն մեկն իր խորհրդով:

Բ, Ճ – Ձիթենի, իբրև հավիտյան արդարների պայծառություն:

Ժ – Ձիթենի, որի վրա կան ագռավներ՝ երեսները ետ դարձրած խորանից, նաև երեք գույնով շուշան:

ԺԱ - Ձիթենիներ աջից և ձախից, իբրև հրեա և հեթանոս ժողովուրդներ:

ԺԲ - Ձիթենի (նահապետների կյանքը) և երեք գույնով շուշան:

Թռչունները. Ա, Դ, Զ, ԺԳ - Կաքավներ (իբրև պոռնիկ Մարիամը և Ռախաբը): Ձկնաբաղեր, իբրև մարգարեներ, Սուրբ Հոգուց ներշնչված, որոնք տեսնում են ավետարանիչների խոսքերը: Աքաղաղներ, ոսկեզգեստ փետուրներով զարդարված:

Ժ - Ագռավ ձիթենու վրա, երեսը դարձրած խորանից:

Բ - Աքաղաղներ, իբրև մարգարեների և առաքյալների խորհուրդ:

Ճ – Չորս կաքավներ, իբրև խորհուրդ պոռնիկ կանանց (Թամար, Ռախաբ, Հռութ, Բերսաբե):

Վեցերորդ խորան

Ա, Դ, Զ, ԺԳ - Վեցերորդ և յոթերորդ խորաններում սևը նվաղում է, կարմիրը հաստանում կամ հարստանում, հին քահանայությունը պակասում:

Գ, է, Ը, Ճ, Ժ, ԺԱ, ԺԲ - Աբրահամի խորան (նույնը ինչ հինգերորդ խորանը):

Բ - Նույնը, ինչ հինգերորդ խորանը:

Ե - Աբրահամի խորան: Չի պնդվում, բայց հասկացվում է, որ կա սեղանի, խոյի, ծառի և Իսահակի պատկերը կամ սիմվոլը, իբրև Քրիստոսի խորհուրդ (Աբրահամի գոհաբերությունը):

Այուները. Ե - Արյան գույնի:

Խաչ: է, Ը – Խաչը սեղանի վրա հայտնվեց, որ թաքուն էր հինգերորդ խորանում:

Բույսեր. Ե - Ձիթենիներ և շուշան (ինչպես Գ մեկնության մեջ՝ Ե խորանի համար):

Յոթերորդ խորան

Ա, Դ, Զ, ԺԳ - Ինչպես վեցերորդը. «սեաւն նուագեալ և կարմիրն հաստացեալ, քահանայութիւնն ընդ կամարաւ եմուտ»:

Բ - Յոթ և ութերորդ խորաններում սևը պակասում է, կարմիրը ավելանում, քանի որ խաչի մերձեցումով ստվերանում (մթնում) էր Օրենքը (նկատի ունի Հին Կտակարանը):

Գ, Ե, է, Ը, Թ, ԺԲ - Մովսեսի խորանը (նաև ութերորդ խորանը):

ԺԱ - Մովսեսի խորան, և մատնանշվում են մակաբայեցի վկաները, որոնք գուշակեցին Քրիստոսի մահը:

Գույները. Ա, Դ, ժ, ԺԱ - Սևը նվազում է, կարմիրը հարստանում:

Ե - Կարմիրը նվազ է:

է, Ը, Թ, ԺԲ - Կարմիրը նվազ, կապույտը և սևը առավել, քանի որ ստվերական էր Օրենքը (Հին Կտակարանը), այսինքն սիմվոլիկ, և անասունների գոհաբերումը (արյունը) մարմնին սակավ սրբություն էր տալիս:

Կամարները. Բ - Կամարը ոսկեգույն, իբրև քահանայական խորհուրդ, վերևի սևը ամպի պես թաքցնում էր Քրիստոսի խորհուրդը:

Գ - Սևը կամարների տակ ուժեղանում է, և կարմիրը նվազում, քանի որ ճշմարտության (Քրիստոսի) մասին կային գուշակություններ, իսկ անասունների գոհաբերումը քիչ էր մաքրագործում ժողովրդին:

Սյուները. Բ - Կարմիր կամարների տակ:

Ե, ժ – Սյուները կապույտ:

Սեղան. ԺԲ - Եղջերային սեղան (Մովսես և Ահարոն):

Եղջյուրները. ժ - Խորանին երկու եղջյուր:

Բույսեր. Բ, ԺԱ - Երկու հատ շուշան անմթեր սեղանի մոտ (ԺԱ մեկնության մեջ Մադաթյանների առաքինությունը):

Թ – Շուշան ծաղիկ երեք գույնով սպիտակ, դեղին և կարմիր:

Թռչունները. Բ - Կամարի վրա աքաղաղներ: Քջջող աղավնիներ (աղավնու նմանություն) կարմրապոչ և կարմիր կտուցներով:

Գ, Ե, է, Ը, ժ, ԺԲ - Աղավնիներ կարմրակտուց, որոնք խորհրդանշում են Սուրբ Հոգին ընկալած Բեսելիելին, Եղիաբին, Մովսեսին և յոթանասուն ծերերին:

Ը – Չորս կաքավներ, իբրև Ճամարը, Ռախաբը, Հոուբը և Բերսաբեե:

Թ – Չկնորս հավքեր (առաքյալներ) և մրտիմներ (ավետարանիչ-

ներ):

Ութերորդ խորան

Ա, Դ, Զ, ԺԳ - Ութերորդ, իններորդ և տասներորդ խորանները համազույգ են միմյանց և «համազարդեալք Հնովս և Նորովս, ի խաչն և խաչելեալն, յարաքեալսն և ի մարգարէս առ Նորս կատարեալ» (Դ և Զ մեկնություններում նշվածը վերաբերում է միայն ութերորդ խորանին):

Բ, Ե, Ը, Թ, ԺԱ - Նույնը, ինչ յոթերորդ խորանը:

Գ, Ժ – Մովսեսի խորան:

է, ԺԲ - Արտաքին (Մովսեսի խորանից դուրս գավիթում) քավության ժողովրդի:

Ժ – կարմիրը քիչ, կապույտը և սևը շատ:

Եղջյուրները. Գ, Ե, է, Ժ, ԺԲ - Սեղանի (հավանաբար ցանկի աղյուսակի) վրա եղջյուրներ իբրև Մովսեսը և Ահարոնը:

Թռչունները. Գ, Ե, է, Ը, ԺԲ - Կաքավներ (է մեկնության մեջ չորս), իբրև խորհուրդ պոռնիկ և օտարազգի կանանց Ռահաբի, Թամարի և Հռութի (Ե, է և ԺԲ մեկնություններում նաև Բերսաբեի):

Գ, Ե - Նաև աղավնիներ (Մովսեսը և նրա ընկերները, Հեսուն և Դավիթը), կարմրակտուց, որովհետև հայտնեցին Քրիստոսի մարդեղության խորհուրդը:

Ժ - Աղավնիներ և չորս կաքավներ, որոնք նայում են կամարներին:

Իններորդ խորան

Ա, ԺԳ - Ինչ ութերորդ խորանը:

Բ - Չունի:

Գ, Ե, է, Ժ – Սողոմոնյան տաճար: Նաև սիմվոլիկ (խորհրդական) խորան, որ նշանակում է երեք անգամ երեք (երեք համաբարբառ ավետարանիչներ՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս):

ԺԱ - Քրիստոսի եկեղեցի:

Գույները. Գ, Ե, է, Ժ, ԺԲ - Հարուստ է երանգներով, քանի որ սևն ու կապույտը նվազում են, կարմիրը պայծառանում (Գ, Ե, է, ԺԲ մեկնություններում Քրիստոսի գալուստը մերձենում է):

Ը, Թ – Նվազում է սևը, կապույտն ու կարմիրը աճում են:

ԺԱ - Կամարածև և կարմիր խորան: Վերնահարկ սև գույն կամա-

րի:

Սեղան. Գ, Ե, Է, Ժ - Անմթեր (անամպ) (Ե մեկնություն բափուր) սեղանը, որ ցույց է տալիս մակաբայերի վկաների ժամանակը:

Եղջյուրները. ԺԱ - Երկու եղջյուր սեղանի վրա (աղյուսակի):

Բուսեր. Գ, Ե, Է, Ը, Ժ – Նռենիներ, իբրև մարգարեների խոսքը: Նաև արմավենի, իբրև Դավթի սաղմոսի խոսքը «Եթէ ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ»:

ԺԱ - Արմավենիներ, հավատքի տունկ:

Թռչունները. Գ, Ե, Է, Ը, ԺԲ - Աքաղաղները նշանակում են, որ մոտ է առավոտն արդարության (Ե մեկնություն խոսեցին «վասն Քրիստոսի»):

Է - Աքաղաղներից մեկը նայում է դեպի տասներորդ խորանը:

Ը – Հավքեր, որոնք պարանոցներով միմյանց են փարվել, իբրև Հին և Նոր Կտակարանների միասնություն: Նաև ծկնաքաղեր:

Թ - Այլ հավքեր պարանոցներն իջեցրած («զանկեալ»), բերանները և ոտքերը կարմիր, Հին և Նոր Կտակարանների միաբանություն:

Ժ - Աքաղաղներ, որպես մարգարեներ, և երկու արծիվ:

ԺԱ - Կարմրատ և կարմրակտուց աղավնիներ (ավետարանիչներ):

Տասներորդ խորան

Ա, ԺԳ - Նույնը, ինչ ութերորդ և իններորդ խորանները:

Բ - Ծաղկող խաչի խորհուրդ և Հարության գուշակություն:

Գ, Ե, Է, Ը, Թ, Ժ - Սմենակատար, սուրբ և կաթողիկե եկեղեցի, որը բովանդակում է բոլոր խորհուրդները, նաև երկնային խորան (վերնայինը):

ԺԱ - Նշանակում է հանդերձյալ աշխարհը և Քրիստոսի երկրորդ գալուստը:

ԺԲ - Նոր Սիոն:

ԺԳ - Նաև Նոր Սիոնի խորհուրդ:

Գույները. Բ - Կամարների սյուները կարմրագույն, համակ պայծառ վարդագույն, որպես Հարության խորհուրդ:

Գ - Վարդագույն, առանց սևի և կապուտակի:

Ե - Կարմիրը ավելի շատ, կապույտը ավելի նվազ, քան մյուս խորաններում:

Է, Թ, ԺԲ - Պայծառ կարմիր:

Թ – Կանաչ, կարմիր և այլ գույներ:

ԺՄ - Ծաղկած, ինքնափայլ, ամենից շատ գարդերով:

Սյուները. Բ - Սյուները կարմիր և համակ վարդագույն, որպես Հարության խորհուրդ:

Ժ – Չորս սյուն:

Խաչ. ԺԱ, ԺԲ - Կամարի վերևում խաչ:

Սեղան. Է, Ժ, ԺԲ - Սեղան, վրան խաչ:

Բույսեր. Բ, Թ – Նռենիներ:

Ժ - Երկու արմավենի և վրան ոսկե թռչուններ (արմավենիները արդարության խորհուրդ):

ԺԱ - Նռենիներ և արմավենիներ:

Թռչունները. Գ, Ե, Է, Ժ, ԺԲ - Աքաղաղների դիմաց ծկնաքաղ հավքեր (ծկնորս առաքյալների խորհուրդը): Որոշ ծկնաքաղեր (իբրև մարգարեների թարգմաններ) դարձած են դեպի աքաղաղները, ոմանք էլ սեղանին են հակված (սկզբնաղբյուրի սիմվոլ): Մրտիմները նշանակում են ավետարանիչներին: Ձկնաքաղերից ոմանք պարանոցները ոլորել են միմյանց հետ, որ նշանակում է Հին և Նոր Կտակարանների միասնություն (նույնն են նշանակում նաև մրտիմների միմյանց պարզած պարանոցները):

ԺԲ - Ոսկե թռչուններ ծառերի չուրջը: Սև ագռավ՝ երեսը ետ, իբրև Եսավի ազգը կամ Բաղամ սուտ մարգարեն:

Ը – Մրտիմներ (ավետարանիչներ), ոմանք՝ ետևը քորող (ետ կեցած աշակերտներ), ոմանք՝ ոտքերը (ինչպես Հուդան, որ երկրայինին վերադարձավ): Սև ագռավ, իբրև Եսավի ազգը կամ Բաղամ սուտ մարգարեն: Թռչուններ բազմատեսակ դիրքերով, այդ դիրքերից յուրաքանչյուրը մի բան է նշանակում:

Թ - Աքաղաղներ առավոտյան լույսի ծագում (մարգարեներ):

Ժ – Ձկնաքաղեր, երկու «մայմուն» խորանի երկու կողմում, մրտիմներ, կարմիր կտուցներով և ոտքերով, ոսկե թռչուններ արմավենու վրա:

ԲՆԱԳՐԵՐ

ԲՆԱԳԻՐ Ա
ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵՑՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐԱՆԱՑՆ

Զառաւել[1] *հրաշից արժանի առաքելի գնացականութիւն բանից*[2]*, գնդեցկազարդեալ*[3] *պիտանացուածս գառ*[4] *ի չորից աւետարանչացն մեզ*[5] *պիտուութիւն*[6] *արտայայտելով վանմանական բայիւ*[7]*, տաճանցուն կանոնացն*[8] *նկարագնելով*[9] *խորանայարկ*[10] *գունակ գունակ գեղոցն*[11] *երփներփին*[12] *երանգմունք*[13]*, որոց*[14] *հիզան*[15] *գերկնային մարմնոյն*[16] *մեռալփան*[17] *բացատրելով պարտականապէս*[18]*, այնպէս*[19] *համագոյ բանիւք*[20] *մի առ մի չաղաչարեալ*[21] *զերիմերակացիցն*[22] *հոլովմն արտահայտեալ*[23]*, որ վասն*[24] *Քրիստոսի*[25] *ն*[26] *վկայութիւնն բանք:*

Ուստի եւ խորանացն գեղոցն[27] *նկարագրութիւնք*[28]*, սկսեալ յա-*

---

[1] ELPQT Առաւել HKMNOPU Առաւելապէս
[2] KU *տիւք* բանից
[3] DLQ գեղեցկազարդ HIMOP գեղազարդեալ KNU գերազարդեալ *տիւ.* զեղեցկազարդեալ
[4] R զի առ *տիւ.* գառ
[5] KU մեզ ի
[6] A վսաճաբական բայիւք KNU վսեճ GL բոցիւ *տիւ.* բայիւ KMNOPSU բանիւ փխ բայիւ
[7] T *տիւք* կաճոնացն
[8] EHIKMNOPRTU նկարակերւո *տիւ.* նկարակերպ
[9] GLQ խորանացարկ
[10] EIMP գեղոցն *տիւ.* դեղոցն
[11] G երփներանգ *տիւ.* երփներփին
[12] G տուանք *տիւ.* երանգմունք QIR երանկ(գ) տուանք *տիւ.* երանգմունք
[13] S CDFKQ որոյ G որոց երկնայինն
[14] S ծրի ցան *տիւ.* հիզան
[15] EHIMOPT մարմնոցն KN անմարմնոցն *տիւ.* մարմնոյն
[16] BDFGIMORS մեռաւոփան
[17] G O *տիւ* պարտականապէս *չտա.տիւ*
[18] NU արագէս *տիւ.* այնպէս
[19] EHIKMNPT *տիւ.* բանիւք է բանիւ
[20] O *տիւ.* շաղաշարեալ
[21] LQ գրնթերակացուցն *տիւ.* գրնթերակայիցն GS գրնթերակացիցն
[22] EHIKMNPTU արտահայտեալ *տիւ.* արտահայտեալ HO արտահացեալ *տիւ.* արտահայտեալ
[23] BDEGO վասն *տիւ.* որ վասն
[24] FLQRS Յիսուսի *տիւ.* Քրիստոսի
[25] aFGLQRS *չունի* ն
[26] MO և դեղոցն
[27] I նկարագրութիւնք

ոսկեամբ[29] *գանուածք մինչեւ ցառանգատրդն, արբեալ անդրկեալ կարմրաւք*[29II] *անանցն եւ խորտնացն*[30]*, որ*[31] *ի մարմնաւորութիւնն եւ ի խաչն*[32] *մեզ պիտանացին:*

Արդ[1] *առաջին խորանն, չորք պնդովք նկարեալ, ունի պատաջին խորանին*[33] *գշտիսն քանիսիեան*[34] *խորհուրդն*[III]*: Միւնքն ծիրանիք*[35] *գհաստատութիւնն էակաւն սիմոտոյն*[36] *արտաքոյ*[37] *տարեալ: Հաւքն ի վերայ կամարացն*[38] *սիրամարգք*[39] *գՀին աւրինացն գմարգարէական եւ գբնաւորողական*[40] *արտաքոյ նկնդեցւոյ մարմնաւոր պահուճիւք*[41] *չխաւսելով*[42] *ի նոր նկնդեցիս*[43]*:*

Ապա երկրորդ խորանն Համապատիս նմին[44]*, չորիք*[45] *պնդաւք գարդարեալ, գի*[46] *ի ներքս*[47] *ունելով գանաւանդեան*[48]*, գիսկական գոյութիւնն*[49] *ցուցանէ*[50]*, եւ երրորդոյն վասն առաջին տեսաւցացն, յորոյ վերայ գկարմիրն*[IV] *կամարաձեւեալ վասն արեան գարհեցն պատարագաց*[5] *ի խնդիր Աստուծոյ ելաւցացն*[51]*: Իսկ միջոցն*[52]

---

[29] EHIKMNOPTU *յիւր յատացնմէ յուսիւք մինչեւ* կարմրաւք
[29] LQ կամարաւք *յիւր.* կարծրաւք
[30] FLQR խոյակացն *յիւր.* խորանացն
[31] aFGKLMNOPQRT որք
[32] BCDE և խաչն
[33] B խորանի
[34] KN գշտիցքնիւթեայ(ն)
[35] O Արդ առաջին խորանն Դ դնդօքն կապուտակ, ծիրանի, կարմիր և սպիտակ Զառաջին խորանին բերէ գնմանութիւն ի տիպ չորս տարերացս. Եւ միւնքն ծիրանիք...
[36] O առաջին լուսոյն նախան աթոռոյ R աթոռոցն
[37] R այսպարոց
[38] O եւ հաւքն սիրամարգ ի վերայ կամարին HIKMNPU եւ հաւքն
[39] O *յիւր* սիրամարգք HIKMNP սիրամարգ
[40] O *յիւր* գնաւրգարեական և գբնաւորողական
[41] O պահուճանօք
[42] HIKMNTU խաւսելով *յիւր.* չխաւսելով P *յիւր* չխաւսելով
[43] O ի նոր խորհուրդս նկնդեցւոյ *յիւր.* ի նոր եկնդեցիս
[44] F նորին *յիւր.* նմին
[45] RNU չորս դիմօք *յիւր.* չորիք դեղաւք R չորք
[46] LNOQ *յիւր* գի
[47] AEFGHIPRT ներքս *յիւր.* ի ներքս O ի ներքոյ *յիւր.* ի ներքս
[48] F *յիւր* գաեաւտեղեան
[49] B գոյութեան KU գօթութիւն *յիւր.* գոյութիւնն
[50] KLMNU ցուցանելով LQR *յիւր* և O ցուցանէ և գառակայականն գգարդս խորանին և նըւթագոյն
[51] B ելովացն *յիւր.* ելողացն IPT եղելոցն *յիւր.* ելողացն
[52] GKLNRU Իսկ ի միջոցն

կապուտակ նկարէն երփներով[51] *վասն*[52] *մարմնոյդ պնդացիւք զհոպնեղէնն կարգելով*[53]: *Իսկ ոսկեգոյն կամարն*[54] *պարհանդակաձեւն ունի զխորհուրդ ի միջի*[55] *կացեալ: Իսկ կարմիրն պինդգոյն*[56] *վասն*[57] *գլխիկքանդիկի*[58] *բնիկով զխորհուրդս*[59] *ի գէմս*[60] *Քրիստոսի*[61]*V: Իսկ վերնայարկ*[62] *անուն յայնատարած*[63] *տարածեալ*[64] *զհանրութիւնն*[65]*, իբրեւ*[66] *ամպով*[67] *ծածկեալ, ունի*[68] *զխորհուրդն աստուածային անուրջնութիւնն*[69] *նկեալ*[70]:

Իսկ երրորդն[71] *նմանապէս զնգաւթն ի խորհուրդ աստուածայայտնութիւնն*[VI] *նկեալ, սկիզբն*[72] *առնու առաջին*[73] *կանանիւ*[74] *երկք մի ըստ մի*[75] *միաձայնական հնաստուածութիւնն*[76] *արտայայտելով*[77VII]*, յորոյ*[78] *վերայ կամարացն*[79]

---

[51] O երփներփն առանձնական դիւրքն վասն *տիպ.* երփնեալ վասն
[52] O նկարագրելով *տիպ.* կարգելով
[53] R *ունի միտյն* կամարն
[54] DF ի միջոցի *տիպ.* ի միջի
[55] CS վասնզի *տիպ.* վասն
[56] R զՄելքեսեդեկի KTU զՄելքեսեդեկին S զՄելքիսեդեի HIMPO (զ)Մելքիսեդեկին
[57] HIS զխորհուրդ(ն)
[58] K *տիպ* ի ղէմս
[59] KU *տիպ* Քրիստոսի
[60] C Իսկ վերնայարկսն յայնատարած
[61] KPS յայնատարածեալ *տիպ.* յայնատարած տարածեալ
[62] O *տիպ* տարածեալ
[63] C հանրաւք O կարմրովն *տիպ.* զհանրաւքն
[64] CFO իբր ամպ(ը)ւաք
[65] IGLQR ամպ(ը)ւաք T ամպովք KU զամպաւք N զամպով
[66] KNU ունին
[67] O աստուածայայտ տնօրէնութիւն Քրիստոսի *տիպ.* աստուածային տնաւրէնութեանն նկեալ
[68] CDHIKMNOPSU *տիպ* նկեալ
[69] O Իսկ երրորդ խորանն
[70] N զսկիզբն *տիպ.* սկիզբն առնու
[71] ENIKMNPTU առաջինայ *տիպ.* առաջին
[72] O նկեալ մարմնով սկիզբն առնու առաջինայ խորանն *տիպ.* նկեալ սկիզբն առնու առաջին կանանիւ
[73] aCFGLQ մի միք *տիպ.* մի ըստ մի S միմի *տիպ.* մի ըստ մի R երեքս դիմիք *տիպ.* երեք մի ըստ մի GLQ մի ըստ մի կամարացն *տիպ.* մի ըստ մի
[74] GLR աստուածայայտնութեանն(ն) *տիպ.* աստուածութեանն
[75] HIKMNU գմիասնական աստուածութեան արտայայտելով զխորհուրդ LQ կեալ (Q նկեալ) տա յայտնելով *տիպ.* արտայայտելով S աստուածայայտն
[76] CEHIKMNOTU յորոց
